

1/02



ՀԱՆԴԵՍ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

№ 5



ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՆՈՎՏԵՄԲԵՐ

Փ Ա Ր Ի Ձ

1934

“VEM”

REVUE BIMESTRIELLE ARMÉNIENNE


Directeur : S. VRATZIAN

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆ. — Համաշխ. պատերազմի նպատակները	1
ՌՈՒԲԷՆ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ. — Ֆերդովսին և իր Շահնամէն	29
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱԻՐԵԱՆ. — Թ. Թորամանեանի կեանքն ու գործը	30
ՍԵԳՐԱԿ ՈՍԿԵԱՆ. — Մառթէոս Զարիֆեան	41
ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄՅՈՒ ՏԱՂԵՐԸ	47
ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ. — Աղբամարի կոիւր	55
ՍԱՄՍՈՆ. — Հայաստանի անդր. դեսպանը Պարսկաստանում	72
ԳՐԻՄԻԹԷՆ. — Զինադադարի օրերուն	86
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԳԻ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ	92
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ Ս. ԶԱԻՐԵԱՆԻ ՀԱՌԸ	105
ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ՀԱՇՏ. ՎԵՀԱԺՈՂՈՎԻՆ	108
ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ. — Ս. Բարսեղեանի երկու նամակը	113
ԱՆՅԵԱԼԻՔ. — Դրագ մը Մուրատի կեանքէն. — Գրիգորիս եպ. Պալաթեան. — Կարապետ Մելիքեան	116
ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ. — Ազգային եկեղեցական Մահմանապըրուքիւնը. — Քանի մը դիտողութիւններ, Տօրթ. Յ. Կիլիկեցի. — Հ. Յ. Գ. Կարնոյ Ընդի. Ժողովի կազմը	121
ԳԻՐԻՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ. Մեր պարբերականները. — Դեկտ. Ա. Արեղեանի գործերը. — Պրոֆ. Յ. Մանանդեանի գործերը. — Նոր հրատարակութիւններ	126
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ. — Մ. և Մ. Պարսամեան, «Կեանք և Արւեստ», Ս. Վր. — Պրոֆ. Ադոնցի վերջին գործերը, Յ. Զ. — Պրոֆ. Մ. Արեղեան, «Հայոց լեզուի տաղաչափութիւնը», Ա. Ա.	133
ԸՆԹԵՐՅՈՂԻ ԷՁ	139
ԽՐԱՍԿՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ	141
ՅԱԻԵԼԻԱՆՆԸ. — Վ. եպ. Մանկունի, Գեորգ Գ. և իր ժամանակը	97-112

Gérant : V. Hampartzoumian

Imp. ARTISTIQUE 42 Rue de la Jonquière, PARIS 17^e



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Ս. ՎՐԱՑԵԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻԻ 5

1934

ՍԵՊՏԵՄԲԵՐ — ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

(ՊԱՏԵՐԱԶՄԻ ՔՍԱՆԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ)

I

Խ Օ Ս Ք Ը

Քսան տարի է անցել այն օրից, երբ աղբ և աղինք, մինչև ատամները զինած, միմեանց դէմ ելան կատաղի մոլեղնութեամբ: Եւ պատերազմի առաջին օրից սկսած մինչև այսօր կրքերը դեռ հանդարտած չեն համաշխարհային սպանդի պատճառների և նպատակների հարցի շուրջ, թէև արդէն անհաշիւ նիւթ է հրապարակած այդ մասին և անաչառ մարդու համար դժուար չէ ասել, որ պատասխանատու են ամենքը, թշնամի երկու կողմերն էլ: Միայն պըրուսական աշխարհակալութիւնը չէր պատերազմի պատճառը, և ոչ էլ Վիլհելմի չար կամքը վառեց արիւնոտ հրդեհը: Դաշնակիցները անմեղ զառնուկներ չէին: Պատերազմը առաջ եկաւ իրրեւ հետեւանք այն կատաղի մրցման, որով, յատկապէս, մեծ պետութիւնները իրենց տիրող դասերի միջոցով, աշխատում էին դրակել տիրապետող դիրքեր: Տնտեսական հակամարտութիւն, նւաճողական ախորժակներ, նոր գաղութների և շահաստանների դրակում, ծովերին, համաշխարհային հաղորդակցութեան ուղիներին և նաւթային վայրերին տիրելու տենչ, անզլեզերմանական սուր մրցակցութիւն, ցա-

732-79



501-2001

ընդմիջ անհետնալով քաղաքականութիւնն - ասա պատերազմի ծնունդ տուող գործօններից զլրատորները:

Բայց յիշեցէք, թէ ի՞նչ բացատրութիւն էր տրուում պատերազմի ընթացքին. ի՞նչ միջոցներ գործածեցին թշնամի կողմերը հակառակորդին միակ յանցաւոր ու ոճրագործ ներկայացնելու եւ աշխարհաստան կոտորածի պատասխանատուութիւնը նրա վրին փաթաթելու համար: Մանաւանդ մեծ էր Դաշնակիցների թափած եռանդը: Նրանց ղեկավարները միաբերան պնդում էին, որ դերմանական բռնապետութիւնն է բոլոր դժբախտութիւնների աղբիւրը, իսկ իրենք ազաւնու պէս մաքուր են եւ հրեշտակի չափ՝ անմեղ: Գերմանիան սկսեց պատերազմը: Նա՛ խախտեց Բելգիայի չէզոքութիւնը: Նա՛ ոտքի տակ տւեց միջազգային պարտաւորութիւնները, թողի կտոր յայտարարեց Դաշնագրերը: Նա՛ ճնշեց փոքր ազգերին, մտցրեց պատերազմի բարբարոս ձեւեր: Նա ձգտում է աշխարհակալութեան, ուզում է իրեն ենթարկել ամբողջ աշխարհը: Գերմանիա՛ ամենից վեր: Ընդհակառակը, Դաշնակիցները կուռում են յանուն արդարութեան, ազատութեան եւ մարդկայնութեան. նրանց նպատակն է վերականգնել բռնաբարւած միջազգային իրաւունքի հեղինակութիւնը:

«Դաշնակիցները, ասաց Փրանսական խորհրդարանում, 1917 թ. նոյ. 12-ին, նախարար Պէնլըվէն, կուռում են նրա համար, որ վերջապէս, ժողովուրդներին տան խաղաղութիւն, արդարութիւն եւ իրաւունքի յարգանք՝ առանց երկաթէ օրէնքների հարկադրանքի ... նրա՛ համար, որ աշխարհին արդարութիւն ու եղբայրութիւն պարգեւեն»: «Մենք, ասաց նոյն թւականի սեպտ. 4-ին անգլիական նախարար Բոնար Լօ, կուռում ենք ի պաշտպանութիւն մարդկայնութեան բարոյական ուժերի, ի պաշտպանութիւն հասարակական արդարութեան իրաւունքի եւ բարոյական գիտակցութեան հիմքի: Մենք կուռում ենք ի պաշտպանութիւն իրաւունքի ընդդէմ ոյժի»: «Դաշնակիցների նպատակն է այս պատերազմում, ասաց Փրանսական խորհրդարանի ներկայացուցիչներին նախարար Ասկելթը 1916 թ. ապր. 10-ին, ճանապարհ հաստատել այնպիսի միջազգային եղանակի, որը ապահովէր բոլոր քաղաքակիրթ պետութիւնների համար կատարեալ հաւասարութեան սկզբունքը»: «Անգլիան, պնդում էր անգլիական նախարար Չրըչիլը 1914 թ. սեպ. 11-ին, պատերազմի վերջին պէտք է շեշտէ Եւրոպայի քաղաքական դրութեան մեծ եւ առողջ սկզբունքները: Այդ սկզբունքներից առաջինը պէտք է լինի յարգանքը դէպի ազգութիւնը»: 1917 թ. դեկտ. 12-ին Իտալիայի նախարարապետ Օրլանդօն խորհրդարանում խօսեց մի բուռն ճառ ի պաշտպանութիւն ազգային գիտակցութեան եւ ինքնորոշման իրաւունքի: Իսկ

Փրանսայի արտաքին գործոց նախարար Պիշօնը, 1918 թ. յունւ. 11-ին, արդար եւ տեւական խաղաղութիւն հաստատելու համար առաջարկեալ էր երեք պայմաններից մէկը համարում էր ազգային ազատութեան սկզբունքը եւ երկրների սահմանների դժուար համաձայն ազգային ինքնորոշման իրաւունքի: «Ժողովուրդներն ու նահանգները, յայտարարեց 1918թ. յունւ. 11ին Կոնգրէսում նախագահ Վիլսոնը, կարելի չէ փոխել մէկի ղերիշխանութիւնից միւսին, ինչպէս փոխում են հասարակ իրերը կամ խաղի քարերը: Այժմ տիրել ժողովուրդներին եւ կառավարել կարելի է միայն նրանց համաձայնութեամբ: Ինքնորոշումը դատարկ խօսք չէ: Նա գործունէութեան վճռական մի սկզբունք է, որը պետական մարդիկ չեն կարող անտես առնել առանց անձնապէս պատասխանատու լինելու: Չպէտք է լինի ո՛չ դրաւում, ոչ պատերազմական տուգանք եւ ո՛չ էլ վնասների պատժիչ հատուցում»: «Մենք ձգտում ենք հաստատել միջազգային մի նոր կարգ, որ հիմնւած լինի իրաւունքի եւ արդարութեան լայն եւ համայնապարփակ սկզբունքների վրա», ասում է Վիլսոնը մի ուրիշ ճառում, 1918 թ. փետր. 18-ին: «Հաշտութիւն առանց յաղթողների», «իրաւունքը աւելի թանգազին է, քան խաղաղութիւնը», «հաշտութիւն առանց դրաւումների եւ ռազմատուգանքի», բացատրում է Վիլսոնը իր մէկ ուրիշ ճառում, 1917 թ. յունւ. 2-ին:*) Վերջապէս, նոյն Վիլսոնի հրահանգով Միացեալ Նահանգների Պետրոգրադի դեսպանը, 1917 թ. մայիս 25-ին, Ռուսաստանի ժամանակաւոր կառավարութեան յանձնեց մի յայտարարութիւն, որի մէջ հետեւեալ կերպով են բացատրում պատերազմի նպատակները.

«Ամերիկան այս պատերազմում չի որոնում ոչ նիւթական օգուտ եւ ոչ հողերի յաւելում: Ծահի եւ շահախնդիր դիտումներով չէ, որ պատերազմում է նա, այլ՝ ամենուրեք ազգերը ինքնակալ ոյժի յարձակումներից ազատելու նպատակով:

... «Մենք պատերազմում ենք բոլոր ժողովուրդների ազատութեան, ինքնավարութեան եւ անկախ զարգացման համար:

... «Ո՛չ մի ժողովուրդ չպէտք է զօրով ենթարկւի մի տիրապետութեան, որի հովանու տակ չի՛ ուզում ապրել: Ո՛չ մի երկիր չպիտի անցնի մէկի ձեռքից միւսին այլ կերպ, բայց եթէ այդ երկրում ապրող ժողովրդի կեանքի եւ ազատութեան արդար հնարաւորութիւն տալու նպատակով:

... «Ազգերը պէտք է իրականացնեն իրենց ընդհանուր կեանքը եւ հաստատեն իրական աշխատակցութիւն՝ ապահովելու համար այդ

*) "President Wilson's State Papers and Addresses", New York, 1918.

կեանքը ինքնակալ եւ ինքնասէր իշխանութեան յարձակումների դէմ» :

Կարելի է դեռ ուրիշ անհատիւ վկայութիւններ էլ առաջ բերել ցոյց տալու համար, թէ ի՞նչ ազնիւ ու վսեմ բացատրութիւններ էին տալիս Դաշնակից պետութիւնների ղեկավարները համաշխարհային պատերազմի նպատակների մասին, բայց կարիք կա՞յ երկարելու : Աւելացնենք միայն երկու պաշտօնական վաւերագիր, ուր խտացւած է դաշնակիցների ամբողջ դադարաբաւանութիւնը : Առաջինը Ֆրանսիայի նախարարապետ Բրիանի «ժողովուրդների ազատութիւնը պաշտպանելու նպատակով միացած բոլոր դաշնակից կառավարութիւնները» անունից արած յայտարարութիւնն է, իսկ երկրորդը՝ նախագահ Վիլսոնի հռչակաւոր 14 կէտերը : Ահա Բրիանի յայտարարութիւնը, որ 1917 թ. յունւ. 17-ին յանձնեց Միացեալ Նահանգների ղեկավարին : Առաջ բերենք կէտերի ամփոփումը .

1. Վերականգնում Բէլգիայի, Սերբիայի եւ Մոնտենէգրոյի եւ նրանց կրած վնասների հատուցում :
2. Ֆրանսայի, Ռուսաստանի եւ Ռումանիոյ դրաւած վայրերի դատարկում եւ վերաշինութիւն :
- 3 Հաստատել Եւրոպայում ամուր կարգ՝ հիմնւած ազգային սկզբունքի յարգանքի, մեծ թէ փոքր՝ բոլոր ժողովուրդների իրաւունքի, անտեսական ազատ դարգացման ու կատարեալ ապահովութեան, հողային համաձայնութիւնների եւ ցամաքային ու ծովային սահմանները կամայական յարձակումներից երաշխաւորող միջազգային օրէնադրութիւնների վրա :
4. Վերադարձնել անցեալում բռնի ուժով կամ ազդարնակութեան ցանկութեան հակառակ դաշնակիցներից խլւած դաւաճներն ու հողերը :
5. Ազատութիւն խտալացիների, սլաւների ուսմանացիների, չէ-խոսլոյսիւնների օտար տիրապետութիւնից :
6. Ազատութիւն տաճիկ բռնապետութեանը ենթակայ ժողովուրդներին եւ վտարում Եւրոպայի սահմաններից Օսմանեան Կայսրութեան, որ ակնյայտնի կերպով խորթ է արեւմուտքի քաղաքակրթութեան :
7. Նորին Մեծութեան Ռուսաստանի Կայսեր ղիտաւորութիւնները Լեհաստանի նկատմամբ պարզ ցոյց են տրւած զօրքերին ուղղւած նրա յայտարարութեան մէջ :
8. Դաշնակիցները նպատակ չեն ունեցել բնաջնջել ղերման ժողովուրդը, ոչ էլ իրազօրծել նրա քաղաքական ոչնչացումը :*)

*) F. Nitti. "L'Europe Sans Paix", Paris, 1922.

Աւելի նշանաւոր են 14 կէտերը, որոնց մէջ 1918 թ. յունւ. 8-ին նախագահ Վիլսոնը ամփոփեց պատերազմի նպատակն ու հաշտութեան ծրագիրը : Ահա այդ պատմական վաւերագիրը ամբողջութեամբ :

«Բովանդակ աշխարհի հաշտութեան ծրագիրը նաեւ մեր ծրագիրն է : Այդ միակ հնարաւոր ծրագիրը հետեւեալն է .

1. Հաշտութեան դաշնագրերը պէտք է կնքին բաց ու յայտնի կերպով : Այդ պատճառով մասնաւոր ու միջազգային գաղտնի համաձայնութիւններն այլեւս տեղ չունին : Դիւանագիտութիւնը պէտք է հրապարակ դայ անկեղծ ու բաց կերպով ամբողջ աշխարհի առջև :
2. Անսահման ազատութիւն նաւազնացութեան երկրային ջրերի սահմաններից դուրս գտնւող ծովերի վրա, թէ խաղաղութեան եւ թէ պատերազմի ժամանակ, բացառութեամբ այն դէպքի, երբ ծովերն ամբողջութեամբ կամ մի մասով փակւած կը լինեն՝ համաձայն միջազգային որոշումների եւ միջազգային դաշնագրերի գործադրութեան նպատակով :
3. Ըստ կարելւոյն ծայրայեղ կրճատում անտեսական բոլոր սահմանափակումների եւ հաստատում հաշտութեան յարած ու խաղաղութիւնը պաշտպանելու պարտաւորւած բոլոր ազգերի ստեւտրական վիճակի հաւասարութեան :
4. Պէտք է արել եւ ապահովել կատարեալ երաշխիք այն բանի, որ ազգի ղինւորումը սահմանափակի մինչեւ նւազագոյն չափը, ինչքան որ անհրաժեշտ է ներքին անդորրութեան պահպանման համար :
5. Ազատ, անկախ եւ բացարձակապէս անաչառ դոհացում դադարեալին բոլոր յաւակնութիւնների՝ երակէտ ունենալով պահպանումը այն սկզբունքի, ըստ որի հաւասարապէս հաշի պէտք է առնելն թէ տեւալ ազդարնակութեան շահերը եւ թէ արդար պահանջները կառավարութիւնների, որոնց ձեռք բերած իրաւունքների մասին վրձիւ է տրւում :
6. Մաքրում ուսական բոլոր շրջանների եւ լուծում Ռուսաստանի վերաբերւող բոլոր հարցերի, որ աշխարհի միւս ազգերին լաւագոյն եւ անսահման հնարաւորութիւն կրտայ թողնելու, որ Ռուսաստանը անկախ կերպով որոշէ իր քաղաքական վարդացման ընթացքը եւ ազգային ուղին, եւ ապահովել նրան ընդունելութիւն Ազգերի Դաշնակցութեան մէջ, թոյլ տալով, որ նա ազատօրէն կարդաւորէ իր հիմնարկութիւնները : Բայց այս ընդունելութիւնից աւելին էլ պէտք է տրամադրել նրան : Նրան ցոյց կը տրել ամէն կարգի օգնութիւն, որին նա կարող է կարիք ունենալ եւ որը ցանկալի կը լինի նրան : Այն վերաբերումը, որ Ռուսաստանը հետագայ ամիսներին կունենայ եղբայրական ազգերի կողմից, ցոյց կը տայ վերջիններիս

բարի կամքը եւ կը լինի ապացոյց այն բանի, թէ որքան վերջիններս կը գիտակցեն Ռուսաստանի իրենց սեփական շահերին չհամապատասխանող կարիքները, եւ թէ ինչքան նրանց համակրանքները անշահախնդիր են:

7. Ամբողջ աշխարհ կը համաձայնի այն բանին, որ Բելգիան պէտք է մաքրել ու վերաշինել եւ այն էլ առանց որեւէ ձգտումի սահմանափակելու նրա գոյութիւնը, որ նա ունի ուրիշ բոլոր ազատ ազգերին հաւասար: Ո՛չ մի վարմունք այնքան չի նպաստում ազգերի վստահութեան վերականգնման դէպի իրենց ձեռքով հաստատուած օրէնքները, որոնց հիման վրա կառավարութիւնները որոշել են իրենց յարաբերութիւնները, որքան ներկայ վարմունքը: Առանց այս առողջապանող գործողութեան միջազգային օրէնքների ամբողջ կազմուածքը, նրանց բովանդակ արժէքը վտանգուած կը լինէր:

8. Ֆրանսական ամբողջ հողը պէտք է մաքրել եւ գրաւած մասերը նորից յետ տրելին: Ֆրանսայի իրաւունքը, որ 1871 թւին Ալգաս Լօրէնի յարակցութեամբ ոտնահարուել էր Պրուսիայի կողմից եւ այդ ոտնահարումը համարեա յիսուն տարւայ ընթացքում սպառնում էր ընդհանուր խաղաղութեան, պէտք է վերականգնել, որպէս զի խաղաղութիւնն էլ բոլորի շահի համար նորից կարողանայ հաստատուել:

9. Իտալիայի սահմանները պէտք է հաստատուեն համաձայն ճիշտ որոշուած ազգային դժերի:

10. Ինքնօրէն դարգացման ամենաազատ հնարաւորութիւն պէտք է տրել Աւստրո-Հունգարիայի ժողովուրդներին, որոնց տեղը ազգերի շարքերում մենք կը փափաքէինք տեսնել պաշտպանուած եւ ապահոված:

11. Ռումանիան, Սերբիան եւ Մոնտէնէգրօն պէտք է մաքրուեն եւ գրաւած շրջանները վերադարձուեն: Սերբիային հարկաւոր է տրամադրել ազատ եւ ապահոված ծովային ելք, եւ բալկանեան զանազան պետութիւնների յարաբերութիւնները միմեանց միջև պէտք է կարգաւորուեն բարեկամական համաձայնութիւնների միջոցով՝ գոյութիւն ունեցող պատմական ցուցմունքների, հպատակութեան եւ ազգութիւնների յարաբերութեան տեսակէտից: Պէտք է ստեղծուեն քաղաքային եւ տնտեսական անկախութեան, այլեւ հողային անձեռնմխելիութեան միջազգային երաշխիքներ:

12. Ներկայ Օսմանեան Կայսրութեան թրքական մասերին պէտք է տրել երաշխաւորուած ինքնուրոյնութիւն (սովերենիտէ): Իսկ ներկայումս թրքական տիրապետութեան տակ գտնուող մնացեալ ազգութիւններին պէտք է տրել կեանքի գրական ապահովութիւն եւ ինքնուրոյն զարգացման բացարձակ ու անխախտ երաշխիք: Դարգանէլը

պէտք է միշտ բաց լինի՝ միջազգային երաշխիքներով՝ բոլոր ազգերի նաւերի ազատ երթեւեկութեան եւ առեւտրի համար:

13. Պէտք է ստեղծուի անկախ լեհական պետութիւն, որի կազմի մէջ մտնեն բոլոր այն հողերը, որոնց վրա անվիճելիօրէն ապրում է լեհ ազգաբնակչութիւնը. պէտք է բացւի ազատ եւ ապահովուած ճանապարհ դէպի ծով եւ պետութեան քաղաքական, տնտեսական անկախութիւնն ու հողային անձեռնմխելիութիւնը պէտք է երաշխաւորուի միջազգային համաձայնութիւնների միջոցով:

14. Ազգերի Ընդհանրական Դաշնակցութիւնը պէտք է կազմել առանձին դաշնադրերով, որոնք նպատակ պիտի ունենան փոխադարձաբար ապահովել թէ փոքր եւ թէ մեծ պետութիւնների քաղաքական անկախութիւնը եւ հողային անձեռնմխելիութիւնը»:

Թէեւ մշուշապատ սճով, բայց բոլորովին պարզ կերպով որոշուած են պատերազմի նպատակները: Վիլսոնի գծած ծրագիրը իսկապէս որ գրաւիչ է: Ի՛նչ սքանչելի հեռանկարներ կարող են բացւել ի՛նչ գեղեցիկ յեղաշրջում աշխարհի: Վերջապէս, պիտի լռէ մարդկային կիրքն ու թշնամանքը, պիտի ցամաքեն արեան գետերը. քանզըւած գեղերն ու քաղաքները պիտի շինուեն, ումբերի ու խրամատների բացած հողերը պիտի լեցուեն եւ մայր երկրի կուրծքը նորից պիտի պծուի ոսկեհասկ արտերով ու կանաչ մարգագետիններով. մարդը մարդուն այլեւս չի լինելու դադան – իրական խաղաղութեան իշխանութիւնը պիտի հաստատուի ամէն տեղ: Ո՛չ յաղթող, ո՛չ պարտուող: Ո՛չ բռնադրաւում, ո՛չ տուգանք: Ազատութիւն ճնշուած ազգերին: Ազատութիւն ստեղծագործելու եւ աշխատանքի արդիւնքը վայելելու: Ոչնչացում ահարկու բանակների եւ զինման: Փոխադարձ համաձայնութիւնների, ազատ դաշնակցութիւնների եւ միջազգային իրաւական սկզբունքների կատարեալ յաղթանակ Ազգերի Դաշնակցութեան հովանու ներքոյ – ահա նախագահ Վիլսոնի եւ Դաշնակից պետութիւնների նկատած սքանչելի երազը, որին մարդկութիւնը հաւատաց մի պահ:

Այսպէս՝ ընդհանուր աշխարհում: Բայց մեզ համար աւելի հետաքրքրական են այն խոստումներն ու յայտարարութիւնները, որ Դաշնակիցները արին Մերձաւոր Արեւելքի ժողովուրդների եւ, ի մասնաւորի, հայերի նկատմամբ:

«Ազատագրութիւն թիւրքերի արիւնարբու բռնապետութեանը ենթարկուած ժողովուրդներին», Դաշնակիցներէ՛ անուշից յայտարարում էր Բրիտանը 1917 թ. յունւ. 10ին: Իսկ ճերակուտական Լուի Մարտէնին գրում էր, թէ՛ «Հանրապետութեան կառավարութիւնը արդէն պաշտօնապէս յայտարարել է Բարձր Դրան, թէ Դաշնակից

պետութիւնները գործւած ոճիրների համար անձնապէս պատասխանատու են համարում Օսմանեան կառավարութեան բոլոր անդամներին: Երբոր օրինական հատուցման ժամը հնչէ, նա մոռացութեան չի տայ հայ ազգի կրած տառապանքները եւ իր Դաշնակիցների հետ համերաշխ՝ անհրաժեշտ միջոցները ձեռք կառնէ ապահովելու համար նրան խաղաղ ու բարգաւաճ կեանք»: «Նրանց վառաւոր պատմութիւնը մի երկար մարտիրոսութիւն է: Նրանց չարչարանքը դեռ չի վերջացել: Բայց արդէն նոր օրւայ դէմքը երեւում է: Վաղը Հայաստանը՝ թրքական բռնութիւնների արիւնոտ զոհը՝ կը տօնի իր ազատութիւնը: Վաղը Մառնի, Իդէրի եւ Վէրդէնի հերոսները եղբայրօրէն կողջադուրեն իր ազատագրւած դաւակների հետ», գրում է Փրանսական խորհրդարանի նախագահ Պօլ Դէշանէլը, 1917 թ. դեկտ. 19-ին: «Ես երջանիկ եմ հաղորդելու ձեզ, որ Հանրապետութեան Կառավարութիւնը, Մլացեալ-Թաղաւորութեան պէս չի դադարել համարելու հայ ազգը այն ժողովուրդների թոււմ, որոնց ճակատագիրը Դաշնակիցները պիտի կարգադրեն համաձայն Մարդկայնութեան եւ Արդարութեան գերադոյն օրէնքների», գրում է 1918 թ. յուլիս 14-ին Փրանսայի նախարարապետ Քլեմանսօն: Հանրապետութեան նախագահ Պուանկարէն իր հերթին գրում է 1919 թ. փետր. 16-ին. «Հայաստանը չկասկածի Փրանսայի վրա, ինչպէս եւ Փրանսան չկասկածեց Հայաստանի վրա: Եւ միասին յանուն աշխարհի իրաւունքի եւ ճշմարտութեան յաղթանակի միեւնոյն տանջանքը կը ընդունեն յետոյ, երկու բարեկամ երկրները կարող են այսօր միանալ միեւնոյն խնդրութեան եւ միեւնոյն հպարտութեան մէջ: Հանրապետութեան Կառավարութիւնը լրացած չի համարում իր պարտականութիւնը հայ ժողովրդի նկատմամբ: Նա գիտակցում է այն օգնութիւնը, որ Հայաստանը եւ ի մասնաւորի Կիլիկիայի աղնական երկիրը սպասում է իրենց վայելելու անդորրութեան մէջ խաղաղութեան եւ ազատութեան բարիքները, եւ ես կարող եմ ապահովել, որ Փրանսան կարգարացնէ իր վրա դրւած վստահութիւնը»: Իսկ հանրապետութեան յաջորդ նախագահ Մելեքանը, 1920 թ. յուլ. 16-ին, երբ դեռ նախարարապետ էր, յանուն Դաշնակիցների պատասխանելով թրքական պատերազմութեան՝ յայտարարում էր. «Դաշնակից պետութիւնները վճռել են ազատել թրքական լծից բոլոր այն հողերը, որոնք բնակւած են ոչ-թիւրք ցեղերի մեծամասնութեամբ»: Անգլիայի նախարարապետ Լլօյդ Ջօրջը 1917 թ. դեկտ. 21-ին յայտարարում է, որ «Հայաստանը այլեւս երբեք չպիտի վերադարձւի թրքական անարգ տիրապետութեան»: Նոյն միտքը ակելի ուժով պնդում է եւ 1918 թ. յուն. 5-ին Արհեստակցական Միութիւնների պատ-

ւիրակութեան առջեւ: 1918 թ. յուլ. 11-ին, ի պատասխան պատգամաւոր Ռամսէյ Մաքդօնալդի ուղղած հարցումի՝ Բալֆօրը Համայնքների Պալատում տւաւ հետեւեալ պատասխանը. — «Գալով Հայաստանի ապագային, ես կը յիշեցնեմ պարզապէս Դաշնակից պետութիւնների շխաւոր պետական մարդկանց արած հրապարակային յայտարարութիւնները: Այդ ապագան կորուչի պատուարժան պատգամաւորի մատնանշած սկզբունքների համաձայն. ժողովուրդների իրաւունքը սեփական ճակատագիրը տնօրինելու»:

Չերկարացնենք. նման խոստումներն ու յայտարարութիւնները անհաշիւ են:*) Լորդ Բրայս, Լորդ Բօբբրդ Սէսիլ, Պիչոն, Ալբէր Թոմա, Սոննինօ, Լուցցաթի, Օրլանդօ, Վիլսոն, Վանդէրվէլդէ, Միլուկօլ, Մաքդօնալդ, Կէրէնսկի, Լէնին, Ստալին եւ բազմաթիւ ուրիշներ, պաշտօնական եւ անպաշտօն հանդամանքներում, հաստատել են հայ ժողովրդի իրաւունքը ազատութեան, տւել են հանդիսաւոր խոստումներ, արդարացրել են իրենց կարեկցութիւնն ու համակրանքը հանդէպ հայ մարտիրոսութեան: Կարելի է հատորներ լեցնել զանազան երկրների քաղաքական գործիչների ճառերով եւ կառավարական յայտարարութիւններով ի պաշտպանութիւն արդարութեան եւ հարստահարւած ժողովուրդների ազատութեան:

II

Գ Ո Ր Ծ Ը

Այս ամենը Դաշնակից կառավարութիւնների եւ պետական մարդկանց արտայայտութիւնն է: Որքան, սակայն, այդ արտայայտութիւնը համապատասխանում է իրականութեան: Ի՞նչ է Դաշնակիցների գործը: Փորձենք մի պահ թափանցել նախարարութիւնների առանձնասենեակների խորքերը, քննել դիւանատների զաղտնի թղթերը. ծանօթանալ հանդիսաւոր խոստումների իրագործման: Մի աշխատանք, որ շատ ուսանելի կողմեր ունի:

Այսպէս, մինչ խորհրդարաններում աղմկայոյզ ճառեր էին արտասանւում պատերազմի բարձր նպատակների եւ ճնշւած ժողովուրդների ինքնորոշման մասին, աշխարհի աչքից հեռու կատարւում էին բանակցութիւններ եւ կնքւում էին զաղտնի դաշնագրեր որո-

*) "L'Arménie et la question Arménienne", Paris, 1922.
MICHEL PAILLARES, "Le Kemalisme devant les Alliés", Paris, 1922

չելու համար պատերազմից յետոյ հաստատելիք միջազգային յարաբերութիւնները: Ահա մի քանիսը այդ փաստերից:

1915 թ. մարտ 5-ին Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովը ուղարկում է Փարիզի ուսական դեսպանին հետեւեալ ծածկագիրը հեռագրով. «Փետր. 22-ին Փրանսական դեսպանը իր կառավարութեան անունից ինձ յայտնեց, որ Փրանսան պատրաստ է ամենարեւացաւոր վերաբերումն ունենալ զէպի մեր բաղձանքները նեղուցների եւ Պոլսի վերաբերմամբ, որի առթիւ ես յանձնարարեցի Ձեզ յայտնել Դէլիասէին իմ երախտագիտութիւնը: Ձեզ հետ ունեցած իր խօսակցութիւնների ժամանակ Դէլիասէն առաջ էլ եւ մէկից աւելի անգամներ հաւաստիացրել է, որ մենք կարող ենք վստահ լինել Փրանսայի համակրանքի վրա եւ անհրաժեշտ համարել նախքան յիշեալ իմաստով աւելի որոշ ապահովութիւններ տալը՝ պարզել Անգլիայի վերաբերումը, որի առարկութիւններից նա վախենում էր: Այժմ Բրիտանական կառավարութիւնը զբաւոր կերպով յայտնեց իր համաձայնութիւնը միացնելու Ռուսաստանին նեղուցներն ու Պոլսը՝ մեր մասնանշած սահմաններով եւ ստացաւ միայն իր տնտեսական շահերի ապահովութիւն, այլեւ մեր նման բարեացաւոր վերաբերումը զէպի Անգլիայի քաղաքական ձգտումները ուրիշ շրջաններում: Անձնապէս ինձ համար, որ ամենալաւ հաւատը ունիմ զէպի Դէլիասէն, նրանից ստացւած հաւաստիացումը կատարելապէս գոհացուցիչ է, բայց կայսերական կառավարութեան համար ցանկալի են աւելի որոշ յայտարարութիւններ Փրանսայի համաձայնութեան մասին մեր ցանկութիւններին բաւարարելու՝ բրիտանական կառավարութեան արածի նման»:

Այսպէս, ուրեմն, այն ժամանակ, երբ ամէն կողմ յայտարարում է, թէ պատերազմի նպատակը աշխարհակալական ծրագրիներ չեն, այլ մարդկութեան ոտնահարւած իրաւունքների եւ միջազգային դաշնագրերի սրբութեան պաշտպանութիւնը, զեռ յաղթութիւնը չապահովւած արդէն կատարւում են աւարի բաժանում եւ տնտեսական ու քաղաքական գրաւումներ:

Երկու օր յետոյ, մարտ 7-ին, Սազոնովը նոյն Փարիզի դեսպանի միջոցով շնորհակալութիւն է յայտնում Անգլիայի արտաքին գործոց նախարար Սըր Էդլարդ Գրէյին, որ «Բրիտանական կառավարութիւնը լիակատար կերպով՝ եւ վերջնականապէս համաձայնել է լուծել նեղուցների եւ Պոլսի հարցը Ռուսաստանի բաղձանքներին համապատասխան ձեւով»: Միեւնոյն հեռագրում ցարի նախարարը համարում է «խիստ ցանկալի, որ խալիֆայութիւնը զատւի Թիւրքիայից»: Ի հաստատումն Անգլիայի բարեացաւորութեան «կայսերական կառա-

վարութիւնը հաստատում է իր համաձայնութիւնը անգլիական ազդեցութեան շրջանի մէջ մտցնելու Պարսկաստանի չէզոք գոտին», պայմանով, որ «Սպահան եւ Եզդ քաղաքների շրջանները տրւին Ռուսաստանին այնտեղ ստեղծւած ուսական շահերի պատճառով»: Միեւնոյն ժամանակ Սազոնով պնդում է, որ Պարսկաստանի չէզոք գոտում շինելիք երկաթուղիների եւ Հիւսիսային Աւզանիստանին վերաբերող հարցերի մասին առանձին համաձայնութիւններ կնքեն:

Պոլսի, նեղուցների եւ Պարսկաստանի ազդեցութեան շրջանները որոշելուց եւ տնտեսական ու քաղաքական աւարը միմեանց մէջ բաժնելուց յետոյ, Դաշնակիցները անցնում են ամբողջ Փոքր Ասիոյ ճակատագիրը կարգադրելու գործին, որը նոյնպէս իրագործում են յաջողութեամբ՝ ձեւակերպելով համապատասխան գաղտնի Դաշնագրերի մէջ: Ահա այդ վերին աստիճան հետաքրքրական վաւերագրի ամփոփումը՝ կատարւած ուսական արտաքին գործոց նախարարութեան ձեռքով:

«1916 թ. դարնանը Լոնդոնում եւ Պետրոգրադում տեղի ունեցող բանակցութիւնների հետեւանքով Դաշնակից բրիտանական, Փրանսական եւ ուսական կառավարութիւնները եկան համաձայնութեան Ասիական Թիւրքիայում ունենալիք իրենց ազդեցութեան շրջանների եւ հողային նւաճումների բաշխման մասին, այլեւ Արաբիայի սահմաններում արաբական անկախ պետութեան կամ արաբական պետութիւնների համադաշնակցութեան կազմակերպութեան նկատմամբ:

«Այդ համաձայնութիւնը ընդհանուր գծերով յանգում է հետեւեալին.

«Ռուսաստանը ստանում է Էրզրումի, Տրապիզոնի, Վանի ու Բիթլիսի նահանգները, այլեւ հարաւային Բիւրդիստանի հողը Մուշ-Սղերդ - Իրն - Օմար - Ամալիա - պարսկական սահման գծով: Ռուսական նւաճումների վերջնական կէտը Սեւ Մովի վրա կարող է լինել Տրապիզոնից զէպի արեւելք գտնուող մի կէտ, որ կորոշւի ապագային:

Փրանսան ստանում է Սիւրիայի ծովեզերեայ շերտը, Ազանայի վիլայէթը եւ այն հողամասը, որ հարաւից սահմանափակւում է Այնթապ - Մարդին գծով մինչեւ ապագայ ուսական սահմանը, իսկ հիւսիսից՝ Ալա-Դաղ - Կեսարիա - Աք-Դաղ - Ելլուդ-Դաղ - Ջարա - Օղին - Խարբերդ գծով:

Մեծ-Բրիտանիան ստանում է Միջագետքի հարաւային մասը Բաղդադով միասին եւ ձեռք է բերում Կայֆա եւ Աքքու նաւահանգիստները Սիւրիայում:

Փրանսայի եւ Անգլիայի միջեւ կայացած համաձայնութեամբ

Ֆրանսական եւ անգլիական շրջանների միջեւ դասուող դատին կազմում է արաբական պետութիւնների համադաշնակցութիւն կամ անկախ արաբական պետութիւն, որի վրա ունենալիք ազդեցութեան շրջանները միաժամանակ որոշում են:

Ալեքսանդրեոտը յայտարարում է ազատ նաւահանգիստ:

Դաշնակից պետութիւնների կրօնական շահերը ապահովելու նըպատակով Պաղեստինը Սուրբ տեղերով հանում է թրքական հողից եւ պիտի ենթարկւի առանձին իշխանութեան՝ Ռուսաստանի, Ֆրանսայի եւ Անգլիայի համաձայնութեամբ:

Իբրեւ ընդհանուր կանոն պայմանադիր պետութիւնները պարտաւորում են փոխադարձաբար ճանաչել պատերազմից առաջ դոյութիւն ունեցող մենաշնորհներն ու առաւելութիւնները իրենց ստացած շրջաններում: Նրանք համաձայնում են ստանձնել իրենց նաւահանգիստներին համապատասխանող մասը Օսմանեան պարտքի»:*)

Դաշնակիցների անշահախնդրութիւնն, արդարութեան սէրն ու ճնշած ազգերի իրաւունքները պաշտպանելու ձգտումը հաստատող աւելի պերճախօս վկայական դժւար է ստեղծել: Իմպէրիալիստական պետութիւնների իսկական պատկերն է, որ ցուցադրում է այս փաստաթուղթը: Բայց կարող են աւարկել, թէ արեւմտեան պետութիւնների պարտականութիւնն է իրենց քաղաքակիրթ ազդեցութեան տակ առնել արեւելքի բարբարոսներին: Թիւրքը, արաբը, պարսիկը, հայը, քիւրդը - սրանք դեռ չեն հասած այն աստիճանին, որ նրանց վերաբերմամբ կարիք լինէր ազգային ինքնորոշման սկզբունքը կիրառելու: Սակայն ինչպէ՞ս են վարում արեւմուտքի ազգերի հետ, որոնց քաղաքակրթութիւնն ու քաղաքական հասունութիւնը չի կարող վէճի առարկայ լինել նոյն Դաշնակիցների աչքում: Ահա թէ ինչ է հեռագրում 1917 թ. յուն. 30-ին Փարիզի ու Լոնդոնի դեսպաններին Սաղոնօյի յաջորդ արտաքին գործերի նախարար Պոկրո-վրակին.

«Դաղանի - Բարձրագոյն ընդունելութեան միջոցին Դումերզը**) հաղորդեց թաղաւոր կայսեր Ֆրանսայի ցանկութիւնը, արտաքին պատերազմը աւարտելուց յետոյ, ապահովելու Ալգասի եւ Լորէնի վերադարձը եւ առանձին գրութեան հաստատումը Սաարի հովտում, այլեւ գլուխ բերել քաղաքական անջատումը Գերմանիայից իր անգրհոնեան շրջանների եւ վերջիններիս կազմակերպումը յատուկ

*) Հետագային խտրական էլ մտաւ խաղի մէջ:
**) Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար: Ապա Հանրապետութեան նախագահ: Այժմ վարչապետ:

սկզբունքներով, որպէս զի ապագայում Հոնոս դետը ամուր ռազմադիրտական սահման դառնայ գերմանական ներխուժումի դէմ: Դումերզը յոյս յայտնեց, որ կայսերական կառավարութիւնը չի մերժի հէնց հիմա ձեւակերպել իր համաձայնութիւնը այս առաջարկութիւններին: Նորին Կայսերական Մեծութեանը հաճելի եղաւ այս բանը սկզբունքով ընդունելու, որի հետեւանքով ես խնդրեցի Դումերզից, իր կառավարութեան հետ յարաբերելուց յետոյ, հաղորդել ինձ համաձայնութեան նախագիծը, որը կարելի լինէր ձեւակերպել նոտաների փոխանակութեամբ Ֆրանսական դեսպանի եւ իմ միջեւ: Այսպիսով, ընդ առաջ դնալով մեր դաշնակցի ցանկութիւններին, ես պարտքս եմ համարում յիշեցնելու այն տեսակէտը, որ Կայսերական Կառավարութիւնը յայտնել է 1916 թ. փետր. 24 № 948 հեռագրով, թէ՛ «տալով Ֆրանսային կատարեալ ազատութիւն Գերմանիայի արեւմտեան սահմանները որոշելու խնդրում, մենք յոյս ունենք, որ իրենց հերթին Դաշնակիցները կը տան մեզ հաւասար ազատութիւն մեր սահմանագծման զործում Գերմանիայի եւ Աւստրո - Հունգարիայի հետ»: Ուստի եւ, Դումերզի յարուցած հարցի մասին ապագայում կատարելիք նոտաների փոխանակութիւնը մեզ հիմք է տալիս խնդրելու Ֆրանսական կառավարութեանը միաժամանակ հաստատել մեզ իր համաձայնութիւնը տրամադրելու Ռուսաստանին զործողութեան ազատութիւն իր ապագայ արեւմտեան սահմանները որոշելու գործում: Հաստատուն տեսակները այս հարցի մասին մենք ժամանակին կը հաղորդենք Փարիզի կառավարութեան, բացի այդ, անհրաժեշտ ենք համարում պայման դնել, որ Ֆրանսան համաձայնի վերացնելու, պատերազմից յետոյ, Ալանդեան կղզիների վրա զբաղւած սէրվիտուտը: Հաճեցէք վերոյիշեալ մտքով խօսել Բրիտանի հետ եւ հետեւանքները հեռագրել»:

1917 թ. փետր. 14-ին Պետրոգրադի Ֆրանսական դեսպանը առանձին մի նոտով հաղորդում է ուսու կառավարութեան Ֆրանսայի հաշտութեան պայմանները, որոնց համաձայն Ալգաս-Լորէնի սահմանները պիտի ընդարձակւեն եւ կցւեն Ֆրանսայի: Ֆրանսայի պիտի միացւի Սաարի հովտը: Հոնոսի ձախ ափին դասուող հողերը պիտի բաժանւեն Գերմանիայից, կազմեն չէզոք ինքնօրէն պետութիւն եւ զբաւեն Ֆրանսական զորքերով, մինչեւ որ Գերմանիան կատարել իր բոլոր յանձնառութիւնները: Նոյն օրը ռուսական արտաքին գործոց նախարարը պատասխանում է, որ «Հանրապետութեան կառավարութիւնը կարող է յուսալ Կայսերական Կառավարութեան աջակցութեան վրա իր դիտաւորութիւնները իրադրծելու համար»: Այս համաձայնութեան հետեւանքով, Ֆրանսական կառավարութիւ-

նը տալիս է Ռուսաստանին կատարելալ ազատութիւն արեւմտեան սահմանները որոշելու:*)

Ուրեմն, Թիւրքիան եւ Պարսկաստանը «ինքնորոշելուց» յետոյ, Դաշնակիցները բաժանում են միմեանց միջև եւ Գերմանիայի ու Աւստրո-Հունգարիայի հողերն էլ: Եւ այս տեղի է ունենում ճիշտ նոյն ամսին, երբ Բրիտանը Դաշնակիցների կողմից բացատրում էր պատերազմի նպատակները եւ հաշտութեան պայմանները, որոնց հիմք պիտի կազմէր «ազգային սկզբունքի յարգանքը»: Ի՞նչ հեղուկութիւն, Վիլսոնի պատգամների - «Ո՛չ բռնազրաւում, ո՛չ պատերազմական տուգանք»...

Այս բոլոր տեղեկութիւնները, որ կարելի է բաղմադատել, բաւական են գուշակելու համար, թէ ի՞նչ ողի էր իշխելու հաշտութեան վեհաժողովում եւ ի՞նչ էր լինելու կնքելիք հաշտութիւնը: Այս մասին էլ բերենք մի քանի վկայութիւններ, նոյնպէս առաջին աղբիւրից: Այս տեսակէտից շատ հետաքրքրական են եւ արժէքաւոր Իտալիայի նախկին նախարարապետ Փրանչէսկօ Նիտտիի եւ անգլիացի արմատական տնտեսագէտ Ջ. Մ. Քէյնսի յիշողութիւններն ու քննադատութիւնները Վէրսայի վեհաժողովի աշխատանքների եւ կնքած դաշնագրի: Առաջինը Վէրսայի Դաշնագիրը ստորագրողներից մէկն է, իսկ երկրորդը՝ Անգլիայի կողմից տնտեսական ներկայացուցիչ էր վեհաժողովում: Երկուսն էլ վառ գոյներով նկարագրում են դինազադարից յետոյ քաղաքական շրջաններում տիրող տըրամադրութիւնները, վեհաժողովի գլխաւոր գործիչներին, նրանց ձգտումներն ու փոխյարարելութիւնները: Եւ այդ բոլորի մէջ նըշոյն անգամ չկայ այն գաղափարների, որոնց յաղթանակի համար 14 կէտերի հեղինակը Ամերիկայից առաքելական ճամբորդութիւն էր կատարել դէպի Փարիզ:

Մասնաւորապէս հետաքրքրական է բնորոշումը վեհաժողովի ղեկավար դէմքերի: Վիլսոնը, որի անունը հմայել էր ամենքին, ներկայացւած է իբրեւ բոլորովին անպատրաստ եւ անկարող լուծելու այն մեծ սկզբունքները, որոնք այնպէս ուժգնութեամբ երեւան էին դալիս նրա համբաւաւոր ճառերի ու յայտարարութիւնների մէջ: «Նախագահ Վիլսոնը, ասում է Քէյնսը, ոչ հերոս էր, ո՛չ մարդարէ: Նա փիլիսոփայ իսկ չէր. մի հասարակ մահկանացու էր, ուրիշ մարդկային էակներին յատուկ բաղմաթիւ տկարութիւններով. նրան պակասում էր այն ճարտիկութիւնը, որ անհրաժեշտ է խորամանկ ու վտանգաւոր կախարհներին յաղթելու համար... Վեհաժողովի սկզբին ամենքը հաւատացած էին, որ նախագահ Վիլսոնը իր բազմաթիւ խորհրդականների օգնութեամբ մտածել ու նախապատրաստել է ո՛չ միայն Ազգերի Միութեան մանրամասն ծրագիրը, այլեւ «14 կէտերը» հաշտութեան դաշնագրին մէջ մարմնացնելու ձեւերը: Բայց, իրականութեան մէջ, Վիլսոնը ոչինչ չէր մտածել. երբ բանը հասաւ գործնական իրականացման, նրա գաղափարները դուրս եկան աղօտ եւ անկատար: Նա ո՛չ ծրագիր ունէր, ո՛չ ուրւագիծ, ոչ էլ ստեղծագործական գաղափարներ, որպէս զի կեանքի մէջ մտցնէր այն պատկերանները, որոնք հնչեցին Սպիտակ Տնից: Նա կարող էր իւրաքանչիւրի մասին լաւ քարոզ խօսել, կամ աղօթքով դիմել ամենակարողին նրանց իրագործման համար, բայց ի վիճակի չէր թանձրացնել ձեւեր գնելու եւ բերուցի ներկայ պայմաններում նրանց իրագործման համար: Նա ոչ միայն մանրամասն մշակւած առաջարկութիւններ չունէր, այլեւ շատ տեսակէտներից վատ իրազեկ էր եւրոպական գործերին: Եւ ոչ միայն վատ իրազեկ էր - այդ յատուկ էր եւ Լյօյդ-Ջորջին - այլեւ նրա ուղեղը դանդաղաշարժ էր ու թոյլ... Այդ պատճառով նա ստիպւած էր տեղի տալ Լյօյդ-Ջորջի հէնց միայն արագաշարժութեան, շուտ ըմբռնելու եւ ճարտիկութեան առջև: Հաղիւ թէ երբեւիցէ գոյութիւն ունեցած լինի առաջնակարգ մի պետական գործիչ այնքան քիչ վարժ խորհրդաժողովների խարդաւանքներին, որքան Վիլսոնը: Նա զուրկ էր եւ ձեռնհաս խորհրդականներից ու փորձւած մասնագէտներից:

Վիլսոնի այս յատկութեան հետեւանքով Վէրսայի վեհաժողովի ղեկավարութիւնը անցնում է Քլէմանսօի եւ Լյօյդ-Ջորջի ձեռքը: «Քլէմանսօն, առանց որեւէ համեմատութեան, վեհաժողովի ամենաաչքի ընկնող անդամն էր, բնորոշում է նոյն Քէյնսը... Նա ունէր մի երազ - Փրանսան... Նրա սկզբունքները հաշտութեան մասին շատ պարզ էին... Նա ունէր որոշ հայեացքներ գերմանական հոգեբանութեան մասին. գերմանացին, կարծում էր նա, հասկանում է եւ կարող է հասկանալ միայն սաստում. բանակցութիւնների ժամանակ նա զուրկ է ամօթից, նա ոչ մի առիթ չի փախցնի ձեզանից օգուելու, եւ չկայ որեւէ չափ ստորացման, որին չհասնի նա շահի սիրուն. նա զուրկ է պատեից, հպարտութիւնից, դուժից: Այդ պատճառով գերմանացու հետ ո՛չ մի դէպքում չպէտք է բանակցութիւններ վարել կամ համաձայնութիւններ կնքել - նրան հարկաւոր է թելադրել»: Ազգերի Միութեան կամ «14 կէտերին» Քլէմանսօն չէր հաւատում:*) Եւրոպան, ինչպէս եւ ամբողջ աշխարհը մրցութիւնների

*) «Տէր Աստուած ինքը գոհացաւ միայն 10 պատկերաններով եւ ինչո՞ւ Վիլսոնին անպատճառ հարկաւոր էին 14. Ես չեմ հասկանում» - ասում էր հեգնօրէն Քլէմանսօն:

*) Տե՛ս "Die russischen Geheimdokumente", Berlin.

ասպարէզ է. կը յաղթէ նա, ով ուժեղ է: Ուժեղ է նա, որի հակա-
 ոսկորդները թոյլ են: Այդ պատճառով Ֆրանսայի միակ քաղաքա-
 կանութիւնը պէտք է լինի թուլացնել գերմանացիներին, կրճատել
 նրանց սահմանները, պակասեցնել ազգարնակութեան թիւը, տկա-
 րացնել նրանց տնտեսապէս ու քաղաքականապէս: Մարդկութիւն,
 քաղաքակրթութիւն, յառաջադիմութիւն - դատարկ հնչիւններ են
 Քլէմանսօի համար: Միակ իրական փաստը Փրանս - գերմանական
 մրցութիւնն է. 1871-ին յաղթեց Գերմանիան, այսօր յաջողութիւնը
 Ֆրանսայի կողմն է. պէտք է օգտագործել այդ յաջողութիւնը: Հար-
 կաւոր է ճնշել ու ոչնչացնել թշնամուն, գրաւել նրա դոյութեան աղ-
 բիւրը: Նա իր հոգու բովանդակ թափով աստու՛մ էր գերմանացուն:
 Իր դործակից Թարդիէօյի դրքի համար դրած յառաջարանում նա
 պնդում է, որ Ֆրանսան ձգտում է փոխադրել Սէդանի եւ Վաթէր-
 լօի համար:*) Իբրեւ յաղթանակի կաղմակերպման դիւսաւոր հերոս-
 ներից մէկը, անհատապէս էլ ձեռնհաս, փորձեալ, քաղաքականա-
 պէս հասուն եւ յամառ կամքի տէր անձնաւորութիւն, Քլէմանսօն
 դրեթէ միահեծան կերպով իշխում էր Վեհաժողովում եւ անայլայլ
 անց էր կացնում Փրանսական տեսակէտները: Նրան պէտք է վերա-
 դրել առաւելաբար այն տրաքօնական պայմանները, որոնք պարտա-
 դրեցին Գերմանիային:

Վիլսընի ու Քլէմանսօի կողքին աւելի խորագէտ, ճարպիկ, ի-
 բերն ու մարդկանց արագ ճանաչող եւ հետադայ հնարաւորութիւն-
 ները նախատեսող, բայց եւ վերին աստիճանի պատեհապաշտ գոր-
 ծիչ էր Լյօյե-Ջօրջը: Նա ոչ Վիլսընի պէս վարդապետական էր ու
 իդէալիստ, ոչ էլ Քլէմանսօի չափ նեղսիրտ ու ուղղագիծ: Ֆրան-
 սական ծայրահեղութիւնների եւ ամերիկեան վերացական մտամար-
 դանքների հանդէպ նա հետապնդում էր Անգլիայի շահը եւ իր քա-
 ղաքական կարիէրը: Յաղթութեամբ արբեցած անգլիական հասարա-
 կութիւնն էլ սպասում էր, որ պարտեալ Գերմանիան պէտք է հա-
 տուցանի բոլոր միասները. Վեհաժողովի առաջին ամիսներին Լյօյե-
 Ջօրջը կանգնեց Քլէմանսօի կողքին: Վերջը միայն, երբ Գերմանիա-
 յից առնւած էր ամէն ինչ, որ կարելի էր առնել - ե՛ւ նաւատորմի-
 զը, ե՛ւ դադուլները - Լյօյե-Ջօրջը սկսեց պաշտպանել չափաւորու-
 թեան սկզբունքը եւ 1919 թւի մարտ 26-ին Վեհաժողովին ներկայա-
 ցրած իր նշանաւոր յուշագրով վճռական կերպով դիմադրում է Փը-
 րանսական ծայրահեղ պահանջներին եւ առաջարկում Գերմանիային
 ընդունել տալ այնպիսի պայմաններ, որոնց իրադրօժումը հնարա-

*) A. Tardieu "La Paix", Paris.

ւոր է եւ որոնց մէջ թաղեալ չլինի նոր պատերազմների սաղմը:
 Քլէմանսօն ամենաեռանդուն կերպով յետ է մղում Լյօյե-Ջօրջի չա-
 փաւորութեան քարոզը եւ հեղնօրէն պատասխանում է, թէ՛ եթէ
 Գերմանիային հարկաւոր է դիջումներ անել, ապա առաջին հերթին
 հարկաւոր է վերադարձնել նրա դադուլներն ու նաւատորմիւրը...
 պէտք է Գերմանիային դուրս չպրտել համաշխարհային քաղաքակա-
 նութեան շրջանակից...:

Այս երեք կենտրոնական դէմքերի շուրջը վխտում էին բազմա-
 թիւ ուրիշ մանր ու խոշոր գործիչներ: Փարիզը Վեհաժողովի օրե-
 րին դարձել էր կրքերի, վէճերի, պայքարների ու ինտրիգների բոյն:
 Հազարաւոր հակամարտ ձգտումներ խաչաձեւում էին իրար: Միլիտ-
 նաւոր աչքեր Փարիզ էին ուղղւած: Այնտեղից էր սպասւում արդա-
 րութեան եւ ազատութեան արեղակի ծագելը: Աւա՛ղ, արդիւնքը ե-
 դաւ 1919 թ. յունիս 28-ի Դաշնագիրը: Ի՛նչ տեսց նա:

Մեր նպատակը չէ այստեղ ո՛չ այդ Դաշնագրի բովանդակու-
 թեամբ զբաղւել, ո՛չ էլ նրա սկզբունքները քննադատել, բայց որպէս-
 զի աւելի շեշտւած ու ցայտուն լինի հակասութիւնը պատերազմի
 յայտարարւած նպատակների եւ ստացւած արդիւնքի միջեւ, առաջ
 բերենք երկու խօսքով գլխաւոր պայմանները Վերսայլի Դաշնագրի:
 Մանրամասնութիւններով հետաքրքրւողները կարող են կարդալ Նիտ-
 տիի, Քէյնսի եւ Թարդիէօյի աշխատութիւնները:

Վերսայլի Դաշնագրի առաջին մասով հաստատուում է Ազգերի
 Դաշնակցութիւնը: Ըստ Վիլսընի, որ այդ հիմնարկութեան հոգե-
 հայրն է, Ազգերի Դաշնակցութիւնը պէտք է լինէր անկախ բոլոր
 ազգերի մի դաշնակցութիւն «ապահովելու համար փոխադարձաբար
 թէ՛ մեծ եւ թէ՛ փոքր պետութիւնների քաղաքական անկախութիւնն
 ու հողերի անձեռնմխելիութիւնը: Ազգերի Դաշնակցութիւնը մի տե-
 սակ համաշխարհային արդարութեան մարմնացումը պիտի լինէր,
 որ կարգադրելու եւ վարելու էր ազգերի ճակատագիրը՝ ինքնորոշ-
 ման եւ հաւասարութեան հիմքերով: Վերսայլում ստեղծւած Ազգերի
 Դաշնակցութիւնը յարմարեցեց մեծ պետութիւնների քաղաքական
 ձգտումներին եւ հէնց սկզբից նւիրագործեց անարդարութիւնն ու
 անհաւասարութիւնը: Պարտեալ ազգերը դիտակցօրէն դուրս ձգե-
 ցին նրանից: Միութեան անդամների մէջն էլ դրեց տարբերութիւն:
 Միութեան գործունէութեան կարգն ու կանոնները այնպէս են, որ
 փաստօրէն կարող է կատարել այն, ինչ որ հաճելի է մեծ պետու-
 թիւններին: 15 տարւայ ժրնեւի փորձը եւ Վիլսընի ձեռակերտի այս-
 օրւայ խղճուկ պատկերը՝ մեկնութիւնների տեղ չեն թողնում:

Դաշնագրով Գերմանիայի վրա դրեցին այնպիսի պահանջներ,

1922-1923

որոնք ոչ միայն հակասում էին պատերազմի յայտարարւած նպատակներին ու զինադադարի սկզբունքներին, այլև ակնյայտնի կերպով անիրազուրկ էին: Գերմանիան յայտարարեց պատասխանատու պատերազմի համար եւ պարտաւորեց հատուցանել Դաշնակիցների բոլոր վնասները: Գերմանիայից անջատուցելն ո՛չ միայն Ալգասն ու Լորէնը, այլև Սաարի հովիտը, Պոզնանի եւ Արեւելեան Պրուսայի մի մասը, Վէրլին Սիլէզիան, Դանձիգը, Արեւելեան Շլէզվիգը: Հոնոսի ձախ ափին գտնւած հուլերը դրւում են Դաշնակից զորքերը, մինչև որ Գերմանիան կատարէ իր վրա դրւած պարտաւորութիւնները: Գերման 600 տոնոյի վեր բոլոր առեւտրական նաւերը, 1000-1600 տոնոնոց նաւերի կէսը եւ ձկնորսական նաւերի քառորդը յանձնւում է Դաշնակիցներին: Գերմանիան պարտաւոր է հինգ տարի շարունակ տարեկան 200,000 տոնո տարողութեամբ նաւ շինել Դաշնակիցների համար:

Գերմանիան զիջում է բոլոր գաղութները, որոնց մեծ մասը անցնում է Անգլիային, իսկ Քոնգոի մի մասին եւ Քամեռունի եւ Տոգոի չորս հինգերորդին տիրում է Ֆրանսան: Գերմանիան հրաժարւում է իր բոլոր իրաւունքներից Չինաստանում, Սիամում, Մարօքում, Եգիպտոսում, Թիւրքիայում, Բոլղարիայում եւ Շանտունում: Գերմանիայից դուրս եւ գաղութներում ապրող գերմանացիների մասնաւոր սեփականութեան համար հաստատւում է՝ յատուկ դրութիւն: Գաղութներում եւ ուրիշ մի շարք երկրներում գտնուող գերմանական դրամագլուխները դրւում են:

Գերմանիան ոչնչացնում է իր մնացուց թանակն եւ պահում է հարիւր հազարից ոչ աւելի վարձու զինուորներ երկրի ներքին անդորրութեան ապահովութեան համար: Կենտրոնական սպայակոյտ գոյութիւն չպիտի ունենայ: Բոլոր ամբուստները պէտք է քանդուին: Դաշնակից վերահսկիչ մարմինների միջոցով պէտք է ոչնչացնել բոլոր տանքերը, սաւառնակները, ծանր ու դաշտային թնդանօթները (35,000 թնդանօթ, 160,000 դնդացիք, 2,700,000 հրացան) եւ զինագործական մեքենաները: Պէտք է ոչնչացնել զինուորական նաւատորմիղը: Գերմանիայի հաշիւն ստեղծւում են յատուկ յանձնախումբեր՝ հսկելու համար այս պայմանների իրագործման վրա:

Գերմանիան անմիջապէս յանձնում է Ֆրանսային եւ Բէլգիային 140,000 կթան կով, 40,700 ձի, 4,000 եղ, 120,000 ոչխար, 40,000 արջառ, 15,000 խոզ, երկրագործական գործիքներ եւ մեքենաներ, շինութեան նիւթեր, զեղեր ու քիմիական նիւթեր, թանգարանային իրեր, գրքեր, ձեռագրեր, նկարներ եւ այլն:

Գերմանիան հատուցանում է պատերազմի բոլոր վնասները: Հատուցման դումարը որոշւում է առանձին յանձնաժողովի կողմից: Գերմանիան իրաւունք չունի Դաշնակից երկրներից եկող ապրանքի վրա դնել աւելի մաքս, քան ուրիշ երկրներից եկող ապրանքների: Գերմանիան պարտաւոր է ի հաշիւ հատուցումների 10 տարի անընդհատ հասցնել Ֆրանսիային տարեկան 7 միլիոն տոն քարածուխ: Բացի այդ հինգ տարի տարեկան 20 միլիոն տոնից ոչ աւելի եւ հինգ տարի տարեկան 8 միլիոն տոն պէտք է հասցնել Ֆրանսիայի հիւսիսային աւերւած նահանգներին: Նոյնպէս եւ Բէլգիային, 10 տարի շարունակ, տարեկան 8 միլիոն տոն քարածուխ եւ Իտալիային առաջին հինգ տարին տարեկան 4½ միլիոն եւ հետագայ հինգ տարին 8½ միլիոն տոն: Դաշնադրի հիման վրա Գերմանիան յանձնեց յաղթող պետութիւններին 5,000 շոգեշարժ եւ 150,000 վազոն բոլորովին սարքւած վիճակի մէջ եւ իրենց լրացուցիչ մասերով: Գերմանական արտածութիւնը դրեց Դաշնակիցների հսկողութեան տակ: Էլքա, Հոնոս, Օդէր, Դանուբ գետերի համար հաստատուցելն միջազգային յանձնախմբեր: Գերմանիան հողում է Դաշնակից դրւուող բանակների եւ յանձնաժողովների ծախքերը: Ի հաշիւ հատուցումների Գերմանիան առաջին երկու տարին վճարում է 20-ական միլիարդ ոսկի մարկ: Վճարելի հատուցման սկզբնական դումարը որոշւում է 350 միլիարդ ոսկի մարկ...:

Ահա թէ Վէրսայում ինչ ձեւ ստացան նախագահ Վիլսոնի հրաշակած սկզբունքներն ու Բրիտանի Դաշնակիցների անունից արած անշահահինդիր յայտարարութիւնները: Իէյնսը առ այդ վրդովւած բացազանջում է.

«Դժւար է պատմութեան մէջ գտնել աւելի աննորմալ, աւելի խղճուկ եւ բոլոր կողմերի համար աւելի անդոհացուցիչ բանակցութիւններ: Ես կասկածում եմ, թէ այդ աշխատանքներին մասնակցողներից որեւէ մէկը յիշէ նրանց առանց ամօթի»...:

Իէյնսը, իհարկէ, չափազանցնում է. Վէրսայի Դաշնադրի հեղինակները՝ որոնք մեռան, իսկ ողջերը այսօր էլ ոչ միայն չեն մաշում իրենց գործից, այլև պարծենում են նրանով: Եւ անշեղ շարունակում են հետեւել Վէրսայում դժւած ուղեգծին: Աւելի. Քրլէմանսոնների ու Լյօյլ-Ջորջերի սայլին վերջին պահուն եկան լծելու եւ նրանք, ուղբեր դեռ երէկ ոճիր էին համարում նրանց գործը. Ստալիններն ու Լիտվինովները այսօր Վէրսայի Դաշնադրի անձեռնմխելիութեան եռանդուն պաշտպաններն են:

Tempora Mutantur! - Ժամանակները փոխւում են: Փոխւում են եւ մարդիկ ու հասկացողութիւնները: Փարիզ.

ՌՈՒԲԵՆ ԱՐԱՆԱՄԵԱՆ

ՖԵՐՂՈՎՍԻՆ ԵՒ ԻՐ ՇԱՀՆԱՄԷՆ

(ԾՆՆԻԵԱՆ ՀԱԶԱՐԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ)

Ֆէրղովսին, այն բանաստեղծը, որի անունը մեր օրերում ողորդել է ամբողջ քաղաքակիրթ աշխարհը, որով իրաւամբ պարծենում է վաղեմի Իրանը, ապրում էր 10-11-րդ դարում: Միանգամայն անհիմն է այն պարզունակ պատկերացումը, որի համաձայն Ֆէրղովսին է հիմք դրել պարսից նոր կամ մուսուլմանական գրականութեան: Նրանից առաջ եղել է նախընթաց շքեղ մուսուլմանական գրականութիւն, նրա ժամանակ եղել է բարձր քաղաքակիրթութիւն, որ սուել է առաջնակարգ բանաստեղծներ:


Նրա ծննդեան օրերում Իրանի կոյր գուսանը, մեծահուշակ Ռուգաֆին հնչեցնում էր հռչակաւոր դասիղէները եւ դադարները, որոնցով նա անմահացաւ պարսից գրականութեան մէջ որպէս նրա մեծ հիմնադիրը, իսկ նրա երիտասարդութեան տարիներում ծաղկում էր նախաֆէրղովսեան շրջանի երկրորդ մեծ բանաստեղծը՝ Դադիդին, որ ձեռնարկեց շահնամէ կաղմելու նոյն հիմունքներով, ինչ որ Ֆէրղովսին, բայց հազիւ հազար երկտող դրած՝ ընկաւ խանդոտ թուրք տարիածուի դաշոյնից:

Նրա ժամանակակիցներն էին բանաստեղծների թագաւոր (մալէբօշտարա) Օնտորին, մեծանուն Ֆառոդիսին, հռչակաւոր Մանուգէհրին եւ ուրիշները:

Նրա ժամանակակից Մամանեան յուսամիտ արքաները հովանաւորներ էին գիտնականների եւ գրականագէտների, որոնց համար ստեղծել էին մեծամեծ յարմարութիւններ. այսպէս՝ Մամարդանդի հռչակաւոր գրադարանում աշխատում էր հանճարեղ գիտնական Աբու Ալի Սինան (Ալիսեննան), իսկ Ֆէրղովսու կեանքի վերջին տարիներում Սոլթան Մահմուդ Ղադիս-իի արքունիքում խմբած էին 400 գիտնականներ, գրականագէտներ, բանաստեղծներ, որոնք բարձր մշակութային աշխատանք էին կատարում:

Այսպիսի մի դարում էր ապրում այն բանաստեղծը, որին վի-

*) Մոյն յօդածը մի ընդհանուր ակնարկ է Ֆէրղովսու եւ նրա Շահնամէի մասին, որ կազմած է մեր «Ֆէրղովսին եւ իր Շահնամէն» գրքի հիման վրա, որ տպագրում է ներկայումս Թէհրանում:



Ֆ Է Ր Տ Ո Վ Ս Ի

ճակատ չը իր հռչակաւոր քերթւածով բանաստեղծներէ բանաստեղծը դառնալ եւ իրանի փառքը հանդիսանալ:

Ֆէրդովսու կեանքը շրջապատուած է բազմաթիւ առասպելներով շնորհիւ հետագայ կենսագիրներէ եւ մեծ աշխատանք էր հարկաւոր գերմանացի մեծանուն գիտնական Նէօլդէքէին գտելու եւ մաքրելու նրա կենսագրութիւնը եւ հաւաստի տեսլներ առաջարկելու: Ըստ այդ տեսլների, Ֆէրդովսին եղել է Դեհզան,* հաւանաբար զինւորական. ծնւել է 934 թ. Թուսում կամ նրա շրջակայքում: Հասուն տարիքում նա միտք է յղացել կամ առաջարկութիւն է ստացել ուսանաւորի վերածել այն արձակ շահնամէն, որ կազմւել էր Թուսում չորս անձանց ձեռքով պահլաւական խոթայ նամակ (արքայադիրք) մատեանի հիման վրա եւ 30-35 տարի նւիրել է Շահնամէի ստեղծագործման: Այդ ժամանակի մեծագոյն մասը նա աշխատել է նախ քան Սոլթան Մահմուդի արքունիք գալը: ապա եկել է սոլթանի մօտ:

Սոլթան Մահմուդ ստրուկ թուրքերի ցեղից ծագած մի նշանաւոր թագաւոր էր, որ կարողացաւ բոլոր ժամանակակից պարսիկ պետութիւնները (Սամանեաններին, Ջիարիդներին, Բուիդներին եւ այլն) իր իշխանութեան ենթարկել եւ մի շարք փայլուն յաղթանակների շնորհիւ ստեղծեց մի ընդարձակ պետութիւն, որ Հինդոս գետի ափերից սկսած տարածւում էր մինչեւ Խալիֆատի սահմանները, եւ իրեն սոլթան հռչակեց: Այդ թուրք փառեշահը չէր կարող դուր գալ Ֆէրդովսուն, որ թաղւած էր իր երկրի անցեալ փառքի հերոսական յուշերի մէջ, եւ շուտով առաջ եկաւ գտութիւն. Սոլթանը սպառնաց նրան փղի ոտքերի տակ նետել, իսկ նա գրեց իր հռչակաւոր սատիրը (երգիծարանութիւնը), որտեղ ցուցադրում էր սոլթանի ստոր ծագումը: Տեղի ունեցաւ ծերունագարդ բանաստեղծի փախուստը դէպի Թարարէստան (Մազանդրան), ապա Բուլայհներէ կամ Բուիդների երկիրը, որտեղ նա գրել է իր երկրորդ մեծ աշխատութիւնը՝ Իւսոֆ վա Զոլէյխա (Յովսէփ եւ Զոլէյխա), իսկ ըստ հետագայ աւանդութեան՝ նաեւ խալիֆի մօտ: Ինչ եւ իցէ, յայտնի է, որ Ֆէրդովսին խոր ծերութեան մէջ, երեւի ապահով ըզգալով իրեն, վերագարձաւ իր ծննդավայրը, որտեղ եւ մեռաւ: Այն տեղեկութիւնը, որի համաձայն Թուսի մի դարպասով մտնում էին սոլթանի ուղարկած ոսկով բեռնաւորւած ուղտերը, իսկ միւս դարպասով դուրս էին տանում բանաստեղծի աճիւնը, մի գեղեցիկ մըտածին աւանդութիւն է եւ ոչ աւելի:

*) Այսպէս էին կոչւում խոշոր կալածատէրերը, որոնք շնորհիւ իրենց դիրքի գրաւում էին պատմութեամբ:

ընդունել զրազաշտական կրօնը: Ֆէրզովսին նոյնիսկ Քէյ Սոսրովին զրազաշտական է դարձնում. այս բոլոր հանգամանքները ստիպում են եւրոպական գիտնականներին Ֆէրզովսուն զրազաշտականների շարքը մտցնել կամ դոնէ համարել զրազաշտականութեան երկրպագու, թէպէտ յայտնի է, որ նա չիա աղանդի կողմնակից էր:

Մահմեդականութեան ազդեցութիւնը. — Մահմեդականութիւնը, որ երեք եւ կէս դար շարունակ խոր արմատներ է ձգել Իրանում, չէր կարող չանդրադառնալ հեղինակի հոգեբանութեան վրա, որի հետեւանքն էր մի շարք մուսուլմանական երեւոյթների վերադրելը առասպելական դարաշրջանին:

Այդ երեւոյթների մէջ առաջնակարգ տեղ է գրաւում կնոջ նոր ստեղծած ընկերային դրութիւնը. կանանց տիպերը ոչ մի գործօն դեր չեն խաղում Շահնամէում եւ զուր կը լինէր այնտեղ փնտուել այնպիսի տիպեր, ինչպէս են Անդրոմաքէ, Պենելոպէ կամ Նաւսիկա: Բոլոր սակաւաթիւ հերոսուհիները նրա համար են հանդէս գալիս բեմի վրա, որպէսզի անմիջապէս իջնեն վարագոյրի յետեւը կամ երբեք չերեւալու պայմանով եւ կամ որպէսզի հետագայում երեւան դան որդուն կամ այլ հարազատին ողբալու համար: Մի շարք առաքինի կանանց կողքին մենք տեսնում ենք դաժան տիպեր, որոնցից ոմանք հարեմական, ինչպէս Սուղարէն, որ իր տոփանքի ցանցի մէջ է ուզում սեղմել Սիւաուշին, միւսներն արեւելեան հակումներով, ինչպէս Սինդոխտը, որ սոսկալի ծեծ է տալիս նաժիշաին:

Վէպի գեղարւեստական կողմը. — Որպէսզի ուղիղ գաղափար կազմած լինենք վէպի գեղարւեստական կողմի մասին, պէտք է ի նկատի ունենանք, որ Ֆէրզովսին իր հսկայական նիւթից չափական գեղարւեստական քերթած է ստեղծել՝ միանգամայն հաւատարիմ մնալով բնագրին:

Վէպի գեղարւեստականութեան նպատող հանգամանքներն են հերոսական տոնը եւ հայրենասիրական շունչը: Նա սաւառնում է իր հերոսների միջոցով եւ ապրում է նրանց ապրումներով. վէպըն ամբողջովին դառնում է ներբողների մի շարք, ձօնւած Շահնամէի հերոսների սխրագործութեանց: Հին հերոսները եւ բանակները իրար յետեւից յարութիւն են առնում մեր աչքի առաջ եւ բանաստեղծն իրաւունք է ստանում ասելու. «Տառապանքս տեւեց երեսուն տարի, բայց Աջամն*) իմ երգով կենդանի արի»:

Հերոսների պաշտամունքը թանկ է Ֆէրզովսու համար, բայց կայ նրա համար հերոսներից էլ աւելի թանկ բան եւ այդ հայրեն-

*) Աջամ — Պարսկաստան:

նիքն է: Աւելի մեծ հայրենասէր երեւակայել անկարելի է — Իրանի բնակչութեան բոլոր խաւերի մէջ լայն չափերով ազգային գիտակցութիւն մտցնողը Ֆէրզովսին է:

Իր հերոսական յաղթ խառնածքին Ֆէրզովսին միացնում է անսահման քնքոյշ դժեր. որքան քնքոյշ են Ձոհրարի զգացմունքները դէպի իր անծանօթ հայրը, որին նա ուզում է թաղաւորեցնել Քէյ Քաուսի տեղ: Իսկ ի՞նչ յուսահատ փայլախալով է շրջապատում Ֆէրզովսին Ձոհրարին, որի վերահաս մահը շողում էր հօր դաշոյնի ցուրի մէջ:

Հազարաւորներով են Ֆէրզովսու ընտիր արտայայտութիւնները. բերենք թարգմանարար մի երկուսը միայն. — Իրանի փահլեւան Գուզարդը արտայայտում է իր քէնի խորութիւնը դէպի Թուրանի թագաւոր Աֆրասիաբը. —

Քէնից ես չեմ փնտրում հանգիստ, բուն անխաբ,
Ես եմ, Գուրգու, մէյդանն ու Աֆրասիաբ.

Ռոստամ իր հուշակաւոր ձիուն, Ռաիշին կորցրած (կրկին անգամ), թամբը շալկած գնում է նրան որոնելու. Ֆէրզովսին հեղնօրէն նկատում է. —

Այսպէս է աշխարհի օրէնքը կոպիտ,
Մերք քամբի մէջ բազմած, մերք քամբը մէջքիդ.

Ռոստամ նետահարում եւ սպանում է Թուրանի ահարկու փահլեւան Աշկրուսին. —

Երբ նա նետը խփեց Աշկրուսի կրծքին,
Երկինք համբոյր տեց հերոսի ձեռքին.

Սուղարէի գովքից. —

Հասակը բարձրակայ, մագերը կամար,
Լեզուն որպէս դաշոյն, շուրթերը շափար:

Ֆէրզովսու խոշոր հատումների մէջ իր գեղարւեստականութեամբ եւ տխուր ողբերգական տոնով առաջին տեղը բռնում է Ռոստամ եւ Ձոհրար միջադէպը, այն չքնաղ առասպելը, որ դեռ երկար դարեր արտասուք կը քամէ վշտահար հօր եւ նրա անմեղ չքնաղ գաւակի գալարումները կարգացողի աչքերից: Մա յաւերժական անմեռ գրեւածք է, նման Սաւիտրիին, նման Հեկտորի մահաւան, նման Ջիզմուդի առասպելին: Շատ գեղեցիկ, բայց Ռոստամ եւ Ձոհրարի կախարդական հմայքը շունեն էսֆանդիարի, Սիւաուշի, Բիթան եւ Մանիթէի դէպքերը եւ որոշ կտորներ Բահրամ Գուրից, մանաւանդ Բահրամ Գուր եւ Աղադէն:

Ռազմական հատուածները ընդհանուր առմամբ ազդու են եւ գեղեցիկ, յիշենք Ռոստամի կռիւը Խաղանի, Աչկրուսի, Սպիտակ դելի, մանաւանդ Զոհրաբի հետ:

Տիպերը.— Շահնամէն ստեղծել է տիպերի շարաններ, որոնցից մենք մի փոքր կանգ կառնենք միայն երեք ամենանշանաւորների — այսպէս կոչւած ջհան փահլեւանների, այսինքն՝ տիգերական փահլեւանների տիպերի վրա, որոնք են Ռոստամ, Զոհրաբ եւ Էսֆանդիար:

ՌՈՍՏԱՄ.— Ռոստամի արտաքին տեսքը սարսուռ ազդող էր, ահա թէ ինչու նրան անւանում էին Թահմիթան, այսինքն հսկայամարմին եւ Փիլիթան՝ փղամարմին: Մայրը նրան ծնեց չլուծած ծանր երկունքի տառապանքներից յետոյ՝ Սիմորդ առասպելական թռչունի օգնութեամբ. նրա պապը՝ Սամ փահլեւանը կարգեց նրա համար տաս ծծմայր. մանուկ հասակում նա ուտում էր հինգ մարդու չափ, իսկ երբ մեծացաւ, նրա բաժինն էր սովորաբար ամէն անգամ մի խորոված ցիւ (վայրի էջ). նրա ոյժն այնքան ահռելի էր, որ ըստ Մ. Խորենացու նրան վերագրում էին 120 փղի ոյժ: Քայլելիս նրա ոտները քարերի հետ թաղում էին գետնի մէջ, եւ նա ստիպւած էր խնդրել Աստուծուն ուժի մի մասը վերցնել նրանից. այս է պատճառը, որ նա վստահ դուրս էր դալիս ոչ միայն առիւծների եւ փղերի դէմ, այլե՛ւ այնպիսի հրէշների, ինչպիսին էր Մազանդերանի դեւերի պետը՝ Սպիտակ դելը եւայլն: Չնայած իր ամենակարող ուժին, նա անսահման հաւատարիմ էր Իրանի վեհապետներին, բայց երբեմն բռնկում էր եւ դուրս պոթկում սրտի ամբողջ դայրոյթը:

Չնայած իր մեծ առաքինութիւններին, նա ունէր եւ մութ կողմեր, որ նկարագրել է Ֆէրդուսին, առանց խնայելու իր փայփայած հերոսին:

ԶՈՀՐԱԲԸ ոսկի գրչի աննման նկարագրութիւն է, մի քնքոյշ էակ, որ լոյս, ջերմութիւն ու սէր է սփռում իր շուրջը: Զոհրաբի առաքինութիւնների նկարագրութեան մէջ Ֆէրդուսին մարդկային յարաբերական կարողութեան ամէն սահման անցել է:

ԷՍՖԱՆԴԻԱՐ.— Ֆէրդուսու ստեղծած մեծ ջհան փահլեւաններից է, Ռոստամի հօր արիւնդը: Նա Գոշթասպ թագաւորի որդին էր. Ռոստամի պէս ունեցաւ իր հաճախանք (եօթն արկածները), խորտակեց Արջասպի բանակը, նւաստացրեց Թուրանի թագաւորին եւ տարածեց զրադաշտի կրօնը Իրանի սահմաններից դուրս: Հռչակաւոր է Էսֆանդիարի մենամարտը Ռոստամի հետ եւ նրա եղբրական մահը:

Ֆէրդուսին Շահնամէնում.— Կարիքը եւ կեանքի անհաւասար ելակէշների ուսումնասիրութիւնը առջ են բերել փիլիսոփայ բանաստեղծի մէջ յուռետես վերաբերմունք դէպի աշխարհային երեւոյթները. նա անվերջ հնչեցնում է իր «այսպէս է»-ները. օրինակ, «Այսպէս է այս ապնջական երկրի օրէնքը. երբեմն նազանիք ու փայտաբլուրիւն, երբեմն ցաւ ու տառապանք»:

Սակայն Ֆէրդուսին գուրդ չէ եւ լաւատեսութիւնից. այդ առաջանում է բանաստեղծի այն խոր համոզումից, որ բոլոր ոճրագործները պատժւել են կը պատժւին իրենց գործած յանցանքների համար: Եւ մեկնելով այս ելակէտից՝ նա անվերջ շարժում է Իրանի բանականներն ընդդէմ Թուրանի, ապա եւ Ռումի, որպէս յանցապարտ պետութիւնների:

Ֆէրդուսին մասնաւոր բացասական վերաբերմունք ունի դէպի կանայք, որոնց մասին այն կարծիքին է, որ «երբ սպասւած զաւակը լոյս աշխարհ եկաւ, սիրտը պէտք է կտրել կանանց սիրուց»:

Համեմատութիւն հայկական վէպի հետ.—*) Պարսկական վէպի հայկական աղբիւրներին մենք ծանօթացանք վերը. այժմ մի քանի համեմատութիւններ անենք հայկական եւ պարսկական վէպի մէջ, նկատելով, որ պարսկական վէպի ազդեցութիւնը շատ հաւանական է մեր հին վէպի վրա, բայց այդ սպառնացանքները համար պահանջւած նիւթը չկայ:

Սիւլուշի եւ Քէյ Խոսրովի շարանդ (գիշերադոյն) ձի նստելը յիշեցնում է հայկական վէպի «Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեւան գեղեցիկ» պարբերութիւնը (Մ. Խորենացի, Գիրք Բ. Գլ. Ծ.):

Շահնամէնում հարիւրաւոր անգամներ խօսւում է ոսկի, գոհարեղէն եւ մարգարիտ շող տալու մասին, որ տեղի էր ունենում յաղթանակների եւ մեծ ուրախութիւնների ժամանակ: Այդ սովորութիւնը կար եւ մեզնում եւ պահւած է մինչեւ մեր օրերը հարսանիքի ժամանակ. Մովսէս Խորենացին այդ առթիւ պահել է մեզ մեր հին վէպի մի սիրուն հատւածը. «Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեան Արտաշիսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկան»: Ահա եւ մի կտոր Շահնամէնից. «Այնքան գոհար ցանեցին, որ թագաւորը նրա (գոհարի) մէջ անյայտացաւ» (Գիրք Բ. Գլ. Ծ.):

Թուսի դարինքաՓչը (ոսկի կոշիկը) յիշեցնում է «կարմիր զգեստ միոյ ոտին», որ Արգաւանի մենաշնորհն էր (Գիրք Բ. Գլ. Խէ.):

Իսկ Զոհրաբի Դմաւանդում փակելը յիշեցնում է Մասեաց քաջե-

*) Մեր «Ֆէրդուսին եւ իր Շահնամէն» գրքում այս համեմատութիւնը կատարւած է ման յունակաւ եւ մասամբ գերմանակաւ վէպի հետ:

րի Արտաւազդէին այլի մէջ արգելելը (Բ., Գլ. ԿԱ.) : Նման առասպել զոյութիւն ունի եւ վրացիները մօտ Ամիրանի մասին :

Հայկական նոր վէպի մէջ եւս նմանութիւններ կան . թւենք մի երկուսը .

Ռոստամի եւ Զոհրարի ձի ընտրելը նման է Դաւթի քուռակ ընտրելուն :*) - Սանդուբ խանութի եւ Դաւթի մենամարտի նմանը ունենք Զոհրարի եւ Գորդ Աֆարիզի մենամարտի մէջ :

Ռոստամ եւ Զոհրարի մենամարտի նմանութիւնը, միայն հակառակ ելքով (զաւակն սպանում է հօրը), մենք գտնում ենք Դաւթի սպանութեան մէջ, որ տեղի ունեցաւ Չմլիկը սուլթանի աղջկայ ձեռքով :

Շահնամի ազդեցութիւնը եւ հրատարակութիւնները .- Շահնամէի ազդեցութեան տակ եւ նրա հետեւողութեամբ 11-րդ դարից սկսած, առաջացել են մի շարք վէպեր, որոնց հեղինակները նպատակ են ունեցել լրացնելու Ռոստամի ազգասոհմի մի քանի փահլեւանների գործերը . այսպէս են Գարշասպնամէ, Սամնամէ, Զհանդիրնամէ, Փարամորզնամէ, Բանու-Գաշասպնամէ եւ Բորզունամէ, որոնց միանում է եւ Բահմաննամէ :

Ֆէրզուսու ձեռագրերը բազմաթիւ են, մեծ մասամբ խնամքով արտադրած եւ նկարազարդած . հրատարակութիւնները նոյնպէս բազմաթիւ են . յիշենք զլիւստորները միայն . Թէօռներ Մաքան, Կարիթա, 1829 . մի շարք պարսկական հրատարակութիւններ՝ Բոմբէյ, Թէհրան եւ այլն : Աւելի կարեւոր են՝ Mohl-ի քննական հրատարակութիւնը (Փրանսերէն թարգմանութեամբ), շքեղ հրատարակութիւն 1838-78 . Vullers-ի սպա նրա մահից յետոյ Landauer-ի հրատարակութիւնը Liber Regum qui inseribitur Schahname (չվերջացած) 1877-1884 :

Թարգմանութիւններից յիշենք կարեւորագոյնները . Փրանսերէն լեզուով՝ յիշածս Mohl-ինը, արձակ թարգմանութիւն, նաեւ առանձին, 7 հատոր, Le livre des Rois 1876-8: Անգլերէն լեզուով Rogers 551 էջ 1907 թ. և Warner եղբայրների՝ 9 հատոր 1905-15: Իտալերէն լեզուով՝ Pizzi, Թուրին. 1886 88:

Առանձին հատուածների թարգմանութիւններ բազմաթիւ են գանազան լեզուներով եւ առանձնապէս բազմացան ֆէրզուսու հազարամեակի առթիւ :

Հայերէն լեզուով կան Սամ . Գիւլգատեանի թարգմանած Ռուստամ եւ Զոհրար, Սիւաուշ եւ Զոհակ . Դոկտոր Յ . Թիրեաքեանը

*) Սասմայ ծոփ, էջ 29:

Թարգմանել է Արտաշէր Բարկան : Հազարամեակի առթիւ նոր թարգմանութիւններ կատարել են պ . պ . Թիրեաքեան եւ Յ . Միրզայեան (հատուածներ) :


Գնահատականը եւ ինքնագնահատականը .- Եթէ համարձակւենք մեր գնահատականը տալ Ֆէրզուսու մասին, կը մնայ ասել, որ նրա տեղը մեծ վիպադիրների կաճառում՝ Հոմերոսի, Վերգիլիոսի եւ այլ մեծ վէպերի հեղինակների կողքին է :

Այս բանը չէր կարող չզգալ եւ ինքը, մեծ բանաստեղծը . նա իր բարձր արժանաւորութեան գիտակցութիւնը հանդէս է բերում Սուլթան Մահմուդի դէմ գրած երգիծարանութեան հետեւեալ տողերում, որոնք յիշեցնում են Պինդարի, Հորացիոսի եւ Ուլիլիոսի քրմական օրհներգները :

Փառք հերոսների՝ հօր, անւանի,
Մէկ մէկ իմ մատեանում կացուցի յայտնի .
Բոլոր մահացածներն այն հնամեկի,
Իմ հրաշագործ ձեռքով դարձան կեղտանի :
Յիսուսի պէս մէկ մէկ այդ մեռածներին,
Ես կեանք մերշնչեցի գրչով վերստին :
Քեզ մեծ ծառայութիւն մատուցի, արքայ,
Յիշատակդ աշխարհում անմեռ կը մնայ :
Ապարանքներն ամէն կը նսեմանան,
Անձրեւից ու տապից վառ արեգական :
Ես գրչով հիմք դրի վեհ ապարանքի,
Որ հողմ ու անձրեւից ան երբեք չունի :
Եւ իմ երկի գլխով դարեր կը դառնան,
Սակայն նիստուն մարդիկ այն միշտ կը կարդան :

Եւ իրաւ, այն խանդավառ վերաբերմունքը, որ ցոյց տւեց ամբողջ քաղաքակիրթ աշխարհը հանդէպ մեծ բանաստեղծի յիշատակի նրա ծննդեան հազարամեակի առթիւ, պարզ ցոյց տւեց, որ այնպիսի հազարամեակներ նրա երկի գլխով դեռ շատ կը դառնան, սակայն խոհուն մարդիկ այն միշտ կը կարդան :

Թէհրան .



ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱԻՐԵԱՆ

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆԵԱՆԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Այս տարւոյ մարտ 1-ին, Երեւանում, սրտի երկարատեւ հիւանսութիւնից, 70 տարեկան հասակում, վախճանեց նշանաւոր գիտնական ճարտարապետ Թորոս Թորամանեանը:

Հանգուցեալը Շապին - Գարահիսարի շրջանից էր, հողադործի դասակ, ծնւած 1864 թ. մարտ 18-ին: Նախնական կրթութիւն ստացել էր գիւղի տէր - թողիկեան դպրոցում: 1878 թ. զրկւել էր ծընողներից, բայց կարողացել էր շարունակել ուսումը, երեւան բերելով առանձին ընդունակութիւն զծագրութեան մէջ: 1884 թ. էին համադիւղագրիների եւ ազգականների աջակցութեամբ, Թորամանեանին յաջողեց անցնել Պոլիս եւ մի առ ժամանակ աշակերտութիւն անելով մի հիւան արհեստաւորի մօտ՝ սլաւոնացեաց մտնելու համար Գեղարեւստից ձեմարանը: 1888 թ. նա փայլուն քննութիւն տւեց եւ ընդունեց ձեմարան, ուր այն ժամանակ դասախօսում էին եւրոպացի եւ մի քանի հայ ու յոյն ուսուցչապետներ: Ձեմարանում Թորամանեանը հինգ տարի հետեւեց ճարտարագետական ճիւղին, 1893 թ. աւարտեց փայլուն յաջողութեամբ՝ ստանալով պետական թողակ մասնագիտութիւնը Եւրոպայում կատարելագործելու համար: Վրահասան, սակայն, հայկական հարածանքները, նշանակած թողակը մերժեց, եւ Թորամանեանը, 1896 թ. էին, հեռացաւ Պոլսից ու մինչեւ 1900 թ. զբաղւում էր ճարտարապետութեամբ Բուլղարիայում: Այստեղ նրա գործերը զնային բաւական լաւ. նա ոչ միայն օգնում էր իր ազգականներին, այլեւ անտեսում որոշ գումար, որով կարողացաւ անցնել Փարիզ՝ ուսումը շարունակելու յուսով: Փարիզում սակայն նրա յոյսերը չարգարացան. նիւթական միջոցների պակասը եւ լեզուի անբաւարար ծանօթութիւնը արգելք եղան մտնելու բարձրագոյն դպրոց, եւ նա բաւականացաւ միայն զբաղարաններում աշխատելով եւ թանգարաններ այցելելով: Բայց երկար չկարողանալով գիմանալ՝ վերադարձաւ Բուլղարիա:

Փարիզում Թորամանեանը ծանօթացաւ բանասիրութեամբ եւ հայկական հնութիւններով զբաղւող կար. Բասմաշեանի հետ, որ մտածում էր ճանապարհորդութիւն կատարել գէպի Կովկաս՝ Անիի աւերակները ուսումնասիրելու համար: Այդ նպատակով նա դիմում էր արել հայ հարուսաններին, բայց վերջիններից չօջափելի արդիւնք չէր ստացել: Նրան յաջողւել էր մի փոքր գումար էլ ձեռք բերել Societé Asiatique-ից: Եւ համեստ միջոցներով նա մեկնեց Կովկաս՝ նախօրք կանչելով եւ Թորամանեանին՝ լրացնելու համար իր թերին ճարտարապետութեան բնագաւառում: Թորամանեանը, ողկւորւած Անիի ճարտարապետական արեստն ուսումնասիրելու հեռանկարից, թողեց գործը եւ շտապեց միանալ Բասմաշեանին:

1902 թ. Բասմաշեանն ու Թորամանեանը արդէն Անիում էին: Բասմաշեանը ենթադրում էր Անիում մնալ մի քանի շաբաթ եւ այդքան ժամանակը բաւական էր համարում հայկական ճարտարապետութիւնը ուսումնասիրելու համար, մինչ Թորամանեանը պնդում էր, թէ դրա համար անհրաժեշտ է երկար տարիների անդուշ աշխատանք: Եւ որովհետեւ նրանց նիւթական միջոցները բաւական չէին երկար աշխատանքի համար, որոշում է, որ Թորամանեանը մնայ Անիում, իսկ Բասմաշեանը զնայ հայրենակ խոշոր կենտրոնները եւ զբաղ հաւաքէ Թորամանեանի աշխատանքների համար: Մի քանի անյաջող փորձերից յետոյ, սակայն, Բասմաշեանը վերադառնում է Փարիզ, իսկ Թորամանեանը մնում է Անիում, առանց նիւթական միջոցների:

Անիում Թորամանեանը ենթարկեց ֆիզիքական եւ բարոյական ծանր զրկանքների: Նրան համեստ օգնութիւն էր ցոյց տալիս միայն էջմիածնի ներկայացուցիչ Միքայէլ վարդապետը, որ ինքն էլ հազիւ կարողանում էր գլուխ պահել: Նրանք երկուսը ապրում էին կիսաւերակ մի նիւղի մէջ, առանց վառելիքի, գրեթէ միայն չոր հացով: Սոված, ցնցոտի դարձած հագուստով՝ Թորամանեանը անկարող եղաւ շարունակել սկսած աշխատանքը: Պատահական մարդկանց աջակցութեամբ նա կարողացաւ հասնել էջմիածին, բայց այստեղ նրա վիճակը ոչ միայն չբարելաւեց, այլ, ընդհակառակը, աւելի եւս վատթարացաւ: էջմիածնի համալսարանական միաբանները կասկածով ու հեղնանքով վերաբերեցին բարձրագոյն դպրոցի վկայականից զուրկ Թորամանեանին, նրան կոչում էին «վարպետ», այսինքն՝ պարզ որմնագիր եւ միջոց չուէին աշխատելու:

Այդ այն ժամանակն էր, երբ Ռաջիկ վարդապետ Դատեանը կատարում էր Զւարթնոցի պեղումները: Ներսէս Շինող կաթողիկոսի

650 թւին կառուցած եկեղեցին ընդհանուրի հետաքրքրութեան առարկայ էր, եւ Սաչիկը փնտրում էր ձեռնհաս մէկին, որ կարողանար վերականգնել եկեղեցու յատակադիրը: Սաչիկի հրաւերով Թորամանեանը անցաւ գործի եւ մի քանի լրացուցիչ պեղումներից յետոյ՝ դձեց եկեղեցու ճակատը եւ ներքին հատածները: Թորամանեանի յատակադիրով դուրս եկաւ երեք յարկանի կլոր մի եկեղեցի՝ զուտ հայկական դմբէթով: Այդ եկեղեցին շինող է. դարի հայ ճարտարապետների դադանիքն ու խիղախութիւնը ներքին երկու յարկերի կարգաւորման կիսաշրջանով շարւած նուրբ, դեղալիքաւ սիւնների եւ, ինչպէս ինքը Թորամանեանն էր որակում, ութը «յանդուզն» կամարների դասաւորութեան մէջ էր:*)

Երբ Սաչիկ վարդ.ը Թորամանեանի կազմած յատակադիրը ներկայացրեց վկայեալ ճարտարապետներին, սրանք բոլորը ըմբոստացան չէնքի երեք յարկանի լինելու մտքի դէմ եւ մերժեցին ընդունել հայկական դմբէթի գոյութիւնը: Սաչիկը շատ հեշտութեամբ լուծեց խնդիրը. նա առաւ ու մկրատով կտրեց դմբէթը: Բնականաբար, դրանից յետոյ, յարաբերութիւնները Սաչիկի եւ Թորամանեանի միջեւ խնդարեցին, եւ վերջինս վերադարձաւ Անի, ուր 1904 թ. սկսած մասնակցեց Ակադ. Ն. Մառի կատարած պեղումներին:

Մառը 1892 թ. իվեր դրաղւած էր Անիով: 1892 թ., Կայսերական Հնագիտական Յանձնաժողովի նախաձեռնութեամբ եւ միջոցներով նա սկսեց կատարել պեղումներ, որ շարունակեց եւ 1893 թ.: Տասը տարւայ դադարից յետոյ, 1904 թ. Մառը նորից ձեռնարկեց այդ աշխատանքներին՝ եւ այնուհետեւ տարէ տարի շարունակեց մինչեւ պատերազմի վերջը: Այժմ արդէն աշխատանքները կատարւում էին բացառապէս հայ մշակութային հիմնարկութիւնների ու անհատների եւ գլխաւորաբար Պետերբուրգի Հայ Եկեղեցական Խորհրդի տրամադրած նիւթական միջոցներով:

Աշխատելով Մառի հետ՝ Թորամանեանը ստացաւ որոշ նիւթական ապահովութիւն եւ ամբողջապէս նւիրեց իր սիրած գործին - հայ եւ, յատկապէս, Անիի ճարտարապետութեան ուսումնասիրութեան: Թորամանեանի կեանքում սկսեց մի նոր շրջան: Նա տեղ գտաւ ակադ. Մառին շրջապատող բարձր զարգացման տէր եւ գիտութեան անչափանդորէն ծառայող մտաւորականների մէջ եւ ինքն էլ ամբողջ էութեամբ յանձնեց գիտական - հետազոտական աշխատանքի: Անին յաճախ այցելում էին հայկական հին ճարտարապետութեան առաջնակարգ մասնագէտներ, որոնք կենդանի հե-

*) Տե՛ս Թ. Թորամանեանի յօդւածը, «Մուրճ», 1905 թ. № 5:

տաքքրութիւն էին ցոյց տալիս դէպի Թորամանեանի գործերը, վրձում էին նրա հետ, հաղորդում ու բացատրում գիտութեան կատարած նւածումները այլ բնագաւառում: Բնական է, որ նման միջավայրում Թորամանեանը բոլորովին վերածնէր: Մառը խիստ բարձր էր դնահատում նրա բժախնդիր աշխատանքը, հետը առնում էր հայկական աւերակներն այցելելիս, շատ անգամ նրան մենակ ուղարկում էր որոշ եկեղեցիների հետազոտութեան՝ չափելու եւ քննելու համար: Վերջապէս, իր հետ տարաւ նրան Վրաստան, ուր Թորամանեանը հնարաւորութիւն ստացաւ ծանօթանալու վրաց ճարտարապետութեան եւ հաւաքելու հարկաւոր տեղեկութիւններ: Երեք տարւայ լարւած աշխատանքից յետոյ, Թորամանեանից դուրս եկաւ ըստ ամենայնի գիտնականորէն պատրաստւած մի հնագէտ - ճարտարապետ:

1906 թւին Մառը պեղեց Գագիկ Ա. Թաղաւորի Ժ. դարի վերջը շինած եկեղեցին: Ժամանակակիցների վկայութեամբ այդ եկեղեցին Չւարթնոց եկեղեցու հարադատ պատճէնն էր: Պեղումները լիովին հատաստեցին այս վերջին փաստը: Նրանք հաստատեցին նաեւ, որ Թորամանեանի կազմած եւ Սաչիկի կողմից այնպիսի բարբարոս վերաբերումի արժանացած Չւարթնոցի յատակադիրը ըստ ամենայնի ճիշտ էր, նոյնիսկ ճակատի նկարը ճշուեց ամբողջութեամբ: Բացի ճարտարապետական նիւթից, որ հնարաւորութիւն էր տալիս վերականգնելու Գագիկ Ա.-ի եկեղեցու յատակադիրը, պեղումների ժամանակ գտնեց եւ եկեղեցին շինողի արձանը՝ եկեղեցու կաղապարը ձեռքին: Այդ կաղապարի վարի մասը՝ առաջին երկու յարկերը մընացել էին անեղծ, որով ճշդեց, որ Թորամանեան վերականգնած Չւարթնոցի յատակադիրը բոլորովին համապատասխանում էր իրականութեան, մի հանդամանք, որ շատ բարձրացրեց Թորամանեանի վարկը, իբրեւ հայ հին ճարտարապետութեան մասնագէտի:

Անի հասնելու առաջին օրից իսկ Թորամանեանը յատուկ ուշադրութիւն դարձրեց Ժ. դարում շինւած Առաքելոց եկեղեցու վրա, որ համարւում էր կաթողիկէ մայր եկեղեցի: Իր մեծ մասով նամնացել էր դեռնի երեսին եւ մատչելի էր գիտելու եւ չափելու համար: 1906 թ. Մառը այդ եկեղեցու շուրջը կատարեց հետախուզական աշխատանքներ, որոնք Թորամանեանին տւին խիստ հետաքրքրական տեղեկութիւններ եկեղեցու մեծութեան եւ յատակադրի մասին: Միեւնոյն ժամանակ, Թորամանեանը հետազոտեց ու չափեց էջմիածնի մօտի Հոփիսիմէի եկեղեցին՝ շինւած 619 թ. եւ Մցխեթի վրաց Ս. Սաչ եկեղեցին, որի շինութիւնը սկսւել էր 600 թւականներին եւ վերջացել 619-ին:

Այս աշխատանքները Թորամանեանին ստիպեցին մտածել Հայաստանի հնազոյն եկեղեցիների տիպի մասին: Եւ նա եկաւ այն եզրակացութեան, որ Հայաստանի ամենահին եկեղեցու տիպ պէտք է համարել Էջմիածնի տաճարը, որ սկզբնապէս կոչուում էր Սուրբ Կաթողիկէ եկեղեցի, ապա՝ Շողակաթ եւ, վերջապէս Էջմիածին: 1908 թ. նա տեղափոխեց Էջմիածին եւ որոշեց զբաղւել հայ հնագոյն եկեղեցիների կառուցւածքի խնդրով:

Նոյն ժամանակ, Թորամանեանի կեանքում տեղի ունեցաւ մի դէպք, որ զգալապէս բարւոքեց նրա գիրքն ու նշանակութիւնը: Ակադ. Մառը, գտնելով Թորամանեանի ամենից աւելի հետաքրքրական աշխատութիւնները, մի յանձնարարական գրութեամբ ներկայացրեց Ռուսաստանի Գիտութեանց ձեւարանին, որ այդ աշխատութիւնները քննելու համար կազմեց գիտնականների մի յանձնախումբ: Այդ յանձնախմբի մէջ մտաւ նաեւ քրիստոնէական գեղարւեստի հռչակաւոր մասնագէտ ակադ. Ն. Կոնդակովը, որ խիստ նպաստաւոր վկայութիւն տւեց Թորամանեանի գործերի մասին՝ ընդգծելով նրանց կարեւոր արժէքը Արեւելքի քրիստոնէական արւեստի պատմութեան համար եւ պնդելով նրանց չուտափոյթ հրատարակութեան անհրաժեշտութեան վրա:

Համաշխարհային հռչակ վայելող գիտնականի այդքան քաջալերական կարծիքը չէր կարող չողեւորել Թորամանեանին եւ, բնականաբար, պիտի անդրադառնար նրա գիրքի վրա: Այժմ Էջմիածնում նա այլեւս «վարպետ» չէր, այլ գիտնական հնագէտ — ճարտարագետ: Ապրում էր Գարեգին վարդ. Յովսէփեանի մօտ: Նրա առջեւ բաց էին բոլոր դռները. նա հնարաւորութիւն ունէր աշխատելու լաւագոյն պայմաններում:

Էջմիածնում Թորամանեանը աշխատեց հայ հնագոյն եկեղեցու տիպի պարզարանման վրա: Այս նպատակով նա մանրազնին հետազոտութեան ենթարկեց Էջմիածնի տաճարը եւ ուսումնասիրեց նրա շինութեան եւ բազմաթիւ վերակառուցւածների ու նորոգութիւնների պատմութիւնը՝ սկզբից մինչեւ նորագոյն ժամանակները: Այդ ուսումնասիրութիւնների հիման վրա Թորամանեանը յանգեց այն եզրակացութեան, որ Էջմիածնի տաճարը իր ներկայ ձեւով պահել է հնագոյն եկեղեցու հիմնական մասերը: Իր այդ եզրակացութիւնը հիմնաւորեց հետեւեալ փաստերով.

Յիշեցնենք այստեղ մի քանի խօսքով այդ պատմութիւնը:

Ըստ աւանդութեան, Էջմիածնի եկեղեցին շինւած է 303 թ. Գրիգոր Լուսաւորչի եւ Տրդատ Թագաւորի կողմից, ուրեմն, հայերի քրիստոնէութիւն ընդունելու շրջանում: Յամենայն դէպս, հին-

դերորդ դարի կէսին նա արդէն գոյութիւն ունէր: Շինւած է այն տեղը, ուր Փրկիչը երեւաց Սուրբ Լուսաւորչին շողակաթ սիւնի ձեւով, ընկերակցութեամբ զբարթուն հրեշտակների: Սկզբնապէս հայոց կաթողիկոսների աթոռը գտնուում էր Էջմիածնում, բայց արդէն 452 թ. փոխադրւեց Դւին. այնտեղից 10-րդ դարում անցաւ Շիրակ՝ առաջ Արգիշտի, ապա՝ Անի եւ, վերջապէս, Կիլիկիա, սրտեղից միայն 15-րդ դարում վերադարձեց Հայաստան, ուր 1441 թ. վերապահուցեց Էջմիածնի տաճարը: Կաթողիկոսական աթոռի հեռանալուց յետոյ էլ, Էջմիածինը հայոց աչքին մնաց որպէս գլխաւոր սրբալայր:

Էջմիածնի առաջին յայտնի վերաշինութիւնը տեղի է ունեցել 7-րդ դարում, Կոմիտաս կաթողիկոսի օրով (617-625), երբ փայտեայ կառուցուած փոխարինւեց քարով եւ այդ աթիւ հաստատւեցին պատերը եւ հաւանաբար ուրիշ աւելի կարեւոր փոփոխութիւններ էլ կատարւեցին: 20 տարի անցած ինչ որ վերաշինական աշխատանքներ է կատարւել եւ ներսէս վերաշինող կաթողիկոսը: Թորամանեանը կարծում է, թէ ներսէսի կատարածը եղել է լուրջ վերաշինութիւն, մի բան, որ այնքան էլ հաւանական չէ, որովհետեւ նախ Կոմիտասի կատարած վերաշինութիւնից յետոյ շատ քիչ ժամանակ էր անցել եւ երկրորդ՝ ներսէսը դրաււած էր Զարթնոցի շինութեամբ, որ նրա կարծիքով պիտի վերադանցէր Էջմիածինը, եւ հազիւ թէ ժամանակ ու տրամադրութիւն ունենար հետաքրքրելու վերջինով:

Թէեւ Էջմիածնի տաճարը, պատմութեան ընթացքին, յաճախ ենթարկւել է աշխարհակալների աւերածութեան, բայց յայտնի է, որ 11-րդ դարի կէսերին, Գագիկ երկրորդի այցելութեան միջոցին, կանգուն էր: 13-րդ դարի նրա կործանումը ողբում է Ստեփաննոս Օրբելեանը: 1441 թ. նա վերանորոգւում է: 15-րդ դարից սկսած Օրբելեանը: 1441 թ. նա վերանորոգւում է: 15-րդ դարից սկսած Օրբելեանը մէկից աւելի անգամներ ենթարկւում է մասնակի վերաշինութեան եւ ձեւափոխութեան, բայց արտաքին կերպարանքը, ինչնուրեք եւ ձեւափոխութեան, բայց արտաքին կերպարանքը, ինչնուրեք պէս կարծում է Dubois de Montperéux (Voyage autour du Caucase), մնացել է անփոփոխ: Միւս կողմից J. Strzygowski (Das Etchmiadzin Evang.) պնդում է, թէ Էջմիածնի տաճարի ներկայ շէնքը գոյութիւն ունի 17-րդ դարից սկսած, որովհետեւ Շահ Աբբասը 1604 թ. տաճարի բոլոր քարերը փոխադրել տւեց Սպահան եւ այնտեղ, Նոր — Զուղայում, այդ քարերից շինել տւեց մի նոր եկեղեցի:

Թորամանեանը բռնեց Dubois-ի կողմը եւ Առաքել Դաւրիթեցու պատմութեան հիման վրա ցոյց տւեց, որ Շահ Աբբասը միայն 15 քար է տեղափոխել Սպահան, իսկ Էջմիածնի տաճարը մնացել է

կանգուն:*) Այս տեւալների հիման վրա Թորամանեանը անուամ է հետեւեալ խորհրդածութիւններն ու եզրակացութիւնները:

Յայտնի է, որ Անիի Առաքելոց եկեղեցին կաթողիկէ եկեղեցի էր եւ շինւած էր 10-րդ դարում Գլխի կաթողիկէ եկեղեցու օրինակով: Այս վերջինն էլ, իր հերթին, Թորամանեանի ենթադրութեամբ, շինւած էր էջմիածնի տաճարի օրինակով: Անիի եկեղեցին դրսից քառանկիւնի էր. քառանկիւնի պէտք է եղած լինէր եւ նրա նախատիպը: Միւս կողմից, գոյութիւն ունի Մցխեթի վրաց Ս. Խաչ եկեղեցին, որ նոյնպէս կաթողիկէ էր եւ զարմանալի կերպով նրման էջմիածնի մօտի Ս. Հովհաննէի եկեղեցուն: Վրաց եկեղեցու շինութիւնը վերջացել էր 619-ին, իսկ Հովհաննէի եկեղեցին սկսել էր շինուել նոյն թւականին. սրանից Թորամանեանը եզրակացնում է, որ այդ երկու եկեղեցիներն էլ շինւած են մի երրորդի, այսինքն՝ էջմիածնի օրինակով:

Մտքը տւեց Թորամանեանին եւ այս առեղծւածի լուծումը. Ս. Խաչ եկեղեցին շինուել է վրաց Կիրիոն կաթողիկոսի օրով, որ, հաւանաբար, վճռական ձայն է ունեցել եկեղեցու տիպը որոշելու հարցում: Այս այն Կիրիոնն է, որ առաջնակարգ դեր ունեցաւ հայ եւ վրացի եկեղեցիների բաժանման խնդրում եւ որ վրաց կաթողիկոս դառնալուց առաջ, 7 տարի, եղել էր էջմիածնի տաճարի աւագերէց: Բնական է, որ երբ նա ձեռնարկեց Վրաստանի կաթողիկէ եկեղեցու շինութեան, իրեւ նախատիպ ընդունեց էջմիածնի եկեղեցին: Այն էլ պէտք է ասել, որ հայերի եւ վրացիների գեղարւեստական ճաշակը, ինչպէս եւ բաղմամբիւ կրօնական աւանդութիւններ ու սովորութիւններ շատ նման էին միմեանց եւ եկեղեցիների բաժանումից յետոյ էլ դեռ երկար մնացին նման: Այդ նմանութիւնը մանաւանդ աչքի է ընկնում շինարարութեան բնագաւառում, որովհետեւ վրաց եկեղեցիներից շատերը, եթէ ոչ մեծ մասը, շինւած են հայերի ձեռքով:

Նախնական այս հտադօտութիւններով եւ տեսական հիմնաւորումներով գտեւոյնդւած՝ Թորամանեանը ձեռնարկեց էջմիածնի տաճարի ուսումնասիրութեան: Նա դրսից ու ներսից ամենայն մանրամասնութեամբ չափեց եկեղեցին, հանգամանօրէն քննեց պատերի եւ հիմքի մատչելի մասերի կառուցւածքը եւ հանեց մի շարք եզրակացութիւններ, որոնցից իւրաքանչիւրը ի պիճակի էր հաստատելու:

*) Առ. Գարիսեցի (էջ 201) առաջ է բերում Շահ Աբբասի եւ Ջուղայեցի հայ վանատական Խոջա Նազարի խօսակցութիւնը, որի ժամանակ վերջինն աշխատում էր համագել Շահին, որ սա հոր եկեղեցի շինել տայ առանց հիմք քանդելու:

կատարած դիտողութիւններով: Եւ ամենայն ճշտութեամբ ապացուցեց, որ տաճարը նախապէս եղել է քառանկիւնի շէնք, որ եկեղեցուն խաչի ձեւ տուող կողքի թեւերը հետագայ ժամանակների, այսինքն՝ 7-րդ դարի գործ են: (Մտքը հասցնում է մինչեւ 9-րդ եւ նոյնիսկ 10-րդ դարը):

Թորամանեանի երկրորդ, նոյնպէս շատ կարեւոր եզրակացութիւնն այն է, որ հակառակ արտաքին քառանկիւնի ձեւին՝ եկեղեցին ներսից ունէր խաչի ձեւ. Ս. Հովհաննէի, Մցխեթի Ս. Խաչի եւ Անիի Առաքելոց եկեղեցիների պէս: Այս խաչաձեւութիւնը առաջ էր գալիս նրանից, որ եկեղեցու չորս անկիւնները ունէին չորս սենեակներ, որոնք իրենց մէկ անկիւնով կցւած էին դմբէթը պահող չորս սիւններին: Այս չորս սենեակներն էլ ունէին արտաքին դուռ: Արեւելեան սենեակների դերը պարզ է. նրանք կատարում էին խորանի պաշտօն. արեւմտեան սենեակները, որ դուրկ էին եկեղեցու ներսի հետ հաղորդելու հնարաւորութիւնից, Թորամանեանի ենթադրութեամբ, ծառայում էին նորահաւատների համար («երախայ», «նորահաւատ»), որոնք, օրինակ, յոյն եւ լատին եկեղեցիներում, հաղորդութիւնից առաջ, դուրս էին գնում, իսկ հայոց եկեղեցում մնում էին առանձին սենեակում: Իր ենթադրութիւնը հաստատելու համար Թորամանեանը օրինակ է բերում իր ծննդավայրի Ս. Աստուածածին եկեղեցին, ուր նոյնպէս կան արեւմտեան սենեակներ, որոնք եկեղեցուց բաժանւած են վանդակաձեւ պատերով: Ժողովուրդը այդ սենեակները կոչում էր՝ բէյնամազ սէֆիւսի: Թորամանեանը ցոյց է տալիս, որ էջմիածնի տաճարն էլ ունեցել է նման սենեակներ: Տաճարի արեւմտեան պատում նա յայտնաբերեց էլ դրսից դէպի սենեակը տանող մի դուռ: Հետագային, երբ սենեակը վերացւել է, դուռը ծածկուել է քարերով: Այդ դուռը պայտածել էր, որ ցոյց է տալիս թէ պատը շինւած է եղել 6-րդ դարից առաջ, որովհետեւ յայտնի է, որ արարների Հայաստան գալուց յետոյ եկեղեցիների շէնքերից անհետանում են պայտածել դռները:

Հաստատելով հայոց հնագոյն եկեղեցու արտաքին ձեւն ու ներքին յատակադիւր՝ Թորամանեանը զբաղեց նաեւ էջմիածնի տաճարի կտուրով: Նրա կարծիքով սկզբում կտուրը իջնում էր եկեղեցու երկու կողմերը. հետագային կտուրի այդ ձեւը նկատուել է անյարմար, տանիքը ծածկուել է եկեղեցու առանցքից մէկ կողմ իջնող նոր ծածկով: Այս ենթադրութեան ճշտութիւնը հաստատեց եւ ձեւրունի Սուքիաս եպ. Պարզեանը՝ պատմելով, թէ ինքը լսել է Մակար կաթողիկոսից, որ ուսուստի - պարսկական պատերազմի ժամանակ, 1828-ին, էջմիածինը զբաւուել ու բերդի էր վերածուել ուսուստի:

ների կողմից: Տաճարի տանիքի վրա միշտ կանգնած էին պահակ զինվորներ, որոնք, ցրտից պաշտպանելու համար, յաճախ կրակ էին վառում: Դրանից վնասել էր կտուրը: Երբ, պատերազմից յետոյ, ձեռնարկեցին կտուրի վերանորոգութեան եւ սկսեցին փոխել քարերը, պարզեց, որ վերի ծածկի տակ գոյութիւն ունի մի երկըրորդ, բոլորովին տարբեր ձեւի ծածկ: Այդ ծածկի մէջ երեւան են եկել գաղտնի պահարաններ, որոնց մէջ գտնուել են եկեղեցական սնոթներ եւ կաթողիկոսական դաւազան:

Այս օրինակները, կարծում ենք, բաւական են ցոյց տալու համար, թէ Թորամանեանը որպիսի ուշադրութեամբ, ինչ խնամքով, սրամտութեամբ ու սիրով աշխատում էր եւ ինչպէ՛ս յաջողում էր տրամաբանական ու ճիշտ եզրակացութիւններ հանել տարբեր, յաճախ, ցան ու ցիր, իրարից կտրւած փաստերից ու դիտողութիւններից:

Անիում եւ Էջմիածնում կատարած 16 տարւայ աշխատանքի ընթացքում Թորամանեանը զիջեց առատ հում նիւթ - նկարներ, յայտազօծեր, չափւածքներ, գծագրութիւններ, բացատրական գրւածքներ, յուշագրութիւններ, օրագրութիւններ եւայլն: Հայ նիւթական մշակոյթի համար անգնահատելի նշանակութիւն ունեցող այդ նիւթի մէկ շնչին մասն է միայն ցարդ հրատարակւած: 1913 թ. յայտնի գիտնական Ստրժիկովսկու հրաւերով նա մեկնեց Վիէննա, ուր մի շարք դասախօսութիւններ կարդաց համալսարանի կից Արեւելեան ճարտարապետութիւնների ուսումնասիրութիւնների համար կազմւած հաստատութեան մէջ: Այդ դասախօսութիւնները զբաւեցին գիտնական աշխարհի ուշադրութիւնը, եւ յիշեալ հաստատութիւնը Թորամանեանին յատկացրեց այդ տարւայ մրցանակը, յանձն առնելով միաժամանակ՝ ապահովել նրա աշխատութիւնների հրատարակութիւնը: Իր աշխատութիւնները ամբողջացնելու նպատակով յրացուցիչ հետազոտութիւններ անելու համար Թորամանեանը հետի նիւթերը թողնելով Վիէննայում, վերադարձաւ Հայաստան եւ պատերազմի պատճառով այլեւս չկարողացաւ յետ դնալ Վիէննա: Մի քանի տարի յետոյ, Ստրժիկովսկին ինքը օգտագործեց Թորամանեանի նիւթերը եւ հրատարակեց իր յայտնի երկհատոր աշխատութիւնը:

Պատերազմի ընթացքին Թորամանեանը շարունակեց աշխատել Հայաստանում: Թիւրքական արշաւանքը մեծ հարւած հասցրեց նրան: Անին մի անգամ եւս կործանեց տարիների անդուլ ճիգերով հաւաքւած նիւթերը ցան ու ցրիւ եղան ու փճացան: Թորամանեանն էլ, շատերի հետ կորցնելով իր ունեցածը, փախաւ Թիֆլիս,

ուր մի առ ժամանակ ապրում էր ազգային հաստատութիւնների եւ մասնաւոր անհատների աջակցութեամբ: Երբ 1918 թ. կազմեցաւ Հայաստանի Հանրապետութիւնը եւ քիչ յետոյ հնարաւորութիւն ստեղծեց հետազոտական - գիտական աշխատանքներ կատարելու, Թորամանեանը շտապեց Հայաստան եւ պաշտօնի կոչեց հանրային կրթութեան եւ արւեստի նախարարութեան Հնութեանց Պահպանութեան Կոմիտէից: Այդ կոմիտէի կազմի մէջ մտնում էին Ակադ. Ա. Թամանեանը, Գարեգին Արքեպ. Յովսէփեանը, Աշխարհբէգ Լորու - Մելիք - Քալանթարեանը: Կոմիտէի հետաքրքրութեան եւ զբաղումի առաջին աւարկաներից մէկը եղաւ Անին: Թորամանեանի զեկուցման վրա՝ Հնութեանց Պահպանութեան Կոմիտէին յատկացեցին լքեալ Անի զիւղի հողերը. զիւղը դարձաւ Անիի հնութիւնների պահպանութեան կենտրոն, եւ Թորամանեանը հաստատեց այստեղ: 1920 թ. յուլիսին Կոմիտէն կազմակերպեց գիտական մի մեծ արշաւ, որին մասնակցեց եւ Թորամանեանը, ինչպէս նաեւ նկարիչ Եղիշ Թադէոսեանը, «Գեղարւեստ»-ի խմբագիր Գ. Լեւոնեանը, Գարեգին եպ. Յովսէփեանը, Աշխարհբէգ Մելիք - Քալանթարեանը եւ ուրիշներ: Թիւրքական նոր արշաւանքը, վերջ դրեց այս ձեռնարկին էլ, ինչպէս եւ Հայաստանում սկսւած ուրիշ շատ արժէքաւոր ձեռնարկների:

Խորհրդայնացման հետեւանքով գիտական աշխատանքները Հայաստանում մի առ ժամանակ կանգ առին: 1923 թ.ին կազմեց Հայաստանի Հնութիւնների Պահպանման Կոմիտէն. Թորամանեան յաստանի Հնութիւնների Պահպանման Կոմիտէին մէկը: Յետոյ, նշանակեց դարձաւ նրա գործն աշխատակիցներից մէկը: Յետոյ, նշանակեց Պետական Թանգարանի ճարտարապետական բաժնի վարիչ եւ, ի վերջոյ, Հայաստանի Կուլտուրայի Պատմութեան Ինստիտուտի նախագահութեան անդամ: Եւ այլեւս մինչեւ մահ աշխատեց Հայաստանում, իրեն հարազատ ասպարէզում:


Թորամանեանի աշխատութիւններից այստեղ յիշենք «Զւարթնոց»-ը, «Հայ ճարտարապետութեան Պատմութիւնը», «Շինանիւթերը եւ շինարեստը հայ ճարտարապետութեան մէջ» գրքերը, ինչպէս նաեւ «Նիւթեր հայ ճարտարապետութեան պատմութեան» առաջին հատորը՝ Թորամանեանի ամենից խոշոր աշխատութիւնը:

Թորամանեանի գերն ու նշանակութիւնը, ի հարկէ, այն չէ, որ նա բաղմաթիւ հում նիւթեր հաւաքեց - չափւածքներ, նկարներ ու պատկերներ: Այդ էլ, անշուշտ, խիստ կարեւոր գործ է, բայց նրա մէջ չկայ այն ստեղծագործական տարրը, որ մարդուս անմահութեան է առաջնորդում: Թորամանեանի արժէքը այն է, որ նա կարողացաւ տեսնել ու հասկանալ տեղական յուշարձանների փոխա-

դարձ կապը եւ սերտ յարակցութիւնը շրջապատի նոյն կարգի նիւթերի հետ : Նա կարողացաւ հանել երբեմն յանդգնութեան հասնող համարձակ եղբակացութիւններ : Եւ ստեղծեց որոշ, իրապաշտ ուղղութիւն հայ ճարտարապետութեան պատմութեան մէջ :

Թորամանեանը սովորեց կարգաւ պատմութիւնը քարերի վրա եւ ստիպեց գորշ քարերին խօսել Հայաստանի դարաւոր անցեալի մասին : Թորամանեանը մեզ էլ սովորեցրեց լսել ու կարգաւ Հայաստանի քարերի լեզուն : Նա առաջին ուսուցիչն է մեր քարեղէն լեզւի : Այստեղ է նրա մեծութիւնը : Եւ դրա համար նա արժանի է հայ մտաւորական հասարակութեան երախտագիտութեան :


Փարիզ .



Սեդրակ Ոսկեան

Մ Ա Տ Թ Է Ո Ս Զ Ա Ր Ի Ֆ Ե Ա Ն *

(ԻՐ ՄԱՀԻԱՆ 10 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ)



Մ. ԶԱՐԻՖԵԱՆ ԵՒ ԻՐ ԵՐԿՈՒ ՄԱՐԶԻԿ ԸՆԿԵՐՆԵՐԸ
Նահ. Զարգարեան (ձախ, վեր), Խաչ. Չուլփաեան (աջ, վար):

Զարիֆեանի հանդէպ ունեցած սէրս եւ հիացումս այնքան մեծ եղած են, որ յուզումով կը մօտենամ իրեն՝ իբր ընկեր, իբր մարկի, իբր ուսուցիչս եւ մանաւանդ իբր բանաստեղծ: Յուզումով, կըսեմ, որովհետեւ Զարիֆեան իմ միաւորական կեանքիս վրա դըրօշմած է ամենաազդու պատկերը բանաստեղծին, Դուրեանի եւ Մեծարենցի պէս վսեմ, որ իր կենսագրութիւնը տալով, կուզեմ ընթերցողները կապել իր հմայքին զոր ես կը կրեմ իրմէ:

Մատթէոս - Տրդատ Զարիֆեան ծնած է Կ. Պոլիս, Կէտիկ Փաշա թաղը, 1894 Յունար 4-ին: Փոքր տարիքէն, իր ծնողքը կը փոխադրուի Սիլիւտար Իճատէի թաղը: Պահ մը ազգային վարժարան յաճախելէ վերջ 10 տարեկանին կը դըրի Պէրպէրեան վարժարանը:

Իր պատանեկութեան եղած է խելացի, յառաջադէմ, բայց անառակ ու շարածճի, ուսուցիչներու գլխի փորձանք տղեկ մը:

Օր մը, դպրոցը, պակաս նօթի մը համար, իր մանուկ արժանապատուութիւնը վիրաւորւած զգալով՝ կանյայտացնէ նօթադրուած թեան տետրակը: Այս դէպքը պատճառ կըլլայ որ շարժեալ մը համար դպրոցէն կախակալի, իբր պատիժ: Եւ հակառակ իր ծընողքին ու անօրէնութեան ներողամտութեան չուզէր վերադառնալ ու կը դըրի Պարտիզակի բարձրագոյն վարժարանը. հոն արդէն, քանի մը տարիներու ընթացքին, ինքզինքը ցոյց կուտայ իբրեւ առաջնակարգ աշակերտ եւ մանաւանդ լաւ մարդիկ մը:

Զարիֆեան ըլլալով ամենափայլուն շրջանաւարտներէն մին, մանաւոր յանձնարարութիւնով կը դըրի Ռօպէրթ Քօլէճ, հետեւեւ լու համար երկրաչափական մասնագիտական ճիւղին, որուն մեծ հակում ունէր: Սակայն երկար չի մնար Ռօպէրթ Քօլէճ, կը վերադառնայ կրկին Պէրպէրեան վարժարանը եւ զայն կուարտէ փայլուն կերպով, 1913-ին:

*) Այս տարի ապրիլին լրացաւ Մ. Զարիֆեանի մահուան տասը տարին: Մի քանի ուշ թէեւ տալիս ենք կենսագրական այն ուրագիծը: Զարիֆեանի ստեղծագործութեան ներքին ուրիշ ուսումնասիրութիւններ էլ կը տրուի «Վէմ»-ում: ԽՄԲ: գործարեան ներքին ուրիշ ուսումնասիրութիւններ էլ կը տրուի «Վէմ»-ում: ԽՄԲ:

ՉարիՖեան Պէրպէրեան վարժարանին մէջ հետեւած ըլլալով գրական ճիւղին, իբր աւարտական շարագրութիւն, Օրմանեան սրբազանին ներկայութեան, գաղղիերէն լեզուով, աստուածաբանութեան քննութիւն կանցնէ եւ կարժանանայ սրբազանին մասնաւոր հիացման եւ գնահատանքին :

ՉարիՖեան կը մասնակցի Չունդեան կտակի մրցման . հակառակ առաջինն ըլլալուն, ընկալեալ սովորութեամբ, կողմնակցութեամբ մը կը գրկել եւրոպա ուսանելու գնալու իր մեծ փառաքէն :

Ինչպէս քիչ վերեւ կըսէի, ՉարիՖեան ի յայտ եկած էր նաեւ իբրեւ առաջնակարգ մարդիկ մը ամերիկեան բարձրագոյն վարժարանին մէջ :

Այդ շրջանին, ուր ՉարիՖեան կը նետէր մարդական ասպարէզ, մարզանքը նորութիւն մըն էր հայ ժողովուրդին համար, բայց իրականին, վերածնունդ մը, որ կը ծլէր ու կը զարգանար հայ ազատատենչ ու արի երիտասարդութեան մէջ :

Այդ ատենայ հայ մարդական աշխարհի ուսուցիչներէն առաջինն Պէրպէրեան վարժարանին մէջ պր . Արամ Նիկողոսեան եւ Լեւոն Թաշճեանն էին, որոնք ձեռնհաս մարդիկ, կարող ուսուցիչներ, նոր սերունդ մը հասցուցած էին թրքական սահմանադրութիւնէն առաջ եւ մանաւանդ վերջը : Այն ատեն ուր եւրոպայի մէջ շատ մը երկիրներ, մէջն ըլլալով եւ Ֆրանսան դեռ շատ հեռու կը մնային այդ շարժումէն, հայերը արդէն ունէին իրենց ներկայացուցիչը Սթօքհօլմի միջազգային ողիմպիականին, 1912-ին, դժբախտարար թրքական դրօշով, երկաթի, սկաւառակի եւ լողալու մրցումներով, յանձին Մկրեանի եւ Փափագեանի :

Այդ սերունդի ամենակառկաուն դէմքերը եղած են՝ Շաւարշ Քրիսեան, Մեծ Եղեռնին նահատակած, իսկ վերապրողներ՝ Մկր . Մկրեան եւ Գրիգոր Յակոբեան, արդի Հ . Մ . Բ . Մ . ի հիմնադիրներէն, ու ասոնց շարքին ամենակրտսերը ՉարիՖեան, որ լաւ մարդիկի մը համբաւը կը վայելէր 1911-էն ի վեր Պոլսոյ հայ եւ միջազգային մարդական շարժման մէջ :

ՉարիՖեան եղած է Մկր . Մկրեանի 1907-ին Սկիւտարի մէջ հիմնած Բաֆֆի Հ . Մ . Միութեան ամենէն լաւ անդամներէն մին : Ան եղած է առաջին ախոյեանը հայ առաջին ողիմպիականին . երկար տարիներ ախոյեան մնացած է Պէրպէրեան վարժարանի տարեկան նաւասարդեան խաղերուն : Իսկ յաջորդ տարիներու սարքած հայ ողիմպիական խաղերուն, շատ յաճախ, ունեցած է առաջնութիւններ : Իր մրցանիչներուն ամենէն լաւագոյնն էր 3 քայլ հեռաւորութիւն ցատկելը, զոր կը պահէր 1912-էն ի վեր : 1921-ին, երբ իր ձեռ-

քէն կը խլէին, մանուկի մը պէս կուլար տեսնելով իր մրցանիչներուն վերջինին պատնէչէն վար առնելը : ՉարիՖեան կատարեալ մարդիկ մ'էր, ամէն ճիւղի մէջ . կարճ վաղքեր 100, 200, 400 մէթր . եւ հեռաւորութիւններ ցատկել իր մասնայատկութիւններն էին . ունէր նաեւ մասնաւոր ձիւք գնդի, սկաւառակի եւ նիզակի համար : Բառին բովանդակ առումով եղած է Athlète complet մը . իր մարմինը կերտած արձանի մը մարմնացումն ունէր, գերազանցապէս աղնակաւ շարժումներով եւ գեղեցիկ ինքնատիպ հոգեով :

ՉարիՖեան, Պէրպէրեան վարժարանը աւարտելէ վերջ, 1913-ին, մեկնեցաւ Ատանա . հոն Լէոն Լարենցի տնօրէնութեամբ եղած էր անգլիերէնի եւ մարզանքի ուսուցիչ : Սակայն, դժբախտարար, Կիլիկիոյ տաք կլիման իրեն շատ չնպաստեց եւ վեց ամիս վերջը փոխադրուեցաւ Պէյրութ, գտնելու համար իր ապաքինումը, Լիբանանի մշտագալար շոճիներուն, կանանչագեղ մայրիներուն ու կապուտակ երկնքին տակ : Հազիւ առողջացած, Սկիւտարի կարօտէն տոչորուն, կերպէր ժամ առաջ հասնել իր գեղեցիկ լեւալներուն, վարդերուն ու յաւերժահարս Ոսիորին : Եւ վերադառնալով Պոլիս ուսուցիչ կ'ըլլայ Պէրպէրեան վարժարանը :

Ընդհանուր պատերազմին, ՉարիՖեան քանի մը անգամներ, Նոյնիսի իր կեանքն վտանգելով, զանազան դեղերու միջոցաւ հիւանդանալէ վերջ (զինուորութենէ զերծ մնալու համար), զինուորականանալէ վերջ (զինուորութենէ զերծ մնալու համար), Պաղեստինի ճազըրուեցաւ իբր պահեստի ենթասպայ եւ զրկուեցաւ Պաղեստինի ճազըրու համար թարգման անգլիերէնի եւ զաղիերէնի թարգման :

Ձինադադարէն անմիջապէս վերջ մեկնած է փոքր Ասիա իբր կամաւոր թարգման անգլիացի ազնւատոհմ սպայի մը, որ բահաւաքի եւ հայկական գաւառներու շուրջ տեղեկագիր պատրաստելու պաշտօնով :

1920-ին յանձնարարին լուծումով կը վերադառնայ Պոլիս, կըրկին Պէրպէրեան վարժարան որպէս ուսուցիչ անգլիերէնի, հայերէնի եւ մարզանքի :

Իբր ազանատես մը ՉարիՖեանի պատերազմէն առաջ եւ վերջին շրջանին կեանքին, ես՝ իր աշակերտը, տակաւին կը պահէի իրմէ հին մարդիկի այն մեծ հմայքը գեղեցիկ տղուն, որ այս անգամ մեզ կը ներկայանար յոգնած եւ քիչ մըն ալ նիհարցած :

Իբր ուսուցիչ դպրոցին մէջ, ան յարգւած եւ սիրւած դէմք մըն էր բոլոր աշակերտներուն եւ իր պաշտօնակիցներուն կողմէ . չափազանց խղճամիտ, պաշտօնին կատարեալ գիտակից մը, անձնւիրուքիւնն ու անկեղծութիւնը իր էն գլխաւոր առաքինութիւններն էին . թիւնն ու անկեղծութիւնը իր էն գլխաւոր առաքինութիւններն էին . զթախիտ, նիւթապէս ու բարոյապէս կօզնէր ու կը զոհէր եթէ հարկ ըլլար Նոյնիսի :

Արդէն այս շրջանին էր որ շուկաներ կը լաւէին դեռ ու դէն իր մասին. հիւանդ էր Զարիֆեան. քանի մը անգամներ ալ թողերէն արիւնհանութիւն ունեցած, նոյնիսկ դասերու ընթացքին:

Այլեւս մենք Զարիֆեան փոխած կը տեսնէինք. ան պատերազմէն առաջ կեանքի մէջ էր այնքան բուռն, հեւիհեւ, խօլակիան, որքան վերջը հանդարտ, վիպական զեղուն խողովի եւ մտածմանց տրտում կեանք մը ունեցաւ. մանաւանդ երբ ալ համոզւած էր որ ինք հիւանդ մըն էր:

Նախապէս, պատերազմէն առաջ, նախազգացումն ունեցած էր արդէն երբ կը գտնուէր Ատանա. մանաւանդ որ այդ հիւանդութիւնը կը սկսէր շատ կանուխէն, 1912-ին, երբ ան հայ երկրորդ ուղիմպիականին գերբնական ճիգ մը կընէր երեք քայլի մէջ իր նախկին մըրցանիչը կոտրելու: Մէջէն բան մը փրթեր էր. եւ այս բառը շատ յաճախ մեղի կը կնամ էր: Այդ դէպքն էր որ իր զօրեղ մարմնին մէջ բոյնդրած, որոշ հանգամանք կըստանար 1920-ին եւ կըսպառնար յարատեւ կրկնումներով քայքայել իր ուժեղ կազմածքը:

Հոս սակայն պէտք է խոստովանիլ, որ Զարիֆեան իր հիւանդութեան հանդէպ ունեցաւ անարդար արհամարհանք մը եւ չինսայեց ինքզինքին. դարնան թէ աշնան իրիկուններ, գեղեցիկ եւ խորունկ լուսնկայ գիշերներ կը թափառէր երկար, բաց դաշտերուն մէջ, փռնկին լեռան վրա, Ոսփորի հայրոյն դէմ, հոն, ուր շատ յաճախ մայրամուտին ականատես կըլլար նայատներու պարին, երազներու մէջ ընկղմած, կը խմէր վերջալոյսի խենթեցնող գինիէն, բարձրանալու համար աստղերը. ու տարածամ` ննջարան կը վերադառնար յոգնած, ուժաբամ գթութեան եւ կարեկցութեան հայցումով:

Յիշողութեանս մէջ դեռ թարմ գրոշմւած կը մնան այն գիշերները, մութ եւ երկար ձմրան իրիկունները, իր միայնակ հակումի պահերուն մէջ, երբ ան լամբի տմոյն, աղօտ լոյսով անջուն, մխրճւած ընթերցման եւ երազանքի աշխարհին մէջ կողջունէր արշալոյսի առաջին շողերը:

Զարիֆեան սակաւախօս էր. կը կարգար անխոնջ եւ յամառօրէն. հազիւ երբեմն կը խօսէր իր աշակերտներուն մասին. կը պատմէն իր սիրած հեղինակներու կեանքը, Բատլայլի, Պայրընի, Օսքառ Ուայլտի, Շիլլէրի, Լամարթինի, մանաւանդ Թոլսթոյի, որուն հանդէպ մասնաւոր պաշտամունք մ'ունէր: Երաժշտութիւնը խենթի պէս սիրող մը, երբ ամէն անգամ կիմանար քովընտի պարտեղէն, Պէրպէրեան վարժարանին կից, աղջկանց վարժարանէն երգի կամ նւագի ձայն մը, ինքզինքէն ելած կը վերանար արբշտութեամբ զեղուն

իր հողին կը յանձնէր անուրջին. ու իր ցաւը մանաւանդ կորորէր ասուածաշունչ Շոփէնի մը երգին մէջ:

**

Զարիֆեանի դրական կեանքը յանկարծ սկսաւ թեթեւ դէպքով մը որ կարժէ յիշատակել: Սկիւտարը մեծ բանաստեղծներ տւած է մեր դրականութեան. հայաշատ քաղաք, զուտ հայ թաղերով, խանդավառ ամբոխ մը, աւիւնով տոգորւած, աղբայնական ողի, մանաւանդ մեծ եղեռնէն ճողոպրած այդ երիտասարդութիւնը, մանուկ Հայաստան մը կուրծքին սեղմած, եռուղեւի մէջ, վերածնունդ մը կը կերտէր, կարծես բացը լեցնելու այն անհետացող դէմքերուն, որոնք նորագոյն շրջանի հայ մշակոյթին հիմքերը դրած էին արդէն: Երդն ու գիրը ամէն շրթունքի վրա, ամէն մարդ դրել կը փորձէր, դրող կը գտնար. երիտասարդութիւն է չէ՞. ո՞ր երիտասարդը չէ փորձած գրել:

Այդ տեսնի սովորութիւնն էր. օրիորդներ եթէ գրել չէին գիտէր, ալլոմ կը կրէին դուռէ դուռ. կը դիմէին դրողներու, ուսուցիչներու, նոյն իսկ վարդապետներու ոտանաւոր մը կորզելու իրենց ալլոմին համար: Զարիֆեանն ալ երիտասարդ, որ մինչեւ այդ տեսնները եղած էր լոկ ներշնչող մը եւ յախուռն երկար ժամերու տեսնները եղած էր լոկ ներշնչող մը, անմասն չէր մնացած մրտտելու օրիորդի մը խորունկ ընթերցող մը, անմասն չէր մնացած էր պաշտօնակիցներէն մին. ալլոմին մէջ, որ իրեն ներկայացուցած էր պաշտօնակիցներէն մին:

Այս դէպքն զինքը շատ զայրացուցած էր. սակայն հետեւեալ օրը, երբ բազմաթիւ նամակներ կըստանար շնորհակտորական ծանօթ եւ անծանօթ անձերէ, մանաւանդ օրիորդներէն, ինք գեղեցիկ սեռ ու սիրող մը, տեղի տւաւ այդ խնդրանքներուն՝ ու գրեց ամենուն համար, գրեց իրեն համար եւ դարձաւ քնքուշ բանաստեղծ մը:

Հոս միջանկեալ բռնմ որ Զարիֆեան վարժարանի Հ. Յ. Դաշնակցական մարդ, եղած է Պէրպէրեան վարժարանի Հ. Յ. Դաշնակցական ուսանողական շարքերուն մէջ եւ հետեւաբար, լայն բարոյաթեան ուսանողական շարքերուն մէջ եւ հետեւաբար, լայն բարոյական աջակցութիւն վայելած է «ձախտամարտ» օրաթերթէն տպել տալով ամէն կիրակի մէյմէկ ոտանաւորներ:

Զարիֆեանի կեանքը այլեւս փոխած էր, այդ դէպքն յետոյ. ա՛լ չէր կարդար, կը խորհէր ու կը գրէր: Ինք համոզւած էր որ հայ դրական մշակոյթի պարտէղին մէջ տուրքի բաժին մը բերած էր: Արդէն Օշական այն ատենեայ դրական ասպարէզի տիրապետող էր:

սարգ Իսրայէլ Օրին հօրը հետ) : Կաթուղիկոսը Մարտիրոսէն ուղարկեց Երուսաղէմ, որ Եղիազարին հրաւիրէ Պոլիս խորհրդակցութեան համար : Մարտիրոսը յաջողութեամբ կատարեց այս պաշտօնը եւ վերադարձաւ Պոլիս, բայց 1680 թ. օգոստ. 1-ին, 82 տարեկան հասակում, վախճանեց Յակոբ կաթուղիկոսը եւ այլեւ խորհրդակցութեան պէտք չեղաւ : 1681 թ. Եղիազարը ընտրեց Էջմիածնի կաթուղիկոս, իսկ Մարտիրոսը դարձաւ Երուսաղէմի պատրիարք եւ մեկնեց Երուսաղէմ : Այնտեղ վէճ եւ ընդհարում ունեցաւ յոյների հետ, կառավարութեան կողմից Ալբրիանապոլիս կանչեց դատի, արդարացաւ եւ վերադարձին, 1683 թ. օգոստ. 5-ին, մեռաւ Եղիպոտոսում :

Ահա այն անձը, որին պատկանում են հետագայ տաղերը : Նրանք բնորոշ են թէ լեզուական, թէ ժամանակի կենցաղի ու բարքերի պատկերացման տեսակէտից : Մարտիրոս կաթուղիկոսին անձանիթ չէ իրբեւ տաղեր յօրինող : Նա իր փոթորկալոյ կեանքի ընթացքում, շատ ճամբորդել, շատ բան էր տեսել, շատ մարդկանց հետ յարաբերութիւն ունեցել : Երեւոյթներն ու մարդկանց նա դիտում է երգիծաբանի ակնոցով եւ իր տաղերն էլ երգիծական բնոյթ ունին : Կարծում ենք թէ այդ տաղերի հրատարակութիւնը կը հետաքրքրէ հայ բանասէրներին, որոշ չափով եւ պատմաբաններին :

ԽՄԲ.

Ա.

ՍՕՖԻԱՅԻ ՏԵՐ ՅՈՒՆԱՆԻՆ ՎԵՐԱՅ Է ԱՍԱՅԵԱԼ ՈՏԱՆԱԻՈՐՍ

Ես Մարտիրոս լոկ արեղայ,
տեղոյս անուն կոչի կափայ,
ագումամբ չարին պատահեցայ,
ի չէօլ ֆաղաֆն Սօփիայ :
ձանապարհէ եկամ դադարած,
հեծեծանօք անձամբ ցաւած,
մեք եւ գրաստք մեր խիստ սոված,
գի էր անքիւ գօրք հեծելաց :
Գնացաք ի ժամ դուռն ո՛չ էր բաց
յահէ գօրացն ամբափակած,
երէց անուն չար մ'էր դրած,
գինգն ու գիր օրհնողն անիծած
Անուն կոչին իրեան Յունան,
ի հաւատոց դատարկ լ'ունայն,
գօրն ի բուն շրջի մեխանան,
տղմաբաւալ խոզի նման :

Եօրումն էր թուխ, երեսըն սեւ,
իսկի՛ չունի ֆահանի ձեւ,
Բուն բովանդակ մարմնացեալ
դեւ,
Լ'ունի յոլով չարիք գիրեւ :
Ափսո՛ս որ կայ գլուխըն բաշ,
ընդ սատանին եղեալ է դաշ,
ոչ ընթրիս կու բերէ լ'ոչ ճաշ,
գազանաբար կտոնէ սավաշ :
Ձիաններուս հայիփ արի
որ այն պղծոյն տունըն տարի,
բնաւ չետուր խոտ եւ գարի,
միքէ իւր նրագրն մարի :
Ես կու սսեմ թէ բեր գարի,
կուտայ գիր գլուխն ֆարի,
ի կնօղէն եւս է այրի,
գրօղըն գինգն այլ տանի :

Ջօրն ի բուն շրջի խոռված,
չեմ տեսներ իւր պէս նգոված,
կարծեմ ք'իսկի չէ մեռնում,
կամ թէ լոկ ճիշով չէ օծած :

Քաղաքացիքն յիւրմէն պէգար,
եկեալ առ իս հարցին հընար,
խրատ ետու առանձնաբար,
կատաղեցաւ գերդ գազան չար :

Ժամատան դուռըն չէ ի բաց,
եւ ոչ բնաւ կանթեղ վառած,
գաւորքքն պահէ խաւար լ'ի լաց,
Ասուած ոչ տայ իւրեան կուշտ
հաց :

Խիստ անգգամ եւ վարշուէր,
անյիշելի ունի չարեր,
տունը դառնայ հիմանց աւեր,
գինգն պատէ բարակ ցաւեր :

Կերպիւ միայն գլուխն է խայտ,
կէս կորեկի չունի հաւատ,
գինչ որ կ'ասես կ'անէ ինատ,
խիստ նգոված է եւ մուրթատ :

Առաւօտուն երբ լուսանայ,
իւր ժամատեղն է մեխանայ,
մինչ ի կէտօր չորս հինգ օխայ
գեխի, յապա ի տուն դառնայ :

Խօսքն եւ գրոյցն է բուն խալատ,
իւր երեսին հագար նալաթ,
ասս' Ասուած տայ ֆո պէլատ,
ջիտի ազգ ես թէ ի՞նչ միլլաթ :

Հանդերձ անձին պատառտուն,
բոտ առակի մեծ իմաստուն,
ֆան սանդիղոնըն մերկագոյն
շրջի ընդ վաշր ֆան գտված
շուն :

Թէ հարցանեմ՝ նուղայ չի տար,
կամ դօղանջէ անկարգաբար,
եւ թէ կրկնեմ երկրորդաբար,
սհեղ գոչէ ֆան գղիւսար :

Անպէտ մշակ չար ոստիկան,
գայգի տիրուն արար խոպան
անասնակոյս եւ անդարման,
ինգն է դեւաց բնակարան :

Նրման բանիւք լցեալ իժի,
յերեսն իսկի ծաղըր չունի,
դէմքն գաղիք եւ աղտեղի,
դեւըն դժնեայ գարեուրելի :

Ունի եւ այլ բագում չարեր,
որ իսկի մարդ գայն չէ արեր,
հասցէ իւրեանըն չար օրեր,
եւ գկայենին առցէ երեր :

Մնացաք մեք անդ շարաթ մի
բուն,
գո՞րն սասցից չարեաց պղծոյն,
սոված թողոյր մեք գօրն ի
բուն,
երթեալ շրջէր ինգն ի յօրտուն :

Քան գայն աւել այլ ի՞նչ օգուտ,
երբ նա անգեղջ է գերդ ջրնուտ
Ո՛չ հայ, ո՛չ թուրք և ո՛չ
ջրնուտ,
գինգն ծածկէ ֆարէ կարկուտ :

Ջօր ինչ իմովս աչօք տեսի,
գրաներն ունայն չար երիցի,
գֆիչն ի բագմաց ձեգ գրեցի,
ես Մարտիրոս Արիմեցի :



Բ.

ԶԻԼԱՅԵՑԻ ԵՐԻՑՈՒՆ ՀԱԻԻ ԳՈՎԱՍՍԱՆՔՆ Է

Ես Մարտիրոս Ղրիմեցի,
սպասաւոր կենաց բանի,
որ ի վառնա քաղաքն եկի,
գարմանալի բաներ տեսի:
Երեց մի հայ Զիլայեցի,
երեսնամեայ չափ հասակի,
պանդխտացեալ յայսմ վայրի,
Տէր Սիմէօն մականուանի:
Յաւուր միում գնեց հաւ մի,
մեզ տի բերէր դահվա ալթի,
եւ էր հաւն այն ծեր պառույ մի
մորթած, փետած և փորն ի լի
Երկոտասան սաղ դրամի,
գին կտրեցին մէջ ամբոյսի;
Երեցն ուրախ էր յիւր մտի,
թէ մատղշուկ հաւ մի գտի:
Շուտով էարկ գինեքն ի սանի
եղիւր յեփոց խոհարանի,
զմեզ աղաչէր լոել պահ մի
թէ մի՛ նաշէք ըզ դահվալթի:
Քսան եւ մէկն էր յԱպրիլի,
պատկեր աւուրն երկուշաբթի,
սկսեալ ժամուն մետասանի,
վառեալ գիւրն ըստ օրինի:
Իբրեւ էանց ժամ մի քանի,
կերպրն հաւուն այլագունի,
տրամաւ երեցն ի իւր մտի,
թէ եփելու նիէթ չունի:
Երեք կացոյց երեք հոգի,
սպասաւոր այնքմ սանի,
մինն կացոյց կրող փայտի,
զմիւսն յղեաց տրկով ջրի:
Եւ գի երբորդն որ ասացի,
ըսպասաւոր իբրեւ գաշնի,
որպէս գարսըն Գարաւօնի,
Զրկիւր փայտբեր իսրայէլի:
Տային ի կեր գփայտն ի հըրի,
մշտածաւալ բոցն փայլի,
որպէս գինոց Բարեղանի,
Եւս առաւել նա բորբոքի:

Յեռացմանէն որ ուժգնակի,
ցամաքեցաւ ջուրն ի սանի,
եօթն ութ անգամ դարձեալ
կրկնի,
չեղաւ հնար թէ հաւն եփի:
Երեցն յետոյ անհար ընկնի,
հնար խնդրէ ի՞նչպէս եփի,
ասեն թէ յաւ է պալ մումի,
երբ արկանես՝ շուտով եփի:
Յեկեղեցոյ պուհայն ընկնի,
մում մի գտնու չափ խիարի,
ձգէ յետման ջուրըն հաւի,
միթէ լինի՞ որ այնու եփի:
Եւ նոյն անկեալ մումըն հալի,
յերես ջըրոյն վերաբերի,
խնդայ երեցն ի յիւր մտի,
թէ հաւն եփաւ, իւղն փայլի:
Երբ գնաշակն ետես յաշուի,
ի մէջ բերնին մումըն սառի,
խսկ նա առ այս սաստիկ տրամի
որպէս Յովնան ի Նինուէի:
Ասէ ո՞ւր կայր գայս բանս արի,
որ յաբուեցայ ծեր պառույ մի
եօթն իշոյ բեռ փայտ վառեցի,
մէկ երկու տիկ ջուր գայ արի:
Հաւ մի եփել ոչ կարացի,
այլոց կատակ գիս արարի,
մանկունքս ի գուր չարչարեցի
կսկըծանաց սրտիկս այրի:
Քսան սահաթ՝ ալ այլ աւելի,
աշխատեցաք երեք հոգի,
չեղիւ հաւէն մեզ օգուտ մի,
ես մնացի ամօթալի:
Մընայ այնպէս ի յեփոցի,
մինչ որ գիշերն անցանի,
յոյժ ձանձրանայ եւ անըզի,
թափէ գիւրն ի յամանի:
Ի նոյն ժամուն յանկարծակի,
ներս անկանեն երկու հոգի,
գինով, հարբած եւ անօթի,
եւ երկոքեանն են այլագգի:

Անոնս աչօք մուքն ի մըթի,
գիւրն ուտեն անծամելի,
քիչ մի երեցն ուրախ լինի,
թէ գիշերով գայն կերուցի:
Եւ թէ մընայր յառաւօտի,
ես առաւել խալսօք լինէի,
յայլոց լեզու անկանէի,
ժողովրդոց մեծի փոքրի:

Եղեալ բաներս որ պատմեցի,
իբր զխրատ ձեզ գրեցի,
որ ի գարնան եղանակի,
հաւաս չանէք հաւու մըսի:
Գարունըն գառն է գովելի,
փիլինն ի մուտն աշնան մտի,
հաւն ի ձմեռն մեծ գիշերի,
թէ արկանէք մէջ հերիսի:

Անմեղադիր լեր մեզ սրտի,
Տէր Սիմէօն Զիլայեցի,
ըզգուշութիւն քեզ գրեցի,
որ չի յաբուիս Հոռոմ պառուի:



Գ.

ԴԱԻԻԹ ԵՐԻՑՈՒՆ ԳՈՐԾԵԱԼ ԶԱՐԻՔՆ Է

Դաւիթ երեց Ըստանպօլու,
տեղեալ Սուլու մանաստիպու,
դուն նուիրակ Ուռումէլու,
սահմանողի հէրն անիծած:
Ելար յեփոքն գրնացիր,
հինգ վեց ամիս հոն մընացիր,
Թէլպիսութիւնդ իմացուցիր,
Եկած նամփուտ դուրն անիծած:
Գնացիր հասար Գապատաղի,
տէր Մկրտչին եղար եղի,
կիսեցիր գփողըն տապաղի,
էն երեմին ջուրն անիծած:
Կեղծուկ շրջիս սեւուկ շալով,
փարիսեցի ձեւանալով,
պատմագիրք կարդաս լալով,
էն արտասուաց ծորն անիծած:
Արարացի գայլ նըմանիս,
ձեւ քանի միայն ունիս,
ժամ ասելով կու փրփրիս,
էն բերնին փրփուրն անիծած:
Հետ Թադոսին արար պագար,
կերար գորամն երկու հագար,
յետոյ գնացիր սուտ երդվեցար
էն պիղծ առուտուրն անիծած:

Անամներուն դու հետ եղար,
երեք ամիս պատիւ կերար,
զվարագոյրն գողացար,
էնզ նման պիղծ հիւրն անիծած:
Թէլպիսութեան մէջն ես սընել,
մարդ չի կարեր քեզ հետ հնել,
դու ի մօրէ չար ես ծընել,
էն մայրդ ու մօրքուրն անիծած:
Դու չես երեց՝ ցցի պապ ես,
գօրն ի բուն արին կու լակես,
գիր գրելով մարդ կու յարես,
էն կազմարին մուրն անիծած:
Դու յայտնապէս Յուդա եղար,
այն երիցուն փողին համար,
յիսուն դուռուշ կաշառք կերար
էն կերած ապուրն անիծած:
Գացիր պէրթամալուն ասիր,
մարդ է մեռեր շուտով հասիր,
գորբերուն հացը կարեցիր,
էն հացին խմորն անիծած:
Ա՛յ, եղկելի եւ խելագար,
կէս հալէպի չուխին համար,
երեց իր էր գողացար,
էն երեսին ջուրն անիծած:

Համբաւեցար գեղ ու քաղաք,
յամէն երկիրն առ հասարակ,
Ուռումէլու գող նուիրակ,
քո համբաւաւոր լուրն անիծած

Ելար փախար գաղտագողի,
սահաքին փողն ուտեմ տէյի,
Խօնայ Սափարն յանկարծակի
հասաւ քէ ուղուրդ անիծած :

Աւօթալի յետ դարձուցին,
ըզսահաքի դրամն առին,
գուռուպատ տարաւ դաքըրնին
խաքըրնուտ ալ գիրն անիծած :

Ձի վարձեցիր դարձեալ կրկին,
խայտառակեց գեղ այն ձին,
ընկեց ի ցեխն այս քաղաքին,
քո քաղուած չամուռն անիծած

Ելար եկիր խայտառակած,
բոլոր անձամբդ ապականած,
որպէս գամէջ չամուռն հանած,
դողացիր սարսուղ անիծած :

Մէջ երիցանցն Ըստամպոյայ,
քեզ նման չար իսկի չի կայ,
կաշառակեր եւ սուտ վըկայ,
քո վարպետիդ հէրն անիծած :


Եղար մէհէմէտի մուգի,
վայր կու հայիս նըման խոզի,
դու բորտո ես գերդ Գէեզի,
նա հին եւ դու նոր անիծած :

Նախնի անունդ էր քո Տօվլաք,
այժմ եղեր ես պիտօվլաք,
ամենքն քեզ կուտան նալաք,
ըզքո ծնած օրն անիծած :

Հարամգատա խաբեբայ դու,
միշտ կու ծամես զմիս մարդու
ոչ բարով գացիր քօխաքու,
եկած սար ու ձորդ անիծած :

Ո՞վ վատ շուէր լիրք էտէպսիզ,
իսկի՛ չունիս առ ու նամուս,
այս բաւական լիցի այժմուս,
այլ աւելի գուրն անիծած :

(Վերջը յաջորդ անգամ)



ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԱՂԹԱՄԱՐԻ ԿՈՒԻՒՐ

(1904 ՕԳՈՍՏՈՍ 4 - 11)


I

1903 աշունէն իսկ թիւրք կառավարութիւնը որոշած եւ արդէն քայլեր ըրած էր Սասունը պաշարելու եւ դարնան դարնելու համար: Բացի զօրքի աննկատելի կեդրոնացումէն, որ կը կատարէր էրզրու- մի, Վասպուրականի, Երզնկայի եւ Բաղդադի զօրաբանակներէն, հրահանգ էր տրւած Կէնճի, Պուլանլիսի, Բիթլիս - Մօսկանի, Հազ- րոյի եւ Տիգրանակերտի բաղձաթիւ աշխրէթներուն, որ պատրաստ ըլլան արշաւելու դէպի Սասուն - Տարօն:

Իշխանի եւ իմ Վան հասնելու առաջին օրերէն իսկ (1903 նոյեմ- բերին) ակներեւ եղաւ, որ յաջորդ դարնան մեծ դէպքեր տեղի պի- տի ունենան Սասնոյ Բարձրաւանդակին վրա: Մեր առաջին գործե- րէն մին էր անմիջապէս կապ վերահաստատել Տարօնի եւ Սասնոյ մեր ընկերներու՝ Վահանի, Հրայրի հետ: Իշխանը, որ անցած էր Գաւաշ, յատուկ սուրհանդակ զրկած էր Բաղէշ, իսկ ես օգտուելով ինձմէ առաջ, Վարդգէսի կողմէ հաստատուած կապերէն, փոստային յարաբերութեան մէջ մտայ Մշոյ առաջնորդարանի քարտուղար Գե- յամի (հետագայ Օսմ. Խորհրդի պատգամաւոր) հետ եւ մեր նաւ- վարներու միջոցով՝ Դատուանի հետ, որը կը պարտաւորէր մեր նա- մակները հասցնել Մշոյ դաշտ: Կարճ միջոցէն փոստայի եւ սուր- հանդակներու միջոցով ստացանք յիշեալ ընկերներէն ընդարձակ նամակներ, որոնք խիստ մտայլ գոյներով կը նկարագրէին իրենց նպատակներ, որոնք խիստ մտայլ գոյներով կը նկարագրէին իրենց կացութիւնը - ժողովրդի անպատրաստ ըլլալը, սաղմամթերքի, պաշարի եւ դրամի պակասը ու թշնամիի օր աւուր ուժովնալը: Ըն- կերները կուզէին հասկնալ թէ մենք ինչով կրնայինք օգտակար ը- լալ իրենց:

Մեզի պէս միջավայրին, յեղափոխական աշխատանքին անձա- նօթ եւ անփորձ մարդիկ, ղեռ անգիտակ՝ Վասպուրականի կազմա- կերպական եւ ժողովրդային ուժերու քանակին - Է՞նչ կրնային ը- նել: Մեզ կը մնար ազմուկ հանել կուսակցական շրջանակներուն մէջ, Բիւրօն պահանջել դրամ եւ Երեւանէն՝ սաղմամթերք, որուն

ԱՂԹԱՄԱՐ



բարի տրամադրութիւններէն, «մեր» գործերու համար գլխաւորապէս հագուստեղէն կը հաւաքէր հայ վաճառականներէն. այս պարագային էր որ վանեցի յայտնի վաճառական պ. Գալիամաշեանը առատաձեռն նւիրատուութիւն մը ըրաւ, տալով 400 ղինուր հագուստեղէն չափ կերպաս. քայլ մը, որ յեղափոխականները չմոռցան իհարկէ :

Մեր կապը կը շարունակէր Գեղամի հետ, որի միջոցով նաեւ Վահանի, Հրայրի եւ Անդրանիկի հետ : Մերինները իրենց ուժերը կը կազմակերպէին, կը դասուորէին : Կը յիշեմ, որ Վահանը ուղած էր նաեւ ձեռքի տպարան մը, հայ - քիւրտ - թիւրքերէն թուղցիկներ տպելու. խմորատիպ մեքենայ մը ղրկեցինք, զնդակի եւ այլ մեքենաներու եւ բազմաթիւ փամփուշտակալներու եւ սլայտսակներու հետ միասին :

Դեկտեմբերի մէջ, հեռագրատան թիւրք սլաշտօնեայի մը միջոցով, մեր ձեռքը անցան Բ. Դրան կողմէ Վանի վալիին ուղղած երկու հեռագիրները, որոնց հայերէն թարգմանութիւնները ժամանակին ղրկած էինք Դրօշակին. անոնցմէ մէկը, մասնաւորաբար, աւելորդ չեմ համարէր մէջ բերել :

«Հայ խռովարարները՝ օտարներէ վայելած օգնութեամբ եւ հանդանակութեամբ զէնքեր, ուսմբ (տինամիտ) եւ ասոնց նման ուրմբային դեղորայք հաւաքելով, կայսերական երկիրներէ մէջ փոխադրելով եւ աստ-անդ պահելով, այս կերպիւ դարնան եղանակի ըսկիզբէն խռովայոյզ ընթացքներու գիտումը ունին. առնւած տեղեկութիւններու համաձայն, ըստ առաջնոյն Սասունի կողմերէն գործի սկսելին հասկցւած ըլլալով, ասոնց մասին կայս. կառավարութեան կողմէ ընելիք միակ բանը պիտի ըլլայ կատարեալ ուշադրութեամբ եւ ամենախիստ ու ստոյգ միջոցներով անկարելիութեան մատնել հայ խռովարարներու պատրաստած շփոթութիւններու գործադրութիւնը, շարագործ գլուխներն ալ ձերբակալելով՝ դարնան սկիզբը պատրաստող շարժումները անկարելիութեան մատնելու համար : Ինչպէս այս մասին շարունակաբար հաղորդուած է ձեզ, եւ բարձր հրամանատարութեան, կուսակալութեան մէջ պէտք եղած ֆանքերը եւ միջոցները գործ զնելիլու եւ արգելնքը նորին կայսերական պատուանդանին հաղորդելով կը հրամայուի, միւսոյն ատեն մոզովրդեան բնաւ երբեք գործի միջամտել չտալնիդ իսպիփա Վեհ. կայսեր բարձր հրամանաւ կազդարարի. Հոկտ. 7, 1903» :

Այս հեռագրի իմ կողմէ ընդգծուած վերջին տողերն էին, որ մասամբ փարատեցին մեր կասկածները եւ մտահոգութիւնները : Այս տողերէն կը բացատրէր կառավարութեան բռնած դիրքը Վասպուրականի մէջ. կառավարութիւնը կը օրհանուր ուրեմն կղզիացնել Սա-

զօրանոցը եւ կը վերադառնան: Տէտայական խումբերու արշաւներու այս շարանը, հակառակ մեր ակնկալութեան, դժբաղդաբար, ի վիճակի չեղան իրական օժանդակութիւն ընծայելու Սասուն - Տարօնին, որ եւ պարտեցաւ: Առաջին իսկ ընդհարումներու ատեն Հըրայը ետեւէն կը զարնւի, երբ իր վերաւոր մէկ ընկերը դնդակներու տարածութենէն կը ճգնէր դուրս հանել: Հրայրի կորուստը անդարմանելի էր. ան ժողովուրդի պաշտելին էր. անոր մահը առաջին իսկ օրերէն բարոյական հարւած մը եղաւ կուռ ժողովրդի կորուստը: Շէնիկ-Սէմալէ կուր վոխադրեցաւ Գէլիէ-Գուզանի եւ Անտօքի շուրջը, ուր յուսահատ երկար դիմադրութենէ վերջը, յեղափոխականները Վահանին եւս յանձնելով հողին, մաս մը ժողովուրդի հետ՝ Ծիրընկատարի, Հաւատուրեկի եւ Ղըզըլաղաճի լեռնանցքերէն իջան դաշտ, ուր կուրները շարունակեցան նոր թափով: Մօտ երկու ամիս տեւցին օրհասական ընդհարումները: Թշնամին՝ աւելի ու աւելի սոււարացած եւ քաջալերւած՝ օղակը կը սեղմէր. մերինները այլեւս ջլատւած՝ իրենց ձեռքով այրեցին քանի մը գիւղեր եւ հարկադրեցան նահանջել դէպի Վասպուրական. սպառած էր այլեւս իրենց ռազմամթերքը...

II

ՆԱՀԱՆՁ ԵՒ ԱՂԹԱՄԱՐԻ ԿՈՒԻԻԸ

Անդրանիկի ղեկավարութեամբ 70-է աւելի մարտիկներ կը հասնին Ախլաթ. Ջրհոր գիւղի մէջ եւս հետապնդող թրքական ջոկատներուն հետ կուենան զօրեղ ընդհարում մը, իսկ գիշերը կիջնեն Գառանի մօտի արեւը, ուր, բարեբաղդաբար, կը գտնէին բեռնւած երկու առագաստանաւեր, որոնք պատրաստւած էին Վան մեկնելու: Մերոնք ճարպիկութեամբ կը յաջողին ցատկել նաւերու մէջ, հարկադրելով անմիջապէս խորխոր քաշել ու մեկնիլ: Նաւավարներէն մէկը հայ էր եւ մեզի համակեր, միւսը քիւրդ: Յաջող քամիով, նաւերը նոյն գիշեր եւ հետեւեալ օրը մինչեւ կէսօր կը հասնին Գաւաշի արիւ «Գէլիէ-Պօրուն» անունով թերակղզի մը, հոն երրորդ նաւ մը եւս կը բռնեն ու այսպէս աւարով երկրորդ գիշերը կը մօտենան Աղթամար կղզիին: Նաւերու բեռները մեծ մասամբ կը պատկանէին Վանի հայ վաճառականներուն: Բեռնաւորւած էին սիւսեռով, չիթի եւ այլ կերպամներու ու մետաքսէ ապարօշներու հակերով, որոնք հաւանաբար Տիգրանակերտէն գնւած էին:

Ճիշտ այն միջոցին, երբ Վանի բանտի ականը պատրաստւած քանի մը օրէն Վարդգէսը պիտի փախցնէինք, Աղթամարէն կիմանանք Անդրանիկի կղզի հասնելու լուրը: Կը յայտնէին թէ Իշխանին

ալ լուր տրւած էր եւ կը խնդրէին փութալ կղզին, որպէսզի չվատանդէին:

Կառավարութիւնը արդէն հեռադիրներ ունէր Մուշէն, թէ յեղափոխականները պարտւած՝ դէպի Վան են անցեր. կը յանձնարարէր հետապնդել եւ ոչնչացնել: Հաւատացած եմ, որ եթէ այդ ատենաւ Վանի կուսակալ Թահիր փաշային փոխարէն աւելի կորովի եւ տաք գլուխ մէկը լինէր, կուրներ ու հրդեհ կրնար շատ դիւրուեալ թեամբ ծագիլ նաեւ Վասպուրականի մէջ: Խիստ խոհեմ, խորամանկ եւ վարչապէս այդ կուսակալը կը սիրէր առանց արմուկի դործ տեսնել՝ խուսափելով ընդհարումներ ունենալու յեղափոխականներու հետ եւ մանաւանդ մեծ ծաւալ տալու անոնց:

Աղթամար կղզին Գաւաշի արիւն մօտ ժամ մը հեռու էր (փոքր նաւակով): Հոյակապ տաճարէն դատ, անոր ձախ երկայնքին շինւած էր երկյարկանի սենեակներու շարք մը, նոյնքան երկար պատշգամբներով: Կղզիի մէջ մշտական փոքրաթիւ միաբանութիւն մը կը մընար, իսկ ամառը տեսակ մը ամառանոց էր Աղթամարի տկարակաղմ նար, իսկ ամառը տեսակ մը ամառանոց էր Անդամներն էին Յովսէփ միաբաններուն: Կղզիի միաբանութեան անդամներն էին Յովսէփ միաբաններու ետ, Պետրոս նոյնպէս ծեր վարդապետ մը, քանի մը շատ ծերունի ետ, Պետրոս նոյնպէս վարդապետը, մեր հաւատաւորները: Այդ օրերը հոն էին Գանիէլ վարդապետը, մեր հաւատաւոր զործակալ - ընկերը, եւ դուրսի դպրոցի քանի մը աշակերտներ:

Իշխանը, հասնելուն պէս, կարգադրած էր դուրսէն (Ախլաւանքէն) պաշար բերելու կղզին. այդքան մարդ կերակրելու համար դըքուար էր երկար ատենաւ պաշար հասցնել: Հազիւ Յ-Ա օրան ուտելիք էին զրկւած երկու հացթուխ պտտաններու հետ:

Տարօրինակ տալաւորութիւն կը թողուր արիւն - կրակէ ազատւած այդ խումբը: Խորին յարգանքի ու յուզումի հետ խօսելու ատեն կը ներշնչէին՝ հաւաքաբար կամ իւրաքանչիւրին հետ խօսելու ատեն կղզայի թէ ջղային հիւանդ են ամենքը, լեցւած կատաղութեամբ ու դիւրեմբ. անբնական էր իրենց համար տեսնել ու դգալ, որ դեռ ու վրէժով. անբնական էր իրենց համար տեսնել, որ մարդիկ կրնան հանդիստ աշխարհի մէջ կան խաղաղ անկիւններ, ուր թաղածներու ու յաղթողներու թնամայ, թնդանթի, հրաքաններու, յուսահատ աղաղակներէ ազատ: Ըրու սրտաբեկ դողում գոչումներէ, յուսահատ աղաղակներէ հանելու, Աչքերնին հրաքայտ, շրջմոյլի ու արիւնայի, նոր կուրներ հանելու, ջարդելու ու ջարդելու մոլուցքը ունէին...: Սենեակներուն մէջ, ջարդելու ու ջարդելու մոլուցքը ունէին. անգոր ու յատակներուն թափւած՝ անոնք հոգեպէս կը տառապէին. անգոր ու անհունօրէն ցաւագին, աղիքներու դալարումներէն կարծես դուրս ժայթքող հառաչներու հետ, անոնք հիւանդագին փութկոտութեամբ, իրարմէ խօսքեր խլելով, կը պատմէին անսպառ-կարծես թեթեւա-

լու համար-ահաւոր կռիւներէ, սարսաղողեցիկ պատկերներ - դըր-
 ւազներ... Իրենց եւ ժողովրդի կրած տառապանքներէ, առատելա-
 կան քաջութիւնները ժողովրդի... յոգնած այսպէս կը լռէին յան-
 կարծ, ու մէկը իրենցմէ մեկամաղձոտ քրդական լօ-լօ մը կը նետէր
 օդին մէջ անհուն թախիծով մը - տրտունջը ու բողբոջը կարծես՝
 ուղղւած երկնքին ու սեւ բազըին. խիստ դժբաղդ էին անոնք:

Ի՞նչ ընել այժմ, ո՞ւր երթալ. ի՞նչպէս թողուլ Տարօնի ժողո-
 վուրդը անտէր - անտիրական. ուղմամթերքով բեռնաւորւած նո-
 րէն վերադառնա՞լ արդեօք շարունակելու դժոխային ու անհաւասար
 կռիւը: Այս հարցերն էին դրւած Վանքին ետեւը, խոշոր ծառի մը
 տակ դումարւած զինուորական խորհուրդին մէջ: Լիլւած խիղճն էր,
 որ կը մտաւորէր նորէն այդ սքանչելի մարտիկներու մէջ - «Իմա՛լ
 թորկենք Դուրանը, մըր ժողովուրդ, մըր ճիւղ ու պիտ տուչմընին,
 մըր էրկիր...» այս տիրապետող անդուստ ցաւազին ճիշդ կը լսէր
 ամենուն բերնէն: Վասպուրականը քանի որ վտանգւած չէ, առնել
 այնտեղէն ուղմամթերքի մեծ մասը ու դառնալ հոն: Այսպէս էր,
 առաջին նւազ բոլորի եւ մասնաւորապէս տարօնցիներու տրամադը-
 րութիւնը:

Երկար քննեցան այդ հարցերը: Ոչ ոք, սկիզբէն, կը յանդգնէր
 կարծես, հետեւելով առողջ բանականութեան, քննադատութեամբ
 վերաբերելու վրադարձի հարցին - նրկայ եղող տարօնցի կարեւոր
 հայրուկները չպիտի ներէին նման առաջարկ. խիստ փափուկ էր
 այդպիսիներու դրութիւնը: Տիրող ծանր մթնոլորտը կրնային թե-
 թեւցնել, իհարկէ, իրենցմէ դուրս ընկերներ, որոնք անոնց չափ
 զգացումներով, կապերով ու նկատումներով կաշկանդւած չէին: Այդ
 ընկերները Վասպուրականի զեկավար ընկերները կրնային ըլլալ, ո-
 րոնց ուղղւած էին դրեթէ բոլոր հայեացքները...: Ծանր էր վայր-
 կեանքը եւ խիստ փափուկ:

Խղեցինք լուծութիւնը եւ յայտնեցինք մեր տեսակէտը: Վերա-
 դառնալ նորէն ոչինչ չի աւելցնէր եւ ոչնչով չի կրնար վերադարձը-
 նել մեր կորսնցուցածը. աւելի եւս պիտի տուժէ ժողովուրդը, որով-
 հետեւ իրական եւ լայն ուղմական օգնութիւն չպիտի կրնանք տալ
 երկար դիմադրութեան համար. դուր տեղ նոր զոհեր աւելցնել ա-
 պարդիւն կը համարենք: Սակայն ժողովուրդը սրտասպնդելու ու ա-
 նոնց հաւաքման, տեղաւորման նպաստելու համար, պէտք է որ ժո-
 ղովրդին սէրն ու վստահութիւնը վայելող մէկը, փոքր խմբով մը
 վերադառնայ, որուն պէտք է տրամադրել գումար մը եւ ուղմամթ-
 րեք, սակայն ամէն կերպ ընդհարումներէ խուսափելու պայմանով:
 (Արդէն այդ նպատակով փոքրիկ խմբի մը առաջարկը կընէինք):

Տատանումներէ վերջ ընդունեցաւ այդ ձեւը: Ո՞վ պէտք է լի-
 նէր վերադարձող խմբապետը: Գէորդ Չաւուչն էր այդ, որ անմի-
 ջապէս ու անտատան, յայտնեց իր վճիռը - Դուրան վերադառնալ:
 Բոլորի միտքերու մէջ ան էր արդէն: Իրենք զիրենք վերադառնալու
 թեկնածու առաջարկողներու հրմշտուք մը սկսաւ. առաջիններէն
 Կորիւնն էր - այդ լուսկեաց իրական կորիւնը - որ վճռապէս յայտ-
 նեց թէ պիտի վերադառնայ, ապա մօտ տասնեւհինգ ընտիր զին-
 ւորներ զատեցան Գէորդի եւ Կորիւնի կողմէ: Միւսները կարծես
 սուղի մտան. ընկերները դէպի իրական մահ կը զրկէին, իսկ իրենք
 կը պատրաստէին դէպի հանդիստ կեանքը քալել - ամօթի, խղճի
 կսկծալի վայրկեաններ էին ամենքի համար: Շրջապատեցին մեկ-
 նողներուն եւ զանազան փաղաքշական խօսքերու տակ կը քողարկէին
 պաղատանքը՝ մեկնող ընկերներէ՝ դաւաճան ու երկչոտ չհամարելու
 զիրենք...:

Վերադարձողներու առջեւ թափեցին ամենքը իրենց բոլոր զէն-
 քերը, մթերքը եւ պարազանները, առաջարկելով զատել ու առնել ի-
 րենց ինչ որ պէտք է. ու ամէն մէկը հրճւանքով կը լեցւէր, երբ
 իր սեւէ իրը կառնէր մեկնողներու կողմէ...:

Նոյն գիշերը, տխուր լուծութեան մը մէջ, խումբը իջաւ ամբ,
 ուր կը սպասէր հայ նաւավարի առադաստանաւը: Աննկարագրելի
 թախիծով մը ճամբու կը զրկէին աղիզ ընկերները. յուզումներով ու
 դրւած կը փաթթէին իրար, երկար եղբայրական համբոյրներով ու
 կը բաժնէին. ապա արձանի մը պէս անշարժ, քարացած ... «Հէլալ
 Ըրէք մըղի», «մի մոռնաք մըղի» լսեցաւ նաեւ. «ուզուր էղնի»,
 «Փէտայու Ասուածը ճըղի քեօմակ էղնի» - պատասխանեցին ամէն
 եւ բաժանման յուզումները խեղդելու համար բռնազբօսիկ կատակներ
 կը կրնէին: Նաւը թիրու խաղաղ շարժումովը կը հեռանար ու քիչ մը
 բացերուն՝ առադաստանները լեցեցան հովէն: Երկրորդ վերջալոյսին,
 Գորքի ջոկատներէ կը պաշարւին. կռիւը կը տեւէ մօտ երեք ժամ.
 Կոհ կուտան շատ ընտիր զինուոր Ասպօն, որ կը կտրել խումբէն վի-
 ռաւորւած. մինչեւ վերջին փամփուշտը կը կուր ու հրացանը փչրե-
 րով ժայռերուն, բարձրութեանէն կը նետուի ծովը...: Խումբը իր յետ-
 քը կը կորսնցնէ Նէմրութի շրթաններու մէջ:

Գէորդ Չաւուչի խմբի հեռանալու հետեւեալ առաւօտը, կողմի
 պահակը եւ Դանիէլ վարդապետը, որ դիտակով շարունակ կը գննէր
 ծովկերեայ շրջանները եւ Ոստանի կողմը, կուզայ յայտնելու, թէ
 թաղանթաւոր շրջաններու շարժումներ կը նը-
 Գարագաշտի ափին սեւազդեստ մեծ խումբերու շարժումներ կը
 կատարէ եւ թէ Ախալանից (Աղթամարի կաթողիկոսանիստ վայրը)


եանը: Երիտասարդ, բարեձեւ ու քիչ մը խարտեաչ մէկն էր հիւ-
 պատուը: Իբր նախարան, ըսաւ, թէ ինքը պաշտօնական հանգա-
 մանքով չէ որ կուզէ խօսիլ, այլ մեր շահերուն համար ստանձնած
 է միջնորդի դեր: Ապա ըսաւ, որ «կառավարութիւնը գիտէ թէ Վանի
 մէջ զբոսեցի «եկուր» յեղափոխականներ կան, որոնց ներկայութիւնը
 կրնայ շատ գէշ անդրադարձում ունենալ երկրի խաղաղութեան վը-
 րա. թիւրք ժողովուրդը գրգռւած է. տեսաք թէ շուկան երկու օր
 փակւած էր. գիտե՞մ թէ հայրենասէրներ էք եւ այդ պատճառով
 կառաջարկե՞մ ձեզ ժամ առաջ հեռացնել դուրսէն եկած ուժերը»: Պատասխանեցի
 թէ դուրսէն ոչ մէկ յեղափոխական եկած է. Սա-
 սունէն հեռացած Փէտայիները շատոնց անցած են ուս-թրքական
 սահմանէն: Հիւպատուսը չկլկեց այս հաւաստիացումը եւ յայտնեց
 թէ ինքը գիտէ, որ Անդրանիկը Վան կը գտնուի...: Աւելցուց, որ
 քաղաքի մէջ զինւած ուժեր պահելը կրնայ աղէտաւոր դառնալ: Ժի-
 տեցի, իհարկէ, Անդրանիկի Վան գտնուիլը, եւ ըսի, թէ արդէն անոր
 համար ժողովուրդը զինւած է, որ միշտ վտանգ կայ աղէտի առաջ
 գտնուելու, ինչպէս քանի մը օր առաջ պատահեցաւ: Եւ աւելցուցի -
 կուսակալին յայտնելու համար - թէ մինչեւ այն ատեն, որ կառա-
 վարութեան կամ թիւրք խուժանի կողմէ բռնութիւններու եւ յար-
 ձակման քայլեր չառնուին, հայերու կողմէ ոչ մէկ զինւած ելոյթ
 տեղի պիտի չունենայ: Այդպիսով վերջացաւ մեր տեսակցութիւնը:
 Անդրանիկը միւս սենեակը կըսպասէր. մեկնեցանք:

Սասնոյ խումբին դալը հայերը կըզգային իհարկէ: Կըզգային
 կրսեմ, որովհետեւ Վանի ժողովուրդը տարօրինակ զգայնութեամբ
 մը, ինչպէս կըսեն, «հոտը կառնէր» ամէն մէկ քիչ շատ սովորակա-
 նէ տարբեր իրողութեան մը: Քիւր մը միս, քանի մը հաց աւելի
 եթէ գնւեցաւ ոեւէ խանութէ, ուրեմն բան մը կայ - կը մտածէր
 վանեցի խանութպանը եւ կը յայտնէր կնոջը. այսպէս բերնէ - բե-
 րան կերթար: Բարեբաղդաբար անմիջապէս թիւրքերուն չէին հաս-
 նիր լուրերը, մանաւանդ այդ շրջանին, երբ յաւիտենապէս լռեցու-
 ցած էինք քանի մը հայ լրտեսներ եւ փոլիսներ: Անդրանիկի անու-
 նը փոխեր էինք. «Շահէն» անունն էր առած:

Ստեղծւած ծանր պայմաններու մէջ, ակներեւ վտանգը, նաեւ
 խումբի ծայրայեղ ջղայնութիւնը, որ մեր տեղական աշխատանքին
 շատ մեծ արգելք էր, հարկադրեց մեզ օր առաջ պատրաստութիւն-
 ները լրացնել զանոնք անվտանգ Պարսկաստան փոխադրելու համար:
 Այս նպատակով մեր ընկերներէն եւ գաղտնի աշխատանքի մէջ փոր-
 ձըւած Յարութիւն Թովմազայեանը («Նփրատ») զրկեցինք Արձակի
 շրջան կայաններ պատրաստելու եւ մանաւանդ մեր քիւրդ բարե-

կամներու աջակցութիւնը ապահովելու համար: Հրահանգ տրեցաւ
 պատրաստութիւնները լմննալուն պէս, լուր տալ ու սպասել
 հոն, մինչեւ խումբը հասնէր եւ տեղէն ճամբու դըրէր: Իր մեկնելէ
 7-8 օր վերջ լուր առինք: Խումբը ծպտեցաւ, մեծ մասը հետը ա-
 ուաւ իր գէնքերը, եւ իրիկունը, երբ ժողովուրդը տուներնին քաշ-
 ւած էր, Այգեստանի ծայր գտնուող տունէ մը ճամբու դըրինք: Մօտ
 15 օրէն հասաւ անոնց «Մենաւոր» (սահմանադուրս) հասնելու լու-
 րը: Խոր շունչ մը առինք...:

Փարիզ.



ՍԱՄՍՈՐ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

ԱՆԴՐԱՆԻԿ ԴԵՍՊԱՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

VI

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԹԵՂԵՐԱՆՈՒՄ

1919 թ. դեկտ. 24-ին Պարսկահայ Խորհուրդը Թեհրանում էն-
դեղից ստացաւ հեռագիր Հայաստանի Հանրապետութեան Դիւանա-
գիտական ներկայացուցչի ժամանման մասին: Այնմիջոցէս դումար-
եց արտակարգ նիստ ընդունելութեան կազմակերպման համար եւ
պարսկահայ բոլոր համայնքներին տրեց հետեւեալ հեռագիրը.

«Բերկրանքով յայտնում ենք ձեզ, որ Հ. Հ. Դիւանագիտական
ներկայացուցիչը Պարսկաստանում՝ Իշխան Յովսէփ Արղութեանը
իր շքամբով ամսոյս 24-ին ժամանեց էնդելի: Թեհրան կը հասնի
յունւար 1-ին»:

Միեւնոյն ժամանակ հեռագրեց Ռաշտ. «Պարսկահայ Խորհուր-
դը սրտազեղ ջերմութեամբ շնորհաւորում է անկախ Հայաստանի
ներկայացուցչի ժամանումը Պարսկաստան»:

Նոյնօրինակ հեռագիրներ քաշեցին եւ աղբալին մարմինների,
կազմակերպութիւնների եւ անհատների կողմից:

Ոգեւորութիւնը Թեհրանում աննկարագրելի էր: Սկսեց եռուն
աշխատանք Դեսպանին փառաւոր ընդունելութիւն կազմակերպելու
համար: Ընդունելութիւնը նշանակեց յունւար 4-ին: Արսէն-խան
Միքայէլեանին յանձնարարեց ընդունելութիւնն ու հիւրասիրու-
թիւնը նախապատրաստել Քերէշում, ուր Դեսպանը պարտաւորեալ
պիտի լինէր գիշերել:

Թեհրանում ընդունելութիւնը տեղի պիտի ունենար Հայկական
Ակումբում: Այդ առթիւ Համայնական Վարչութիւնը յունւ. 3-ին մի
յայտարարութիւն ցրեց հասարակութեան մէջ: Ակումբը զարգար-
եալ էր շքեղօրէն: Ճակատին խոշոր տասերով զրեւած էր. «Կեցցէ՛
Հայաստանի Հանրապետութիւնը», իսկ մուտքի վերեւ՝ «Բարի Գա-
լուստ»: Հայկական եւ պարսկական դրօշները, կողք կողքի, ծածա-
նում էին շէնքի վրա:

Յունւ. 3-ի երեկոյեան Յ. Արղութեանը հասնում է Քերէշ եւ
հիւրասիրում պետական երկրագործական նորարաց դպրոցի շէն-
քում, որի տեսուչ պ. Շարիքէրը եւ իր տիկինը սիրալիբ ընդունե-
լութիւն են ցոյց տալիս: Եւ հետեւեալ օրը, յունւ. 4-ի առաւօտեան,
մեկնում է դէպի մայրաքաղաք: Կէս օրին ինքնաշարժերը կանգնում
են Շահաբաթ կայարանում, ուր դեսպանին բարի գալուստ է մաղ-
թում Հ. Յ. Դ. Շահաստանի Կենտր. Կոմիտէի ներկայացուցիչ դոկտ.
Յար. Ստեփանեանը: Հասնում է նաեւ Պարսկահայ Խորհրդի դիւա-
նը, որ բերում է մայրաքաղաքի հայութեան ողջոյնները:

Նախաճաշից յետոյ, ժամը 2-ին, դեսպանը իր շքամբով շար-
ժըւում է դէպի քաղաք: Եղանակը սքանչելի էր: Երկինքը ջինջ.
օրը արեւոտ: Թեհրանի հայ հասարակութիւնը խոնել էր Հայկա-
կան Ակումբի ներսն ու դուրսը: Որբերն ու աշակերտները շարք-
շարք հաւաքում էին ընդունելութեան վայրը: Բազմաթիւ կառքեր
եւ ինքնաշարժներ շտապում էին քաղաքից դուրս՝ Սարգար Մոհ-
դեղեմի այգին դիմաւորելու համար Հայաստանի ներկայացուցի-
չին: Ուրախութիւնը համակել էր ամենքին: Բոլորի աչքերը փայ-
լում էին հրճանքից:

Սարգար Մոհդեղեմի այգին հաւաքել էին՝ Պարսկահայ Խոր-
հուրդը, Համայնական Վարչութիւնը եւ Եկեղեցական Վարչութիւնը
ամբողջ կազմով, Ատրպատականի հայութիւնից 3 ներկայացուցիչ,
Մեշէղի հայ մարմինները՝ 3, Հ. Յ. Դ. Կարմիր Խաչից՝ 2, Հ. Յ.
Մեշէղի հայ մարմինները՝ 1, «Առաւօտ» թեր-
թ. Կոմիտէից՝ 1, Հ. Յ. Դ. Ենթակոմիտէից՝ 1, «Առաւօտ» թեր-
թից՝ 2, Գաղթականական Կենտր. Մարմնից՝ 2, Հայկական Գորո-
ցի հոգաբարձութիւնից՝ 2, նոյն դպրոցի մանկավարժական խորհը-
րից՝ 2, Կանանց Բարեգործական Ընկերութիւնից՝ 1, Հայ Խնամա-
տար Ընկերութիւնից՝ 2, Աղքատախնամի վարչութիւնից՝ 1, Աշխա-
տանքի Տան վարչութիւնից՝ 2, Հայկական Ակումբից՝ 2:

Պատրաստեալ էր թէյասեղան, որ զարդարեալ էր ընտիր խը-
մորեղէններով եւ ծաղիկներով:

Նշանակեալ ժամին, հեռում բարձրացած թանձր փուռ միջից
երեւացին եռագոյն դրօշներով զարդարեալ ինքնաշարժները, որոնք
մի քանի րոպէ անցած կանգ առին այգու մուտքի առջեւ: Անդուսպ
«Կեցցէ՛»-ն թնդացրեց օրը: Ոգեւորեալ բազմութիւնը անխառն խըն-
դութեամբ դիմաւորեց թանկազին հիւրին: Իշխանը ծանօթացաւ
բոլոր ներկայացուցիչներին հետ եւ մի ժամեայ հանգստից ու հիւրա-
սիրութիւնից յետոյ, ըրջապատեալ մօտ 30 կառքով եւ 5 ինքնաշար-
ժով մեկնեց քաղաք:

քանի ըոպէ յետոյ ներս մտաւ թագաժառանգը արտաքին զործոց նախարարի ուղեկցութեամբ: Նախարարը ներկայացրեց Իշխանին թագաժառանգին, որ բարեկամարար սեղմեց նրան ձեռքը: Իշխանը իր հերթին ներկայացրեց իր շքախմբի անդամներին եւ արտասանեց հետեւեալ ճառը:

«Ձերդ կայսերական բարձրութիւն. խորապէս երջանիկ եմ, որ պատիւ ունիմ ներկայանալու Ձերդ կայսերական վեհապառութեան, որպէս նոր ազատազրեւած Հայաստանի անդրանիկ զիւանազիտական ներկայացուցիչ Պարսկաստանում:

«Տողորւած երախտազիտական զգացումներով դէպի Պարսկաստանի անցեալ եւ ներկայ մեծ վեհապետները, որոնք պատմական ժամանակներից ի վեր մինչեւ այսօր շարունակել են ցոյց տալ իրենց սրտագին բարեկամութիւնը եւ մանաւանդ վերջին ժամանակներում իրենց բարձր հովանաւորութիւնը դէպի հայ ժողովուրդը թէ նրա բախտաւոր եւ թէ դժբախտ օրերում եւ չմոռնալով բնաւ այն շնորհները, որ ունեցել են մասնաւոր կերպով դէպի պարսկահայտակ հայութիւնը, իմ կառավարութիւնը եւ հայ ազգը յանձնարարել են ինձ բարձրաձայն յայտարարել Նորին Կայսերական Վեհապառութեան, սլարսիկ կառավարութեան եւ սլարսիկ ժողովուրդի առաջ իրենց անկեղծ շնորհապարտութեան ջերմ զգացմունքները եւ իրենց անձնէր բարեկամութեան անխախտ հաւատքը:

«Քաջալերւած այն բարեհաճ ունկնդրութիւնից, որ շնորհեցիք ինձ, խնդրում եմ Ձերդ Կայսերական Վեհապառութեան թոյլ տալ յանուն Հայաստանի մանուկ կառավարութեան եւ յանուն հայ ժողովրդի ուղղել իմ առաջին ողջոյնը դէպի պարսիկ մեծ ազգը, որին հայութիւնը պատմականօրէն եւ ցեղազրպոյէս ընդունում է որպէս աւագ եւ սիրելի եղբայր: Փառք, մեծութիւն եւ յարատեւ երջանկութիւն պարսից վեհապետին եւ ժողովուրդին»:

Ճառի թարգմանութիւնից յետոյ, դահաժառանգն իր ուրախութիւնը յայտնեց, որ Պարսկաստանում տեսնում է Հայաստանի ներկայացուցչին, ապա շեշտեց պարսից վեհապետների դէպի հայերն ունեցած սիրալիր վերաբերմունքը եւ պարսից ժողովուրդի բարեկամական յարաբերութիւնները: Յոյս յայտնեց, որ ապագայում է՛լ աւելի կամրապնդին բարի հարեւանական կապերը երկու պետութիւնների միջեւ:

Թագաժառանգը երկար ժամանակ ապրել էր Ատրպատականում, շատ մօտից ծանօթ էր հայերին, նրանց տնտեսական եւ մշակութային բարեմասնութիւններին, հասարակական կեանքին, զպրօցական ու թատրոնական գործունէութեան: Թաւրիզի Արամեան թատրոնում

նրան յատկացւած էր յատուկ օթեակ, եւ նա սիրով ներկայ էր լինում հայկական ներկայացումներին: Հովանաւորել էր Արամեան զպրօցի օգտին տրւած մի ներկայացում: Մօտ բարեկամական յարաբերութիւն էր պահուած թեմակալ առաջնորդ Ներսէս Արքեպ. Մեւլէ - Թանգեանի հետ: Առ հասարակ բարձր համարում ունէր հայ ժողովրդի մասին: Եւ իր այդ վերաբերումը արտայայտեց նաեւ Հայաստանի Հանրապետութեան անդրանիկ դեսպանի ընդունելութեան միջոցին:

Թագաժառանգի պատասխանից յետոյ, Իշխանը շնորհակալութիւն յայտնեց եւ հրաժեշտ տւաւ: Եւ նոյն հանդիսաւոր եղանակով վերադարձաւ Հայկական Դեսպանատուն:

Իշխանը պաշտօնական այցելութիւններ տւեց նաեւ միւս պետութիւնների ներկայացուցիչներին: Յունւ. 19-ին եղաւ անգլիական դեսպան Քոքսին եւ ռուսական նախկին դեսպան Էթերի մօտ: Վերջինս երկու օր անցած, եկաւ փոխայցելութեան, իսկ անգլիական դեսպանը այցելութիւնը վերադարձրեց միայն Հայաստանի անկախութեան պաշտօնական ճանաչումից յետոյ:

Իշխանը չմոռացաւ եւ հայկական հիմնարկութիւնները: Յունւ. 15-ին, առաւօտեան, Տիկին Սաթենիկի հետ միասին, այցելեց Հայկական Մանկապարտէզը, ապա անցան Հայկազեան Դպրոցը, ուր պատրաստւած էր հանդիսաւոր ընդունելութիւն, եղաւ Եփրեմի դերեղմանի վրա, որ դանդում է դպրոցի չէնքի մուտքի առաջ: Կէսօրից յետոյ այցելեց Հ. Յ. Դ. Կարմիր Խաչի Որբանոցը, որին նրբիւրեց 1000 դրան: Տեսակցութիւն ունեցաւ նաեւ Հ. Յ. Դ. Շահստանի Կենսար. Կոմիտէի հետ, ծանօթացաւ տեղական պայմաններին, տեղեկութիւններ տւեց Հայաստանից...:

VIII

ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՈՒՄԸ

Թէեւ դեռ Հայաստանի Հանրապետութիւնը պաշտօնապէս ճանաչւած չէր, բայց նրա ներկայացուցիչը Թեհրանում այնպիսի բաւեացական վերաբերում գտաւ, որ, անխուսափելի պաշտօնական արարողութիւններից յետոյ, առանց դժուարութեան անցաւ իր վրա դրւած պարտականութիւնների կատարման: Հետզհետէ ձեւաւորուում ու կանոնաւորուում էին դեսպանատան ներքին աշխատանքները: Հայաստանի վիճակը հասարակութեան ներկայացնելու նպատակով ձեռնարկեց տեղեկատուների հրատարակութեան: Առաջին տեղեկատուն կրում էր հետեւեալ վերնագիրը. «Հայաստանի եւ Հայ Հանրա-

պետութեան ընդհանուր դուրսիւնը 1919 թ. վերջին» : Այդտեղ պատկերաւոր կերպով ցուցադրուած էր սակունութիւնն ու աննկուն կամբքը հայ ժողովրդի, որ «փարած իր անկախութեան՝ դերմարդկային ճիգեր է գործ դնում իր խոր վէրքը բուժելու» : Սօսուած էր Հայաստանի Սորհրդի եւ կառավարութեան աշխատանքների, հայկական բանակի կազմակերպութեան, երկրի անտեսական ու վարչական պայմանների մասին : Տեղեկատուները արտատպուած էին Թեհրանի «Առաւօտ» եւ Թաւրիզի «Այգ» թերթերում, որ սեփականութիւնն էր դառնում լայն հասարակութեան :

Դեսպանատուներ պատրաստել տեղ հայկական անցագրեր, փոքրիկ գրքոյի ձեւով, եւ Հայաստանի քաղաքացիութիւնը ընդունողները ստանում էին այդ անցագրերը :

Բուն գործը, սակայն, պիտի սկսէր Հայաստանի անկախութեան պաշտօնական ճանաչումից յետոյ : Շուտով հասաւ եւ այդ երջանիկ օրը :

Ես մի քանի օրով Ղազինից անցել էին Թեհրան եւ յուն. 24-ի երեկոյեան գտնուած էի Հայկական Դեսպանատանը : Մտերմական ջերմ միջոցառում անցնում էր երեկոն, երբ, ժամը ութ եւ կէսին, մի ծրար ստացւեց բրիտանական դեսպանատնից : Քոքսը Հայաստանի Դեսպան Իշխան Յ. Արդութեանին հաղորդում էր Հայաստանի անկախութեան ճանաչումը Գերագոյն Սորհրդի կողմից եւ յայտնում իր ջերմ շնորհաւորութիւնները :

Կարելի է երեւակայել լուրի թողած տպաւորութիւնը ամենքի վրա : Յիշուցիւնը ընդհանուր էր : Հետեւեալ օրը, առաւօտից սկսած Հայկական Դեսպանատուներ դարձել էր ուխտավայր. շնորհաւորողների թիւը վերջ չունէր : Իշխանն ու իշխանուհին յուզւած՝ ընդունում էին ամենքի սրտագին բարեմաղթութիւնները : Կարող էին ներանք, 23 տարի առաջ, երբ, Սանատորի արշաւանքից յետոյ, Իշխանին չլիթայակապ Մարմատից փոխադրում էին Թաւրիզի բանտը եւ ապա արքայութեան Ռուսաստանի հիւսիսային սահմաններիքները, գուշակել, որ մի օր նորից պիտի դան Պարսկաստան, բայց այս անգամ մեծ շուքով ու պատիւներով, իրրեւ ազատ Հայաստանի Դեսպան :

Այցելույների մէջ էր և անդլիական դեսպան Քոքսը : Նա առաջուց լուր էր ուղարկել, թէ երեկոյեան ժամը 4-ին դալու է անձնապէս շնորհաւորելու Հայաստանի անկախութեան ճանաչումը :

- Զարմանալի են այս անդլիացիները, ասում էր Իշխանը, միշտ պաշտօնական, միշտ ձեւապաշտ. մինչեւ որ Գերագոյն Սորհուրդը չորոշեց ճանաչել Հայաստանի անկախութիւնը, Քոքսը այցելութիւնը չվերադարձրեց, այնինչ միւսները այդպէս չվարեցին :

Ճիշտ նշանակւած ժամին եկաւ անդլիական դեսպան Քոքսը եւ ուրախութեամբ շնորհաւորեց Հայաստանի անկախութեան ճանաչումը դաշնակից պետութիւնների կողմից : Նա յոյս յայտնեց, որ երկրորդ պետութեան սպասում է փայլուն ապագայ : Նա մասնաւորապէս գոհ էր, որ իրեն վիճակեց այս ուրախ լուրը հաղորդել Հայաստանի անդրանիկ դեսպանին :

Հետեւեալ առաւօտեան լոյս տեսաւ «Առաւօտ» թերթի բացառիկ թիւը (№ 52), որի առաջին երեսի վրա տպագրւած էր անկախութեան ճանաչման յայտարարութիւնը, ապա՝ Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցիչ Իշխան Յովս. Արդութեանի մէկ սղզը, յետոյ Մեծ-Բրիտանիայի դեսպան Քոքսի պաշտօնական նամակը եւ այլն : Նոյն երեսի մէջնիցով, ձախ անկիւնից դէպի աջ անկիւնը, կարմիր ու խոշոր տառերով տպւած էր. «Կեցցէ՛ Անկախ Հայաստանը» : Թերթի այս մասը տպւեց սպիտակ մետաքս կտորի վրա, եւ իբրեւ թանգազին յիշատակ, նւիրեց Իշխանին, Եփրեմի ընտանիքին եւ տղերիս գրողին : Նոյնը տպւեց եւ ընտիր թուղթի վրա ու վաճառքի հանւեց հատը երկու թումանով : Թէ մայրաքաղաքում եւ թէ դաւառներում խլեցին ձեռքից ձեռք :

Հայաստանի անկախութեան ճանաչման առթիւ Թեհրանի Համայնական վարչութիւնը յուն. 31-ին կազմակերպեց մի շքեղ սօնակատարութիւն : Առաւօտեան հայոց եկեղեցում տեղի ունեցաւ հանդիսաւոր պատարագ, որի ժամանակ եկեղեցի լեցւած անօրինակ բազմութիւնը հողեղմայլ խնդութեամբ ցնցեց, երբ պատարագիչը հատիկ - հատիկ արտասանեց .

- Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա. եւ օրհնեա զՀանրապետութիւնն Հայաստանեայց Աշխարհի, ի կառավարել եւ ի պահպանել զքո ժողովուրդ. պահպանեա զՍա անասան եւ անպարտելի :

Քանի՛ - քանի սերունդներ երազել էին այս օրը : Ի՛նչ անհաշիւ զոհեր էին տրւած, որպէսզի դարերի ստրկութիւնից յետոյ, հայ ժողովուրդը իր եկեղեցու կամարների տակ հնչեցնէր այս սրբազան խօսքը -

- զՀանրապետութիւնն Հայաստանեայց Աշխարհի :

Ուրախութիւնը եւ տրոմուութիւնը միշտ գրկախառնւած են հայոց կեանքում : Պատարագից յետոյ, հողեւորականութիւնը զգեստաւորւած շրջապատեց դիասպորանը եւ սկսեց հողեհանգստեան տխուր արարողութիւնը նահատակների, Հայաստանի ազատութեան բոլոր զոհերի համար : Իսկ երբ վերջացաւ հողեհանգիստը, սկսեց զոհաբանական փառահեղ մաղթանքը՝ «վասն Հանրապետութեան Հայաստանի» :

Դարաւոր մտացումից յետոյ, առաջին անգամն էր հայոց եկեղեցում կատարուած մաղթանք հայկական պետութեան համար:

Ժամանակի Պարսկա - Հնդկաստանի թեմի ազգասէր առաջնորդ Սահակ Արքեպ. Այվատեանն էր յօրինել ու սուղադրել տւել Նոր - Զուղայի սպարանում Հանրապետական մաղթանքը - «Մաղթանք վասն Հանրապետութեան Հայաստանի»: Նրա հրահանգով թեմի բոլոր եկեղեցիներում ազգային մեծ սօներին կատարուած էին մաղթանքներ Հայաստանի Հանրապետութեան երկարակեցութեան եւ բարգաւաճման համար:

Ժողովուրդը դոճունակութեամբ ու հրճւանքով հետեւում էր եկեղեցական արարողութեան. «Փա՛ւռք քեզ, սրան էլ արժանացանք» մրմնջում էին շատերը:

Կէս օր էր, երբ վերջացաւ կրօնական հանդէսը: Ապա դեսպանատանը տեղի ունեցաւ ընդունելութիւն: Ազգային բոլոր մարմինները, ժողովրդի բոլոր դասակարգերից ներկայացուցիչներ եկել էին շնորհաւորելու Հայաստանի Հանրապետութեան դեսպանին:

Բայց տօնակատարութեան գլխաւոր մասը նշանակւած էր երեկոյեան, Հայկական Ակումբի ընդարձակ եւ շքեղօրէն դարդարւած պարտիլում: Երկսեռ հասարակութիւնը խոնկել էր ամէն կողմ: Երգ, ոգեւորութիւն, նւագ, մանուկների ճւլոց, կեր ու խում - անկարելի է նկարագրել այդ օրւայ ուրախութիւնը: Ընդհանուր խանդավառութեան մէջ մէկ էլ դրսից լսեց դաւուր - դունայի զիւ ձայնը: Մօտակայ հայկական գիւղերի բնակիչները մեծ խմբերով, երգ ու պարով, «Կեցցէ՛ Հայաստան» դռչելով մտան պարտէզ, արտասովոր աղմուկ - ոգեւորութեան մէջ: Հանդիսականների տրամադրութիւնները աւելի եւս բարձրացաւ, երբ բազմութեան անվերջ ծափահարութիւնների եւ «Կեցցէ՛»-ների որոտով, ժամը 6-ին, մուտք գործեց Հայաստանի Դեսպանը, ընտանիքով եւ դեսպանատան լրիւ կազմով: Նւագախումբը թնդացրեց «Մեր Հայրենիք»-ը, ապա՝ «Մարտէ՛յէզ»ը: Իշխանը յայտնապէս զգածւած՝ բարձրացաւ պատշգամբ, որտեղից յուզւած ճառով է՛լ աւելի բարձրացրեց ներկաների տրամադրութիւնը: Ծառը յաճախ ընդհատուած էր որոտընդոտ ծափերով ու «Կեցցէ՛»-ներով:

Հասարակութեան ցնծութիւնն ու բերկրանքը անսահման էր: Երգ, զինուորական նւագ, դաւուր - ուննա, պար ու քէֆ - ուրախութիւնը շարունակեց մինչեւ ուշ լիշեր: Եւ յաճախ լսում էին ազգային երգի հնչիւնները.

- Մեր Հայրենիք, ազատ, անկախ...:

IX

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՆՆԵՐ ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱԶԱՆԻ ՀԵՏ

Իիջպէս յայտնի է, Հայաստանի Հանրապետութեան ամբողջ տեւողութեան ընթացքին թուրքերը հանդիստ չթողին Նախիջևան - Ծարուրի շրջանը եւ տեղական մահմեդական բնակչութիւնը գրգռելով ու դրսից ուժեր մտցնելով՝ ամէն կերպ արգելք եղան հայկական իշխանութեան հաստատման: Հայաստանի կառավարութիւնը ստիպւած եղաւ դիմելու զէնքի, որի հետեւանքով թուրք ազգաբնակչութեան մի մասը դիմեց պարսիկ կառավարութեան օգնութեան կամ փախաւ պարսկական հողը: Նման դէպքերը աննպաստ կերպով էին անդրադառնում հայ - պարսկական յարաբերութիւնների վրա: Այսպիսի դէպքերի առթիւ 1918 թ. դեկտեմբերին պարսկական մի յատուկ առաքելութիւն այցելեց Երեւան: 1919 թ. յունւարին էլ հայկական մի պատգամաւորութիւն ուղարկեց Թաւրիզ:*)

Բնական է, որ հայ - պարսկական սահմանի վրա կատարուող զէպքերը եւ, առհասարակ, Երեւան - Թաւրիզ ճանապարհի ապահովութեան խնդիրը զբաղեցնէին եւ Հայաստանի դեսպանին: Փոստ-հեռագրական հաղորդակցութեան անկանոնութեան հետեւանքով նա ստոյգ եւ արագ տեղեկութիւններ չէր ստանում Երեւանի կառավարութիւնից. գլխաւոր միջոցը Հայաստանից անմիջական լուրեր առնելու՝ Թաւրիզն էր, ուր ազգային - քաղաքական խիստ կարեւոր գործ էր կատարում առաջնորդ Ներսէս Արքեպ. Մելիք - Թանգեանը: Վերջինիս դերը ընդհանրապէս շատ մեծ էր Ատրպատականի հայութեան կեանքում. նա մեծ է եւ այսօր: Բայց նրա գործը միայն Ատրպատականով չէր սահմանափակուած. նա աշխատում էր ընդհանուր հայ ժողովրդի համար: Նա մի տեսակ անպաշտօն դեսպան էր Հայաստանի, միաժամանակ եւ անկաշառ ու հաւատարիմ բարեկամ Պարսկաստանի: Բնական էր, որ Իշխանը ամենից առաջ դիմէր նրան: 1920 թ. յունւար 21-ին նա գրում է Ներսէս Սրբազանին իր առաջին նամակը, որով, ի միջի այլոց, ասում է. «Մեր միտան նոր է սկսել իր գործունէութիւնը եւ աստիճանաբար մտնում է յարաբերութեան մէջ Հայաստ. Կառավարութեան եւ արտաքին աշխարհի հետ: Այդ տեսակետից խիստ անհրաժեշտ է կապ պահպանել Ձեզ հետ: Կրկին անգամ շնորհակալութիւն յայտնելով Ձեր տարած աշ-

*) Այս գիրքի մասին «Վէմ»-ում կը տրի Սամսոնի առանձին մէկ գրութիւնը: ԽՄԲ.

խատանքների համար, վստահ եմ, որ նոյնը յօժարութեամբ կը շարունակէք մինչեւ որ քաղաքական որոշ հարցեր կը լուծուին եւ հանրապետութիւնը հնարաւորութիւն կունենայ իր հիւպատոսութիւնը ունենալ Թաւրիզում: Առաջին հերթին այդ կախում է Նախիջևանի դաւառում իրաւակարգ հաստատելուց եւ կանոնաւոր երկաթուղային երթեւեկութիւնից Երեւանի եւ Ջուլֆայի միջեւ: Ձեր հեռագրերից երեւում է, որ կանոնաւոր երթեւեկութիւն դեռ եւս գոյութիւն չունի. այս աստիճան տեղեկութիւն խնդրում եմ բարի լինէք ինձ հաղորդելու»:


Ապա կանգ է առնում Ա.գուլիսի կոտորածի վրա. «Ա.գուլիսի ցաւալի դէպքերի մասին Ձեր աւած տեղեկութիւնների համեմատ հեռագրով եւ նամակներով ղեկուցել եմ Հայաստանի Կառավարութեան. Հեռագրել եմ Թիֆլիս, Բաղու Ա.գուլիսի Հայրենակցական Միութիւններին՝ օգնութեան գալու կարօտեայններին, սակայն ոչ մէկից դեռ պատասխան չունեմ, թերեւս հեռագրական դժւարութիւնների պատճառով: Միաժամանակ ղիմել եմ Պարսկաստանի արտաքին գործոց նախարարին՝ խնդրելով հրահանգել Ջուլֆայի իշխանութեան արգելքներ չդնել փախստականներին ապաստան գտնելու Պարսկաստանի հիւրընկալ հողի վրա եւ երկրորդ՝ առաջարկել Թաւրիզի նահանգապետին միջոցներ ձեռք առնել ապաստելու գերի կանանց եւ օրիորդներին, եթէ այդպիսիք գտնւին Պարսկաստանի հողի վրա. յիշել եմ, որ այս խնդրի մասին ցուցումներ եւ տեղեկութիւններ կարող է տալ Ատրպատականի թեմակալ առաջնորդը: Եթէ իրօք այդպիսի գերիներ կան Պարսկաստանի հողի վրա, խնդրում եմ կազմել ցուցակ, հաղորդել այդ մասին պ. նահանգապետին, նոյնպէս եւ ինձ»:

«Վերջերս թէպէտ կցկտուր, բայց յուզիչ լուրեր են ստացւում ինչ որ զինական խոշոր պատրաստութիւնների մասին մեր Հանրապետութեան եւ Պարսկաստանի սահմանների վրա, տաճկական փաշաների ղեկավարութեամբ: Ըստ երեւոյթին այդ պատրաստութիւնները ուղղւած են միաժամանակ ... եւ Հայաստանի դէմ: Անհրաժեշտ է, որ մեր միտքի մշտապէս իրադեկ յինի այդ մասին: Ուստի, խնդրում եմ չլքնաք հաւաքել մանրամասն տեղեկութիւններ, կարելույն չափ ստուգել եւ միշտ հեռագրով եւ նամակներով տեղեկացրնել ինձ: Անշուշտ, գիտէք, որ այդ շարժումը վերին աստիճանի ուշադրաւ է եւ մտահոգիչ»:

Հայ - պարսկական սահմանի շուրջ դարգացող դէպքերը քրաւում էին Իշխանի լուրջ ուշադրութիւնը: Այդ մասին նա օրը օրին

տեղեկութիւններ էր ստանում Ատրպատականից եւ անմիջապէս ղիմումներ անում պարսիկ կառավարութեան կամ մեծ պետութեանց ղեկավարներին: Այդ ղիմումների աստիճան եղած կարգադրութիւնները, սակայն, Ռուսաստանում ու կովկասում տիրող խառնափնթորութեան հետեւանքով ակնկալւած արդիւնքը չուէին: Թիւրք - աղբէջանեան դաւը շարունակեց գործել Շարուր - Նախիջևանի շրջանում եւ վրդովել Հայաստանի պետական անդորրութիւնը:*)

Թաւրիզ.



*) Իմ յօդուածի Գ. գլխում - «ՎԷՄ», Ե. էջ 72 - գրչի վրիպումով գրել եմ «1920 ք. դեկտ. 24-ի կէս օրին». պետք է լինի՝ 1919 ք.: ՍՍՄ.

ԳՐԻՄԻԹԵԼ

ԶԻՆԱԴԱԴԱՐԻ ՕՐԵՐՈՒՆ

I

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՊՈԼՍՈՅ ՄԷՁ

Իբրեւ պատմութեան ատաղձ կարելի է նկատել ժամանակակից ունէ դէպքի կամ դէմքի նկարագրութիւն կամ քրոնիկ՝ տրւած լինելով թէ ժամանակի ընթացքով կը փոխւին կեանքի պայմանները եւ ապագային մէջ ունէ նոյնիսկ աննշան մանրամասնութիւն կըստանայ կարեւորութիւն:

Այս մտածումով նպատակ ունիմ փոքրիկ համարատուութիւն մը ընել զինադադարէն վերջ Կ. Պոլսոյ եւ Կիլիկիոյ դատական կազմակերպութեանց եւ անոնց յարակից պարագաներուն մասին:

Թրքական արդարութիւնը, գէթ երեւոյթապէս, ընդօրինակւած էր եւրոպականին վրա: Բացի Բաղաֆային Օրինագիրքէն (Հուզուզը մէտէնիյէ), որուն յենարանն էր Մէնէլլէ, եւ կրօնական դատարաններէն (Շէրի), որոնք կըբաղէին մանաւանդ ժառանգական խնդիրներով, միւս դատական հիմնարկութիւնները՝ քաղաքային առեւտրական, ծովային, պատժական, հաշտարար ատեանները եւայլն՝ ձեւակերպւած էին արեւմտեան եւ մանաւանդ Փրանսական օրինագիրքերու վրա:

Համաձայն հին պայմանագիրներու՝ (capitulations) իւրաքանչիւր հիւպատոսարան ունէր իրեն յատուկ դատական կազմակերպութիւնը, ուր կը դատէին իր հպատակները կամ քաղաքացիները: Երբ օտարական մը դատ բանար թրքահպատակի մը դէմ, կամ փոխադարձաբար, տեղական դատարանին մէջ, դատաւարութեան ընթացքին ներկայ կը գտնէր պատկանեալ դեպքանատունէն թարգման մը, որ շատ կարեւոր դեր կը կատարէր:

Իբրեւ այս գրութեան շնորհիւ, ունէ օտարական, (Թիւրքիստան անջատուած պալքանեան պետութեանց հպատակներն ալ մէջն ըլլալով) օրինապէս կը գտնէր իր երկրին մէջ, եւ նոյնիսկ աւելի առանձնաշնորհում կը վայելէր:

Մեծ պատերազմի վախճանին, երբ Մարաջախ Ֆրանչէ Տ'Կարէրէ մտաւ Կ. Պոլիս, Սուլթան Մէհմէտ Ֆաթիէն աւելի փառաւոր կերպով, բնականաբար, Դաշնակիցները իրենց յաղթական ձեռքը դրին ամէն մարդի վրա:

Վերոյիշեալ հին թրքական դատարաններու կազմը գրեթէ նոյնութեամբ պահուեցաւ, սակայն Դաշնակիցներու զօրաւոր եւ խիստ հակակշռին ներքեւ: Հսկողութիւնը այնքան ծանր էր, որ թրքական Արդարութիւնը շունչ առնելու եւ աչք բանալու միջոց չունէր:

Թուրք դատարանները, կամ վարչական պաշտօնեաները մնալով երկու սուրի մէջ, չէին գիտեր ինչպէս շարժիլ եւ ո՞ր որոշման մէջ հաստատուիլ:

Վարչական տեսակէտով՝ Կ. Պոլիս եւ արւարձանները բաժնուած էին Փրանսական, անգլիական եւ իտալական զինուորական իշխանութեանց մէջ: Թէպէտեւ մարդերը զանազանուած էին, սակայն ամէն կողմ երեք պետութիւններն ալ ունէին ներկայացուցիչներ:

Երեքն ալ կազմած էին նմանապէս պատերազմական ատեաններ, որոնց բանտերուն մէջ կը գտնէին բազմաթիւ տեղացիներ եւ մանաւանդ թիւրքեր:

Ոստիկանական կազմակերպութեան կեդրոնն էր Բերա. Ոսկերբերան եկեղեցիին մօտ խոշոր շէնք մը: Հոն կաշխատէին Փրանսացի եւ անգլիացի կարեւոր պաշտօնատարներ, որոնց ամենէն ծանօթն էր հազարապետ Սթրաֆ:

Դաշնակից ոստիկանական ամբողջ կազմը՝ հրահանգ կը ստանար անգլիացի զնգապետ Մաքսվէլէն, որուն գրասենեակները գետեղած էին Քրիւկէր պանդոկին մէջ, Թէփէ-Պաշը պարտէզին մօտ:

Տարակոյս չկայ թէ Կ. Պոլսոյ այս բարդ կարգ ու սարքին մէջ ամենէն աւելի ոտնակոխուողը թիւրք տարրն էր, մանաւանդ սկզբնական շրջանին: Կարելի չէր տառացի կերպով դորձադրել ունէ օրէնք կամ կանոնադրութիւն: Վճիռ մը հազիւ արձակւած թրքական դատարաններէն՝ վերստին խնդրոյ առարկայ կը դառնար:

Բարեկամ մը (Հ. Տ. Ն.) յանձնարարականով մը ինձ զրկած էր Գրիգոր Անգուլթը, զոր թրքական դատարանի վճռով իր բնակարանէն արտաքսած էին: Անմիջապէս զիմեցի Բանկայթի-Համամ գետեղած իտալական ոստիկանատունը, որուն հարիւրապետը ծանօթըս էր, եւ երկու քարապիմիերէ Գրիգոր Անգուլթին գոյքերը վերըստին փոխադրել տւին իրենց նախկին տեղը:

ՖՐԱՆՍԱ - ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎՈՒՄԲ

Այս հիմնարկութեան հաստատութիւնը կարելի է բացատրել այն միտքով, որ Համաձայնականները եւ մանաւանդ Ֆրանսան ուղեցին իրենց համակրութեան արագոյցը տալ Հայոց: Ֆրանսա - Հայկական Ակումբը որ զետեղւած էր Կ. Պոլսոյ Փրանսական դեսպանատան շէնքին մէջ, կը կազմէր բացառիկ իշխանութիւն մը, որ ոչ միայն կը պաշտպանէր հայկական, յունական եւ առհասարակ բոլոր ոչ-խալամ տարրերը, այլ մատ կը դնէր ամէն տեսակ գործերու մէջ:

Կազմակերպութեան նախագահը՝ Արամ պէյ Քէօզէ-Օղլու, ազնիւ անձ մը թէպէտ, բայց հեռու կարող եւ աշխատասէր ըլլալէ, այդ պատիւը ստացած էր ուղղակի իր հօրմէն ժառանգած պատկանելի հարստութեան եւ ղեկավարներու հետ ունեցած անձնական յարաբերութեանց շնորհիւ: Նա աներձագն էր վերջերս վախճանած Յովհաննէս փաշա Գուլումճեանին եւ ունէր իր խորհրդականներն ու քարտուղարները:

Օրինակ մը տալու համար այս հաստատութեան վայելած լիազօրութեան՝ կը յիշեմ Փրանսացի սպայի մը (Պ. Թիպէր) խօսքը: Այս վերջինին հետ տեսակցութեանս միջոցին, գործի թը մասին, որուն մէջ բացայայտօրէն նա կուզէր նպաստաւորել մէկ կողմը, որուն դէմ Արամ պէյ արգելք դրած էր, կը հարցնէր ինձ. - «Ի սէր Աստուծոյ, ի՞նչ է այս Ֆրանսա - Հայկական կոչւած աստամաւոր անիւը, որ ամէն մէկ բանի կը խառնուի»:

Բացատրեցի իրեն թէ այդ հաստատութիւնը մէկ փոքրիկ վարձքն է փոքրիկ Դաշնակիցներուն արժանիքին:

Սակայն, ախտո՞ս, հետզհետէ կը նւագէր Ֆրանսա - Հայկական Ակումբին վարկը: Թրքերը յաջողեցան հիմնել խառն դատարաններ, նման Եգիպտոսի մէջ գոյութիւն ունեցողներուն: Եւ երբ Իգմիլի պարտութեան (1922 սեպտեմբեր) լուրը հասաւ, թրքերը փակեցին խառն դատարանները եւ Արամ պէյի հիմնարկութիւնը դադարեցուց իր գործունէութիւնը: Օր մ'ալ երբ դեսպանատունը դացած էի, ա-կումբին նշանատախտակը տեսայ զետեղւած ձեմիշին նրբանցքին մէջ: Ու մինչ կը խօսէի դեսպանատան աւագ պաշտօնատէրներէն պ. Լաֆօրքատի հետ, այս վերջինը դիտողութիւն կ'ընէր թէ՛ «Մի՛ ըսէք Ֆրանսա-Հայկական Ակումբ, այլ պարզապէս՝ Հայկական»:

Պէտք է յիշել թէ սկիզբի շրջանին՝ Փրանսական դեսպանատան պաշտօնէութիւնը վերէն վար հայասէր դարձած էր. իսկ վերջին փուլին՝ սոյն զգացումը կ'իսով չափով նւագած էր արդէն:

Հարկ է աւելցնել թէ գաղղիական դեսպանատան մէջ գտնուեցան

անձեր որոնք սկիզբէն մինչեւ վերջ պահեցին իրենց հայասիրական զգացումները, ինչպէս պ. Սիլիէր, դեսպանատան իրաւագէտ - խորհրդականը (նախկին հիւպատոս Տրապիզոնի) եւ պ. Լըտու, աւագ թարգմանը:

Երբ քէմալականներ Կ. Պոլիս եկան՝ դիշեր մը դացին ձերբակալել պ. Քէօզէ-Օղլուն, որ հազիւ կրցաւ ազատիլ եւ Իտալիա ապաստանիլ, շնորհիւ Փրանսական դեսպան Զօրապար Բէլէի անձնական եւ կորովի միջամտութեան: Հետեւեալ օրն իսկ փախայ ես ալ դէպի Վառնա, եւ մեկնելէս մի քանի օր վերջ՝ թրքական գաղտնի ոստիկանութիւնը փնտռած էր զիս բազմաթիւ տեղեր: Կ. Պոլսոյ Փրանսական դեսպանատան կիսապաշտօնական օրկան «Սթամպուլ» որ սկիզբէն՝ խանդավառութեամբ կը հրատարակէր յօդուածներս, ի վերջոյ դուռը փակեց իմ առջեւ:

II

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԿԻԼԻԿԻՈՅ ՄԵՋ

Երբ 1918-ին վերջերը Կիլիկիան գրաւեցաւ անգլիական, Փրանսական եւ հայկական ուժերու կողմէ, բնականաբար նորեկները իրենց հսկողութեան ներքեւ առին ինչպէս գործունէութեան բոլոր միջոցները, նոյնպէս եւ դատական կազմակերպութիւնը: Թրքական օրէնքի եւ վարչութեան կազմը պահուեցաւ գրեթէ նոյնութեամբ՝ խիստ հակահշուի ներքեւ, ինչ որ կը նշանակէ՝ թէ նոյն կազմը գոյութիւն ունեցաւ միայն Երեսոյթապէս, գէթ սկիզբի շրջանին:

Փրանսական վարչութեան կողմէ հաստատուեցաւ, բացի Պատերազմական Ատեաններէն, ուր կը դատուէին միայն զինուորականներ, նաեւ ուրիշ ատեան մը, որ կը կոչէր Զինուորական Դատարան, եւ որ պաշտօն ունէր դատելու այն բոլոր խնդիրները, որոնք կը պատկանէին ոչ-զինուորականներուն, ու կապ ունէին ռազմական պաշտօնեաներու կամ իրադարձութիւններու հետ:

Իսկ երբ հարցը շուրջ կը դառնար ուղղակի զինուորական կարգու սարքի հետ առնչութիւն ունեցող գործառնութեան մը, կասկածելին կը դատուէր պատերազմական ատեանին առջեւ, այնպէս որ հոն բաւական մեծ թիւ կը կազմէին քաղաքացիներ: Սոցի վաճառական մը (Կ. Դ.) հայթայթիչ զինուորական պիտոյից, իբրեւ զեղծարար բանտարկութեան դատապարտուեցաւ յիշեալ ատեանին կողմէ: Ըստ զինուորական օրինագիրքի տրամադրութեան, ռազմական ուժերուն պետը կարող է պատիժը մեղմացնել եւ ներում շնորհել որոչ պայմաններու մէջ: Հայ եկեղեցական իշխանութիւնը դիմում

կատարեց եպիսկոպոսի մը միջոցաւ (Հ. Կ.) եւ զօրավար Տիւֆիօ բարեհաճեցաւ գործածել իր իրաւունքը:

Ատանայի մօտ Շէյխ - Մուրատը հայաբնակ գիւղին բնակիչներէն մէկը նամակ մը գրած էր՝ բուն կերպով բողոքելու համար՝ Քրանսական իշխանութեանց դէմ, առթիւ ծանրակշիռ դէպքի մը, որ պատահած էր յիշեալ գիւղին մէջ: Եւ որովհետեւ հայ թերթ մը հիւրընկալած էր սոյն բողոքագիրը, լրագրողը (Ս. Կ.) կանչեցաւ Զինուորական Դատարանին առջեւ, որուն նախագահն էր հազարապետ Ասլէր, այժմ գնդապետ ի Փարիզ: Տրւած ըլլալով այս վերջինին խիստ մարդու համբաւը, եւ գործին լրջութիւնը, վախ կար որ ամբաստանեալը կրէր ծանր դատաւարութիւն մը: Այս սողերը ստորագրողին պաշտպանողականին վրա, հայ լրագրողը օձիքը ազատեց փոքրիկ տուգանքով մը: (Տասն օսմ. ոսկի թղթադրամ):

Կիլիկիոյ վարչական հակակշռի պետ գնդապետ էտոլար Պրէմօնի (այժմ զօրավար) թելադրութեամբ ձեռնարկեցինք Ատանայի մէջ հաստատել փաստաբաններու կաճառ մը, սակայն գործը անաւարտ մնաց՝ պարագաներու բերումով:

1919-ի առաջին ամիսներուն, ամէն անգամ որ այցելէի գնդապետ Պրէմօնին, կըսէր. «Կիլիկիոյ պետական պաշտօնէութիւնը պիտի փոխեմ: Մինչեւ վեց ամիս ոչ մէկ թիւրք պաշտօնատար պիտի ձգեմ», եւայն: Իսկապէս ալ սկսած էր խոստումը գործադրել: Ինչպէս ուրիշ մարդերու մէջ, նոյնպէս դատական ճիւղին վրա կը հաշտէին հայեր, օրինակ Ա. Պ. պատժական դատարանի նախագահ, Գ. Ա. հաշտարար դատաւոր, եւայն: Սակայն հետագայ դէպքերը, դժբախտաբար, թուրքացումի եւ նոյնիսկ չկամութեան ենթարկեցին այս հայասիրական հոսանքը, եւ տրամադրութիւնները լարեցան հակառակ ուղղութեամբ:

«ՀԱՅԱՆՊԱՍՏ» ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Փրանսական իշխանութիւնները՝ Ատանայի մէջ հաստատեցին երկու խառն յանձնախումբեր, որոնք կը կրչէին իրաւաբարութեան կամ հատուցումի մարմին *Commission d'arbitrage ou de restitution* եւ որոնց նպատակն էր գնահատել եւ վերադարձնել հայերէն յափշտակած կամ բռնագրաւած շարժուն կամ անշարժ ստացւածքը:

Այս յանձնախումբերը հաղիւ մի քանի ամիս կրցան աշխատիլ եւ 1920-ին սկիզբները ասոնցմէ կարեւորագոյնը ջնջեցաւ, իսկ միւսին ձեռնհասութիւնը վերածւեցաւ 50 թրքական ոսկի թղթադրամի, ինչ որ հաղիւ կը համապատասխանէր պարզ հաշտարար ատ-

եանի մը կարողութեան: Մինչ հայոց դատերուն գումարները կը հասնէին կարեւոր թիւերու:

Վերադարձւած կամ փոխարինւած հարստութիւնը հաղիւ մէկ տասներորդը կը կազմէր յափշտակածին: Յիշեալ մարմիններուն ջնջումը կը կազմէր ուղղակի արդարութեանց մերժում: Այս մասին Ազգային Միութեան կողմէ տրւած յիշատակագիրը մնաց ապարդիւն:

Հայ մը որ բանտարկութեան դատաւարուած էր Մարգարէ Մուհամմէտին հայհոյած ըլլալու ամբաստանութեամբ, դիմեց վերաքննութեան: Վերաքննիչ Ատեանի (Իսթինաֆ) առջեւ զինք պաշտպանեցի եւ հաղիւ կարելի եղաւ ստանալ պատիժի փոքրիկ մեղմացում մը: Ամբաստանեալը վճիռը մաքրեց մեկնելով դէպի Սիւրիա:

Գաղաքական միջնորդը արդէն ապականւած ու թունաւորւած էր: Գէմալական շարժումը կը ծաւալէր Արեւելքէն Արեւմուտք, եւ Արդարութեան լոյսերը տակաւ կը մարէին Միջազգային Դիւանագիտութեան խոհանոցին մէջ: Հայոց բոլոր զոհողութիւններն ու ջանքերն ապարդիւն մնացին եւ 1921 թ. սկիզբը պարսկեցաւ Կիլիկիան:

Փարիզ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԽՈՐՀՐԴԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԵՐՐՈՐԳ ՆԻՍՏ

5 օգոստոս, Երկուշաբթի, ժամը 11

Նախագահ՝ Ա. Սահակեան

Օրակարգի նիւթն է՝ կառավարական յայտագրի քննութիւնը: Խօսք է անում Հ. Յ. Դաշնակցութեան Փրակցիայի նախագահ Սմբ. Խաչատրեանը, որ կարճ ճառով ցոյց է տալիս յայտագրի մի քանի երկրորդական թերութիւնները եւ դանում է, որ յայտագիրը, ընդհանուր առմամբ, բաւարարում է իր Փրակցիային:

Ա. Խոնդկարեան, սոց. - յեղ. - Իւրաքանչիւր յայտագրի նպատակն է ծանօթացնել խորհրդարանին եւ վերջինիս միջոցով ժողովրդին նոր կազմած կառավարութեան ընոյթին, որպէսզի խորհրդարանը կարողանայ ճշտել իր վերաբերումը դէպի կառավարութիւնը: Այդ տեսակէտից, յայտագիրը խմբագրւած է այնպիսի ընդհանուր արտայայտութիւններով, որ կարելի չէ որոշ զաղափար կազմել կառավարութեան մասին: Սա մի ընդհանուր յայտագիր է, որ կարող է յարմարել ամէն մի կառավարութեան, այնքա՛ն քիչ են նրա մէջ թանձրացեալ կէտերն ու մանրամասնութիւնները: Անդրանիկ կառավարութեան յայտագիրը պէտք է ունենար սահմանադրական ընոյթ: Երկրում ամէն ինչ քայքայւած է, հարկաւոր է ըստեղծել պետական նոր մեքենայ, և կառավարութիւնը պէտք է ասէր, թէ ինքը ինչպէս պիտի դուրս բերէ այդ գործը: Մի երկրի քաղաքական կեանքի բովանդակութիւնը որոշուած է խորհրդարանի գործունէութեամբ, բայց կառավարութիւնից երկիրը սպասում է կառավարական գործի կարգաւորում: Յայտագրի մէջ չկայ եւ ոչ մի խօսք այդ մասին:

Անցնելով արտաքին քաղաքականութեան՝ պատգ. Խոնդկարեանը զարմանք է յայտնում, որ ոչ մի խօսք չի ասուած Ռուսաստանի հետ ունենալիք յարաբերութեան մասին: Արդեօք այդ բացատրում

է նրանով, որ կառավարութիւնը Ռուսաստանի հարցը համարում է լուծւած խնդր՝, թէ՛ ուրիշ նկատումներ կան: Յամենայն դէպս, սոց. - յեղափոխական Փրակցիան աշխատելու է վերականգնել միացեալ յեղափոխական ճակատը Ռուսաստանի հետ եւ կովկասեան դէմոկրատիան դաշնակցական կապերով կապել Ռուսաստանի ռամկավար հանրապետութեան հետ:

Պատգամաւորին անհասկանալի են թուում այն շարժառիթները, որոնք ստիպել են կառավարութեան ներկայանալ խորհրդարանին այնպիսի յայտագրով, որի մէջ կառավարութեան իսկական դիտաւորութիւնները քողարկւած են ընդհանուր խօսքերով: Բայց հէնց այդ հանգամանքը հնարաւորութիւն չէ տալիս որոշ զաղափար կազմել կառավարութեան եւ նրա քաղաքականութեան մասին: Այդ պատճառով սոց. - յեղ. Փրակցիան դժւարանալով միայն յայտագրի հիման վրա ճշտել իր վերաբերումը դէպի Քաջազնունիի դահլիճը՝ որոշել է մնալ ձեռնդրած վստահութեան կամ անվստահութեան բանաձեւի քեզարկութեան ժամանակ:

Հայ Ժողովրդական Կուսակցութեան ներկայացուցիչ Արշալոյս Մխիթարեանը յանուն իր Փրակցիայի կարգում է հետեւեալը. -

Հայ Ժողովրդական Կուսակցութեան Փրակցիան, լսելով Հայաստանի Խորհրդում կառավարութեան օգոստ. 3-ին յայտարարած դէկլարացիան՝ գոհունակութիւն յայտնում, որ կառավարութիւնը որոշել է հետեւել ոչալ քաղաքականութեան եւ խուսափել է ծրրազրային ծայրայեղ յայտարարութիւններից: Այսու հանդերձ նա կառավարութեան դէկլարացիայի վերաբերմամբ հետեւեալ դիտութիւններն է անում. -

1) Ներքին գործերի սահմաններում. - Չափազանց անորոշ մի Ֆորմուլա է ասելը «հաստատել երկրում տարրական իրաւակարգ եւ կեանքի ու դոյքի ապահովութիւն», առանց ցոյց տալու այն հիմունքներն ու միջոցները, որոնց վրա պիտի յենւի եւ իրաւագործել մտնքներն ու միջոցները, որոնց վրա պիտի յենւի եւ անպատասխանատու յայտաւար իրաւակարգը: Այսպիսի անորոշ եւ անպատասխանատու յայտարարութիւն կարող է անել ամէն տեսակ կառավարութիւն՝ նրա մէջ բարութիւն կարող է անել ամէն տեսակ կառավարութիւն: Փրակցիան կարծում է, դնելով իր ցանկացած բովանդակութիւնը: Փրակցիան կարծում է, որ այս կէտում յատկապէս պէտք է յիշուած լինէին այն հիմնարկութիւնները, որոնք պիտի ստեղծէին իրագործելու համար իրաւակարգը և կեանքի ու դոյքի ապահովութիւնը: Պէտք է յիշատակւած լինէր թէ մտադիր է արդեօք կառավարութիւնը այժմէն եւ եթ մտցնել դէմստային ինքնավարութիւն, կամ ի՞նչ կերպով նա մտադիր է կազմաւորել ինքնավարութիւնները: Դարձեալ անյայտ է մնում, կերպել տեղական իշխանութիւնները: Դարձեալ անյայտ է մնում, ինչպիսի վերաբերմունք ունի կառավարութիւնը դէպի մամուլը,

խօսքի, ժողովների աղատութիւնը, անձի եւ բնակարանների անձեւ-
որմխելութիւնը եւ այլ քաղաքացիական աղատութիւնները, եւ
ի՞նչ կերպով մտադիր է սրանք իրագործել երկրի ներկայ քառային
վիճակում :

2) Պարենաւորման գործի վերաբերեալ Փօրմուլան այն է՝ «եռան-
դուն միջոցների դիմել կարելոյն չափ մեղմացնելու պարենաւորման
տաղնապը»՝ ցոյց է տալիս, որ կառավարութիւնն այս հարցում խկա-
պէս ոչ մի որոշ պարտականութիւն յանձն չէ անում Հայաստ. Սոր-
հրդի առաջ, որովհետեւ, «ըստ կարելոյն» խօսքը բոլորովին ա-
ռաճգական եւ անպատասխանատու դարձածք է : Փրակցիան կար-
ծում է, որ կառավարութիւնը պարտական էր ցոյց տալ գոնէ մի
քանի ուէալ միջոցներ փարատելու համար պարենաւորման ահռելի ա-
ղէտը, որ սպառնում է ժողովրդի Ֆիզիքական գոյութեան, պէտք է
ցոյց տար, թէ շարունակելը է արդեօք հացի պետական մենավա-
ճառութիւնը, մտադիր է արդեօք եւ ի՞նչ միջոցներով ապահովել
կենսամթերքների անկորուստ ամբարումը, օտար երկրներից հացի
ներմուծումը եւ մթերքների հաւասարաչափ ու կանոնաւոր բաշ-
խումը :

3) Նոյնպէս անորոշ եւ անբաւարար է կառավարութեան յայ-
տարարութիւնը գաղթականների վիճակի վերաբերմամբ. յայտնի չէ
նրանից, թէ մտադիր է արդեօք կառավարութիւնը նոր գերլատելեր
ստեղծել նրանց համար, կազմակերպել հասարակական աշխատանք-
ներ՝ նրանց գուրս բերելու համար այժմեան անցանկալի մուրացկա-
նութեան վիճակից, ապահովել նրանց համար առողջապահական մի-
նիմալ պայմաններ սոսկալի մահացութեան առաջն անելու համար :

4) Ֆինանսական հարցի վերաբերմամբ Փրակցիան գտնում է,
որ կառավարութիւնը չունի ֆինանսական որոշ քաղաքականութիւն
երկրի անտեսութիւնը բարեկարգելու համար, քանի որ մերի նման
աւերած եւ անտեսապէս քայքայած երկրում ոչ մի հարկային
սխտեմ, որքան էլ «առողջ լինի», չէ կարող բաւարարութիւն տալ
պետութեան ֆինանսական կարիքներին : Գայով «առողջ» հարկային
սխտեմին՝ Փրակցիան նկատում է, որ դա միանգամայն անորոշ եւ
առաճգական խօսք է եւ չի տալիս որեւէ հասկացողութիւն թէ հար-
կերի բազմատեսակ եւ բարդ սխտեմներից կառավարութիւնը ո՞րն
է համարում առողջ :

5) Արդարադատութեան սահմաններում Փրակցիան նոյնպէս ան-
բաւարար է գտնում արդարադատութեան եւ դատավարութեան վե-
րաբերեալ մի քանի խօսքերը : Դէկլարացիայի մէջ չէ յիշւած, թէ
կառավարութիւնը ի՞նչ միջոցներ պիտի ձեռնարկէ եւ ի՞նչ օրինա-

գրծեր ունի ի նկատի մօտակայ ապագայում դատավարութեան եւ
արդարադատութեան գործը հաստատուն հիմքերի վրա դնելու հա-
մար : Նա նոյնիսկ դանց է անում յիշել, թէ մինչեւ նոր օրէնքների
սահմանելը ի՞նչ օրէնքներով պէտք է կառավարել երկիրը : Նոյնպէս
մատնանշւած չէ ուսական, պետական եւ տեղական լեզուների կի-
րառութեան եղանակը դատավարութեան մէջ :

6) Գայով կառավարութեան յայտարարութեան արտաքին գոր-
ծերի վերաբերմամբ, այսինքն՝ «ամբացնել օսմանեան կառավարու-
թեան հետ կնքած հաշտութիւնը եւ բարի դրացիական յարաբերու-
թիւններ հաստատել նրա հետ : Ստիւ կատարել այն բոլոր պարտա-
կանութիւնները, որ մենք յանձն ենք առել օսմանեան կառավարու-
թեան հանդէպ, եւ հետեւել, որ օսմանեան կառավարութիւնը իր
կողմից անի նոյնը մեր վերաբերմամբ, մասնաւորապէս լուծել օս-
մանեան գորքերի մեր երկրից դուրս բերելու հարցը եւ դաղթական-
ների վերադարձը»՝ Փրակցիան ուղղակի աղչում է, թէ ինչպէս կա-
ռավարութիւնը անտես է անում բովանդակ հայ ժողովրդի տենչն ու
կենսական շահերը այնպիսի մի գործում, որից կախած է հայ պե-
տութեան լինելու-չլինելու հարցը : Մինչդեռ կառավարութեան պատ-
գամաւորները Կ. Պօլսում աշխատում են օսմանեան պետութեան եւ
նրա դաշնակից պետութիւնների համաձայնութեամբ վերաքննել Բա-
թումի հաշտութեան դաշնագիրը՝ նպատակ ունենալով ընդաքձակել
մեր պետութեան սահմանները եւ հնարաւորութիւն տալ հայ ժողո-
վուրդին ապրելու պետական կեանքով. մինչդեռ Հայաստանի Սոր-
հրդի բացման հանդիսաւոր օրը պ. նախագահը, թարգման հանդի-
սանալով ժողովրդի միահամուռ տենչանքին, յոյս յայտնեց, թէ՝
«սահմանները քարացած չեն, որ նրանք կընդարձակելին կեանքի եր-
կաթէ օրէնքի ուժով, մեր արդար եւ անվիճելի իրաւունքների
պաշտպանութեամբ դրաւած հողամասերի վերաբերմամբ», կառա-
վարութիւնն իր յայտարարութեամբ լիովին հաշտւում է Բաթումի
դաշնագրի հետ եւ խոստանում է նրան ամբարտնալել՝ սրանով կանխ-
օրէն գլխատելով իր պատգամաւորների գործը եւ ուղղակի ի չիք
դարձնելով նրան :

7) Բացի սրանից, Փրակցիան հարկադրւած է մատնանշել, որ
կառավարութիւնը միանգամայն լուծ է ժողովրդական լուսաւորու-
թեան մասին եւ նոյնիսկ չէ յիշում որեւէ օրգան, ժողովրդական
լուսաւորութեան կարեւոր գործը վարելու համար, կարծես այս
հարցը գոյութիւն չունի նրա համար. նա միանգամայն անտես է ա-
նում ժողովրդական առողջապահութիւնը, որ մանաւանդ փտանդւած
է պարենաւորման տաղնապի, դաղթականների անտանելի վիճակի

զուժ են համաձայնեցնել ժողովրդի քաղաքացիական իրաւահասակացողութեան: Դա թիւրիմացութեան հետեւանք է միայն. ուսերէն պրալօօրորոտ բաւը սխալմամբ թարգմանել է «իրաւահասակացողութիւն» տերմինով:

Պատգ. Մխիթարեան եւ Աղատեան ասում են, որ հարկերի «առողջ սիստեմ» հասկացողութիւնը առաձգական է: Ես բաց կանեմ փակազծերը եւ կասեմ, որ հարկերի առողջ սիստեմ ասելով մենք հասկանում ենք եկամտային պրոգրեսիւ հարկ, սակայն տեխնիկական անյարմարութիւնների պատճառով, դուցէ, կառավարութիւնը չկարողանայ անմիջապէս կիրառել յիշեալ սիստեմը, ուստի եւ յայտարարութեան մէջ յատկապէս չէ յիշել:

Պատգ. Խոնդկարեանը նկատում է, որ Հայաստանի, Վրաստանի եւ Ատրպատականի սահմանները որոշելիս ի նկատի է առնելու միայն ազգազրական սկզբունքը, անտեսելով տնտեսական պայմանները: Յիշեցնում եմ սահմանորոշող ծրագրի սկզբունքներին ծանօթ մարդոց, այնտեղ կիրառւած են թէ ազգազրական, թէ աշխարհազրական - տեղազրական եւ թէ տնտեսական պայմանները:

Սահմանների վերաբերմամբ պատգ. Մամիկոնեանը հարց է տալիս՝ որո՞նք են Հայաստանի սահմանները: Նախ՝ այդ հարցը պիտի լուծւի երկուստեք համաձայնութեամբ, երկրորդ՝ Մամիկոնեանը լաւ գիտէ այդ ուղղութեամբ տարւող աշխատանքները եւ նրանց ձգձգման պատճառները, որոնք մեզինք կախւած չեն:

Պատգ. Մխիթարեան պարենաւորման հարցի մասին խօսելիս մասնանշում է, որ յայտարարութեան մէջ ասւած է՝ «կառավարութիւնը ըստ կարելոյն պիտի մեղմացնէ պարենաւորման տաքնապը»: Եւ այդտեղից եզրակացնում է՝ ուրե՞քն՝ կառավարութիւնը այդ ասպարէզում պարտականութիւն եւ պատասխանատուութիւն չի վերցնում իրեն վրա: Կառավարութիւնը պարենաւորման հարցը համարում է ամենազխաւոր եւ ջանք չի ինայելու այն կանոնաւորելու, սակայն լիովին պարտականութիւն չի վերցնում կերակրելու բազմահազար զաղթականութիւնն ու ժողովուրդը եւ այդ պատճառով արտայայտում է զուսպ ձեւով:

Այս կարգի հարցերից է եւ յեղունների հարցը: Ես պէտք է ասեմ, որ այդ հարցի միտելը կախւած է Խորհրդից, եւ կառավարութիւնը մտադիր է Խորհուրդ մտցնել համապատասխան օրինադիժ, մինչ այդ՝ կառավարութիւնը պետական յեղուն ընդունելով հայերէնը՝ դրա հետ միասին թոյլ է տալիս տեղական միւս յեղունների գործածութիւնը:

Այժմ անցնում եմ այն հարցերին, որոնց դէմ պիտի առարկեմ:

Պատգ. Խոնդկարեան, Ա. Մելիքեան եւ Մամիկոնեան հարցնում են՝ որո՞նք են Հայաստանի սահմանները: Ես դրան պիտի պատասխանեմ. Հայաստանի հիւսիսային սահմանները որոշւած չեն, իսկ հարաւայինը որոշւած է, ընդհանրապէս. պարտք եմ համարում յայտարարելու, որ քանի դեռ նոր ակտով սահմանները փոխւած չեն, այժմ գոյութիւն ունեցողներից դուրս ուրիշն ընդունելի լինել չի կարող:

Այդ մեղ հարցնում են պատգամաւորներ Զորին, Խոնդկարեան, Ա. Մելիքեան, թէ ինչո՞ւ արտաքին քաղաքականութեան մասին խօսելիս, բացի Թիւրքիայից, Ատրպատականից եւ Վրաստանից, միւս պետութիւնների հետ ունենալիք յարաբերութիւնների մասին խօսք չկայ: Դրա պատասխանը շատ կարճ է. նախ՝ իրաւական տեսակէտից մեր անկախութիւնը ճանաչել են առայժմ վերոյիշեալ երեք պետութիւնները եւ երկրորդ՝ միւս պետութիւնների հետ յարաբերութիւն ստեղծելու տեխնիքական յարմարութիւն չկայ: Աւելի լայն քաղաքական յարաբերութիւններ սկսելը ասպազայի դորժ է:

Շատերին դարմացնում է կառավարութեան այն դարձւածքը, թէ նա խստիւ պիտի կատարէ Թիւրքիայի հետ կապած դաշնագրի պայմանները եւ հետեւի, որ նոյնն անի եւ Տաճկաստանը: Այո՛, պիտի ասեմ, որ քանի որ դաշնագրով մենք պարտականութիւններ ենք յանձն առել, որոնք նոր ակտով փոխւած չեն, մենք պիտի կատարենք խստիւ եւ ուրիշից էլ պիտի պահանջենք նոյնն անել:

Պատգ. Խոնդկարեանը դժգոհ է, որ յայտարարութեան մէջ ոչինչ չէ ասւած Անդրկովկասեան Ֆէդէրացիայի մասին, որովհետեւ Հայաստանը, Վրաստանը եւ Ատրպատականը առանձին - առանձին գոյութիւն ունենալ չեն կարող: Յայտնի պիտի լինի ձեզ, որ հայերէնը մինչեւ վերջն էլ կողմնակից էինք Անդրկովկասեան Ֆէդէրացիային, եւ մենք չէինք, որ բաժնեցինք, այլ մեղ բաժանեցին իրենցից. իսկ եթէ հնարաւորութիւն ստեղծւի վերոյիշեալ երեք հանրապետութիւնների դաշնակցութեան, որին մենք հաւատում ենք, այդ մեր ցանկութիւնն է եւ մեր ասպազան: Ներկայումս առ հարցը դնելը եւ գործնականորէն լուծելը հնարաւորութեան սահմաններից դուրս է: Յայտարարութեան մէջ եղած բարեկամական յարաբերուողութիւնների ցանկութիւնը Ատրպատականի եւ Վրաստանի հետ ասպացուցում են, որ մենք խուսափում ենք կոնֆլիկտներից եւ հարթում ենք այդ հարցի բարեյաջող լուծումը:

Պատգ. Աղատեանը զինուորական վարչութեան ծրագրի դէմ առարկելով՝ ասում է՝ որ մենք մշտական զօրք պահել չենք կարող եւ պէտք է ընդունենք միլիցիայի սկզբունքը, իսկ պատգ. Մամիկոն-

եանը պահանջում է զօրքի թիւն աւելացնել: Կառավարութիւնը այդ երկու առաջարկութեան էլ համաձայնել չի կարող: Նա այսօր չի կարող արձակել մշտական զօրքը ու դիմել միլիցիական սիստեմի միւս կողմից՝ հնարաւորութիւն չունի նրա թիւը շատացնելու. ընդհակառակը, դիմում է բանակի կրճատմանը:

Պատգ. Մամիկոնեանը կարծում է, թէ ներկայում, կառավարութիւնը պիտի հոգայ ու զբաղւի միայն արտաքին քաղաքականութեամբ, սակայն, կառավարութիւնը այդ տեսակէտի վրա կանգնել չի կարող:

Նոյն պատգ. Մամիկոնեանը եւ Ա. Մելիքեանը պահանջում են կառավարութիւնից լինել խիզախ, սակայն, քանի դոյուլթիւն ունի ներկայ կառավարութիւնը, նա երկիրը չի դնի նոր-նոր արկածների եւ փորձութիւնների առաջ եւ ուրիշների էլ թոյլ չի տայ նոյնը անելու:

Վերջացնելով ասելիքս՝ նորից պարտք եմ համարում ձեր ուշադրութիւնը հրաւիրելու այն հանգամանքի վրա, որ կառավարութիւնը իր յայտարարութեան մէջ պարզ ասել է, որ սա մի համառօտ եւ տարրական ծրագիր է եւ, դժբախտաբար, մեր պայմանների համար մի մաքսիմում է: Կառավարութիւնը երջանիկ կը զգայ իրեն, եթէ մասամբ կարողանայ իրականացնել այստեղ ասածները եւ նա կարող է այդ անել, եթէ իր կողմն ունենայ Խորհրդի վստահութիւնն ու աջակցութիւնը:

Յայտարարում է ընդմիջում, որից յետոյ քէարկում են Ֆրակցիաների առաջարկած բանաձեւերը: 23 ձայնով, ձեռնպահութեամբ 11-ի եւ դէմ՝ ոչ ոքի, անցնում է Հ. Յ. Դաշնակցութեան եւ Հայ Ժողովրդական Կուսակցութեան հետեւեալ բանաձեւը. —

«Հայաստանի հորհրդարանը*) լսելով կառավարութեան յայտարարութիւնը եւ միևիստր — նախագահի բացատրութիւնները այդ յայտարարութեան առիթով եղած դիտողութիւնների մասին՝ հաւանութիւն է տալիս նրանց եւ անցնում հերթական խնդիրներին»:

Սոց. — դէմոկրատական Ֆրակցիան առաջարկում է հետեւեալ բանաձեւը. —

«Լսելով կառավարութեան յայտարարութիւնը, աչքի առաջ ու-

*) Ծանօթ.—Սկզբի շրջանում Հայաստանի Խորհուրդը սովորաբար կաշուում էր Խորհրդարան-հորհուրդ եւ հորհրդարան բառերը միմեանց փոխարէն թէ պատգամաւորները նաեւում ու բանաձեւերում, թէ մամուլում եւ թէ պաշտօնական քաղ-երի մէջ: Պաշտօնական անունը, սակայն, Հայաստանի Խորհուրդ էր:

նենալով երկրի ներկայ ծանր պայմանները եւ ցանկութիւն ունենալով, որ կառավարութիւնը իր առաջիկայ գործունէութեան ժամանակ, յենած դէմոկրատական կազմակերպութիւնների վրա, դեկավարի ֆրակցիաների արած ցուցմունքներով՝ տանելու երկիրը դէպի դէմոկրատական կարգերը — յոգուտ աշխատաւոր դասակարգերի, Հայաստանի հորհուրդը անցնում է հերթական խնդիրներին»:

Այս բանաձեւը ստանում է 6 կողմ, 21 ձեռնպահ եւ հակառակ՝ ոչ ոք:

Սոց. — յեղափոխականների Ֆրակցիայի կողմից պատգ. Ա. Խոնդկարեան յայտարարում է.

«Որովհետեւ կառավարութեան պետի բացատրութիւնից յետոյ ֆրակցիայի դրած հարցերը չպարզեցին եւ չպարզեց կառավարութեան բնոյքը, ուստի եւ ֆրակցիան մնում է իր յայտարարութեան մէջ արած կարծիքին»:

Մահմեդական Ֆրակցիայի կողմից Աղաբաբէկովը յայտարարում է.

«Լսելով կառավարութեան յայտարարութիւնը եւ նրա դէմ եղած առարկութիւնների բացատրութիւնը, մահմեդական ֆրակցիան յայտնում է կատարեալ վստահութիւն եւ անցնում է հերթական հարցերին, միաժամանակ յոյս ունենալով, որ Հայաստանի Հանրապետութեան մէջ փոքրամասնութեան իրաւունքները լիովին կը պաշտպանեն»:

Այնուհետեւ պատգ. Զուբեանը յայտնում է, որ երեւանի Հայոց Ազգային Խորհրդի հաշիւները քննող յանձնաժողովը ժամանակին չէր կարողացել իր պարտականութիւնները կատարել. բացի այդ, յանձնաժողովի երկու անդամները հրաժարել են, ուստի պէտք է որոշել, թէ այդ յանձնաժողովը շարունակելու է այդ գործը:

Ֆինանսների միևիստրը առաջարկում է, սահասարակ, պետական բնոյթ ունեցող բոլոր հաշիւների քննութիւնը թողնել ընտրուելիք պետական հսկիչին:

Առաջարկը ընդունւում է 21 ձայնով:

Ապա ժողովը անցնում է չորս յանձնաժողովների ընտրութեան՝ նախապէս որոշելով յանձնաժողովների մէջ մտցնել Հ. Յ. Դաշնակցութեան Ֆրակցիայից 3-ական հոգի եւ միւս Ֆրակցիաներից՝ մէկական: Ընտրւում են հետեւեալ յանձնաժողովները. —


- 1. Ֆինանսական. — Արտաշէս Վանցեան, Հայկ Սարգսեան, բժ. Յովհաննէս Տէր-Միքայէլեան, Արմենակ Աւետիքեան, Արշաւիր Մելիքեան:

2. Օրէնդարական.— Սիրական Տիգրանեան, Յովակիմ Բուզաղեան, Ռուբէն Տէր-Մինասեան, Արշամ Խոնդկարեան, Յովհաննէս Չաքարեան, Գրիգոր Տէր-Սաչատրեան :

3. Հարցապնդումների.— Յովակիմ Բուզաղեան, Սմբատ Խաչատրեան, Բժ. Արշակ Ղազարեան, Բժ. Գրիգոր Տէր-Յակոբեան, Թաղէոս Աւգալբէկեան, Գարեգին Ենդերարեան :

4. Կարգադրիչ.— Բժ. Յ. Տէր-Միքայէլեան, Եփրեմ Սարգսեան, Յակոբ Տէր-Յակոբեան, Արմենակ Աւետիքեան, Յ. Չաքարեան, Գ. Ենդերբալեան :

«Հորիզոն», 22 օգ., 7 սեպտ.



ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ՅՈՒՂԱՐԿԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ

ԵՒ Ս. ԶԱԽԱՐԵԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ

1892 թ. դեկտ. 27-ին տեղի ունեցաւ Գրիգոր Արծրունու համաժողովրդական յուղարկաւորութիւնը: Տասնեակ հազարաւոր բաղմուխներ եկել էր իր վերջին հրաժեշտը տալու հայ մեծանուն հրապարակախօսին:

Գրաքննական պատճառներով ժամանակին կովկասեան թերթերը չկարողացան տալ այդ յուղարկաւորութեան իսկական նկարագրութիւնը: «Դրօշակ»-ում միայն (№ 4, մարտ, 1893 թ.) կարելի եղաւ խտացած ձևով ներկայացնել իրական պատկերը: Սիմ. Չաւարեանը, որ յուղարկաւորութեան կազմակերպիչներէց մէկն էր, հետեւեալ ձևով է ներկայացնում հանդէսը:

«Արծրունու թաղումը կատարեց հանդիսաւոր կերպով, ինչպէս դեռ ոչ ոք չէր թաղել ոչ միայն կովկասում, այլևս ամբողջ Ռուսաստանում: Հանդէսը աւելի մեծ նշանակութիւն ստացաւ կառավարութեան բռնած ընթացքից: Ամսի 26-ին, թաղման նախօրը օրը, ոստիկանապետը պահանջեց, որ հանդէսը անցնի Լորիս-Մելիքեան փողոցով (եւ ոչ Գոլովինսկի պրոսպեկտով) եւ պահանքի համար ունենալ միայն երկու դիակառք. իսկ վերջը, զիջանելով կարգադրիչ մասնաժողովի խնդիրքին, թոյլատրեց ունենալ 7-ը: Ոստիկանապետի միջամտելը այդպիսի մասնաւոր խնդիրներում վատ ներգործութիւն ունեցաւ ժողովրդի վերա: Ամենքը զարմանում էին տեղական վարչութեան կամայական վարմունքից, եւ ընդհանուրի ցանկութիւնն էր չենթարկւել ս. ս. նահանգապետ Շերվաչիձէի եւ ոստիկանապետ Մաստիցկու անտեղի պահանջներին: Այդպէս էլ եղաւ: Երբ հանդիսի սկիզբը հասաւ Բարեատինսկայա եւ Լորիս-Մելիքեան փողոցի անկիւնին տեղի ունեցաւ մի, Թիֆլիսում չտեսնած դէպք:

Ամբոխը կանգ առաւ այդ տեղ: Ոստիկանները եւ 4 հատ ձիաւոր կազակներ ստիպում էին համքեարի դրօշակակիրներին, տիրացուներին եւ քահանաներին ծռել դէպի Լորիս-Մելիքեան փողոցը, իսկ ամբոխը՝ հաւաքելով եւ բռնելով Լորիս-Մելիքեան փողոցի բերանը, աշխատում էր անցնել դէպի առաջնակարգ փողոցը: Ոստիկաններին եւ կազակներին սկզբում յաջողեց ցրել ամբոխը եւ

դրօշակակիրները շատերին, մի քանի տիրացուների հետ ուղղել դէպի իրենց կարգադրած կողմը: Ամբոխը տեսնելով այս, աւելի ուզեւորեա՞ծ խմբելով նորից փակեց փողոցի անցքը: Ընդհարումը սաստկացաւ: Աղաղակները, շուտները թնդացնում էին օդը: «Առա՛ջ, առա՛ջ» գոչումները խլացնում էին ոստիկանների պահանջները եւ հայհոյանքները: Պրիստաւները (աւագ ոստիկանները) մէկը, Սիմոնով ազգանունով, մօտեցաւ խաչվառը տանող տիրացուին, խլեց ձեռքիցը խաչվառը եւ կամեցաւ առաջնորդել դէր կատարել, ծռելով դէպի Լորիս-Մելիքեան փողոցը, սակայն յաղթանդամ «տրակտիրը՝ չիկ Գրիշան» (Գրիգոր Յակովբեան) յարձակեց խաչվառը խլող ոստիկանի վերա, ուժով առաւ եկեղեցական սրբութիւնը եւ անցաւ ժողովրդի առաջը: Բազմութիւնը առաջ մղեց հոգեւորականներին եւ դադաղի հետ միասին անցաւ Պալատական փողոցը: Անընդհատ յաղթական ուռաները, գլխարկների ծփալը օդի մէջ, մի տեսակ ներդաշնակութիւն էին կազմում ամբոխի միահամուռ շարժման հետ:

«Այլպիսով հանդէսը առաջ շարժեց, անցաւ կառավարչապետի պալատի առջեւ եւ ուղղեց դէպի Սոջկանքի դերեզմանատունը: Ճանապարհին աչքի էին ընկնում Ալիւրի մէյդանի եւ բաղաների (մրգավաճառների) փողոցում շինուած սգոյ կամարները»:

Հետեւեալ օրը սկսեցին ձերբակալութիւններ: Բանտարկեցին մօտ 20 հոգի, որոնցից 6-ին դրին Մետեխի բանտը: Կառավարութիւնը խիստ միջոցներ ձեռք առաւ, որպէսզի նման ցոյցեր տեղի չունենան եւ ջրօրհանների հանդիսին:

Ժողովրդի վրդովումը կառավարութեան արարքներից արտայայտեց նրանով, որ համբերները, հակառակ ընդունուած սովորութեան, ի նշան բողոքի, չչնորհաւորեցին քաղաքագլխի Ծննդեան օրը:

Ձերբակալուածների այն մասը որ պահուած էր ոստիկանատներում, ազատ արձակեց յունւ. 13-ին, իսկ Մետեխում բանտարկուածները՝ յունւ. 29-ին:

Գրիգոր Արծրունու դադաղի վրա արտասանուած դամբանականներից առանձնապէս ուշադրութիւն գրաւեց Սիմ. Չաւարեանի ճառը, որի հէնց հեղինակի ձեռքով գրուած բնագիրը մնացել է Հ. Յ. Դ. Կենտր. Դիւանում: Որքան մեղ յայտնի է, այդ ճառը որեւէ տեղ տպուած չէ եւ այստեղ հրատարակուած է առաջին անգամ: Դժբախտաբար ձեռագրի վերջին թուղթը կորել է. խօսքի ընթացքին կարելի է ենթադրել, որ Չաւարեանը չի սահմանափակել միայն Արծրունու քարոզած գաղափարները ջատագովելով, այլեւ մի քայլ առաջ է դնացել՝ յիշելով նաեւ նոր սերնդի՝ «երիտասարդութեան» գաղափարները: Ամէն պարագայի տակ, Չաւարեանի դամբանակա-

նը արժէքաւոր վաւերագիր է ոչ միայն հեղինակի կենսագրութեան որոշ մասի լուսարանութեան համար, այլև Դաշնակցութեան հիմնադիրների հայկական ազատամտութեան գնահատութեան տեսակէտից:

Ահա Ս. Չաւարեանի դամբանականը:

«Ազատամիտ կուսակցութեան արժանի ներկայացուցիչը այլեւս չկայ:

Աւանդապահների, խաւարամոլների յանդուգն թշնամին այլեւս չկայ:

Մեռաւ հայոց կեանքի փրօած սիւներ քանդողը, հեռացաւ մեզանից մեր ազգայնութեան մտքի վերականգնողը, նոր շինութիւն կառուցանողը:

Օտար շրջանի մէջ մեծացած, կրթուած, սկզբում հայութեան մօտ միայն գաղափարով, ժամանակի ընթացքում նա միացաւ հայ ժողովրդի հետ ամբողջովին, կապեց նրա հետ հոգով եւ սրտով: Այն մեծ եւ դժուար գործը, որը առաջնակարգ տեղ է բռնում ամէն ազնիւ հայի սրտի մէջ - հայութեան գաղափարը մօտ էր, կապուած էր Արծրունու հետ...:

Այո՛, կորուստը մեծ է, անփոխարինելի է:

Առաջադիմութեան դրօշակակիրը հայերի մէջ ընկաւ:

Անվեհեր կուռը ընկաւ իր գործունէութեան փայլուն ժամանակը, նա ընկաւ կուռի դաշտում, դրօշակը բարձր բռնած ուժեղ ձեռքում:

Բայց մի՛ առէք՝ նա ընկաւ. նա կենդանի է մեր մէջ: Թէեւ ընկաւ դրօշակակիրը - ծածանուում է դրօշակը: Թէեւ ընկաւ դրօշակակիրը - կենդանի են զինուորները:

Առաջադիմութեան զինուորները չեն ընկնի, չեն տատանւի հասարակական կուռի մէջ: Հայ երիտասարդութիւնը, թանգազին ուսուցիչ, չի դաւաճանի քո քարոզից ոչ մի կէտին: Նա չի շոյի, չի խոնարհւի մեծամասնութեան առաջ: Նա թոյլ չի տայ հայկական կեանքին կանգնել անշարժութեան մէջ: Նա կը միացնէ բոլոր մեր եղբայրակիցներին, առանց կրօնի խտրութեան: Սրբութեամբ ընդունելով 19-րդ սարու Գո տարածած սկզբունքները անձի եւ խղճի ազատութեան վերաբերմամբ՝ մենք կը դիմադրենք այն բոլոր տարրերին, որոնք հակառակ են այդ գաղափարներին, եւ կաշխատենք կեանքի մէջ իրականացնել այդ գաղափարները»:

Գրուած Սիմոնի ձեռքով.

Պարսկաստանի Պահանջները Հաշտութեան Վեհաժողովից

Ինչպէս յայտնի է, Պարսկաստանը համաշխարհային պատերազմում մնաց չէզոք, թէեւ նրա հողը թատերաբեմ դարձաւ պատերազմող կողմերի համար: Պարսկաստանի հիւսիսից, հարաւից եւ արեւմուտքից ներս խուժեցին ռուսական, անգլիական ու թիւրքական բանակները, պարսկական հողի վրա տեղաւորեցին ինչպէս իրենց տանը եւ անհաշիւ վնաս հասցրին երկրին ու ժողովրդին: Այն ժամանակաւ պարսից կառավարութիւնը ի վիճակի չէր պաշտպանելու եւ պետութեան անձեռնմխելիութիւնը ապահովելու:

Երբ պատերազմը վերջացաւ եւ ամէն ժողովուրդ հանդէս եկաւ իր պահանջներով, Պարսկաստանն էլ, բնականաբար, չէր կարող լուռ մնալ: 1919 թ. մարտին, Փարիզում, պարսից արտաքին գործոց նախարար Մոշաւէր - Օլ - Մեմալէք, յանուն Պարսկաստանի կառավարութեան, Հաշտութեան Վեհաժողովին ներկայացրեց մի յուշագիր, որ ձեւակերպում էր իր երկրի քաղաքական, իրաւական եւ տնտեսական պահանջները: Այդ յուշագիրը ժամանակին հրատարակւած է առանձին գրքոյկով*):

Այդ վաւերագրի վրա ժամանակին ուշադրութիւն դարձել է եւ Հայաստանում: Երեւանի «Յառաջ» թերթը մի շարք յօդածներ նրբւիրեց նրան: Նրանով դրաղւել է եւ Հ. Հ. Պատւիրակութիւնը Փարիզում: Որպէս պարսից ազգային բաղձանքները արտայայտող մի փաստաթուղթ - թէկուզ միայն սրուշ չըջանի համար - նա արժանի է ամենալուրջ ուշադրութեան: Այդ պատճառով մենք աւելորդ չենք համարում առաջ բերել նրա ամփոփումը «Վէմ»-ում:

Մոշաւէր - Օլ - Մեմալէքի յուշագիրը բաղկացած է երեք մասից: Առաջինում ներկայացւած են Պարսկաստանի քաղաքական, իրաւական եւ տնտեսական անկախութեան վերաբերող պահանջները: Երկրորդ՝ հողային խնդիրներ: Եւ երրորդ՝ հատուցման իրաւունք: Այդ կարգով էլ տանք յուշագրի բովանդակութիւնը:

*) "Revendications de la Perse devant la Conférence des Préliminaires de Paix à Paris". Paris, Mars, 1919.

Ա. - ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ, ԻՐԱԻԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ. - Պարսից կառավարութիւնը այս տեղ կէտ առ կէտ խօսում է այն անիրաւութիւնների մասին, որ Ռուսաստանը, Անգլիան եւ Թիւրքիան գործել են Պարսկաստանի նկատմամբ, ապա բանաձեւում է հետեւեալ պահանջները:

ա) Վերջնականապէս ջնջել 1907 թ. ռուս-անգլիական համաձայնութիւնը՝ չեղեալ համարելով նրանից բխած հետեւանքները:

բ) Ջնջել 1910 թ. Յուշագիրը, որով արգիւրում է քաղաքական կամ ռազմադիտական նշանակութիւն ունեցող մենաշնորհներ տալը օտարներին:

գ) Ջնջած համարել 1911 թ. վերջնագիրը, որով Պարսկաստանի վրա պարտաւորութիւն է դրւում առանց Ռուսաստանի եւ Անգլիայի հաւանութեան օտար պաշտօնեաներ չհրաւիրել:

դ) Օտար պետութիւնները Պարսկաստանում պարսկահայտակներին չհովանաւորեն:

ե) Օտար պետութիւնները դադարեն Պարսկաստանի ներքին գործերին խառնել:

զ) Հարկերի վճարման խնդրում օտարականները դրեն հաւասար վիճակի մէջ պարսիկներին հետ:

է) Օտար զինւած ուժերն ու հիւպատոսական պահակները հռոման պարսկական հողից:

ը) Վերաքննութեան ենթարկել Պարսկաստանի կնքած դաշնագրերը օտար երկրների հետ՝ յայտարարելով համար Պարսկաստանի քաղաքական, տնտեսական եւ իրաւական անկախութեան սպառնացող յօդւածները:

թ) Վերաքննել օտարների ստացած մենաշնորհները եւ ջնջել Պարսկաստանի տնտեսական շահերին վնասող պայմանները:

ժ) Պարսկաստանը իրաւունք ունենայ մաքսային սակագներ հրատարակելու կամ վերաքննելու ազատօրէն. վերացնել օտար ապրանքների ազատ փոխանցման (տրանզիտ) արգելքը:

Բ. - ՀՅՂԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ. - Այս մասը պարսից կառավարութիւնը հիմնաւորում է բնական, ազգագրական եւ պատմական տրեւանքներով: Պարսկաստանը բնական սահմաններ ունեցող աշխարհագրական միաւոր է. նա տարածւում է Ամու Դարիա գետի, Կովկասեան լեռների, Եփրատ ու Տիգրիս գետերի եւ Պարսից Ծոցի միջեւ: Ազգագրական տեսակէտից նա միշտ մեծ մասամբ բռնւած է եղել միեւնոյն՝ իրանական ցեղին պատկանող ժողովուրդներով: Այս տարածութեան վրա հիմնւած կայսրութիւնները միշտ կրել են իրանա-

կան բնոյթ: Այս հողամասին միշտ տիրել են պարսիկները: Միայն 19-րդ դարից սկսած, ներքին քաղաքացիական կռիւներէր պարսկաստանը, ստիպւած եղաւ տեղի տալ հիւսիսից Ռուսաստանի եւ արեւմուտքից Թիւրքիայի առջեւ:

Այնուհետեւ Յուշագրում արեւում է ուսական եւ թիւրքական գրաւումները հակիրճ պատմութիւնը: Երկու թշնամի պետութիւններն էլ մեծ հարւած են հասցրել Պարսկաստանին, խլել նրա հողերը, գրկել տնտեսապէս: Այժմ, Հաշտութեան Վեհաժողովից Պարսկաստանը «յանուն իրաւունքի եւ արդարութեան պահանջում է իրեն վերադարձնել բռնութեամբ եւ անարդար կերպով խլած հողամասերը: Նա պահանջում է, որ իր սահմանները որոշեն իրաւունքի եւ բնութեան կանոնների համաձայն, այնպէ՛ս, որ այսուհետեւ նա պաշտպանւած լինի իր հարեւանների ներխուժումներից»:

Պարսկաստանը դնում է հետեւեալ հողային պահանջները.

«ա) Հիւսիս-Արեւել-Քիճ ԿԱՍՊԻԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ: Այս շրջանը միշտ Պարսկաստանի մասն է կազմել: Նա նոյն իսկ դիտուում է որպէս պարսիկ ազգութեան մի հնոց: Շատ մեծահոջակ պարսիկներ՝ բանաստեղծներ, գրադէտներ, գիտնականներ, փիլիսոփաներ՝ ծագումով այս շրջանից են: Պարսիկէնը տարածւած է այստեղ: Նա խօսուում է նոյն իսկ աւելի հեռուները, մինչեւ Բուխարա ու Սամարկանդ: Այս շրջանների բնակիչները մեծ մասամբ պարսիկներ են (քիւրդ, տաճիկ, գաղթական պարսիկներ): Միւսները թիւրքմէներ են, նոյն ցեղերից, որ ապրում են պարսիկներին պատկանող Աստրաբադի շրջանում: Նրանք շատ մօտ յարաբերութեան մէջ են սահմանի միւս կողմը գտնւող հայրենակիցների հետ: Վերջերս, երբ ուսական յեղափոխութեան հետեւանքով Ռուսաստանում առաջ եկան խառնակութիւններ, կասպիական շրջանի բնակիչները, ի մասնաւորի դաշտաբնակ թիւրքմէները, բուլղերիկեան թալաններից եւ սպանութիւններից ազատուելու համար, օգնութիւն խնդրեցին Պարսկաստանից՝ բաղձանք յայտնելով վերադառնալ մայր-հայրենիքի ծոցը: Պարսից կառավարութիւնը ընթացք տւեց նրանց խնդրանքին ե զօրք ուղարկեց, որոնք նրանց պաշտպանեցին եւ վերջ տւին բուլղերիկեան յարձակումներին:

«բ) Հիւսիս-Արեւել-Քիճ ԿԱՍՊԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄՆԵՐԻ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՅ ԽԼԻԱԾ ՔԱՂԱՔՆԵՐՆ ՈՒ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ: ԿԸ ՅԻՇԵՆՔ ԲԱԳՈՒՆ, ՇԻՐՎԱՆԸ, ԴԵՐԲԵՆՏԸ, ՇԱՔՔԻՆ, ՇԱՄԱԽԻՆ, ԳԵԱՆՋԱՆ (ԵԼԻՋԱԻԵՏՊՈԼ), ՂԱՐԱԲԱՂԸ, ՆԱԽԻՋԵՒԱՆԸ, ԵՐԵՒԱՆԸ:

Այս շրջանները պէտք է վերադարձնեն Պարսկաստանին, որովհետեւ նրանք առաջ էլ կազմել են այս երկրի մասը: Նրանց բնակիչները ճնշիչ մեծամասնութեամբ մահմետականներ են եւ մեծ մասը ծագումով ու ցեղով պարսիկ: Վերջապէս ամէն տեսակէտից՝ պատմական, աշխարհագրական, տնտեսական, առեւտրական, կրօնական, մշակութային՝ նրանք կապւած են Պարսկաստանին: Ի վերջոյ, բոլորովին վերջերս, այս շրջանների բնակիչների մեծ մասը դիմեց Թէհրանի կառավարութեան՝ խնդրելով նրա հովանաւորութիւնը եւ բաղձանք յայտնեց վերադառնալու Պարսկաստանին:

«գ) ԱՐԵՒՍՈՒՏՔՈՒՄ՝ ՔԻՒՐՏԻՍՏԱՆԻ ՄԻ ՄԱՍԸ, ՈՐ ՄԱՍ ԷՐ ԿԱՋՄՈՒՄ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ:

Քիւրտիստանը մի երկիր է, որ բնակեցւած է ցեղով ու լեզուով պարսիկ եւ կրօնքով մահմետական ժողովրդով: Այս երկիրը բաժնւել էր Պարսկաստանի եւ Թիւրքիայի միջեւ: Պարսկական մասի մէջ մտնում են.

ա) Սուլէյմանիէի շրջանը, որ խլւել է Պարսկաստանից Էրզրումի դաշնագրով եւ որ ամենայն իրաւամբ պէտք է վերադարձնի Պարսկաստանին:

բ) Օսմանեան Քիւրտիստանի մնացած մասը, որ ազգագրական, աշխարհագրական, կրօնական եւ այլ պատճառներով կապւած է Պարսկաստանին եւ բնական կերպով պէտք է կցւի այս երկրին, մանաւանդ որ քիւրտ կրօնապետներն ու երեւելիները ցանկութիւն են յայտնել միանալու Պարսկաստանին»:

գ) Այս կէտում խօսուում է Միջագետքի սրբալայրերի մասին, որոնք գտնւում են ծագումով պարսիկ եւ կրօնքով մահմետական տարրի ձեռքը: Պարսից կառավարութիւնը խնդրում է վեհաժողովից, որ «Միջագետքի հարցը կարգադրելիս իր առաջնակարգ շահերն էլ ապահովւին»:

Գ. — ՀԱՏՈՒՅՄԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ. — Յուշագիրը հանգամանօրէն յիշում է Պարսկաստանի պատերազմի ընթացքում կրած վնասները, որոնք բաժանւում են երեք կարգի. ա) Ռուսաստանի հասցրած վնասները, բ) Թիւրքիայի հասցրած վնասները, գ) Գերմանիայի պատասխանատուութիւնը: Վնասի տեսակներն են՝ մարդկային զոհեր, հանրային եւ անհատական ստացւածքների փճացում, շէնքերի, կալուածների, անասունների, երկրագործական գործիքների եւ մթերքների, փոխադրական միջոցների, զէնքի ու ռազմամթերքի եւ այլ նիւթերի կորուստ, պետական հասոյթներին, առեւտրին հասցւած հարւած, պարսկահպատակների կրած վնասները արտասահմանում,

Թիւրքիայում ապրող պարսկահայատակների կրած նիւթական ու բարոյական զրկանքը բռնի զինուորագրութիւնից եւ այլն :

Այս բոլորի հիման վրա պարսից կառավարութիւնը պահանջում է .

ա) Ռուսաստանի հասցրած վնասի դիմաց ջնջւած յայտարարել Ռուսաստանի արած փոխառութիւնները Պարսկաստանին , ջնջել Ռուսաստանի եւ ռուսահայատակների ստացած մենաշնորհները Պարսկաստանում , գրաւել ռուս պետական գոյքերը Պարսկաստանում :

բ) Թիւրքիայի հասցրած վնասը արձանագրել Թիւրքական պարտքի հաշւում :

գ) Գերմանիայի հասցրած վնասը առնել նրա վճարելիք հատուցումներից :



Հաշտութեան Վեհաժողովը ընթացք չտւեց Պարսկաստանի պահանջներին : Նրանք մնացին թղթի վրա մեռած տառ , ինչպէս վեհաժողովին ներկայացրած ուրիշ շատ , ոչ պակաս «խիզախ» պահանջներ : Նրանց արժէքը այսօր սոսկ այնքան է , որքան որ բնորոշում են այն ուղիները , որոնցով հետաքրքրւած է պարսիկ քաղաքական միտքը :

Ի վերջոյ , մի ակնարկ էլ Յուլիանի կցւած քարտէսին : Այնտեղ կարծիր գոյնով նշանակւած են պարսիկների պահանջած հողամասերը եւ կապոյտ գոյնով քրտարնակ այն շրջանները , որոնց կցումը Պարսկաստանին համարւում է ցանկալի : Առաջին կարգի հողերի մէջ մտնում են՝ ա) ամբողջ Անդրկասպեան երկիրը՝ սկսելով Արալ Ծովի հիւսիս-արեւմտեան անկիւնից՝ Ամու Դարիայի հովտով մինչեւ Բուխարայի եւ Աֆղանիստանի միացման վայրը , հարաւում՝ դրեթէ Հէրաթի մօտ , հիւսիսում՝ ուղիղ գծով Արալի հիւսիս-արեւմտեան անկիւնից դէպի Կասպից Ծով եւ արեւմտքում՝ Կասպից Ծովը : բ) Կովկասում ամբողջ Աղբրէջանը , Դերբէնտից սկսած , Չաքաթալայի վրայով դէպի Լոռի ու Ծիրակ , Կարսի արեւելքով դէպի 1914թ. սահմանագիծը՝ մէջը առնելով Կաղզւանից դէպի արեւելք ընկած բոլոր հողամասերը , այսինքն՝ ամբողջ Ռուսահայաստանը : գ) Սուլէյմանիէի շրջանը :

Երկրորդ կարգի հողերի մէջ մտնում են Թիւրքահայաստանի մեծ մասը եւ դրեթէ ամբողջ Գիւրտիստանը : Սահմանագիծը սկսւում է Մուշի հիւսիսից , մինչեւ Պարբերդի հիւսիսակողմը , ապա Եփրատով իջնում է հարաւ եւ Սամարայից վեր կտրելով Տիգրիսը՝ դնում միանում է պարսկական սահմանին Սերիպուլի շրջանում :

ՀԻՆ ԹՈՒԻՂԹԵՐ

Ս. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿԸ

Պատերազմի նախօրեակին Թիւրքիայում տիրող պայմանների և Թիւրք ու հայ դեկավար շրջանների մտավիճակի բնորոշման համար խիստ հետաքրքրական են հետեւալ երկու նամակները : Հեղինակն է դաշնակցական ակաւաւոր գործիչ , այն օրերին Հ.Յ.Գ. Հայաստանի Բիւրօի անդամ եւ Պալսի հատւածի գործավար Սարգիս Բարսեղեանը : Նամակները ուղղւած են Հ.Յ.Գ. Ամերիկայի Կենտր. Կոմիտէին եւ այժմ գտնւում են նոյն Կ. Կ.-ի դիւանում : ԽՄԲ .



1914 թ. 18 Օգոստոս , Պոլիս .

Ընկերներ ,

Ընդհանուր ժողովը յաջողութեամբ իր աշխատանքները վերջացրեց , եւ ընկերների մէկ մասը վերադարձաւ իրենց տեղերը : Թէպէտեւ ընդհանուր ժողովը զուգադիպեց համաւերստակական պատերազմին , բայց եւ այնպէս այդ բանը արգելք չհանդիսացաւ աշխատանքի կանոնաւորութեան : Ժողովի կարեւոր որոշումներից մէկը այն է , որ այսուհետեւ Թիւրքիայում միայն մի Բիւրօ պէտք է լինի եւ այն էլ երկրի Բիւրօն : Ուրեմն , ծանրութեան կենտրոնը փոխադրւեց երկիր :

Օսմանեան կառավարութիւնը ամենայն թափով պատերազմի պատրաստութիւններ է տեսնում . 21-ից մինչեւ 45 տարեկանը գէնքի տակ է հրաւիրում : Մեղ թւում է , թէ 31-45ը (քրիստոնեաներին) չեն տանել ու այս բոլոր նեղութիւնները տալիս են , որքան կարելի է շատ բեղել առնելու նպատակով : Սամսոնից վերջին օրերս նամակ առինք , որ 27 և 41 տարեկան անվարժ զինուորներին , որոնց մէջ եւ հայերին , արձակեցին : Ժողովուրդը շատ մեծ տագնապի մէջ է , մասնաւորապէս տնտեսական տեսակէտից : Կառավարութիւնը իրեն պէտք եղած ամէն բան գրաւում է ժողովրդից , եւ այդ բանը չափազանց ծանր կերպով է աղղում ժողովրդի վրա : Կառավարութիւնը բացարձակապէս գերմանական քաղաքականութեան է հետեւում , այնպէս որ Պոլսում աւելի շուտ գերմանացիք են թագաւորում : Ոչ մի կասկած չկայ , որ թէ օսմանեան եւ թէ հայերի շահերը պահան-

ջում են կառավարութեան ամենախիստ չէզոքութիւնը ներկայ համաերոպական պատերազմի ընթացքում: Դժբախտաբար, մեր դեկավար շրջանները այդպէս չեն մտածում: Նոքա կարծում են, թէ թիւրքիոյ փրկութիւնը ուստական կառավարութեան թուլութեան կամ փչացման մէջ է կայանում, հետեւապէս պարագաներէն պիտի օգտուել եւ արշաւել Փրանս – դերմանական անյաջողութեան դէպքում Կովկաս: Իրենց ասելով նպատակ չունեն Կովկասը տիրապետելու, այլ օտոնոմ մի բան ստեղծելու, որպէսզի Ռուսիոյ եւ թիւրքիոյ մէջ պատնէշ լինի: Քանի որ Փրանսական անյաջողութիւնը սկսուել է, ենթադրում ենք, 5-7 օրից թիւրքիան էլ տեսնել ընդհանուր պատերազմի մէջ: Մինչեւ որ դահլիճի փոփոխութիւններ չլինեն, պատերազմը անխուսափելի է: Հիմքեր ունենք կարծելու, որ պատերազմի ընթացքում հայերի հետ վատ են վարուելու: Արդէն տնտեսական հարւածներ շարունակ հասցնում են: Ամասիա, Թոքատ շուկաների վառելուց յետոյ, երեւի, լսեցիք եւ Դիարբեքիւրին: Չթողուցին, որ լրագրի մէջ գրենք: Մի քանի օր առաջ էտիրնէն էլ նոյն բախտին արժանացաւ: Վնասեց յունաց եւ հայոց մի թաղ: 1500-2000 տուն, որից 200ը հայ: Ենթադրում ենք, որ այդ բոլորի մէջ կայ մի դադտնի ձեռք, որ դործում է սխտեմատիկօրէն: Ապրում ենք նշանաւոր եւ ծանր օրերում: Ինչ կասկած, որ Ձեր շրջանի հայերի եւ ընկերների տրամադրութիւնը պիտի լինի բարձր. աւելի սոսկալի օրերի հայեր ականատես են եղել, եւ նման օրերը մեզ չպիտի յուսահատեցնեն: Թերեւս սա վերջին փոթորիկը ըլլայ...:


II

1914 թ. 24 Սեպտեմբեր, Պոլիս.

Ընկերներ,

... «Ընդհանուր Ժողովից յետոյ, Նաջի – բէյ եւ Բահաէդին-Շաքիր, Իթթիհատի ներկայացուցիչներ, Կարինում մերոնց հետ կը մտնեն յարաբերութեան մէջ, ուստ – թրքական պատերազմի դէպքում, մերոնց գիրքը ճշտելու համար: Նրանք խոստովանում են, որ դերմանական յաջողութեան դէպքում, մտադիր են մտնել Կովկաս, եւ տիրելով՝ ստեղծել այնտեղ ինքնավար մի պետութիւն: Իւրաքանչիւր ազգ, ըստ իր անկախութեան, կստանայ վարձատրութիւն: Մերոնք ցոյց են տալիս նման քայլի արկածախնդրական եւ սխալ լինելը: Որ ուստական Կովկասի ոյժը դիւրութեամբ կսպառնայ մեր Արեւելեան վիլայէթներին, եւ որ նման բան չպիտի անել: Ի հարկէ,

պատերազմի դէպքում, իւրաքանչիւր հայ, իր օսմանցիական պարտականութիւնը կը կատարէ, բայց սահմանի այն կողմի հայերի մասին ոչինչ չենք կարող ասել, քանի որ վերջին տարիներս այստեղ կառավարութիւնը ոչինչ չարեց հայերին դրաւելու համար, իսկ այն կողմը հայերին սիրաշահելու համար ուստ կառավարութիւնը բաւականին աշխատանք թափեց: Մեր այս անկեղծ պատասխանը նրանց բաւականին դժգոհ է թողել, եւ թերեւս դորան պիտի վերադրել, որ Ակնունուն 24 ժամում հեռացրին Կարինից: Վրացեանին եւ Սանասարեանի տեսուչ Աբուլեանին նմանապէս ճանապարհեցին Ռուսաստան: Տեղական ընկերներէն Փիլոսին եւ Պետրոսին*) կը ձերբակալեն եւ բանտ կը դնեն: Վերջինս դեռ բանտն է, մեղադրում են իրր լրտես(?): Ակնունին Պոլիս վերադարձէն յետոյ, խօսեց կառավարութեան հետ, որ վերջ դնեն անտեղի կերպով դաշնակցականների դէմ սկսած հալածանքին: Խօսք են տւել. շուտով յայտնի կը լինի, թէ որ աստիճան կը պահեն իրենց խօսքը: Կառավարութեան համակրութիւնը ակնյայտնիօրէն երբեակ զինակցութեան կողմն է: Կունենանք պատերազմ թէ ոչ, դա կախած կը լինի դերմանական յաղթութիւնից:



*) Պետրոս Գաւափեան, Ժամագործ, Կարնոյ լաւագոյն դաշնակցականներից մէկը:

ԱՆՑԵԱԼՔ

ԴՐԻԱԳ ՄԸ ՄՈՒՐԱՏԻ ԿԵԱՆՔԷՆ *)

Եթէ յիշողութիւնս ինձ չի խարում, 1918-ին էր՝ հեռագիր մը ստացանք Ազգային Բիւրօից Ա. Ահարոնեան եւ Ն. Աղբալեան ստորագրութեամբ. «Ալեքսանդրապօլ մեկնեցէք, Խատիսեանից կատաճաք կարգադրութիւնը»: Էջմիածնից ճամբայ ընկանք Կորիւն վրդ. եւ տողերիս գրողը եւ նոյն օր ներկայացանք Բաղաքազլուխ պ. Ա. Խատիսեանին, որից պէտք եղած պաշտօնական թղթերը ստանալով՝ հետեւեալ օր երկաթուղին նստանք: Ինձ վիճակած էր Խորասան կայարանը, իսկ ընկերիս՝ ուղղակի Էրզրում քաղաք:

Սարիղամիշից Խորասան կայարանը 70 վերստ է եւ նոյն չափն է Խորասանից Կարին:

Պաշտօնատեղս հասնելուց անմիջապէս յետոյ ուսանելից թողած բոլոր տեսակի պահեստները տիրապետեցի եւ կարգաւորելով՝ փետ. 25-ին գնացի Կարին՝ անցնելով Բեօփրի-Բեոյ-Հասան-Ղալա-Էրզրում: Իջեւանեցի Մօսկովայի Կոմիտէի Կայանը, ուր էին եւ Կորիւն եւ Զաւէն վարդապետները:

Որպէս Պարսկաստանի բանակին ընկերացող՝ ծանօթ էի Անդրանիկին եւ Սեպուհին եւ գնացի տեսութեան: Երբ ներկայացայ առաջնոյն, յուզած ըստւ - «Ինչո՞ւ եկած ես, մենք վաղը կը թողունք քաղաքը. քանի որ եկած ես, քաղաքազլուխ հետ գնա մի քանի տներ յայտնի, որ ճանապարհ ելնեն, վաղը քաղաքը կը թողունք»:

Կարնոյ հարաւէն՝ Իլիմայի կողմէն չորս վերստ հեռու թիւրքերը պաշարած էին. այդ ճակատի վրա կուռւմ էին Սեպուհի զօրքերը, մինչդեռ Սեպուհը ինքը հիւանդ ընկած էր անկողնում: Ես բովն էի, երբ ներս մտաւ մի զինուոր, ըստ զինուորական կարգի ձեռքը ճակատին տանելով սպասեց հրամանի. «Ի՞նչ կայ, Սուրէն», հարցրեց Սեպուհը: «Մեր բանակը բոլոր ցրւեցան. մի քանիսը գերի ընկան եւ շատեր կորսուեցան»:

*) Այս գրութիւնը մեզ ուղարկել է հանգուցեալ Խորէն վարդ.՝ի բարեկամներից մէկը: Տեղ եմք տալիս իբրեւ մի յուշ Սեբաստացի Մեծ Մարտիկի մասին:

Այս տաղնապի միջոցին Կիւմիշխանայի կողմէն օգնութիւն կուղէր Թորգոմը: Անդրանիկը օթոմոպիլ նստելով չորս զինւած թիկնապահներով իսկոյն օգնութեան վայրը հասաւ, բայց ինչ անցած-դարձած էր որ իսկոյն յետ դարձաւ նոր կարգադրութիւն անելով:

Ամէն ոք իր գլուխը կորցրածի պէս էր: Մինչեւ անգամ եկեղեցու բանակին էլ կորցրած էին եւ մէկը միւսին կը հարցնէր: Այս տաղնապի միջոցին մեր շէնքի առաջ խռնեց մի բազմութիւն զինւած ձիաւորների: Անոնց մէջէն մէկը թիկնաւէտ եւ խրոխտ ձայնով կը պօռար. «Ո՛վ որ կուգէ մեռնել, քող ինձ հետ գայ»: Սեբաստացի հերոս Մուրատն էր: 37 հոգուց բաղկացած խմբով մը գնաց ճակատեցաւ թիւրք բանակին հետ եւ ազատեց պաշարւած հայերին:

1918 թ. 26 փետր.: Մի պատմական թւական: Էրզրումի նահանջը: Ամէն ոք, ով եւ ինչպէս, որ կարողացաւ սկսեց փախչել: Մէրը իր մանուկը ուրացած էր: Խուճապ ու դաղթ: Ամէնքը ուժքով կամ սայլով, մըջիւնների նման շարուեշարան, կը գնան՝ թողած ուղմական պահեստները եւ պաշարեղէնները, որոնց թուում եւ 80-ի չափ հիւանդները Սանասարեանի Դպրոց-Հիւանդանոցում:

Երբ ամէն ոք իր կեանքի մասին էր մտածում, անդին Մուրատը իր քաջարի ընկերներովը կուռելով կը նահանջէր: Ան հազարաւոր հոգիներու ազատագրութեան միջոցներ ստեղծեց, որոնք արտասուքով կաղօթէին Մուրատի արեւշատութեան համար: Մի պառաւ մամիկ կապոցը թեւին տակ ճանապարհին ինձ կըսէր. «Հայր-Սուրբ, պիտի չմեռնեմ մի անգամ էն Մուրատին տեսնեմ, քող նոր Աստուծ հոգիս առնի. նա մեր բոլորի կեանքը ազատեց քիւրքի բարբարոսութիւնից, ազատեց մեր հարսները եւ մատղաշ աղջիկները...»:

Անմահ Հերոսի այս վերջին օրհասականը ո՛չ Չանգեղուրի եւ ոչ Երզնկայի կռիւներին կը նմանէր, այլ մահու եւ կենաց զիւցազներգութիւնն էր: Մուրատը իր եւ իր ընկերների միջոցաւ հազարաւոր կեանքերու ազատարար հանդիսացաւ:

ՀԱՄԲՈՅՐ ԱՅՆ ՇԻՐԻՄԻՆ, ՈՐԻ ՏԵՂԸ ՀԱՅԻՆ ԱՆՅԱՅՏ է:

12 Սեպտ. 1927 թ. ԽՈՐԷՆ ՎՐԴ. ԼԱԶԱՐԵԱՆ Սաուք Միլվօֆի, Վիսֆ.

ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊ. ՊԱԼԱՔԵԱՆ

Հոկտ. 8-ին, Մարտէյլում, մեռաւ Գրիգորիս Եպ. Պալաքեանը: Հանգուցեալը Թողատցի էր, ծնւած 1879-ին: Նախնական կրթութիւնը ստացել էր տեղական ազգային դպրոցում, ապա աւարտելով

Կարնի Սանասարեան վարժարանը՝ բարձրագոյն ճարտարագիտական ուսում էր առել Գերմանիայում :

Արտասահմանից վերադառնալով՝ Պալաքեանը մտաւ Արմաշի վանքը, ձեռնադրեց վարդապետ՝ վեղարի տակ յուսալով օգտակար լինել ժողովրդին : Այնուհետեւ ունեցաւ բաւական եռուն եւ բազմակողմանի կեանք, վարելով եկեղեցական-վարչական պատասխանատու պաշտօններ եւ մասնակցելով հասարակական-մշակութային այլազան գործերի : Ի միջի այլոց, Սանասարեան վարժարանի փոխադրութիւնը Կարնից Սերաստիա, 1912 թ. նա գլուխ բերեց, հակառակ Կարնոյ ժողովրդի եւ հայ հասարակութեան բռուն բողոքի, այգլիստով ներադրածելով Սանասարեան խնամակալութեան քմահաճոյքը եւ ծանր հարւած տալով Հայաստանի այդ կարեւոր կրթական հիմնարկութեան :

Արտակարգ եռանդի ու գործունակութեան տէր, բայց բնաւորութեամբ անհանդարտ ու անկանոն, գործէ գործ ու պաշտօնէ պաշտօն նետող, աղմուկով գործող եւ իր շուրջը միշտ վէճ յարուցանող՝ Պալաքեանը չկարողացաւ որեւէ տեղ տեւականորէն մնալ ու հիմնական գործ կատարել : Վերջին օրինակը՝ կաթողիկոսական պատերազմութիւնը Եւրոպայում, 1926 թ.ից սկսած, ապա առաջնորդութիւնը Մարսէլում, ուր, առանց ուժերը կշռելու, մէկ անգամից շատ գործերի ձեռնարկեց եւ չկարողացաւ տակից դուրս գալ : Նա էր, նաեւ, որ Մարսէլի հայ գաղութին օժտեց յաւիտենական մի կուսինձոր՝ Սորասանձեան եկեղեցին, մինչդեռ իրենից կախած էր, փոխանակ եկեղեցի չինել տալու, մշակութային մի կարեւոր հիմնարկութիւն, օրինակ, ազգային դպրոց հիմնելը : Ի վերջոյ յուսահատ՝ քաշուցաւ առաջնորդութիւնից՝ կրթական-մշակութային գործին ներկելու որոշումով :

Բաւական լայն զարգացման տէր, մտքով սուր, եռանդուն՝ Պալաքեանը, անշուշտ, այս ասպարէզում կարող էր անհամեմատ աւելի օգտակար լինել, քան առաջնորդական-վարչական ասպարէզում, որ իրը չէր : Իբրեւ գրական գործ, նրանից յետոյ մնում է մի հատոր - «Գողգոթա» - տարագրութեան յիշատակներ : Թիւրքական եղեռնին նա էլ քշել էր արաբական անապատները, բայց ազատել էր շնորհիւ գերման ղինորականների միջամտութեան :

Պալաքեանը մէկն էր արտասահմանի այն հոգեւորականներից, որոնք չհրապուրեցին Չէկայի նետած խայծերով : Չվարակեց նաեւ հոգեկան այն սուր հիւանդութեամբ, որի ճիրաններում մինչեւ այսօր էլ դեռ գալարում է գաղութահայութեան եւ կղերականու-

թեան մի մասը : Ամենքի հանդէպ մնաց անկախ : Մեր հոտած ժամանակների համար ա՛յս էլ առաքինութիւն է :

ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼԻՔՆԵԱՆ

Յուլիս 23-ին Գահիրէում մեռաւ եգիպտահայ յայտնի դրամատէր Կարապետ Մելքոնեանը : Հանգուցեալը ծնւել էր 1860 թ. եւ երկար տարիների ընթացքում իր աւագ եղբոր՝ Գրիգորի հետ Եգիպտոսում գիգել էր մեծ հարստութիւն : Մելքոնեան ծխախոտի յայտնի գործարանը նրանց էր պատկանում :

Թրքախօս, ամբողջապէս կլանւած դրամի ու հարստութեան խնդիրներով, Մելքոնեան եղբայրները շատ չէին ապրում հայ կեանքով ու չէին հետաքրքրում նրա պահանջներով : Հայաստանի Հանրապետութեան ստեղծումը ամբողջ հայութեան հետ՝ ցնցեց եւ սրբանց . 1920 թ. Գրիգոր Մելքոնեանը դիմեց Հայաստանի կառավարութեան՝ խնդրելով, որ իրեն շնորհիւ Հայաստանի քաղաքացիութեան պատիւը, յայտնելով միաժամանակ, որ իր խոշոր հարստութիւնը կտակում է Հայաստանին : Բայց երբ քաղաքացիութեան թուղթը հասաւ արտասահման, Հայաստան արդէն խորհրդայնացւած էր :

Գրիգոր Մելքոնեանի մահից յետոյ՝ կրտսեր եղբայր Կարապետը իւր բաժին հարստութիւնն էլ միացրեց ու Մելքոնեան տան ամբողջ ունեցւածքը ներկեց ազդին : Այնուհետեւ Մելքոնեան դրամների շուրջ աղի ունեցան բաւական տխուր երեւոյթներ, որոշ մարդիկ նոյնիսկ շանթաժի դիմեցին եւ դումարներ փրցրին, մինչեւ որ կարելի եղաւ համաձայնութիւն գոյացնել Կարապետ Մելքոնեանի եւ Պողոս Նուպար փաշայի միջեւ :

Այդ համաձայնութեամբ, 1925 թ. դեկտ. 25-ին, Աղեքսանդրիայի Սառն Դատարանի նոտարութեան առջեւ Մելքոնեան եղբայրների ներատուութիւնը - 650,000 եգիպտ. ոսկի - փոխանցեց Հ. Բ. Ը. Միութեան հետեւեալ պայմաններով .-

Մելքոնեան Գործատան հաշւարարից յետոյ, ստացւած ամբողջ դումարը վերաձուում է պետական արժէթղթերի եւ պահ է տրուում անգլիական եւ ամերիկեան դրամատներին : Դրամաղլխի տարեկան հասոյթը յատկացւում է հետեւեալ նպատակների .-

ա. - Կիպրոսի Նիկոսիա քաղաքի Մելքոնեան դոյզ հաստատութեանց մէջ պիտի պահւին առ առաւելն 500 երկսեռ որբեր :

բ. - Տարեկան 1000 ոսկի պիտի տրամադրուի Երուսաղէմի Հայոց

Պատրիարքարանին ժառանգաւորաց վարժարանում սաներ պահելու համար :

դ. - Տարեկան 1000 ոսկի պիտի տրւի Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանին :

դ. - Տարեկան 500 ոսկի՝ Կ. Պոլսի Ազգային Հիւանդանոցին Մեղքոնեան եղբայրների անուշով անկողիններ պահելու համար :

ե. - Տարեկան 3000 ոսկի՝ Երեւանի Համալսարանին՝ հայերէն լեզուի , հայոց գրականութեան եւ հայոց պատմութեան ճիւղերին յատկացւելու համար :

Եթէ այս յատկացումներէն յետոյ , որեւէ դումար աւելնայ , ըստանել հետեւեալ ձեւով .-


ա. - Կիւրոսի Մլքոնեան Հաստատութեանց կից բանալ արեւստից եւ արհեստից վարժարան :

բ. - Նոյն Հաստատութեանց կից հիմնել հայկական տպարան հայերէն դասագրքեր եւ այլ գործեր հրատարակելու համար :

գ. - Եւրոպական համալսարաններում պահել ճրիպարժ ուսանողներ :

դ. - Վարժարաններ հիմնել Կիւրոսում կամ այլ տեղեր եւ օգնել կրթական հիմնարկութեանց :

Բացի այդ , 5-7000 ոսկի միանւազ յատկացւում է Աղեքսանդրբէկի Ազգային Վարժարանին կից մանկապարտէզ շինելու , եւ 1000 ոսկի Կիւրոսի Ս. Մակար վանքի ճանապարհը անցկացնելու համար :



ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

ԱԶԳԱՅԻՆ - ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

«Սինո»ի վերջին (10րդ) : համարում , էջմիածնական քղբակցութեան մէջ դրած են էջմիածնի , այսպէս կոչւած , Ազգային - Եկեղեցական ժողովի մշակած Հայոց Եկեղեցու Սահմանադրութեան Նախագծի հիմնական կէտերը : Այդ նախագիծը Գեր. Հոգ. Խորհրդի վերջնական խմբագրութեան եւ Կիլիկիոյ Տան Կաթողիկոսի ու Երուսաղէմի եւ Կ. Պոլսի պատրիարքների հաւանութեան երաբարկելուց յետոյ պէտք է հաստատուի Կաթողիկոսի կողմէն եւ հարկ գործադրութեան՝ հետագային Ազգային - Եկեղեցական ժողովի վերջնական քննութեան եւ հաստատութեան ներկայացնելու պայմանով : Ահա այդ նախագծի 15 կէտերը այն ձեւով , ինչ ձեւով որ ուղարկւած են «Սինո»ին էջմիածնից :

1. Հիմնական կանոններ :
2. Ազգային-Եկեղեցական ժողով :
3. Ամենայն Հայոց Կաթողիկոս :
- 4 Կիլիկիոյ Տան Կաթողիկոսութիւն , Երուսաղէմի եւ Կ. Պոլսի Պատրիարքութիւններ :
5. Տեղապահ Ամենայն Հայոց Կաթողիկոսի :
6. Գերագոյն Հոգեւոր Խորհուրդ :
7. Թեմական պատգամաւորական ժողով :
8. Թեմական առաջնորդ :
9. Թեմական կամ վիճակային խորհուրդ :
10. Ծխական ժողով :
11. Ծխական խորհուրդ :
12. Եկեղեցու պահպանութեան ազդեցութիւններ :

13. Կրթական եւ բարեգործական հաստատութիւններ :

14. Կառավարութիւն Եկեղեցական գոյքերի եւ հաստատութիւնների :

15. Քահանաների եւ սրանց որբերի եւ այրիների պահպանութիւն :

Այս նախագիծի , ինչպէս եւ առհասարակ Հայոց Եկեղեցուն վերաբերող հարցերի մէջ կայ երկու կողմ՝ 1) գուտ կրօնական-Եկեղեցական եւ 2) ազգային մշակութային-տնտեսական , եթէ կուզէ՛ք եւ քաղաքական : Առաջինը մեզ չի հետաքրքրում . նա միայն հաստատեցնողներին է վերաբերում . երկրորդը՝ ընդհանուր ազգային գործ է , այսօր ունի շատ հրատապ նշանակութիւն եւ պէտք է քննուի ու որոշուի ամենայն ուշադրութեամբ եւ լրջութեամբ : Եթէ խորհրդային սահմաններում Եկեղեցին , ազգային հաւաքական կեանքի տեսակէտից , իրաւագործի եւ այլեւս անարժէք հաստատութիւն է , արտասահմանում նա պահում է իրաւական որոշ դիրքեր , ազգի համար որոշ չափով պետական գործօնի նշանակութիւն ունի եւ տնտեսական ու կրթական-մշակութային տեսակէտից առաջնակարգ արժէք է : Հետեւաբար , Եկեղեցական սահմանադրութեան հարցով պէտք է շահագրգռւեն ոչ միայն կրօնական-կղերական շրջաններն ու հաւատացեալ զանգւածը , այլեւ բովանդակային ժողովուրդը , մանաւանդ նրա դեկավար շրջանները :

Սխալ է արտասահմանում էլ լսուող այն միտքը , թէ Եկեղեցական-թեմական գործերը պատկանում են միայն Եկեղեցականներին եւ նեղ իմաստով ծխական-

ներին: Եթէ խնդիրը վերաբերում է մի-
այն եկեղեցու նիւթական կառուցած-
քին, ծիսական-արարողական մասին,
հոգեւորականութեան վիճակի տնօրին-
ման - այո՛, այդ խնդիրներով բո՛ղ
գրադւեն իրենք եկեղեցականները: Բայց
հայ կեանքի դառն պայմանների հետե-
ւանում, շատ-շատ տեղեր, եկեղեցու եւ
բեմական իշխանութեան հետ կապած
են եւ ազգային հարստութիւնները, ե՛ւ
դպրոցն ու մշակութային պէս - պէս
հիմնարկութիւններ եւ նոյն իսկ քաղա-
քացիական որոշ իրաւունքներ - բողոքել
այս խնդիրները միայն եկեղեցականնե-
րին, ի հարկէ, կարելի չէ, եւ պէտք չէ:
Ուստի եւ, քանի որ հրապարակ է դըր-
ւած ազգային - եկեղեցական սահմա-
նադրութեան մշակութեան հարցը, այդ
հարցով լրջօրէն պէտք է գրադուի ինքը
ժողովուրդը եւ ազգային - ժողովրդա-
կան կազմակերպութիւնները: Սահմա-
նադրութիւնը չի կարող ու չպէտք է լի-
նի արդիւնք լոկ էջմիածնական սահմա-
նափակ եւ իրաւագուրկ վիճակի մէջ
դրւած «Ազգ. - եկեղեցական» ժողովի
կամ Գեր. Հոգ. եռերկույն անդամ մի
քանի վեղարարներին, ոչ ալ բնուի
պոլսական - երուսաղէմական պատրիա-
րարներին կամ կիլիկիոյ կաթողիկո-
սութեան առանձնասենեակներում: Նա
պէտք է դրի համաժողովրդական բնու-
թեան եւ մշակչի ու վաւերացի իս-
կական ազգային ներկայացուցչութեան
կողմից, այլապէս ազգային - եկեղե-
ցական սահմանադրութիւնը անխուսա-
փելիօրէն կը դառնայ անբաւականու-
թիւնների եւ ներքին հակամարտ ուժե-
րի բախման նոր աղբիւր եւ չի հասնի
իր նպատակին: Ազգային Սահմանադր-
ութիւնից 65 տարի յետոյ կազմւած
սահմանադրութիւնը ձեւով ու բովան-
դակութեամբ պէտք է լինի աւելի ար-
դիական եւ աւելի կատարելալ:

Նախագծի հրատարակւած կէտերից
դուար է հասկանալ, բայց բնում է
թէ սահմանադրութեան հեղինակները

բաւարար չափով հաշի չեն առել էջ-
միածնի դերը. ստեղծւած պայմաննե-
րում էջմիածնի կենտրոնական իշխանու-
թիւնը լինելու է աւելի բարոյական քան
իրական: Ինչպէս յայտնի է, խորհրդա-
յին օրէնքներով էջմիածինը իրաւաբա-
նական անձնաւորութիւն չէ, պետու-
թեան աչքին նրա գոյութիւնը սակ համ-
դուրժելի է, սեփականութիւն ունենա-
լու իրաւունք չունի*): Արդ՝ մի հիմ-
նարկութիւն, որ իր երկրում իրաւա-
գուրկ եւ արհամարհւած հաստատու-
թիւն է, իրաւական ոյժ ու հեղինակու-
թիւն չի ունենայ եւ ուրիշ երկրներում:
էջմիածնի իրաւասութիւնը հայոց եկե-
ղեցու կեանքում գուտ կրօնա-վարչա-
կան ու հոգեւոր-բարոյական սահման-
ներից այն կողմ չի կարող անցնել: Ու-
րեմն, Սահմանադրութիւնը, եթէ նա
ունենալու է ընդհանրական ծաւալ,
պէտք է խմբագրուի այնպէս, որ արտա-
սահմանի բեմերի ազգային-նիւթական
իրաւունքները պատահականութեամբ չը-
մատնեն, այլ ապահովեն այսօր ու
սպագային օրինական ամուր հիմքերով:
Ուրիշ խօսքով, ուղեւեց-չուրեւեց, էջմի-
ածնի իրաւասութիւնը արտասահմանի
վերաբերմամբ զգալի չափով պիտի կըր-
նատի:

Միւս կողմից, նախագծի կէտերը չեն
ասում, բայց պէտք է որոշ լինի եւ մի
ուրիշ կարեւոր հանգամանք. ի՞նչ է լի-
նելու նոր սահմանադրութեան հիմքը,
այսինքն՝ մինչեւ ո՞րք եւն տարածելու
բեմերի եւ ժողովրդի իրաւունքները:
Իշխելու է բացարձակ ժողովրդապետու-
թիւնը, թէ՛ նորից իր ուժի մէջ պիտի
մնայ վեղարարութեան եւ եկե-
ղեցական-կղերական բիւրոկրատիան, ո-

*) «Նորհրդ. Միութեան մէջ, ինչպէս
բոլոր եկեղեցիները, նոյնպէս Հայոց ե-
կեղեցին իրաւունք չունին սեպտականու-
թիւն, կալուածներ եւայն ունենալու»,
զբում է «Սիւն»-ի էջմիածնի թղթակե-
ցը (Nº 10 էջ 318):

րից այնքան տուժել ու տուժում են
այսօր էլ բեմական եւ կրթական-մշա-
կութային հաստատութիւնները: Մին-
չեւ որ Սահմանադրութիւնը ամուր կեր-
պով չկանգնէ ժողովրդական-ընտրական
սկզբունքի վրա եւ ազգային-բեմական
գործերը չանցնեն ժողովրդի ձեռքը,
ներկայ քաղաք, ի հարկէ, ոչնչով չի
մեղմանայ:

Կան եւ ուրիշ խիստ կարեւոր հարցեր,
որոնք չպէտք է անտեսեն սահմանադր-
ութեան բնութեան ժամանակ, բայց

ՔԱՆԻ ՄԸ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր անմահ աշուղը Սայեաք Նովան
իրեն համար գրական անուն է կազմէր
գործ անելով երկու բառեր: Սայեաք՝
արարելէն, Նովա՝ պարսկերէն: Ի՞նչ են
այդ բառերը:

Ս - Ե - Դ, որ կը կարդացուի Սայդ,
արարելէն արմատ - բայէ եւ կը նշա-
նակէ որս, որսալ, բռնորսութիւն:
Շարունակաբար նոյն գործը կատարող
անձը ցոյց տալու համար, արար բերա-
կանութիւնը բայ-արմատի երկրորդ տա-
ռէն յետոյ մէկ « (էլիֆ) կը դնէ եւ
երկրորդ տառը կը կրկնէ արտասանելու
ժամանակ, բայց գրելու ատեն կը սղէ:
Ուստի՝ Ս - Ե - Դ (Սայդ) - որս,
որսալ:

ՍԵՆՍԻ (Սանեաք) } որսորդ, որսկան:
ՍԵՆՎ (Սայեաք) }

Հայերէնի մէջ իրար քով քովի եկող
երկու Ե Ե-ի առաջինը փոխւեր է «Յ»-ի:
Երբ արարելէն տառերով կը գրենք
Սայեաք, կը գործածենք միայն չորս
տառ Ս - Ե - Դ - Ե եւ կը կարդանք՝
Սայեաք:

«Սայեաք»-ի «ք»-ն ճիշտ է թէ սը-

խալ:
- Սլոսա՛լ է: Արարելէն «տալ» տառով
կը գրուի սայդ եւ սայեաքը, որին հա-
մապատասխանող տառն է հայերէնի
մէջ՝ Դ: Օրինակ, «էրո»՝ հայերէն մարդ,
վէրո՛՝ վարդ:

մինչեւ որ նախագծի բնագիրը հրատար-
ակ չդրուի, դժուար է որոշ բան ասել:
Պէտք է պահանջել, որ այդ նախագիծը
օր առաջ հրատարակուի, որ նրա բնու-
թեան կոչել ինքը ժողովուրդը, որ սահ-
մանադրութեան բնագրի մէջ հաշի առ-
նընեն նոր ժամանակների եւ բոլոր վայ-
րերի ուրայն պայմանները եւ որ վերջ-
նական հաստատումը կատարուի ժողովր-
դի իրական ներկայացուցիչների կող-
մից:

Ասոր կը հակահարկն՝ ըսելով, թէ Սա-
յեաք Նովան ինքը իր անունը կը գրէր
«Թ»-ով:

Սայեաք Նովան ոչ միայն իր անունը
«Թ»-ով կը գրէր, այլ տեղ տեղ վարդը
կը գրէր վարք, մարդը՝ մարք: Արդ՝
մենք կ ընտելուի՞նք անոր ուղղագրու-
թեան բոլոր կէտերուն - ի հարկէ ո՛չ:
Սայեաք Նովան իրաւունք ունէր հասա-
րակ երկու բառերէ իրեն համար յա-
տուկ անուն մը շինել եւ գրել այնպէս,
ինչպէս իրեն հանելի էր, առանց ուշա-
դրութիւն դարձնելու ուղղագրութեան:
Եւ մենք ալ պարտաւոր ենք գրելու այն-
պէս, ինչպէս ինքը կը գրէր: Սակայն,
երբ պրպտումներու եւ վերլուծումնե-
րու մէջ կը մտնենք, երբ կուզենք ի-
մաստ տալ անունին ու քերականօրէն
վերլուծել, պէտք է գրենք Սայեաք եւ
ոչ Սայեաթ, ինչպէս կը գրենք վարք եւ
ոչ վարթ, մարք՝ ոչ թէ մարթ:

Նովա, - պարսկերէնը ունի ն-վ-նով-
նոր. նաեւ ն-վ-նով-ձայն, երգ: Պարս-
կահայերը յաճախ կըսեն՝ նովուրգ-նոր
օր, նովրահար - նոր գարուն:

Նվ - նվ յաճախ գործածուող բառ չէ.
անոր կցելով ազ մասնիկը կը դառնայ
նագ, որը եղածին պէս հայերէնը ա-
ռեր է իր մէջ:

Նովայի վերջին «ա» մասնիկը ո՞րտեղէն
կուգայ:

«Ա»-ն «նով»-ի անհրաժեշտ մասը չի կազմեր, այլ աւելցած է Սայեադ Նովայի կողմէն իր անունը չորս վանկանի շինելու եւ աւելի հնչուն դարձնելու համար: Ան այնքան ալ կ'պած չէ այդ տառին եւ տեղին համեմատ կը ջնջէ: Օրինակ. Սայեադ Նովի ետքն եմ, ոչ թէ Նովայի:

Վերը ըսինք, թէ պարսկերէն կան նով - նոր եւ նէվ - երգ բառերը, արդ' մեր աշուղը ո՞րքն է գործածած: Անպայման առաջինը եւ «նոր» իմաստով: Ինչո՞ւ: Որովհետեւ նախ' հեղինակը իր անունը կը գրէր «Սայեաք Նով» եւ ոչ թէ «Սայեաք Նէվ»: Երկրորդ' քերականագործն «Սայեաք»-ը գոյական է, որուն կը տրւի իրբեւ ածական «նով»-ը եւ իմաստը միշտ դուրս կուգայ: - նոր որտորդ:

Գուցէ շատերը վայելուչ չգտնեն մեծ աշուղի անունին Նոր Որտորդ լինելը: Մենք ոչինչ փոխել չենք կարող. այդպէս է եղած Մեծ աշուղի ցանկութիւնը: Ենթադրենք պահ մը, որ Սայեաք Նովան ուզեր է իր անունին սալ «Երգ որսացողի» կամ «Երգի որսորդի» իմաստը: Այդ պարագային պէտք է գրէր ու կարդար Սայեադ - ը - նէվ: Երկու բառերու մէջ ընկած շաղկապող «ը»-ն անհրաժեշտ է - եթէ ոչ գրելու, գէթ արտասանելու առնն: Առանց այդ «ը»-ի կապակցութեան, մենք պիտի թարգմանէինք - Սայեադ Նէվան - որսորդ, երգ, բայց, ոչ երբեք՝ Երգի որսորդ:

Ս - Ե - Գ (Սէյիդ) - Սիդ արաբերէն է, կը նշանակէ պարոն, *ճոսիէօր, սիյիէօր*: Արաբական երկիրներու մէջ ամէն քայլափոխին կը լսենք՝ «Նա՛ սիդի» - ո՞վ պարոնս:

Գորնէյը տրամա մը ունի՝ Cid անունով: «Սէյիդ»-ը «Սիդ»-էն շինած ածական մըն է, որ կը տրւի որոշ կրօնական դասակարգին իրբեւ տիտղոս:

Սէյիդի յոգնակին է սիւէդա, ոչ թէ սըդաք կամ սադաք. կայ սըդաք, որը յոգնակին է սըդդ (կին) բառի: Եա՛

սըդդ - ո՞վ տիկին. եա՛ սըդդաք - ո՞վ տիկիններ: Սէյիդէն Սայեադ քերականագործն չի շինիր: Թէ Սայեադ Նովայի ժառանգներէն ոմանք ինչո՞ւ են իրենց համար իբր ազգանուն առած Սէյիդով, այդ կարելի է բացատրել այս վերջինների իրենց անունին աւելի փայլ տալու, իրենց ազնականութիւնը ապացուցանելու ցանկութեամբ - Սէյիդով, այսինքն՝ իշխանեան, եւ ոչ թէ Սայեադեան, այսինքն՝ Որսկանեան: Զէ՛ որ անոնք եւս, Մոսկուայի մէջ, կը շփուէին իշխաններու հետ: Մինչդեռ Թիֆլիզ եղողները իրենք զիրենք կը կոչէին Սայեադեան, որը իսկականին հետ միշտ է:

ՄԱՀՏԵՆՍԻ - արաբերէն է. գոյական բառն է՝ հատիւտ. արմատն է՝ Հ - Տ - Ս. յոգնակին կը լինի՝ հատախս. կը նշանակէ՝ բարի լուր, ուրախալի լուր, աւտիֆ: Թիւրքիոյ մէջ, պատերազմի ժամանակ, օրը երկու անգամ կը լսէինք հեռագիր ծախսող տղաներու գոռալը. «հատախս, եհնի կելէն հատախս»:

Վերը ըսինք, որ մահտեսիի արմատն է՝ Հ - Տ - Ս: Արաբերէնի մէջ վայր ցուցնելու համար արմատի սկիզբը կաւելցուցնեն «մ» եւ երկրորդ տառի վրա կը դնեն շեշտ մը, որով կստացւի *մ օ ւ ւ* եւ կը կարդացւի մահտես, այսինքն՝ ուրախ լուրի վայր, աւտեսաց երկիր:

Մահտեսի՝ աւտեսաց երկրին պատկանող, աւտիս անելու գնացող:

Գուրանի իւրաքանչիւր տունը կը կոչւի հատիս, այսինքն՝ աւտիֆ, բարի լուր:

Բարի լուրի վայրը երկուս է՝ Երուսաղէմ եւ Մէքէ:

ՄԳՏՍԻ - արաբերէն է. արմատն է Գ - Տ - Ս, որը կը հնչւի գուտս, - կը նշանակէ՝ սրբութիւն: Թիւրքերը կըսեն՝ գուտս կամ գուտս - ը - շերիֆ - փառանք սրբութիւն - Երուսաղէմ:

Սրբավայր ցուցնելու համար նոյնը կընենք, ինչ որ ըրինք Մահտեսի շինելու համար. *մ* կաւելցնենք արմատին ըս-

կիզբը եւ երկրորդ տառին վրա կը դրենք շեշտ մը եւ կստանանք Մ Գ Տ Ս, որ կը կարդանք մագտես - սրբավայր: Սրբավայր գացողը կը կոչւի՝ Մգուսի, որը կը կարդանք՝ մագտեսի, աղաւաղ-եալ ձեւով՝ մղոսի: Իսկ «Մուգատտաս»ը այսպէս է կազմած. Գ - Տ - Ս - սըրբութիւն, քագտիս - սրբացնել, մուգատես - սրբացում: Թրքալոսու հայ բողոքականները կըսեն՝ Քիթապ - ը - մուգատտես - սուրբ գիրք:

Հիմա պարզեցաւ, կը կարծեմ, որ «Մուգատտաս»-ի աղաւաղումով չէ որ մահտեսի է շինւեր, այլ՝ երկուսն ալ կազմւեր են բոլորովին տարբեր արմատներէ:

Մահտեսին ան է, որ կերթայ պարունակութիւնը այցելելու - աւտիֆ:

Մագտեսին - մղոսին ան է, որ կերթայ պարունակողին այցելելու - սրբավայրը:

Արդ՝ Սայեադ Նովի հայրը մագտեսի - մղոսի էր, որովհետեւ սրբավայր այցելած է եւ մահտեսի դարձած՝ ինքնաբերաբար: Վերջ ի վերջոյ՝ կարելի չէ աւտեսաց երկիր երթալ եւ առանց աւտիֆի վերադառնալ:

Հ. Յ. Գ. ԿԱՐՆՈՅ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

«Վէմ»-ի նախորդ համարում հրատարակւած էր Հ.Յ.Գ. Կարնոյ ընդհ. ժողովի նկարը: Եղած խնդրանքի վրա սալիս ենք ժողովին մասնակցողների անունները: Ըստ նկարի, *Վերի շարք*, ձախից աջ-

- 1) Վահան Յովհաննիսեան-Մինայտրեան (Սամսոն),
- 2) Արտաշէս Գաւաթեան (Կարին, հրաւիրւած),
- 3) Մանաս Պալոյեան (Տրապիզոն),
- 4) Արմենակ Օթիկեան-Արշակ (Բաղէշ),
- 5) Վահէ Թոմանեան (Կարին, հրաւիրւած),
- 6) Աւսո ինճեմիքեան (Բէյրութ),
- 7) Յովսէփ Յովհաննիսեան-Յօ (Թեհրան),
- 8) Վարդապար Դագեթեան (Բուլղարիա):

Միջին շարք - 1) Համագասպ Սրբանձրեան (Պոլիս), 2) Մարտիրոս Յարութեան (Կովկաս), Ռուբէն Զար-

Երուսաղէմ այցելողները, եթէ փափակ իրենց մարմնին վրա զանազան նկարներ փորել՝ նկարել կուտան, այսինքն՝ հանն ընել կուտան: Ի՞նչ է հաննը: - Հ - ձ - ձ - ձ արաբերէն է, կը նշանակէ՝ փորել, նկարել, զարնել: Թիւրքերը կըսեն՝ «հաննի գնաց, հանն զարնել տու, հաննոյ ցոյց տուր» ևն.: Քերականագործն Հ - ձ - ձ - փորել, փորել տալ. հանին - փորող, փորել տուող. հանի - փորող, փորել տուող: Կարելի է Մագտեսի եւ Մահտեսի ըլլալ եւ հանի չըլլալ:

Ամփոփենք: Այսպէս, ուրեմն--

1.- Անոնք որ կը գրեն Սայեաք Նովա, ինչպէս աշուղը ինքն է գրէր, թող գրեն իրբեւ յատուկ անուն. այդ ընդունելի է:

2.- Անոնք որ կաշխատին ստուգաբանել այդ անունը եւ կուզեն գրել համաձայն իր իմաստին եւ ուղղագրութեան, պէտք է գրեն՝ Սայեադ Նովա - նոր որտորդ:

3.- Սայեադ Նովայի հայրը, եթէ այցելած էր Երուսաղէմ՝ Մահտեսի էր, նաեւ՝ Մագտեսի - Մղոսի: Եթէ մարմնի վրա նկարել տուած էր՝ նա՛ եւ հանի էր: Փարիզ. Յօ. Կիւրիսեան

դարեան («Ազատամարտ»-ի հոմբ.), 4) Ռոստոմ (Բիւրօ), 5) Է. Ակուննի (Բիւրօ), 6) Ս. Վրացեան (Ամերիկա), 7) Արտ. Հանըմեան (Եգիպտոս):

Վարի շարք - 1) Հիւսիսեան (Շապին-Գարահիսար), 2) Մարուէէ Մարաննեան (Կարին), 3) Տիգրան Խաչիկեան - Արզումանեան (Պոլիս), 4) Շահ Արմէն (Կարին), 5) Ռուբ. Տէր - Մինասեան (Մուշ), 6) Վարդանեան (Սըվազ), 7) Փոլատեան (Սըվազ), 8) Միհրան Թերլեմզեան (Վան):

Նկարի մէջ չկան - 1) Մնօ Պալոյեան (Մուշ), 2) Գեորգ Դագարեան (Կովկաս), 3) Փիլոս-Մարալ (հրաւիրւած), որոնք բացակայ էին նկարելու ժամանակ:

պէս գնեք կայացուցիչ Մեր եւ զղեկավար կազմակերպութեան գործոյս ի մէջ հաստացելոց ի սփիւռս Արտասահմանի, հաստատելով զտանձին կեդրոնական Յանձնաժողով ընդ նախագահութեամբ իւրով եւ մասնակցութեամբ մի մի ներկայացուցչաց Շնորհագարդ կաթողիկոսացն Տանն Կիլիկիոյ եւ Ամենապատիւ Պատրիարքին Կ. Պոլսոյ:

Ուրիշ խօսքով, յորելեանին տրոււմ է գուտ կրօնական-եկեղեցական կերպարանք: Ճիշտ է, Սահակ կաթողիկոսի անունով տրւած մի ուրիշ կոնդակում հորէն կաթողիկոս ստում է, թէ՛ «Մեր ցանկութիւնն է, որ այդ մեծ եղելութիւնը մեր ազգի եւ եկեղեցու պատմութեան մէջ ըստ արժանւոյն վերագրեման հաստի հայ ժողովրդի կողմից», բայց «ազգ» ու «ժողովուրդ» այստեղ հասկացում են սոսկ եկեղեցական իմաստով: Ի հարկէ, Աստուածաշնչի սօնը նախ եւ առջ կրօնական-եկեղեցական տօն է եւ հասկանալի է կաթողիկոսներին ու պատրիարքներին նախաձեռնութիւնը: Մեզ այդ յորելեանը հետաքրքրում է բացառապէս մշակութային տեսակետից: Ի՞նչ դեր է կատարել այդ գրքի *Հայերէն* բարգամութիւնը հայ մշակութի - լեզուի ու գրականութեան կազմաւորման ու զարգացման գործում:

Ժողովրդական ամսաթերթ՝ ներածականութեան եւ առողջապահութեան: Սկսաւ հրատարակել

հոկտեմբերից բժ. Շ. Այվազեանի (Շ. Նարդունի) խմբագրութեամբ: Նըպատակն է՝ «պահպանել մեր ցեղային ստորագրութիւնը, փրկիքսպէս ազնւացնել երիտասարդութիւնը, հոգեկան ներքին ուժերու ժառագայթաւորումով մը օժտել հայ անհատականութիւնը եւ հայ դիմագիծը»: Այս նպատակին հասնելու համար *Հայ-Բոյժ* «կառաջարդէ տալ առողջապահութեան եւ բժշկութեան մասին օգտակար ու լայն տեղեկութիւններ, միաժամանակ մարմնակրթութեան

եւ իմացական ուժերու մարզանքին սերը արբնցնել մեր ժողովրդին մէջ»: «Հայ-Բոյժ»ը - «սիտի խօսի ժողովուրդին՝ անոր հասկանալի ձեւով միայն»: Երկու բառով քերքի ծրագիրը՝ «Առողջութիւնն է մեր աստածը»: Մի խօսքով՝ ժողովրդական հանրամատչելի առողջապահական քերք, կամ՝ «Տանին բժիշկը»:

«Հայ-Բոյժ»-ի առաջին քիւր հաստատում է, որ «խմբագրական խոստումները անհիմն չեն»: «Անոնց որ կը սարսափին հիւժախտէն»՝ տօք. Գ. Շարաշեան, «Ե՞րբ կարելի է յղի մնայ»՝ տփ. Գրիգորեան, «Ծխե՛լ թէ չծխել»՝ տօք. Ա. Աշեան, «Վերաբուժապետ Քէչէկ», «Տիկին, երախտ չի՞ քանար»՝ Մենժ Հայրիկ, «Հիւրաբուժութիւնը Հայոց մէջ»՝ Կ. Յ. Բասմաչեան, «Կերակուրները բուժաւոր են երբ այլու միջոցով ամանի մէջ կեփուին»՝ տօք. Բ. Նազարեան, «Երեւանի խաղողները»՝ Քաղհան, «Լօշտակ»՝ Գ. Վրդ. Սրանձոտեանից, «Որովայնի ժանտատեղին դէմ»՝ տօք. Շ. Այվազեան, «Երածշտաբուժութիւն»՝ Շ. Նարդունի - ահայս քիւր բովանդակութիւնը: Յօդածները կազմած են սիրով, պարզ ու հասկանալի, մաքուր եւ հիւրախ հայերէնով: Եթէ մի շարք յօդածներին կցւած լինէին եւ նկարներ, ընթերցողը աւելի դիւրութեամբ կօզուէր նիւթից:

«Հայ-Բոյժ»-ի երեսունով փակում է մի բաց, որ զգալի էր մեր կեանքում: Հետզհետէ պէտք է գոցել եւ ուրիշ բացեր: Այսպէս, մեզ քուտ է, վաղուց արդէն հասունացել է մի պատկերագրող - ընտանեկան շարքաքերքի պահանջը - մի քերքի, որ տայ հայերէն ընթերցանութեան առողջ նիւթ ու մշակաւոր պատկերներ, որ շարքէ-շարք տեղեակ պահէր ընթացիկ կեանքին - արւեստ ու գրականութիւն, խոհանոց ու նորաձեւութիւն, գրու ու գարաւորութիւն - մի խօսքով՝ լինէր տան քերքը:

Զգալի է եւ կենդանի ու լաւ խմբագրող մանկական հանդէսի պէտքը:

Արտասահմանի բազմահազար հայ նոր սերունդը հայերէն ընթերցանութեան նիւթ քիչ ունի - լաւ կազմած, խնամւած արտաքինով, պատկերագրող: Եղած մանկական հանդէսները, ընդհանուր առմամբ, տեղական բնոյթ ունին: Թիֆլիսի «Հասկեր»-ի պէս մի կենդանի եւ ընդհանրական գործ պէտք է ստեղծել, որ, անտարակոյս, հեշտ չէ, բայց հնարաւոր է:

Վերջապէս, կարիք կայ եւ մի մանկավարժական - դպրոցական - կրթական հանդէսի: Պատկառելի քուտ դպրոցներ ունին արտասահմանում, խոշոր քանակութեամբ ուսուցիչներ եւ կրթական գործով հետաքրքրող մարդիկ:

ԳՈՒԳՏ . Ա . ԱԲԵՂԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

ԳՐՏԱԿԱՆ ԵՆԳԻՐԸ .- Բերլինի Zéitschrift für Politik (Բաղաճապահական Հանդէս) ամսագիրը, որ Գերմանիոյ հին եւ քաղաքակրթական առաջնակարգ երատարակութիւններից մէկն է, գետեղել է Գոտո. Արտաշէս Աբեղեանի մի ընդարձակ տեսութիւնը՝ «Քրդական իրադրութիւնը» վերնագրով: Գրածքը արտասովոր է եւ առանձին, սահմանափակ օրինակներով:

Հետեւեալ հատւածների է բաժանւած աշխատութիւնը .- Բիւրդիստան՝ աշխարհագրական տեսակետից: Բնակչութիւն: Բիւրդերի ցեղային ծագումը, լեզուն, բարբառները եւ ժողովրդական բանասիրութիւնը: Պատմական անցեալը: Բիւրդերի կրօնը, ընկերային բաժանումները եւ տնտեսական գրադուները: Բիւրդ ցեղերը: - Բիւրդերի ազատագրական շարժումները սկզբից մինչեւ այժմ: Բիւրդերի ազգային - քաղաքական ծրագիրը՝ Տանկաստանի սահմաններում: Բիւրդերը Իրաքում եւ Պարսկաստանում: Անգլիայի եւ Ռուսաստանի քաղաքականութիւնը Բիւրդերի եւ Բիւրդիստանի վերաբերմամբ:

մի լաւ խմբագրող, լուրջ հանդէս կարող էր մեծ ծառայութիւն մատուցանել մեր կրթական գործին ու գործիչներին: Սպասելի էր, որ այս քերքին լրացնէր Համագայիւնը իր ձեւարանով, բայց, երեւի, նիւթական դժարութիւնները արգելք են եղել նրան ցարդ այդպիսի մի ձեւարանի իրականացման: Կարող էր եւ պարտական էր Բարեգործականը անցնել նման գործի - գլուխ, բայց այս հիմնարկութիւնը, ըստ երեւոյթին, աւելի սուր եւ անշեղծագիւղի մտահոգութիւններ ունի, քան կրթական - մշակութային գործը - կուսակցութիւն խաղալ եւ գաղութահայ կեանքի քայքայման ծառայել:

ԱՐԳԻ ՀԱՅԵՐԷՆԻ ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ Վիեննայի Միլիթարեանց քուտ մամուլի տակ է եւ այս ձեւն լոյս կը տեսնէ Գոտո. Ա. Աբեղեանի՝ գերման լեզուով կազմած «Արդի Հայերէնի Քերականութիւն» ձեւարկը, համառօտ ընթերցարանով միայն: Աշխատութիւնը կազմելու է մի հատորը Բերլինի համալսարանին կից արեւելեան լեզուների ներմարանի հրատարակութեամբ լոյս տեսնող դասագրքերի շարքի: Զուգահեռաբար տրոււմ են արեւելահայ եւ արեւմտահայ գրական բարբառների քերականական կանոնները: Առաջին փորձն է կատարոււմ այսպիսով՝ կազմելու արդի հայերէնի երկու նիւթերի քերականութիւնը իբրեւ մի ամբողջութիւն եւ մէկ հատորի մէջ: Դասագրքը սահմանւած է գլխաւորապէս ձեւարանում հայերէնի դասընթացին հետեւող գերման ուսանողների գործածութեան համար: Ինչպէս յայտնի է, 1926 թ. ամարային կիսամեակից սկսած՝ Պրուսիոյ կրթական նախարարի հրամանագրով Արեւելեան Լեզուց ձեւարանում, ի քիւս արեւելեան ուրիշ լեզուների,

աւանդում է նաեւ աշխարհաբար հա-
յերէնը, իր երկու միւլերով: Դր. Ա-
բեղեանը հայերէնի դասախօսն է այդ
ձեւաբանում:

ՊՐՈՒՍՏՈՅ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱ-
ՆԻ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՅ ԼՐԱՅՈՒՅԻԶ
ՅՈՒՑԱԿ.- Պրուսիոյ պետական մատե-
նադարանի արեւելեան բաժնի տնօրէնու-
թեան առաջարկով՝ Դր. Ա. Աբեղեան
կազմել է նոյն մատենադարանի հայե-

ՊՐՈՑ. Յ. ՄԱՆԱՆԴԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

երեւանում, Մեյքոնեան փոնդի հրա-
տարակութեամբ լոյս է տեսել պրոֆ.
Յակ. Մանանդեանի «Ֆէոդալիզմը Հին
Հայաստանում» հատորը: «Դր. Թեր-
ք»-ը (№ 28) հետեւեալ տեղեկութիւն-
ներն է տալիս այդ աշխատութեան մա-
սին: «Ուսումնասիրութեան ենթարկե-
լով Հայաստանի հնագոյն պատմիչների
բազմաթիւ բնագիր-աղբիւրները, օգտա-
տործելով նիւթին վերաբերող գրական-
ութիւնը, ելնելով փաստերի եւ պատ-
մական երեւոյթներ յուրջ վերլուծու-
թիւնից. Մանանդեանը յանգել է Հա-
յաստանի փեոդալիզմին եւ նրա առանձ-
նայատկութիւններին վերաբերող հետա-
բերաշարժ եզրակացութիւններին:

Բացի ներածութիւնից եւ աղբիւրնե-
րին վերաբերող ընդհանուր տեսութիւ-
նից ու գրականութեան աղբիւրների
գանկից, հեղինակը տալիս է փեոդալիզ-
մի. նախարարութիւնների ներքին էու-
թեան, նրանց փոխարարութիւնների
եւ սոցիալական զանազան խաւերի դրու-
թեան նկարագիրը: Առանձնապէս հետա-
բերական է հայ եկեղեցու դասակար-
գային դէմքի բնորոշումն եւ նրա կա-
տարած դերի վերլուծութեանը ներքած
գլուխը, ինչպէս նաեւ «շինականների»
եւ «առաքիչների», հայ արհեստարու-
թեան եւ գիւղացիութեան նկրած մա-
սերը: Բազմաթիւ այլ խնդիրներ շոշա-
փելուց բացի, Մանանդեանը յատուկ
բնութեան առարկայ է դարձրել հայ-

րէն ձեռագիրների լրացուցիչ ցուցակը,
որպէս ամբողջացում հանգուցեալ Նիկ.
Քարամեանցի կազմած եւ 1888 թ.-ին
առանձին հատորով տպագրւած «Չեռա-
գըրաց Յուցակի: Լրացուցիչ «ցուցակը»
կազմւած է գերմաներէն լեզուով եւ պա-
րունակում է յիշեալ քաղաքից յետոյ
մատենադարանի կողմից ձեռք բերւած
հայերէն ձեռագիրների նկարագրութիւ-
նը:

կական փեոդալիզմի անկման պատճառ-
ների խնդիրը: Գրքում շոշափւած խըն-
դիրների լրջութիւնը եւ նրանց հանրա-
գումարը՝ հեղինակի կատարած բոլոր
եզրակացութիւններով, բոլոր է տալիս
ասելու որ Հայաստանի գիտական պատ-
մագրութեան մէջ այս աշխատութիւնը
կունենայ իր խոշոր նշանակութիւնը:

Միաժամանակ, Պետրատի կողմից
լոյս է բնծայւել պրոֆ. Յ. Մանանդեա-
նի երկրորդ ուշագրաւ գործը՝ «Նորե-
նացու ստեղծւածի լուծումը», որ
բառ նոյն «Դր. Թերք»-ի «քաղկացած է
հետեւեալ մասերից՝ «Աշխարհացոյցը»
եւ Մովսէս Խորենացին, Խորենացու ա-
ռեղծւածի լուծումը, յաւելւած՝ Խորե-
նացու պատմութեան բառապաշարը եւ
վերջում՝ «Ուսումնասիրութեան հիմնա-
կան թէզիսները՝ ուսերէն եւ գերմա-
ներէն»:

«Մանանդեանի տեսութեամբ Խորենա-
ցին իր պատմութիւնը գրել է Բագրա-
տունիների ուժեղացման շրջանում՝ Յրդ
ուարում: Յեւելով պատմաբանասիրա-
կան համեմատութիւններից հանած եզ-
րակացութիւնների վրա՝ Մանանդեանը
նախ աշխատում է ցոյց տալ, որ «Աշ-
խարհացոյց»-ն եւս Խորենացու ձեռքով
է գրւած: Յատուկ ուսումնասիրութեան
առարկայ դարձնելով նիւթին վերաբե-
րող մի շարք խնդիրներ՝ հեղինակը գր-
քին կցած յաւելւածում կանց է առ-
նում Խորենացու պատմութեան լեզուի.

որպէս իր հիմնական թէզերը ապացու-
ցանող օժանդակ աղբիւրի վրա: Առան-
ձին հետաքրքրութիւն է ներկայացնում
պատմաբանի այն թէզը, թէ Խորենա-
ցին իր պատմութիւնը գրի առնելով Բու-
ղայի արշաւանքից յետոյ (852 - 855),

հանդիսացել է Բագրատունիների շրջա-
նի տիրապետող դասակարգերի քաղա-
քական համակրութիւնների՝ Բագրա-
տունիների յունասիրական օրիէնտացիա-
յի արտայայտիչն իր պատմութեան
մէջ: («Դր. Թերք», 7 նոյ.):

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սայեաթ Նովա.- Պետրատը տպագր-
ութեան է յանձնել Սայեաթ Նովայի
ամբողջական երկերը: Լինելու է երկու
տեսակ հրատարակութիւն. 20,000 օրի-
նակ տպելու է հասարակ քղբի վրա,
ածան գնով. 5,000 օրինակ՝ ընտիր քղ-
բով եւ շէնգ:

Տպագրութեան յանձնւած է նաեւ Սա-
յեաթ Նովայից 7 երգեր երաժշտագէտ
Բարխուդարանի ձայնագրութեամբ եւ
Շարբաբեանի նկարներով:

Նար - Դոս.- Պետրատի Մոսկւայի
տպարանից լոյս է տեսել Նար - Դոսի
երկերի 4-րդ հատորը, որ բովանդա-
կում է «Մահը» վէպը:

Միսաբ Մեծարեհ.- Պետրատը շէնգ
հրատարակութեամբ լոյս է բնծայել
Միսաբ Մեծարեհի երկերի լիակատար
թողովածուն խմբագրութեամբ Ալազանի
եւ Վաղ. Նորեհի: Հատորը ունի յառա-
ջարան, ծանօթութիւններ ու մեկնա-
բանութիւններ, մատենագրութիւն եւ
բառարան: Արտաքին ձեւաւորումը տը-
ւել է նկարիչ Տ. Խաչվանքեանը:

Ա. Կարինեան.- Պետրատը լոյս է
բնծայել Ա. Կարինեանի «Երկերի ժո-
ղովածու»-ի ա. հատորը - 1915-28 թ.
հրատարակութեան յօդածները: Որ-
պէս յաւելւած, կցւած են մի շարք վա-
ւերագրեր «Գաշնակցական Հայաստանի
շրջանից»:

Մ. Ջանան.- Բուսպետրատը առան-
ձին գրքով լոյս է բնծայել դերասան
Մ. Ջանանի «Շահնամ»-ն, ուսերէն
լեզուով, բարգամութեամբ Ս. Քոչար-
եանի: Ջանանի բառերախաղը ստացել

էր համամիութեանկան երրորդ մրցա-
նակը:

Հանրագիտարան.- Մի տարի առաջ
յայտարարւած էր, որ 1933 թ. վերջը
լոյս պիտի տեսնէր Հայկական Խորհր-
դային Հանրագիտարանի առաջին հա-
տորը, սակայն այդ խոստումը չկատար-
ւեց: Այժմ «Խորհրդ. Արևստ»-ի վերջին
(№ 8-9) համարից տեղեկանում ենք,
որ այդ «Հանրագիտարանի բոլոր 15
հատորների բառաշարքը (70,000 բառ)
լրիւ պատրաստ է: Հանրագիտարանի
իրաւաւորը հատորն ունենալու է 70
տպագրական մամուլ, լինելու է պատ-
կերագրող եւ ունենալու է գունաւոր ու
սեւ բազմաթիւ քարտեզներ: Նախատես-
ւած է այս տարի լոյս բնծայել հանրա-
գիտարանի առաջին հատորը, որն ար-
դէն տպագրութեան է յանձնւած, իսկ
1935 թ. ընթացում՝ 2, 3 եւ 4րդ հա-
տորները: «Ա» տառով սկսող յօդած-
ների նկարներն ու քարտեզները (105
հատ) արդէն պատրաստ են»:

Շահնամէ.- Հոկտեմբեր ամսին լրա-
ցաւ պարսիկ աշխարհառչակ բանաս-
տեղծ Ֆերդուսիի ծննդեան հազարամ-
եակը: Այդ առթիւ գրքէ բոլոր երկր-
ներում տեղի ունեցան յարելեանական
հանդէսներ եւ լոյս տեսան գրական գոր-
ծեր: Հայ հասարակութիւնն ու գրակա-
նութիւնն էլ անմասն չմնացին. հայերը
պաշտօնապէս մասնակցեցին Թեքրա-
ում կազմակերպւած համապետական
հանդէսներին: Յորելեանը յարգւեց եւ
մի շարք գրական գործերով: Այսպէս.
Երեւանի «Գրական Թերք»-ը եւ Թեք-
րանի «Ալիք»-ը Ֆերդուսիին ներբեռն

յատուկ համարներ: Թեհրանում առան-
ձին գրեով լոյս տեսան «Շահնամ»-ից
հատընտիր հատածներ Յովս. Միրզա-
յանի քարգմանութեամբ. Թեհրանի
Հայկական Դպրոցի տեսուչ Ռ. Աբրա-
համեանը հայ ու պարսիկ մամուլում
երեսան եկառ առանձին ուսումնասիրու-
թիւններով Ֆերդովսիի կեանքի եւ գոր-
ծի մասին: Երեսանում լոյս տեսա Նիւ-
բական-Կուլտուրայի ինստիտուտի հե-
տադուարիւնների ժողովածուն Ֆեր-
դովսիի եւ նրա դարաշրջանի մասին՝
աշխատակցութեամբ Կ. Մ. Օհանջանեանի,
Մ. Աբեղեանի, Գ. Լեւոնեանի և այլոց:
Հայպետհրատը հրատարակեց «Շահնա-
մ»-ից «Ռոստոմ եւ Սոհրապ» հատ-
ւածը Գ. Ասատուրի քարգմանութեամբ,
որ, ինչպէս գրում են Երեսանի քեր-
քերը, շատ կարճ ժամանակում սպառ-
ւեց: Ֆերդովսիին յօդածներ ներթեգին
հայերէն գրեթէ բոլոր պարբերականնե-
րը ու քերքերը:

Հայպետհրատը վերջին 2-3 ամիսների
ընթացքում հրատարակել է, ի միջի
այլոց. - Ֆ. Ս. Գոստոյեակի, «Երկերի
ժողովածու», ա. հատոր, Սուրխաքեա-
նի յառաջարանով: Հատորի մէջ մտնում
են «Խեղճ Մարդիկ» «Սպիտակ Գիշեր-
ներ», «Գէշ Անեկոյտ» եւ «Խաղամուր»:
Թարգմանութիւնը կատարել են Այ. Շիր-
վանզադէն, Նար-Դոսը եւ Պ. Մակին-
ցեանը:

Մ. Գորկի, «Ծառայութեան մէջ»,
բրգմ. Արագի:

Նար-Դոս, «Երկերի ժողովածու», հա-
տոր Բ. Գ.: Բ. հատորում տպւած են
«Պայքար» վէպը եւ «Սպանւած Աղա-
նին»: Գ. հատորում՝ «Ջագունեան» վե-
պը: Երկրորդ հատորին կցւած է Գ. վա-

նանդեցու ուսումնասիրութիւնը Նար-
Դոսի մասին: «Գր. քերք»-ը (№ 14) նը-
կատում է, որ Նար-Դոսի այս երկու
հատորը կազմւած է մի քիչ անփոյժ:
Գ. հատորը ստացւել է բաւական նի-
հար»:

Սվեֆտ, «Գուլիվերի անապարհոր-
դութիւնը», բրգմ. Կարէն Միքայէլեան,
Ակսել Բակունցի յառաջարանով, Ժ. Գը-
բանվելի 400ից աւելի նկարներով: «Գր.
քերք» (№ 15) առում է, թէ «հայերէն
այս հրատարակութիւնը կարող է մրցել
նոյն գրքի Ակադեմիա-ի հրատարակու-
թեան հետ»:

Յ. Պարոնեան՝ «Երկերի լիակատար
ժողովածու», 4-րդ հատոր, որի մէջ
մտնում են՝ «Կամիքներ», «Հոսեոսի
Չեռատնորը», «Պոտոյս մը Պոլտոյ քա-
ղերուն մէջ»: Հատորին կցւած են Ս.
Մանուկեանի ծանօթութիւնները եւ դըժ-
ւար հասկանալի բառերի բառարան:

Ն. Գորոլ՝ «Տարաւ Բուրա», քարգ.
Ակսել Բակունց, յառաջարանով եւ օ-
տար բառերի բառարանով:

Ակսել Բակունց՝ «Սեւ Յելլերի Սերմա-
ցանը», պատմաժողովածու, որ
ամփոփում է սպւած եւ անտիպ պատ-
մըւածքներ: Շքեղ հրատարակութիւն,
Յակ. Կոջոյեանի նկարներով:

Մաքսիմ Գորկի՝ «Ծառայութեան մէջ»,
քարգ. Արագի:

Անտոն Չեխով՝ «Քնտիր պատմաժո-
ղովածու», որ պարունակում է հեղինակի 10
լուսագոյն պատմաժողովածու Մկ. Արմէնի
քարգմանութեամբ:

Մ. Սալտիկով-Շչեդրին՝ «Մի քաղաքի
պատմութիւնը», քարգ. Արշ. Տէր-Յով-
նանեան, Միք. Արուտչեանի նկարներով:

ԳՐԱՆԽՕՍԱԿԱՆ

Մ. եւ Մ. ՊԱՐՍՍՄԵԱՆ, «Կեանք եւ Արեւստ», Տարեգիրք

Ե. Տարի, 1935, Փարիզ.

Այս տարի եւս տարեգրքերի շարքը
բացւում է Պարսամեան եղբայրների
«Կեանք եւ Արեւստ»-ով, որ ահա հինգ
տարի է կանոնաւոր կերպով հրատա-
րակւում է Փարիզում: Այս հատորն էլ,
ինչպէս եւ նախորդները, աչքի է գար-
նում խնամւած արտաքինով՝ ընտիր
բուլղ, մախուր տպագրութիւն, գեղե-
ցիկ պատկերներ (մէկը գունաւոր), ան-
շակաւոր յարդարանք - տպարարու-
նը հանելի է ըստ ամենայնի:

Բովանդակութեան տեսակետով՝ կան
գրական, գեղարեստական, պատմական
- բանասիրական, գիտական, երգիծա-
կան բաժիններ: «Հոկտեմբերէ հոկ-
տեմբեր» տարեկան տեսութիւն, «տար-
ւան մահերը» եւ օրացոյց: Այս տարի
աւելի հետաքրքրական է պատմական
բաժինը եւ յատկապէս Ա. Ֆ.-ի «Ազատ
Որմնադրութիւնը մտաւոր Արեւելի
հայութեան մէջ» յօդւածը:

Ազատ որմնադրութիւնը համաշխար-
հային մի երեսոյք է, որ մասնաւորա-
պէս լայն ու խորունկ արմատներ է ձը-
ցել անգլո-սակսոն երկրներում. միայն
Ամերիկայում աւելի քան 4 միլիոն ա-
զատ որմնադիր է հաշւում: «Էնցիկլո-
պեդիա Բիթանիկա»-ն տպով այս ըն-
կերութեան, կամ, ինչպէս իրենք են ա-
սում «Եղբայրութեան» ամբողջական
պատմութիւնն ու նկարագրութիւնը՝
պատմական եւ նրա ընկերային, քա-
ղաքական եւ բարոյական ազդեցութիւ-
նը համաշխարհային երեսոյքների վրա:
Թէ՛ հայոց մէջ Ե՞րբ է սկիզբն առել ա-

զատ որմնադրութիւնը, ի՞նչ դեր է
կատարել, դժւար է ասել: Յայտնի է,
օրինակ, որ Ազգային Սահմանադրու-
թեան հեղինակները եւ, առհասարակ,
Պոլսի 60-ական քաղաքների սերունդը
եղել է մասնաւորապէս ուժեղ ազդեցու-
թեան տակ: Ենթադրում է, որ Միք.
Նալբանդեանցն էլ գտնուել է շփման մէջ
նրանց հետ, քերեսու ինքն էլ՝ ազատ-
որմնադիր: Պարսկաստանի ազատագրա-
կան շարժման ամենէն ակնաւոր դէմ-
քերից մէկը՝ Մելեքն խան աչքի ընկ-
նող դեր է կատարել ազատ որմնադը-
րութեան մէջ:

Ա. Ֆ. տել է միայն Իզմիրի «Տիգ-
րան», (1864 թ.), Պոլսի «Սէր» (1866),
Խարբերդի «Եփրատ» (1909), Պոլսի
«Հայաստան» (1915) օրեակների համա-
նօտ պատմութիւնը եւ հակիրճ տեղե-
կութիւններ անգլիական եւ ֆրանսա-
կան այն օրեակների մասին, որ գոր-
ծել կամ դեռ գործում են հայեր: Ա.
Ֆ.-ի յօդւածը յագեցած է փաստական
նիւթերով ու վաւերագրերով եւ, թէեւ
ոչ լրիւ, արժէքաւոր է հայ որմնադը-
րութեան պատմութեան եւ կատարած
դերի լուսարանութեան համար: Ա. Ֆ.
յիշում է եւ մի շարք յայտնի անձերի
անուններ, որոնք կարեւոր դիրք են ու-
նեցել ազատ որմնադիրների մէջ, Մատ-
թէոս Մամուրեան, Մեսրոպ Նուպար-
եան, Սրապիոն Հէֆիմեան, Մկրտիչ
Պէշիկպաշեան, Տիգրան Իսուֆեան,
Գարրիէլ Նարատունեան, Տիգրան Քե-
լեկեան եւ ուրիշներ: Բայց այսօրնով,



ի հարկէ, չի սպառում թիւը այն ակամար հայերի, որոնք անցնալում անդամակցել են ազատ որմնադիրներին օրեակներին:

Նոյն բաժնում որոշ հետաքրքրութիւն է ներկայացնում Ա. Երամեանի գրութիւնը «Աշուղ Ղուկ Յովհաննէս»-ի մասին: Երամեանը պարսկահայ աշուղների սիրահար է երեւում եւ օգտակար աշխատանք է կատարում. դժբախտաբար, իր հետազոտութիւնները սովորաբար կազում են գիտական մէքոզի կողմից: Լ. Մեսրոպի «Մամիկոնեանների շինական ծագումը» յօդածի առաջին մասն է դրած, ուր դեռ Մամիկոնեանների մասին յօսք չկայ. հետաքրքրականը, ի հարկէ, այս վերջին մասն է լինելու: Առաստաղակ, դժար է նպատակայարմար համարել «շարունակելի» գրութիւնները տարեգրում:

Միւս բաժիններին մասնակցում են տօքթ. Պ. Քոլոլեան, Շ. Նարդուհի, Հ. Ա. Բիպարեան, Ն. Պէշիկթաշլեան, Փ. Սանասար, Մ. Պարսամեան, Մ. Ա. Մանուկեան եւ ուրիշներ: Այս բաժինների նիւթերից, մեր հետաքրքրութեան տեսակետից, պէտք է արձանագրել Ա. Կոթիկեանի «Բարեկազմայ Բեմը», ուր տեղեկութիւններ են տրւած վերջին 15 տարւայ հայ բատերական ներկայացումների մասին Փարիզում:

Գրական բաժինը, ամբողջապէս գրեթէ նւիրած է հայ գիւղին: Մ. Պարսամեանը շարունակում է իր վերլուծումները «Մեռնող գիւղի» մասին: Մի գոզորիկ, յուզիչ պատմածք է տւել Փ. Սանասարը - «Բարուրի ճրագը»:

Տարեգրքի տեղեկատու մասը, դժբախտաբար, այս տարի էլ թերի է: Մէկ տարւայ ընթացքում թէ՛ Հայաստանում եւ թէ՛ արտասահմանի հայութեան մէջ «կեանք»-ին եւ «արևոտ»-ին վերաբերող տեսակետները երեւոյթներ ու դէպքեր տեղի ունեցան. Պարսամեան եղբայրների տարեգրքում հազիւ աղօտ արձանագանք է տեղ գտած:

«Հոկտեմբերի Հոկտեմբեր» բաժնի «Գիրքեր եւ դէմքեր» մասում մի քանի տող էլ նւիրած է «Վէմ»-ին: Այդ առթիւ անհրաժեշտ ենք համարում ուղղել մի թիւրիմացութիւն. նիշտ է, որ «Վէմ»-ը «հայերէն լեզուի միութեան ջերմութեն նախանձախնայի» է, բայց նիշտ չէ, թէ «Վէմ»-ի մէջ «արեւմտահայ բարբառով գրւած յօդածները կը վերածնունդ տան արեւելահայերէնին»: Նիշտ չէ նաեւ, թէ «անունի հեղինակաւոր գրողներու գործերէն մէջըրեւումներն ալ կենթարկուին միեւնոյն փոփոխութեան»: Բոլորովին անտեղի եւ անարդար է «Վէմ»-ին ուղղած այս մեղադրանքը, եւ այդ ոչ միայն այն պատճառով, որ ո՛չ մէկ հատիկ դէպք չկայ, որ «Վէմ»-ը ունէ հեղինակի լեզուն մէկ բարբառից միւսի փոխած լինի, այլ եւ որովհետեւ նման դէպք չի՛ էլ կարող պատահել: Մենք «հայերէն լեզուի միութիւնը» համարում ենք օգտակար, ցանկալի եւ, այն՝ նաեւ անխուսափելի, բայց գտնում ենք անիմաստ եւ դատապարտելի այդ նպատակով Հայաստանում գործադրուող ստիկանական միջոցները, եւ թէ արտասահմանում մերք ընթ մերք արտայայտուող ջոկանութիւնները: Գտնում ենք նաեւ ծիծաղելի, անհասկնալի ու ամօքաբեր թէ Հայաստանում եւ թէ արտասահմանում կատարւած քարգմանութիւնները «հայերէնից հայերէն» եւ բռնի հարկադրանքը գրելու այս կամ այն բարբառով: Մեզ համար երկու բարբառներն էլ հայերէն են, նոյնաբով, միեւնոյն դիրքը եւ իրաւունքը ունեցող եւ միեւնոյն չափով հասկանալի հայութեան երկու հատածների համար էլ: Բարբառների միացումը ժամանակի խնդիր է, որ պիտի գոյւթ թերէ կեանքը քաղաքական միութեան հետ միասին: Այսօր մենք միայն հո՛ղ պէտք է պատրաստենք գալիք օրերի համար. նախադրեալներ մշակենք, որ վաղուայ գործը դիրքանայ: Աւելին՝ ի չարէ է:

Ս. Վր.

ՊՐՈՓ. Ն. ԱՂԱՆԳԻ ՎԵՐՋԻՆ ԳՈՐԾԵՐԸ

I.— “L'age et l'origine de l'Empereur Basil I. (863-886)”. “Byzantion”, t. 8 (p. 475-500). t. 9me (p. 223-268):

II.— “La portée historique de l'oraison funèbre de Basile I. par son fils Leon VI. le Sage”. “Byzantion”, t. 8me (p. 501-513):

III.— “Les légendes de Maurice et de Constantin V., empereurs de Byzance”. (Mélanges Biolez p. 1-12):

IV.— “Notes Arméno - Byzantines”, “Byzantion” t. 9. (p. 367-382):

Պրոֆ. Ն. Աղանցի անունը ծանօթ է հայ հասարակութեան: Նրա հայերէն, ռուսերէն եւ ֆրանսերէն աշխատութիւնները ազանութեամբ կարդացում են հայոց պատմութեամբ, գրականութեամբ եւ լեզւաբանութեամբ հետաքրքրուողների կողմից: Հետազոտութեան գիտական եղանակ, յստակ ու կուռ շարահիւսիւթիւն, նիւթի խորունկ ծանօթութիւն, բազմակողմանի հմտութիւն - սհա պրոֆ. Աղանցի հիմնական յատկանիշը, որ նրան դրել է հայագիտների առաջին շարքերում: Իր մագիստրոսական շարադրութիւնից սկսած («Հայաստանը Յուստինիանոսի Դարաշրջանում», ռուսերէն), պրոֆ. Աղանցը ցոյց է տալիս ատանձին հակում դէպի Բիւզանտինի պատմութիւնը, յատկապէս հայ - բիւզանտական յարաբերութիւնները:

Վերջին տարիները «Հայերէնիք» ամսասագրում նա հրատարակեց բիւզանտական պատմութեան վերաբերող մի շարք համարամտչելի ուսումնասիրութիւններ: Այժմ, գրւած լինելով Բիւզանտիայի համալսարանի հայագիտութեան մէթոդ, գիտական նպաստաւոր միջավայրում, ուր առանձին հակում կայ դէպի բիւզանտագիտութիւն, նա աւելի եւս խորանում է իր մասնագիտութեան մէջ՝ խորաբար պէս ներխուժելով հայ-բիւզանտական յարաբերութիւնների ուսումնասիրութեան: Այս աշխատանքի արդիւնք են հանդիսանում, ի միջի այլոց, գրախօսականնա առարկայ կազմող չորս ու-

սումնասիրութիւնները, որոնց հանդէսներից արտատպւած օրինակները դրւած են եւ «Վէմ»-ի տրամադրութեան տակ:

«Բարսեղ կայսեր տարիքն ու ծագումը».- Երկար ժամանակ Բարսեղ Ա. կայսրը եւ նրա հիմնած մակեդոնական հարստութիւնը համարւում էին սլաւոններից ծագած, չնայած որ նրա առաջին կենակից ու բռն կոստանտին Երբանածին կայսրը պնդում էր, որ Բարսեղը ծագում էր հայ Արշակունիներից: Բարսեղի հայկական ծագման մասին առաջին կարծիք յայտնողը եղաւ Սէն-Մարտէնը, հիմնւելով այն փաստի վրա, որ նրա ժամանակները Կ. Պոլսում առաջնակարգ տեղ գրաւող բոլոր անունները հայկական էին եւ պատկանում էին Հայաստանի ամենէն նշանաւոր անուններին, այլեւ՝ որ Բարսեղի եղբայրը կոչւում էր Սիմբատիա, այսինքն՝ Սմբատ հայ անունով: Սակայն, Սէն-Մարտէնի կարծիքը ընդհանուր հարանութիւն չգրտա գիտնականների կողմից եւ մինչեւ այսօր էլ գիտնականների մէջ այդ հարցի մասին կայ երկու տեսակետ. ոմանք (ինչպէս Ռամբո եւ Վասիլիեւ) ընդունում են Բարսեղի ծագումը հայկական, ուրիշներ - մեծասանութիւն - կողմնակից են սլաւական ծագման:

Կու ծանօթ բիւզանտական եւ հայկական պատմագիրներին, պատմական խնդիրներում խորունկ հոտաութեան տէր՝ պրոֆ. Աղանցը վարպետութեամբ լուծում է այս կնիոտ հարցը: Նա քայլ

առ քայլ հետեւում է Բարսեղ Մակեդոնացու կեանքին եւ, ամբողջ պատմական նիւթից մի կողմ դնելով աւանդութեան եւ ջատագովների եռանդի արդիւնք կազմող մասերը՝ փաստերով հաստատում է թէ Բարսեղի հայկական ծագումը եւ թէ նրա կեանքի հիմնական շրջանները: Պրօֆ. Ադոնց, սակայն, հերքում է Արշակունիներից սերած լինելը:

Իբրեւ եզրափակում իր ուսումնասիրութեան, պրօֆ. Ադոնցն ասում է, թէ՛ եթէ Բիւզանդիոնը այդքան բարձրացել է, այդ բանում «հայերին պատկանում է առաջնակարգ մի դեր: Բիւզանդական պատմութեան ամենէն ակնաւոր հետազոտողը հայեր էին ծնունդով կամ ծագումով: Սովորաբար նրանք ներկայացում են իբրեւ արկածախնդիրներ, որոնք փառք էին փնտրում մեծ նանապարների վրա: Այդ բոլորովին սխալ է: Եթէ յայնքան իրենց լեզուով եւ քաղաքակրթութեամբ կայսրութեան անվիճելի տէրերն էին հայերը, շնորհիւ իրենց ցեղի ստեղծագործ մտքի և գիւնարական հանճարի, գտնուում էին նրա ամբողջմանը ամենից աւելի նպաստողների շարքերում»:

«Իր որդի Լեւոն 2.-ի Բարսեղ Ա.-ի վրա արտասանած դամբանականի պատմական արժէքը».- Այս հետազոտութիւնը կատարած է բացառապէս բիւզանդական պատմական աղբիւրներով: Հեղինակը գտնում է, որ այս դամբանականը կենսագրական մի համառօտագրութիւն է, որի հիման վրա Լեւոն Իմաստունի որդի Կոստանտին Ծիրանածինը կազմեց Բարսեղ Ա.-ի կենսագրութիւնը: Բացի այդ, հեղինակը հերքում է գիտութեան եւ գրականութեան մէջ տարածած կարծիքը, թէ Բարսեղ Ա.-ի կինը՝ Նուրիկան՝ Միքայէլ կայսեր նախկին սիրուհին, որ յետոյ անցաւ Բարսեղին, եղել է թեթեւ վարք ու բարձր տէր:

«Առասպելներ բիւզանդական Մօրիկ եւ Կոստանտին Ե. կայսրների մասին».-

Պրօֆ. Ադոնց ասում է, որ Մօրիկի ծագման խնդիրը այնքան էլ պարզ չէ, ինչպէս սովորաբար կարծում է: Այդ առթիւ առաջ է բերում կիրակոս Գանձակեցու եւ Շապուհ Բագրատունու պատմական երկու առասպելը, որոնցից առաջինը պնդում է, թէ Մօրիկը Օշական գիւղից էր, իսկ երկրորդը՝ թէ Մօրիկի հայրը պարսիկացու էր Անիում: Յոյս տալով, որ Մօրիկը հայերի համակրանքը չէր վայելում, իբրեւ արդիւնք հակառակութեան հայ աւատապետներին եւ գլխաւորապէս հայոց եկեղեցու դէմ յարուցած հալածանքների պատճառով, հեղինակը գալիս է այն եզրակացութեան, որ հայերը հիմք չունէին Մօրիկով պարծենալու, ուստի եւ հայ պատմագիրների ցուցմունքը թէ նա ծագումով հայ էր, արժանի է առանձնապէս լուրջ ուշադրութեան:

Կոստանտին կայսրը (740-745), որ շատ յամառ պատկերամարտ էր, չէր վայելում բիւզանդական ուղղափառ պատմագիրների համակրանքը: Վերջիններս նրա անունը դրին Կոպրոնիմ (կոպրոս՝ յունարէն նշանակում է ձիու աղբ) եւ առհասարակ լուրքեան էին մատնում նրա գործերը: Պրօֆ. Ադոնցն առաջ է բերում կիրակոս Գանձակեցու պատմութիւնը, ուր, ի միջի այլոց, ասւած է, թէ՛ «Կոստանտին կոչեցաւ Կաւաղինոս, այսինքն՝ քրքածողով»: Գանձակեցին այս խօսքին տալիս է նըպաստաւոր մեկնութիւն եւ արարների յաղթական Կոստանտինին գովում է իբրեւ քաջ եւ հերոս մարդ, որ սեփական ձեռքերով մի օրում հինգ առիւծ է սպանել: Կիրակոսի այս պատմութիւնը, համեմատելով Կոստանտինի առասպելի վերջերս Նեպոլում գտնուած հատուածների հետ, հեղինակը ցոյց է տալիս, որ Կոստանտինը, հակառակ բիւզանդական տարեգիրների լուրքեան իր մասին, դարձաւ ժողովրդական վեպերի հերոս:

«Հայ - Բիւզանդական Դիւտոգիսիւններ».- Այստեղ խօսում է մի քանի խըն-

դիրների մասին: Այսպէս, Շուրբերժէի հրատարակած բիւզանդական կայսրութեան կնիքների մէջ կան Մախիթար, այսինքն՝ Մխիթար անուն կրող կնիքներ: Պրօֆ. Ադոնցը հաստատում է, թէ սա այն իշխանն է, որի մասին խօսում է Մատթէոս Ուռհայեցին (էջ 8) եւ որը Յովհաննէս Չմշկիկ կայսեր ժամանակակից էր:

Բացի այդ, բնագրում կատարած որոշ ուղղումներով հասկանալի է դարձնում Յովհաննէս Չմշկիկ կայսեր նա-

մակը հայոց քագաւոր Աշոտ Բագրատունուն՝ գրած Չմշկիկի հռչակաւոր արշաւանքի ժամանակ արարների դէմ (975) : Նւայլն:

Պրօֆ. Ադոնցի այս 4 աշխատութիւնները արժէքաւոր տուրք են հայ - բիւզանդագիտութեան: Փափաքելի է, որ վաստակաւոր գիտնականը չլքէ եւ հայ մամուլը, ուր նրա գրչի արդիւնքները միշտ ընդունուում են ջերմ համակրութեամբ:

Յ. Զ.

ՊՐՈՓ. Մ. ԱՖԵՂԵԱՆ՝ «Հայոց լեզուի տաղաչափութիւն», Երեւան, 1933, էջ՝ 452, գին՝ 10 ռ.

Խորհրդային Հայաստանի գրական - գիտական եւ հրատարակչական կեանքում մխիթարական երեւոյթ է Մեխնոնեան ֆոնդի միջոցներով լոյս տեսնող հայագիտական աշխատութիւնների շարքը: Պէտք է խիստ գան լինել այդ - ինքնին համեստ - ձեռնարկով եւս, որ ամէն տարի գէթ երկու - երեք արժէքաւոր հատորներ է ներուում հայ դպրութեան, քանի որ երեւանի պետական հրատարակչական մարմինը իր գոյութեան 14 տարիների ընթացքում այդ ասպարէզի վրա ոչ իսկ կէսի կէսը կատարել է, մանաւանդ եթէ նկատի ունենանք, որ Հայաստանում մի հատիկ հայագիտական պարբերական անգամ գոյութիւն չունի այսօր: Պատերազմից առաջ, մասնաւոր անհատների եւ հեղինակների, այլեւ հրատարակչական մարմինների միջոցներով և գոհարբութեամբ՝ շատ աւելի գործ էր կատարում այդ ուղղութեամբ: Ապացոյց, թէկուզ, ներկայ գրախօսութեան առարկայ աշխատութեան հեղինակի գրած գրքի շարքը:

Վաստակաւոր ուսուցչապետ եւ ծանօթ հայագէտ Մանուկ Արեղեանի գերջին է պատկանում «Հայոց լեզուի տա-

ղաչափութիւն» մեծահատոր աշխատութիւնը, թիւ 13րդ՝ Մեխնոնեան ֆոնդի հրատարակութեանց շարքում: Աւելի առաջ եւ նոյն այդ շարքում լոյս է տեսել հեղինակի մի ուրիշ բազմաթիւ մուտ գրած քննարկ «Հայոց լեզուի տաղաչափութիւնը»:

Ինչպէս վերջինս, այնպէս եւ «Հայոց լեզուի տաղաչափութիւն»-ը հեղինակը աշխատասիրած է եղել եւ տպագրութեան համար պատրաստ ունեցել դեռ պատերազմից առաջ, 1912-ին:

Մ.Արեղեանը իր գրած քննարկը յառաջաբանում ասում է.

«Մեր գրագէտներից եւ սկսնակ բանաստեղծներից, նոյնպէս եւ մի քանի երաժշտագէտներ գանգաւ ժամանակներում դիմել են ինձ՝ խնդրելով ցոյց տալ իրենց մի գիրք, որի մէջ բացաւորւած լինէին հայոց լեզուի տաղաչափութեան սկզբունքները: Յաւոք չեմ կարողացել բաւարարել նրանց: Այդպիսի հարցասէրների համար, կարծում եմ, պիտանի կը լինի այս գիրքը»: Նւշտ պիտանի, աւելցնեմ մեմն:

Ոչ միայն ամէն մի գրագէտ եւ երաժիշտ, այլ եւ իւրաքանչիւր հայ ուսուցիչ է գրասէր, ամէն մի հրապարակա-

գիր եւ առհասարակ գրչի տէր հայ անհատ, որ կոչոււմ ունի առաջնորդի դեր կատարելու - լինի անմիջապէս քէ միջնորդապէս - հայերէն լեզուի ուսուցման ասպարէզում, տարրական պարտականութիւն պիտի համարի, շարունակ խորանալու իր հայերէնագիտութեան մէջ, հարստացնելու իր լեզուական գիտելիքները: «Հայոց լեզուի տեսութիւն», «Հայոց լեզուի տաղաչափութիւն» եւ նման գրածները լաւագոյն ուղեցոյցի դերը կատարել կարող են բոլոր հարցասէրների եւ գրասէրների համար:

Ամէն մի լեզուի տաղաչափութիւն՝ նոյն այդ լեզուի անբաժան մասնիկն է, որով եւ «տաղաչափութիւնը լեզուական ուսումնասիրութիւնն է, լեզուի ընդհանուր հնչարանական (ֆոնետիկ) ուսումնասիրութեան մի մասը» (էջ 8): Այս հիմնական խնդրի ուսումնասիրութեան է նւիրած եւ ամբողջ գրածքը, որչափ որ հարցը հայոց լեզուին է վերաբերում:

Այստեղ հեղինակը բնականաբար նկատի ունի մեր արդի ամբողջական լեզուն, բովանդակ աշխարհաբար: Մուսուրիան չէ տրւած նաեւ գրաբարը, որչափ որ մեր հին մատենագրութիւնը նիւթ է մատակարարում տրւած հարցի լուսարանութեան համար:

Իր տեսական հետազոտութիւնները եւ եզրակացութիւնները հեղինակը հիմնում է բազմաթիւ նմոյշների վրա, քաղած արեւելահայ եւ արեւմտահայ բանաստեղծներից, այլ եւ մեր հին մատենագիրներից: Պատկանեան, Յ. Թումանեան, Յ. Յովհաննիսեան, Ա. Իսահակեան, Վ. Տէրեան մի կողմից. Ալիշան, Մ. Պէշիկ-Քաշիւեան, Պ. Գուրբեան, Թ. Թերզեանը եւ ուրիշներ՝ երկրորդ կողմից. Շնորհալին եւ Նարեկացին՝ հենքից, այլ եւ ուման մեր միջնագրեան բանաստեղծներից - դրանք բոլորը - ընտիր ոտանաւորների նմոյշներով ներկայացւած են հատորի զանազան էջերում, խնդրի այս կամ այն կէտը հիմնաւորելու միջոցին:

Քանի որ, ինչպէս ասեցաւ վերը, գրածքը տպագրութեան համար պատրաստ է եղել արդէն 1912-ին, յետպատերազմեան եւ նորագոյն բանաստեղծները նկատի են առնել աշխատութեան վերամշակման ընթացքում միայն, յաւելումների եւ ամբողջացումների մէջ (էջ 192 եւ շար.): Այդ մասերում ներկատի են առնել խորհրդահայ բանաստեղծներից՝ Չարեմը, Ա. Վշտունին եւ Գ. Աբովը:

Յիշեալ եւ ուրիշ հեղինակների ոտանաւորների օրինակներով՝ հեղինակը մի առ մի, ամենայն մանրամասնութեամբ պարզում է հայ բանաստեղծութեան մէջ կիրառուող տաղաչափական կանոնները եւ սկզբում էին: Քանի որ վերջիններս մի կարեւոր չափով հասարակաց են առհասարակ բոլոր գրական լեզուներին, ուստի եւ հեղինակը իր տեսութիւնները հիմնաւորելու համար նկատի է առնում նաեւ ռուսաց, ֆրանսացոց, գերմանացոց, այլ եւ հին յոյների բանաստեղծական գրածները, դրանցից եւս նմոյշներ բերելով: Այդ ամէնի մէջ հեղինակը, բնութեան ենթարկելով մեր բանաստեղծների տաղաչափական արւեստը, օրինակներով ցոյց է տալիս ներանց կիրառած չափերի ուղիղ եւ սլոյկ կողմերը, առաւելութիւններն ու քերութիւնները: Չմոռնում ասել, որ Հայկական կոչւած տաղաչափութիւնը եւս, որ յատուկ է մեր շարականներին եւ որ ժամանակին հմտօրէն ուսումնասիրելու անհամար էլ կիրառել է Հ. Արսէն Բագրատունին, մուսուրիան չէ տրւած:

Այս կարն տողերի մէջ անկարելի է, ի հարկէ, հանգամանօրէն կանգ առնել գրածքի բոլոր հատուկների եւ ստորաբաժանումների վրա: Գոհամանք գլխաւորները միայն յիշատակելով:

Առաջին հատուածը ընդհանուր բնոյթ ունի, խորագրւած է՝ Ուղբ եւ ոտանաւոր, եւ իր հերթին ստորաբաժանւած է զանազան գլուխների եւ յօդուածների.

Ռիքմ, Շեշտ եւ Ամանակ, Սղում եւ Երկարում, Ուրբերի տեսակները, Շեշտական ոտանաւորներ եւ այլն: Սրանցից ամէն մէկն էլ իր ստորաբաժանումն ունի:

Երկրորդ հատուածը կրում է Հայերէն ոտանաւորների տեսակները վերանայիք - եամբական ոտանաւոր, անպետ, եամբ - անպետ, համաշեշտ ոտանաւորներ, աշուղական չափեր, ազատ ոտանաւորներ եւ այլն, ամէն մէկը՝ իր ստորաբաժանումներով:


Երրորդ հատուածն է՝ Հանգիտութիւն, յանգ եւ տուն: Հանգիտութիւն բառով՝ հեղինակը տալիս է alliteration-ի գաղափարը, միջոցառ հանգիտութիւն ասելով սովորաբար հասկանում ենք անալոզիան. alliteration-ը անելի յարմար է նմանահնչութիւն, նմանաձայնութիւն եւ կամ նմանայանգ քարգմանել՝ նայած տեղին:

Իր գրքի վերջին հատուածում ուսումնասիրողը պարզում է «Հանգիտութիւն»

թեան» էութիւնը, յետոյ առանձին - առանձին բնուած է բաղաձայնների եւ ձայնաւորների ռիթմական հանգիտութիւնը: Վերջում հետազոտում է յանգի ծագման եւ զարգացման, նրա տեսակներին եւ հնչիւններին վերաբերեալ խնդիրները, եւ այլն:

Կարծում ենք այսչափով գէթ մտաւոր գաղափար տւիլնք «Հայոց լեզուի տաղաչափութիւն» գրածքի մասին, մեծարժէք մի գործ՝ արժանի՝ ամենայն շնորհակալութեան: Ցանկալի է որ մեր գրագէտները լայնօրէն օգտուին նրանից: Բաղձալի է նաեւ, որ հեղինակի պատրաստի միւս աշխատութիւններն եւս, դրանց բուն եւ հայ - ժողովրդական դիւցազներգութեան (Սասնայ Մոտր) ամբողջական (մի քանի տանեակ փոփոխակներով) խմբագրութիւնը, լոյս աշխարհ տեսնելու համար այլեւս երկար ժամանակ հերթի չսպասեն:

Բերլին Ա. Ա.



ԸՆԹԵՐՑՈՂԻ Էջ

«Վէժ»-ի գրքի իւրաքանչիւր համարի առթիւ խմբագրութիւնը կամ աշխատակիցները նամակներ են ստանում ընթերցողներից, որոնք կարծիք են յայտնում իրենց հետաքրքրող նիւթերի մասին: «Ընթերցողի էջ» բաժինը բաց ենք անում, որպէսզի այլ նամակներին

ընդհանուր հետաքրքրութիւն ունեցող մասերը քաղածաբար ներկայացնենք հանրութեան: Կարճ եւ ամփոփ գրութիւններով ընթերցողները հարաւորութիւն կունենան արտայայտել այս բաժնում:

ԽՄԲ.

ՍՍՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ՄԱՀԸ

Մեր աշխատակից Յ. Չաւրեանը իր «Սայեաթ Նովա» աշխատութեան վերջին մասի առթիւ վիէննական դիտնական Հ. Ն. Ակինեանից ստացել է մի նամակ, որից բաղում ենք հետեւեալ մասը:

ԽՄԲ.

Յարգելի բարեկամ, Կարդացի «Վէժ»-ի վերջին բլին մէջ Ձեր խիստ հետաքրքրական յօդուածը Սայեաթ Նովայի վերջին օրերու եւ մահուան մասին:

Բոլորովին համամիտ եմ Ձեր տեսու-
րեան ի մասին մահաւան քաւանին:
Կաւեյցնեմ յիշողութենէս հետեւեալ ա-
պացոյցն ալ:

1925ին, երբ կուսումնասիրէի Երեւա-
նի Պետ. Թանգարանի հայերէն ձեռ-
գիրները, ուշադրութիւնս գրաւեց ժո-
ղովածոյ ձեռագիր մը, ժը դարու վեր-
ջերէն, որ կը պարունակէր այլ եւ այլ
Քրդեր, ի միջի այլոց Թիֆլիսի հայ
կուսաններու նամակները, ուղղած Լա-
զարեվին ի Մոսկւա: Այստեղ մանրա-

մասն կը նկարագրէին Ադա-Մահմատ-
եան յարձակումն Տիֆլիսի վրա եւ կո-
տորածները, ակամատեսի գրչով: Ձա-
փազանց հետաքրքրական էին անոնք:
Յուսով քէ պիտի յաջողէի գտնել հոն
որեւէ ակնարկութիւն Սայեաք Նովայի
նահատակութեան մասին, կարդացի նա-
մակները ուշադրութեամբ. բայց չգտայ
եւ ոչինչ: Անշուշտ կուսանները պիտի յի-
շատակէին վարդապետի մը նահատա-
կութիւնը, եթէ տեղի ունեցած ըլլար...:
Վ. Է. Ն. Ն. Ա. Կ. Կ. Ն. Ն. Ա. Կ. Կ. Ն. Ն.

ՄԻ՞ԹԷ ԶԻՇՏ Է

Յարգելի հմրագիր,

Անասելի ցաւով մը կարդացի «Վէմ»-ի
մէջ գոր. Ղորղանեանի եւ պրոֆ. Աւա-
լովի յօդւածները: Մէկի մէջ ցոյց տըր-
ւած է, քէ ինչպէս մեծ պետութիւննե-
րը խաբած են մեզ, միւսին մէջ՝ քէ
ինչպէս մեզ խաբած են մեր հարեւան-
ները: Իմ համագումարով մեր քշնամի
Քիւրքերը աւելի բարձր են մեր այս
«բարեկամներէն». Քիւրքը գոնէ բաց
նակատով կընէր ինչ որ ըրաւ: Թիւրքը
մեզ կոտորեց - մենք գիտէինք, որ պի-
տի կոտորէր. Քիւրքը երբեք ծածկած չէ
իր քշնամութիւնը. իր խօսքը եւ գործը
միշտ եղած են եւ այսօր ալ են ներդաշ-
նակ: Հասցա սա մեր բարեկամներն ու
հարեւանները...: Ես կը գարմանամ
մեր առաջնորդներուն. մէկ անգամ խաբ-
ւիլը ներքի է, բայց անվերջ խաբւիլ:
Յետոյ, մի՞թէ սա պրոֆ. Աւալովի բո-

լոր գրածները միշտ են. մի՞թէ իսկա-
պէս վրացի մեծաւորները Բարումի ու
Թիֆլիսի մէջ այդպէս նէմէրս վար-
մունք ունեցան իրենց դարաւոր հարե-
ւան հայերու հանդէպ: Եթէ այդ բոլորը
միշտ է, - վա՛յ մեզ այդ հոգեբանու-
րեամբ ոչ Հայաստանը կրնայ անկախ
ըլլալ, ոչ վրաստանը: Թէ՞ մի գուցէ
ես կը սխալուիս: Այն ատեն կրնայի՞մ
քիչ մը լուսարանել:*)

Մարտէյլ. ՈՐԲ ՄԸ

*) «Վէմ»-ի նպատակն արդէն այդ է.
ճշտած փաստեր տալ եւ լուսարանել:
Ուշադրութեամբ հետեւելով «Վէմ»-ի
նիւթերուն, հեղհեղ կը ստացւի եւ
զբւած հարցի պատասխանը: Յամենայն
դէպս հայ - վրացական յարաբերու-
թիւններու մասին միայն Աւալովի զը-
րածով պէտք չէ դատել: ԽՄԲ.



ՍՏԱՑԻԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

30, Rue Drouot. Paris (9e).
A. Safrastian, "The Itinerary of Xe-
nophon's retreat". Reprinted from
"The Asiatic Review". October. 1934
London.
Dr. Ch. Aivazian, 17 Rue Damesme.
Paris.
"Svoboda", Revue Socialiste pèrio-
dique, Paris. № 2.
Մ. Ե. Մ. Պարսամեան, «Կեանք եւ
Արեւստ», տարեգիրք, Ե. տարի, 1935,
Փարիզ:
Հրանտ Մուրատ, «Կեանքի մէջ», 1934
Հալէպ, 250 էջ, ոտանաւորներ:
Արմէն Անոյշ, «Օրերուն հետ», բա-
նաստեղծութիւններ, 1933, Պէյրութ,
110 էջ:
Վ. Չարդարեան, «Յիշատակարան»,
(1512-1933), Գ. հատոր, պրակ Բ. Գ. Գ.,
1934. Գահիրէ:
«Շահնամէ», Բարգ. Յ. Միրզոյեան,
Թեհրան.
Ռոտանիկ, «Երգ երգոց», բանաստեղ-
ծութիւններ, 1934, Թեհրան, 32 էջ:

«Հայրենիք», Բիւ 12, 1.
«Բազմալէպ», Բիւ 9-10 (միացեալ).
«Սիւն», Բիւ 10, 11.
«Հասկ», Բիւ 9, 10.
«Հայ-Բոյժ», ժողովրդական ամսա-
քերթ Բժշկութեան եւ Առողջապահու-
րեան. խմբ. տոքթ. Շ. Այվազեան,
հոկտեմբեր, Բիւ 1, 2: Տարեկան բաժ-
նեցին՝ Ֆրանսա 20 ֆր., արասահման՝
25 ֆր.: Հասցէ՝
«Երկունք», պաշտօնաքերթ 2. Ո.
Միութեան, Բիւ 5.
«Խորհրդ. Արեւստ», օգոստ.-սեպտ.
Բիւ 8-9.
«Գրական Թերթ», Բիւ 24, 25, 26,
27, 28.
«Հայ Սկաւտ», Բիւ 10.
«Հայ Արի», Բիւ 9.
«Կաւկաս», (ռուս.), Ազգային անկախ
մտքի օրգան, խմբ. Հ. Բամմատ, Փա-
րիզ, Բիւ 10-11.
«Էթո Բորքի», (ռուս.) վրաց սոց.-
դեմոկր. կուսակցութեան արտասահ-
մանեան Ինքոթի օրգան.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՏԵ

«Վէմ»-ի առաջին տարեշրջանի բաժանորդներին մի քանի տաս-
նեակ զեռ չեն վճարել իրենց բաժնեգիրը: Կը խնդրենք փութացնել
վճարումը, ալլապէս հարկադրւած պիտի լինենք յաջորդ համարից
դադրեցնել պարբերականի առաքումը: Մենք որեւէ մէկին ինքնա-
դադրեցնել պարբերականի ենք միայն նրանց՝ ով-
բերաբար «Վէմ» չենք ուղարկել. ուղարկել ենք միայն նրանց՝ ով-
քեր անձամբ կամ ուրիշ միջոցով խնդրել են իրենց բաժանորդագրել:
Բաժանորդ գրւողը պէտք է վճարէ իր թերթի արժէքը:
Երկրորդ տարեշրջանից «Վէմ»-ը ուղարկւում է բոլոր բաժա-
նորդներին, բացի ա՛յն մի քանի հոգուց, որոնք յայտնել են, թէ
այլեւս ի վիճակի չեն ստանալու: Ուղում ենք հաւատալ, որ ո՛չ
միայն բաժանորդների ներկայ թիւը կը մնայ, ալլեւ «Վէմ»-ի բա-
րեկամները կը ջանան եւ նոր բաժանորդներ արձանագրել:

Բացի այդ, խմբագրութիւնս բոլոր բաժանորդներին ուղղում է ջերմագին խնդրանք հէնց այժմանից, առանց ուշացնելու, վճարել իրենց բաժնեգինը: Տարեակգրին վճարելով՝ բաժանորդները մեծապէս կօգնեն խմբագրութեան եւ կը նպաստեն հանդէսի զարգացման գործին:

Հայկական կասկածամտութիւնը փարատելու համար՝ պէտք է յայտնենք, որ «Վէմ»-ի գոյութեան ո՛չ մի վտանգ չի սպառնում, հետեւաբար բաժնեգինը սկզբից վճարելով՝ բաժանորդները որեւէ կորուստի չեն ենթարկւի, այլ միայն օժանդակած կը լինին «Վէմ»-ի աւելի ճոխացման ու կանոնաւորման, հետեւաբար, ծառայած կը լինին իրենց իսկ շահին: Յոյս ունենք, որ մեր այս դիմումը անարձազանգ չի մնայ:

«Յ Ա Ռ Ա Ջ»

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Խմբագիր՝ ՇԱԽԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	Տարեկան	Վեցամսեայ	Յաւմսեայ
Ֆրանսա եւ Գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆրանք
Անգլիա, Եգիպտոս, Զիցերիա, Իտալիա	250 ֆրանք	130 ֆրանք	
Ռուսի Երկիրներ	200 ֆրանք	100 ֆրանք	
Ամերիկա	200 ֆրանք	100 ֆրանք	

ՀԱՍՑԷ. — 17, Rue Damesme, Paris XIII

1935

ԿԵԱՆՔ ԵՒ ԱՐՈՒԵՍ

Տարեգիրք (ե. Տարի)
Խմբ. Մ. Եւ Մ. Պարսամեան
Պատկերազարդ-Գեղարւեստական գործ
Գին 20 ֆրանք

Գիւմելի՝
M. Barsamian
30, Rue Drouot - Paris (9e)

Մ Ե Ղ Ո Ւ

Երգիծական Շարքարքերք

Ներքին տարեկան	100 լէվ
Վեցամսեայ	50 լէվ
Ամերիկա Տարեկան	2 դոլար
Արտասահման Տարեկան	30 ֆրանք

Հասցէ՝
K. Kaladjian
B. P. 444, Sofia, (Bulgarie).

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Տարեկան	5 դոլար
Վեցամսեայ	3 ,,
ՀԱՅՐԵՆԻՔ ԱՄՄԱԳԻՐ ԵՒ ՄԻԱՍԻՆ	ՕՐԱԹԵՐԹ
Տարեկան	10 դոլար
Վեցամսեայ	5 ,,

13-15 Shawmut st.
BOSTON MASS (U.S.A.)

Յ Ո Ւ Ս Ա Ք Ե Ր

Եգիպտոս, տարեկան,	150 եգ. դի.
Վեցամսեայ,	80 ,,
Արտասահման, տարեկան,	40 շիլինգ
Վեցամսեայ	20 ,,

Հասցէ՝
"Houssaper", B. P. 868
Le CAIRE (EGYPTE)

Ն Ո Ր Օ Ր

Յունաստան, տարեկան,	420 տր.
Վեցամսեայ	210 ,,
Եւրոպա, տարեկան,	135 ֆր.
Վեցամսեայ	80 ,,
Ամերիկա, տարեկան,	8-00 դոլար
Վեցամսեայ,	4-50 ,,

Հասցէ՝
"NorOr", 20-A, Rue Vouli.
ATHÈNES (GRÈCE)

Ա Ս Պ Ա Ր Է Ջ

Ամերիկա, տարեկան,	1-50 դոլար
Արտասահման	2-00 ,,

Հասցէ՝
"ASBAREZ" P. O. Box 865
Fresno, Calif., U. S. A.

Ա Ր Ա Ջ

Տարեկան	500 լէվ
Հասցէ՝	
"ARAZ" Str. Campul Mosilor,	
Nº 2. Bucarest, (Roumanie)	

935

Մ Ա Ս Ի Ս

Տարեգիրք ... Խմբ. Արմէն Սեւան
Պատկերազարդ հոյս բովանդակութեամբ
Գին 100 լէվ
Գիւմելի՝ «ՄԱՍԻՍ» Տպարան
21, Վէպլեց փողոց, Սոփիա

Հ Ո Ր Ի Ջ Ո Ն

Ներքին՝ տարեկան	300 տր.
Վեցամսեայ	150 տր
Ներքին՝ եռամսեայ	80 տր.
Արտասահման՝ տարեկան	150 ֆր.
Վեցամսեայ	80 ֆր.

Հասցէ՝
Rue Mitropoleos, 14.
Salonique, (Grece)

Ա Ջ Ա Տ Խ Օ Ս Ք

Բուլգարիա՝ տարեկան	550 լեւ
Վեցամսեայ	300 լեւ
Ամերիկա՝ տարեկան	6 դոլ.
Ռուսի Երկիրներ՝ տարեկան	150 ֆր.

Հասցէ՝
45, Bld. M. Louiza,
Sofia, (Bulgarie)

Ա Ր Մ Ե Ն Ի Ա

Արտասահման, տարեկան,	3 դոլար
Արժամքիւն, տարեկան,	6 փեսո
Վեցամսեայ,	3-50 ,,

Հասցէ՝
"ARMENIA" Canning 1087,
Buenas-Aires, (Argentine)

Ա Լ Ի Ք

Տարեկան	48 րիալ
Վեցամսեայ	24 ,,
Արտասահման	80 ֆրանք

Հասցէ՝
"ALIK" Gavan Saltaneh, 27.
Tehéran, (Perse)



ՍԻՄՈՆ ՎՐԱՅԵԱՆ.— Համաշխ. պատերազմի նպատակները 1
 ՌՈՒԲԷՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ.— Ֆէրդովսին եւ իր Շահնամէն 20
 ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱԻՐԵԱՆ.— Թ. Թորամանեանի կեանքն ու գործը 30
 ՍԵՂՈՍԿ ՈՍԿԵԱՆ.— Մատթէոս Զարիֆեան 41
 ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄՅՈՒ ՏԱՂԵՐԸ 47
 ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ.— Աղքատարի կռիւր 55
 ՍԱՄՍՈՆ.— Հայաստանի անդր. դեսպանը Պարսկաստանում 72
 ԳՐԻՄԻԹԷՂ.— Զինադադարի օրերուն 86
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ 92
 ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՅՈՒՂԱՐԿԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ Ս. ԶԱԻԱՐԵԱՆԻ ՃԱՌԸ 105
 ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ՀԱՇՏ. ՎԵՀԱԺՈՂՈՎԻՆ 108
 ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ.— Ս. Բարսեղեանի երկու նամակը 113
 ԱՆՅԵԱԼՔ.— Դրւագ մը Մուրատի կեանքէն.— Գրիգորիս եպ. Պալաֆեան.— Կարապետ Մելիքեան 116
 ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ.— Ազգային-եկեղեցական Սահմանադրութիւնը.— Բանի մը դիտողութիւններ, Տօքթ. Յ. Կիլիկեցի.— Հ.Յ.Գ. Կարնոյ Ընդհ. ժողովի կազմը 121
 ԳԻՐՔ ԵՒ ՄՍՄՈՒԼ.— Մեր պարբերականները.— Դոկտ. Ա. Արեղեանի գործերը.— Պրոֆ. Յ. Մանանդեանի գործերը — Նոր հրատարակութիւններ 126
 ԳՐԱԽՕՍԱԿԱՆ.— Մ. Եւ Մ. Պարսամեան, «Կեանք եւ Արւեստ», Ս.Վ.ր.— Պրոֆ. Ադոնցի վերջին գործերը, Յ.Զ.— Պրոֆ. Մ. Արեղեան, «Հայոց լեզուի տաղաչափութիւնը, Ա. Ա. 133
 ԸՆԹԵՐՅՈՂԻ ԷՁ 139
 ԽՐԱՍԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ 141
 ՅԱԻԵԼԻԱԾ.— Վ. Եպ. Մանկունի, Գէորգ Գ. և իր ժամանակը 97-112

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս, Իտալիա՝ տարեկան 70 ֆրանք
 Ֆրանսա եւ մնացեալ երկիրները, տարեկան՝ 60 ֆրանք
 Ռուսաստան, Բուլղարիա, Յունաստան Սիւրիա, եւ Պարսկաստան՝ ,, 50 ֆրանք
 Հասցէ՝ նամակների, դրամի, յողւածների եւ ուրիշ ամէն տեսակ առաքումների համար.—

S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)

Gérant: V. Hampartzoumian

Imp. ARTISTIQUE, 42, Rue de la Jonquière, PARIS (17e)

Տնօրէնութիւնն այսպիսի եւ խտուրթիւնն աչալուրջ ի նորոյ յաւել եւ զգոհուածութիւնն ոմանց անձանց ոչ բարեմտաց:

Արդեւ զյաճախութիւնն անձահ եւ անսկէտ տեղեկադրութեանց (քաղրիւր) եւ ինդրադրութեանց առ պետութիւնն, եւ ուշ եղ կանոնաւոր եւ ամփոփ խմբադրութեանց եւ այն աղբուղու խնդրոց կարեւորաց եւ եթ: Միանգամայն հետեւէր ինքնին եւ արդիւնաւորէր զփութաջան կատարումն ինդրոց ի Բ. Դրան, մինչ յամաց հետէ բարձիթողի անէր Օսմ. կառավարութիւնն զմեծազոյն մասն զրութեանց Պատրիարքարանի՝ տեսեալ զանպատեհ զբուսածս եւ զմիջամտութիւնն օտարոտիս: Սակայն այս տայր առիթ զգոհուածութեանց ոմանց անձանց:

Հաստատեաց զսիրայիր եւ զազգեցիկ յարարեութիւնս ընդ Օսմանեան նախարարաց, մանաւանդ ընդ պաշտօնէից արտաքին եւ ներքին զործոց, ընդ մեծ եպարքոսի (Ալի եւ Ֆուատ փաշայից), ընդ դեսպանս օտար պետութեանց եւ յուպականաց եւ ընդ այլոց կարեւորագոյն անձանց:

Եւ այսպէս բարձրացոյց զազգեցութիւնն եւ զպատիւ պատրիարութեան եւ Պատրիարքարանի:

Առանց ուկն տալոյ տկարամտաց եւ նենդամտաց, յատկացոյց զյատուկ կառս եւ զերիվարս*) ի պէտս իւր, մինչ համարէին զայս նշան փառասիրութեան՝ առանց ըմբռնելոյ զպէտս եւ զպատիւ պատրիարքի որ յարտաքին յարարեութիւնս: Մանաւանդ ինքն հողայր զծախուց:

Այցելէր վարժարանի Աւագ Եկեղեցւոյ Գում-Գարույի: Հարկ էր պատրիարքի տալ Աղգ. Հիւանդանոցի զպաշտօնական այցելութիւնն, եւ հակառակ ինդրանաց հողաբարձութեան՝ օրածոէր Գէորգ Արքեպիսկ. զայցելութիւնն իւր, կամեցեալ ի յեղակարծ ժամուրթալ ինքնին եւ տեսանել աչօք իւրովք զիսկական վիճակ Ս. Փրկչ. Կեղր. Հիւանդանոցի:

Գիտէր սա ստուղութեամբ զվիճակ Հիւանդանոցի եւ կամէր մերկացուցանել զխարդաւանութիւնս որ պաշտօնական այցելութիւնս:

Միջոցաւ բժշկապետ Սերոբէի Վիչէնեան (Սերվիչէն Էֆէնտի) եւ այլոց հաւատարիմ անձանց առնոյր հանապաղ զճշգրիտ, միանգամայն զկսկծառիթ տեղեկութիւնս զԱղգ. կեղրոնական Հիւանդանոցէ, մայն զկսկծառիթ տեղեկութիւնս զԱղգ. կեղրոնական Հիւանդանոցէ, զանինամ վիճակէ Հիւանդաց եւ անկելոց, ցաւազարաց եւ խելազարաց զանկողնոց, զհանդերձից եւ զսննդոց նոցա, զորբոց եւ զզպրոցէ

*) Մանթ. Վ.Ե.Մ.—Պոզոս Պէյ Տառեան, վստօղապետ, նուիրէ զկէս կառաց, իսկ ինք գնայ առնու զկառսն:

և թէ պակասէին յոյժ յոյժ ի դպրոցի մասճակալը եւ անկողինը համեմատութեամբ թուոց աշակերտաց, մինչեւ ի միում անկողնուջննջել 20-25 ամեայ երկտասարդաց ընդ 8-10-12 ամեայ մանկանց եւ պատանեաց: Հակառակ նուազ եւ անխնամ սննդեան պատասպարելոցն Հիւանդանոցի եւ որբոց, յաւուրս պահուց անդամ վայելէին պաշտօնեայք եւ վարժապետք ընդ տեսչի զհամադամ կերակուրս ուտեաց՝ ընդ ոմանս սիրելիս իւրեանց:

Ուստի յաւուր միում ի յեղակարծ ժամու մեկնեցաւ Տ. Գէորգ Արքեպս. - Պատրիարք ի պատրիարքարանէ, եւ զհանապարհացն հրամայէր կառապանի ուղղել զկառան յայս եւ յայն կողմ: Եւ այսպէս եհաս եւ եմուտ ի Հիւանդանոց, ընդ որ յապուշ կրթեալ եւ չփութեալ պաշտօնէից համայնից, տեսչի եւ վարժապետաց, ոչ զիտէին զինչ առնել: Միանգամայն աղղեցին Հոգարարձուաց զյեղակարծ գալուստ Ս. Պատրիարքի:

Ինքնին զնաց ուղղակի ի խոհանոց, եւ սկսաւ հետազօտել զկերակուրս, զկաթսայս, զսանս եւ զայս: Ետես զանխնամ եւ զորդնտեալ կերակուրս պահոց համայն պատասպարելոց Հիւանդանոցի եւ զհամադամ կերակուրս ուտեաց պաշտօնէից եւ վարժապետաց յաւուրն պահոց, զանմաքրութիւնս խոհարարի եւ խոհանոցի, եւ թէ կարգեալ էին զոմն յապուշ-խեղադարից յերկրորդ Մուրփուրիկ (եամաք) խոհարարի: Այդ չօքաւ ի ննջարան որբանոց դպրոցի ի Ս. Յակոբ եւ ստուգեաց զտխրատիթ ճշմարտութիւն տեղեկութեանցն հաղորդելոց ինքեան:

Չննեալ եւ զննջարանս հիւանդանոցի, զհիւանդոս, եկն եւ նստաւ ի սրահի ընդունելութեան՝ վշտացեալ եւ զայրացեալ:

Պահանջեաց ի տեսչէ եւ զայլ տեղեկութիւնս կարեւորս՝ զքանակութենէ պատասպարելոց, որբոց, մանկանց եւ պաշտօնէից, եւ վերադարձաւ ի Պատրիարքարան: Եւ ի ժողովի հաղորդեաց զարդիւնս այցելութեան իւրոց եւ զտխուր միճակ Հիւանդանոցի, առաջարկեալ փութալ բարեկարգել զհաստատութիւն զայն, միանգամայն զՍ. Յակոբ յատկացուցանել ի դպրոց եւ ի բնակութիւն երկտասարդաց՝ որոշեալ եւ հեռացուցեալ զնոսա ի մանկանց եւ ի պատանեաց:

Եւ ահա Հոգարարձութիւն Հիւանդանոցի զամօթի հարեալ, գրգրեալ եւ բորբոքեալ ընդ յեղակարծ այցելութեան Ս. Պատրիարքի եւ ընդ խայտառակութիւնս իւրեանց, սկսան յուղել եւ գրգռել զկուսակցութիւն իւրեանց եւ զազգ (իմա՛ զԿ. Պօլիս), ընդ որս միացեալ էին պարոնայք Քրիստոստուր Ղազարոսեան եւ Ստեփան Փափազեան ուսուցիչք դպրոցի Ազգ. Հիւանդանոցի, եւ տարածայնէին իբր զի Ս. Պատրիարք կամի կործանել զՀիւանդանոց, ցրուել զաշակերտս,

և թէ ասացեալ իցէ երկտասարդ աշակերտաց զաւատացուց ի Հիւանդանոցի, եթէ «զինչ պիտոյ է ձեզ ուսումն, զնայցէ՛ք եւ արարէ՛ք զՔէլլաքութիւն (ըստ ոմանց սափրիչութիւն եւ ըստ այլոց լուացարար կամ լուացող լինել ի բաղանիս)»:

Ամիրայք ոմանք եւ բարեմիտ անձինք զիմեալ առ Ս. Պատրիարք աղաչէին զնա զաղարկեցուցանել կամ մեղմել զայս խնդիր կամ սիրաշահել զաղղեցիկ հոգարարձուս, վերականգնեալ զպատիւս նոցա:

Ուր ուրեմն հաճեցաւ Ս. Գէորգ Արքեպս. խոստանալ, եւ կանխաւ ազգ արարեալ, զնաց ի նորոյ ի Հիւանդանոց, յորում էին նախապատրաստութիւնք ըստ ամենայն մասանց: Այլ ոչ յայս եւ յայն կողմ շրջեցաւ, ասելով, զի ես զիտեմ զնոր փոփոխութիւնս առթիւ յատուկ այցելութեան իմոյ: Եւ նստաւ ժամս ինչ եւ պարապեցաւ յայլ խօսակցութիւնս ի մեծ ընդունարանի, ընդ ուղեկիցսն եւ ընդ հոգարարձուս: Եւ այսպէս վերադարձաւ ի Պատրիարքարան. ոչ ասխորժելի եղեւ եւ այս հոգարարձուաց:

Եղեւ պատճառ զժողոճութեան եւ սրտմտութեան ոմանց մեծամեծաց եւ խնդիրն զերեզմանատան Բերայի որ ի Բանկալթի թաղի:

Ոչ էր առաջին, եւ ոչ վերջին, զոր յուղէին յաւուրս պատրիարքութեան Գէորգայ Քաղաքապետութիւն Բերայի ըստ թելադրութեանց Գէորգայ Քաղաքապետութիւն Բերայի ըստ թելադրութեանց աղղեցիկ անձանց ոմանց ի հայ պապականաց ընդդէմ զերեզմանատան Հայոց Բերայի, կամեցեալ իւրացուցանել զմասն ինչ, որպէս քանիցս փորձեալ էին եւ փորձէին:

Յեա բաժանման Հայոց ուժացելոց եւ մոլորելոց ի պապադաւանութիւն, որպէս յոմանս տեղիս, նոյնպէս ի Բերա պահանջէին զմասն ի հոչակաւոր զերեզմանատանէ յիշելոյ, առարկեալ եւ ցուցեալ զտապանաքարինս՝ զի նախնիք իւրեանց թաղեալ են անդ եւ ունեն զյիշատակարանս: *)

Եւ զի պատուական զիրք եւ վայր զերեզմանատանն այնորիկ ի Բանկալթի առնուին զնշանակութիւն կարեւոր եւ զդնահատութիւն

Ծանօթ. Վ.Ե.Մ. - Ինքնին հետազօտեալ եւ բնեալ գգրեզմանատունդ յամի Տեառն 1911 տեաւ, զի Պատրիարքաւմ յորժամ ի խնամս Պատրիարքարանի բողոքեալ էր Բ. Դուռն գուժացեալսն, բոյլատրեալ են ոմանց ուժացելոց քաղի յեզերս գերեզմանատան իբր յամպետ տեղիս զպապադաւան Հայս իբրեւ գրանադրեալս եւ առ ի որոշել տալով զնել ի վերայ գերեզմանաքարից գտառս Ք. Եթէ քահանայից եւ Եթէ աշխարհականաց, գոր եւ արգելեալ են իսպառ յետ կազմելոյ մոցո գառամձին հոգեւոր կրօնապետութիւն պաշտպանութեամբ պապական պետութեանց: Որով եւ իսպառ որոշեցան ի Հայոց եւ անջատեցան:

բարձր յընդարձակելն եւ ի բարեկարգել Բերայի, դամ քան զգամ մտեալ ի շրջանակ շինուածոց, առթիւ բողոքանաց եւ խնդրոյ պապազաւանից Հայոց նախ եւ դառաջինն կամեցաւ եւ ջան կալաւ երբեմն սպարապետ հռչակաւոր Բիլգա փաշա ի դրաւել զվայրն զայն եւ շինել անդ զգորանոց եւ դայլ շինուածս: Եւ յաջողեցաւ նմա ճարտարութեամբ իմն առնուլ եւ տիրել միոյ մասի գերեզմանատան եւ կանգնել անդ զգորանոց աջակցութեամբ ոմանց ազդեցիկ Հայոց յաւուրս պատրիարքութեան Յակոբայ վերջնոյ:

Յետ նորա յարկաւ քաղաքապետութիւն Բերայի ըստ թելադրութեանց ազդեցիկ Հայոց պապականաց յախշտակել իսպառ զգերեզմանատունն զայն յանուն եւ ի պէտս արուարձանին և քաղաքամասին Բերայի, ջան կալեալ նաեւ խափանել զթաղումն ննջեցելոց: Ծարուհակէին եւ խնդրեք պապականաց ընդ պաշտպանութեամբ պապազաւան գեսպանաց եւրոպականաց, իսկ Պատրիարքարան եւ Հայք Բերայի վիճէին ընդդէմ հակառակորդաց եւ ջանային ի պաշտպանութիւն ազգային սեփականութեան ըստ կալուածապրոց եւ ըստ դարաւոր տիրապետութեան:

Արժանայիշատակ Աւագ Քահանայ Զաքարիա Ս. Երրորդութեան Եկեղեցւոյ ժրջանութեամբ իմն եւ արթնութեամբ յաջողեալ էր տալ շրջապատել զգերեզմանատունն զայն յետ անցիցն որ յաւուրս սպարապետ Բիլգա փաշայի:

Այսպէս շարունակէր յաւուրս պատրիարքութեան Գէորգայ Արքեպիսկոպոսի:

Լուեալ Գէորգայ ի հաւատարիմ ազրերաց, զի ոմանք ի դիտաւորաց Հայոց, եւ յանուանէ Պողոս պէյ-ամիրայ Տատեան, խոստացեալ են ի գաղտնի տալ զբաժին ինչ ի գերեզմանատանէ ի նուէր և ի գոհացումն պապականաց, եւ զի ոմանք ի խոստամնատուաց էին անդամք Գերագոյն Ժողովոյ եւ ազգային վարչութեան Պատրիարքարանի, առանց հաղորդելոյ ումեք զմտադրութիւն իւր, ինքնին եւ ի գաղտնի ձեռնարկեաց պաշտպանել զգատ ազգային ըստ գիւնադիտութեան իւրոյ:

Փութացաւ դիմել նախ եւ քանից Մեծի Եպարքոսի եւ պաշտօնէի արտաքին գործոյ Թուրքիոյ, եւ սպա մի անգամ գեսպանի Գաղղիոյ պաշտպանի պապազաւանից:

Ի շարս պաշտպանողական բանից իւրոց ըստ դարաւոր իրաւաբանական նկատողութեանց եւ ըստ սեփականատիրութեան, առարկեաց առաջնոյ եւ դայս, եթէ դուք ինքնին խրախուսէք զհպատակ Օսմանեան պետութեան դիմել ի պաշտպանութիւն այլոց պետութեանց ի կարեւորագոյն խնդիրս՝ յորժամ յարգէք եւ կատարէք դանիրաւ պաշտպանութիւնս նոցա եւ առ այն հարկանէք զարդար իրա-

ւունս հպատակաց ձերոց, մինչ հարկ է արդիւնաւորել զհակառակն ի պաշտպանութիւն արդարութեան՝ իրաւանց եւ հպատակաց ձերոց:

Դիմէ եւ առ ի գեսպանն գաղղիական, զոր սիրաշահէ առարկեալ՝ եթէ սակաւաթիւ են պապազաւանք ի Հայոց, մինչ միլիոնաւոր մասն ստուարաթիւ կազմէ զհայ ազգ, եւ անշուշտ հաճոյ լինի Գաղղիական կայսրութեան շահել յաւէտ զհամակրութիւնս միլիոնաւոր Ազգի Հայոց, քան զ40 - 50 հազար պապականաց: Միանգամայն պարզէ Հայոց, քան զ40 - 50 հազար պապականաց: Միանգամայն պարզէ զարդար իրաւունս Հայոց եւ դանիրաւ պահանջ փոքրաթիւ ուծացելոց:

Այսպիսեօք միջոցօք եւ ճարտարամտութեամբ հնարէ զպաշտպանութիւնս եւ տայ դադարեցուցանել զվէճ հակառակորդաց, յորս մասնակցէր եւ պետութիւն Օսմանեան եւ հետեւէր առաւել սեփակամասնակցէր եւ պետութիւն Օսմանեան զօրանոցի կից եղելոյ եւ շարունակելոյ մինչեւ նել ինքեան յանուն զօրանոցի կից եղելոյ եւ շարունակելոյ մինչեւ ցայսօր:

Յետ շահելոյ դայս դատ՝ հաղորդէ Ս. Գէորգ Արքեպոս. Պատրիարք վարչական ժողովոյ Պատրիարքարանի, ընդ որ խոժոռին եւ վշտանան որք խոստմնատուք էին ի գաղտնի:

Ուստի աստ եւ անդ ամբաստանէին զպատրիարքը, առարկեալ դայս դործ, եթէ ինքնին գործէ ի գաղտնի եւ առանց հաղորդելոյ մեզ, իմա՝ ժողովոյն պատկանելոյ եւ առանց խնդրելոյ զաջակցութիւն մեր:

Յաւուր միում, յորժամ մեղադրէին զԳէորգ ըստ այսմ խնդրոյ ի Մեծ նոր խանի, Պէօյիւֆ Ենի խան) ուր էին կեդրոնք հայազն ի Պեժ նոր խանի, վաճառականաց եւ այլոց, լսէ ոմն յունագզի - հայադրամատեարց, վաճառականաց եւ այլոց, լսէ ոմն յունագզի - հայադրամատեարց, վաճառական Գատը գիւղացի (Բուղֆետուն) հոռոմ - դրամատէր - վաճառական Գատը գիւղացի (Բուղֆետուն) զտրտունջս հակառակորդաց, եւ հարցանէ զնոսա, «եթէ շահեցա՞ւ պատրիարք ձեր զգալան»: Պատասխանեն հաստատական այս՝: Ապա պատրիարք ձեր զգալան»: «առ ի՞նչ են ամբաստանութիւնք եւ ուրեմն, յաւելու ասել Յոյնն. «առ ի՞նչ են ամբաստանութիւնք եւ զժգոհութիւնք ձեր՝ եւ աղաղակք՝ ցորչափ վաստակեալ է զգալան: Եթէ լինէր նա պատրիարք ազգի մերում (Յունաց), պաշտէաք զնա»: Եթէ լինէր Յոյն դրամատէր Գատը գիւղացի զիսկական միտս Ոչ գիտէր Յոյն դրամատէր Գատը գիւղացի զիսկական միտս նոցա:

Ջան մեծ կալաւ Գէորգ Արքեպոս. ի բարեկարգել զգալոցս Մայրաքաղաքի, եւ կազմել զկրթական ծրագիր միօրինակ, զօրացուցանել զկրթութիւն մայրենի հանդերձ այլովք, եւ եկեղեցական երաժշտութեամբն: Որոյ վասն խորհրդակցէ, եւ ընդ ազգային խմբագիրս ոմանս: Որ եւ այս զրգուէր զնախանձ Սէթեան-Տէրոյնից կուսակցութեան:

Վարէր նախանձախնդրութեամբ առանձին եւ ընդ անձինս գիտնականս եւ խստիւ ընդ եկեղեցականս եւ ընդ պաշտօնեայս:

ԳԼՈՒԽ ԻԸ.

ՅԱՂԱԳՍ ԳԱԼՍՏԵԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԱՅ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿ ՄԻՔԱՅԵԼԻ ԼՕՌՈՒ ՄԵԼԻՔԵԱՆՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴԻՆ ՄԵԾԻ ՏՔՍԻ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉԻ ԵՒ ՍԱԿՍ Տ. ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԵՒ ԱՆՑԻՑ ԻՆՉ

Առ ի սիրաշահել զՀայս Թուրքիոյ ըստ քաղաքական-գիւտական նկատողութեանց եւ ակնկալութեանց, ջան կալաւ ոռուսական կառավարութիւն տալ ընտրել ի կաթողիկոս ամենայն Հայոց յետ հանգստեան Տ. Ներսիսի Ս. Հայրապետի Ազգի մերոյ զոմն յեպիսկոպոսաց Հայոց Թուրքիոյ, որոյ վասն բանակցելը ի գաղտնի ոռուսական դեսպան Կ. Պօլսոյ ընդ երեւելիս Հայոց: Եւ այսպէս ընտրեցաւ Տ. Մատթէոս Արքեպս. ի կաթողիկոս եւ սպասէր մնայր ասդ ի Կ. Պօլիս գալստեան Հրաւիրակաց ի Ս. Էջմիածնէ եւ պատուիրակի ոռուսական կառավարութեան, զորպիսի պաշտօն յանձնեալ էր պետութիւնն ոռուսաց զօրապետ Միքայէլի Լօռու-Մէլիքեանց առ ի հրապուրել զՀայս:

Եկեալ հասեալ էին Տ. Մակար Արքեպս. եւ Տ. Մկրտիչ վարդապետ Բարամեանց Հրաւիրակք ի Ս. Էջմիածնէ, եւ առեալ զհրաման Վեհ. Հայրապետի՝ դիմեալ էին յուխտ եւ յերկրպագութիւն Ս. անդեան տնօրինականաց ի Ս. Երուսաղէմ:

Եկն եւ Լօռու-Մէլիքեանց (Լօրիս Մէլիքօֆ) զօրապետ ի 20ն Ապրիլի 1859 ամի: Եւ իջեանեցաւ ի ոռուսական դեսպանատան:

Ամիրայք եւ գլխաւորք Հայոց Կ. Պօլսոյ՝ առ ի մեծարել եւ փառաւորել զՏ. Մատթէոս Կաթողիկոս եւ ի գլխացուցանել զյարարեութիւնս որ ընդ նորին Սրբութեան, խորհրդակցեալ առթիւ գալստեան զօրապետ Միքայէլի, տեղափոխեցին զՏ. Մատթէոս Կաթողիկոս ի Միջագեղջէ ի Բերա, յատկացուցեալ ի բնակութիւն Նորին Սրբութեան զհոյակապ ապարանս Պօղոս Ամիրայի Տատեան վառօղակատի որ ի Թօղրու Եօլ, մերձ Եկեղեցւոյ Ս. Երրորդութեան:

Յետ առուրց ինչ եկն Լօռու-Մէլիքեանց եւ ներկայացաւ առ Գէորգ Արքեպս. Պատրիարք ի Պատրիարքարանի, եւ ետես զմեծարանս վայելուչս:

Տեսակցեալ սակաւուք ընդ միմեանս, առեալ Ս. Պատրիարքի տարաւ զօրապետ Միքայէլ զպատուիրակ ոռուս. կառավարութեան եւ ներկայացոյց Վեհ. Տ. Մատթէոս Կաթողիկոսի ի Միջագեղջ արժանաւոր իմն հանդիսիւ, նախ քան զտեղափոխելն ի Բերա:

Յետ տալոյ Ս. Պատրիարքի զփառաւոր իմն կոչունս ի պատիւ

զօրապետի յիշելոյ, սկսաւ ողբերութիւն մեծ եւ մրցումն ի գլխաւորս Ազգի մերոյ առ ի պատուել զԼօռու-Մէլիքեան:

Չայտու միջոցաւ եկն եւ Կոստանդին Մեծ դուքս եղբայր Օգոստ. Աղեքսանդր Բ. Կայսեր ոռուսաց ի Կ. Պօլիս (ի 28 Մայիս 1850), զորոյ զգալուստ շնորհաւորեցին Տ. Մատթէոս Ս. Կաթողիկոս եւ Ս. Գէորգ Արքեպս. Պատրիարք ըստ արժանւոյն:

Մի գկնի միոյ յաճախեցին առիթք ողբերութեանց Հայոց Կ. Պօլսոյ, եւ հանդէսք նշանաւորք, յորպիսիս եղեւ նշանաւոր՝ եզական եւ պատմական նաեւ հանդէս շքեղ յուղարկաւորութեան թաղման Մաքսուտ ամիրայի Սարիմեան վախճանելոյ ի 29-30 Մայիսի, ներկայութեամբ Վեհ. Հայրապետի, և ներկայ և նախկին պատրիարքաց եւ ալոյց, թէպէտ անձրեւ յորդահոս վրդովէր զհանդէս յուղարկաւորութեան:

Ռուսական կառավարութիւն ջանայր ի գաղտնի փութացուցանել զչու Վեհ. Կաթողիկոսի ի Ս. Էջմիածին՝ սղոթեալ ոմանց ազդեցիկ անձանց մերազնեաց, որք հետեւէին հաճոյանալ միշտ եւ հանապազ ոռուսական կառավարութեան, ակնկալէին տխրոսից եւ արտօնութեանց եւ չքանչանից, որպէս եւ ինդրեալ էին լ Տ. Մատթէոս Կաթողիկոսէ, թէպէտ սա կամէր զանդաղել ի չու, եւ յուզէր զինդիւրս ինչ:

ԳԼՈՒԽ ԻԹ.

ՅԱՂԱԳՍ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԵԱՆՑ ԱՌ ՎԵՀ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Որպէս տեսցի ի ստորեւ ի վերջ այսմ գլխոյ ի պատճէնէ ծրագրի, Տ. Մատթէոս Կաթողիկոս եթէ ըստ գաղտնածածուկ նախատակաց իւրոց եւ եթէ խրախուսեալ յանփորձ անձանց ոմանց, մանատակաւ ի Յովհաննէս վարդապետէ Սէթեան եւ ի Յովհաննէս պէյէ Տատեան վառօղակատէ, ջան կալաւ տալ ծրագրել զառաջարկութիւն ինչ իրր ի պէտս եւ ի պայծառութիւն Եկեղեցւոյ Հայաստանեայց, զոր եւ ստորագրեալ ոչ սակաւ Հայոց ի Կ. Պօլսոյ եւ ի դաւառաց, Պատներկայացուցին իրրեւ զհանրագիր առ Տ. Գէորգ Արքեպս. Պատներկարք, որպէս զի Ազգային Վարչութեամբ խորհրդակցեալ ինդրեսցեն ի Ս. Կաթողիկոսէ կարգել ասդ ի Կ. Պօլիս զոմն յեպիսկոպոսաց ի Ս. Կաթողիկոսական ներկայացուցիչ, կազմել զժողով Մայր Աթոռոյ ի կաթողիկոսական ներկայացուցիչ, զվարչական եկեղեցական ի Կարին առ ի բարեփոխել զամուսնական, զվարչական եւ զայլ օրէնս ինչ, հաստատել զկարգապահական կանոնս ի պէտս եկեղեցական պաշտօնէից եւ կարգել զնոր բարեկարգութիւնս ի պէտս Ազգի եւ Եկեղեցւոյ:

Յանձնէ Տ. Գէորգ Արքեպս. Պատրիարք խորհրդակցութեան եւ որոշման Հոգեւորական եւ Գերագոյն Ժողովոց զհանրագիր ժողովըրդական եւ զառաջարկութիւնդ, միանգամայն տայ զխորհուրդս՝ ըզգուշանալ զարդիս յեկեղեցական ժողովոց եւ ի հնաւանդ օրինացն եւ յամուսնական կանոնացն փոփոխութեանց, խնդրել ի նորընտիր Ս. Կաթողիկոսէ՝ յետ օժմանն առնուլ յուշադրութիւն զժրագիրն բարեփոխեալ, յետ կարեւոր փորձառութեանց եւ խորհրդակցութեանց անդ ի Ս. Էջմիածին ընդ խոհեմ, հեռատես, հմուտ եւ եկեղեցասէր եկեղեցականացն բարձրաստիճանաց եւ փորձառուից եւ ըստ այնմ անօրինել զոր ինչ արժան իցէ:

Իսկ Հոգեւոր եւ Գերագոյն Ժողովք կարգեն զՄասնաժողով յատուկ, որ բարեփոխէ եւ համառօտէ զժրագիրդ առաջարկութեանց, եւ ուր ուրեմն օրաձգէ եւ թողու յանորոշ վիճակի:

Ընդ այսպիսի հետեւանս խոտուեալ Տ. Մատթէոս Կաթողիկոսի եւ կուսակցացն՝ զբզոնն զդժգոհութիւն ժողովրդականն ընդ դէմ Գէորգայ, հնարեալ զստապատիր տարածայնութիւնս, միանգամայն փութայր այլեւս Տ. Մատթէոս Կաթողիկոս մեկնել աստի ի Կ. Պօլսոյ եւ երթալ ի Ս. Էջմիածին՝ թողեալ զորոմս խռովութեանց:

Հակառակորդք յեղաշրջեալ զիմաստս առաջարկութեան եւ վարագորեալ խարդաւանօք զիսկական նպատակ եւ զջանսն, առ ի զբզոնել զՀայս, տարածայնեն տակաւ առ տակաւ, իբր զի Գէորգ Արքեպս. Պատրիարք եւ զօրապետ Միքայէլ Դանիէլեան Լօռու Մէլիքեան միարանեալ ի գաղտնի՝ պատրաստեն զժրագիր եւ զառաջարկութիւն միարանութեան ընդ յունական - ռուսական եկեղեցոյ, եւ այսպէս շարժեն զգայթակղութիւնս սկսեալ ի 1858 թուականէ եւ հասուցանեն զարձագանս ստապատիր տարածայնութեանցն մինչեւ յօտարս եւ ի հեռաւորս: Զորպիսի գայթակղութիւնս արծարծէին մերթ հակառակորդք Գէորգայ մինչեւ ցամա 1870 առթիւ կաթողիկոսական ընտրութեան ի 1864-5 ամս, եւ ի պատճառս այլոց ինդրոց:

Օրինակեմք ասդէն զերկուս յօդուածս ի Մասեաց Աղաւնոյ հրատարակելոյ ի Թէոդոսիա յապացուցութիւն բանից մերոց եւ ի յանդիմանութիւն անխիղճ հակառակորդաց:

Վերնագիր առաջնոյ յօդուածոյ է այս. Լօռու Մէլիքեանց զօրավարին նամակը.

«Քաջ եւ անուանի Հայկազն զօրապետը Միքայէլ Տարիէլեան Լոռու-Մէլիքեանց (որ եւ Լորիս-Մէլիքով) գեղեցիկ եւ զօրաւոր պատասխանով մը հերքեր է Օղեսայի ռուս լրագրոյն՝ իրեն այս «տարի դէպի Պօլիս ըրած ճանապարհորդութեանը համար տուած

«գոնհակահան լուրերը: Արդէն Մասիսը Պօլսոյ անդղիական լրագրի «տուած յեղակարծ տեղեկութիւններուն անհիմն լինելը ցուցուցեր «էր, մեր Ծիածանն ալ իր ուսերէն մասին մէջ Օղեսայի լրագրոյն «այս կողմանէ ըրած սխալները քանի մը խօսքով ուղղեր էր, բայց «մեծ ուրախութիւն է մեզի տեսնելը որ քաջ զօրապետը ինքնին պար- «ղեր է ճշմարտութիւնը ի յանդիմանութիւն խռովասէր կամ չարա- «միտ հակառակորդաց: Դիտմամբ կը բանեցնեմք հոս խռովասէր բա- «ուր, վասն զի յայտնի կը տեսնեմք որ այն անդղիական լրագիրը եւ «Օղէսայի թղթակիցը Ազգին մէջ նոր խռովութիւն եւ անհիմն կաս- «կածներ սերմանելու մտքով կը հրատարակեն այսպիսի լուրերը: Օ- «րինակի համար, Հայոց եւ Յունաց Պատրիարքները քրիստոնէական «քաղաքավարութեամբ իրարու հետ յանկարծ կը տեսնուին, - իսկոյն «պատրաստ են սլապականն ու բողոքականը Հայուն ականջէն վար «ըսելու, ոմանք նաեւ իրենց լրագրացը մէջ հրատարակելու, թէ Յու- «նաց միտքը Հայերը յոյն դարձնելն է...: Բայց փա՞ռք Աստծոյ որ «Հայն ալ խելք ունի, եւ Զմիւռնիոյ Արշալոյսիս պէս ու Պօլսոյ Մա- «սիսիս պէս լրագիրները, եւս եւ մանաւանդ ջատագուինքն ալ պա- «կաս չեն, որ կարող են իրենց Ազգին պատիւը արժանաւորապէս «պահպանել ու պաշտպանել: Լոռու Մէլիքեանց զօրավարին նամակը «ասա միայն անոր համար կը թարգմանեմք ու կը հրատարակեմք «հոս որ մեր ազգութեան թշնամիներն եւս, որ ուսերէն բնագիրը «չեն հասկնար, կարդան ու խրատուին:

« Պարոն. - Զեր հրատարակած Օղեսայի լրագրոյն 46 թուահա- « մարին մէջ Պօլսոյ թղթակցէդ նամակէն առնուած լուր մը կարդա- « ցի Մելիսով ըսուած զօրավարի մը վրայ: Եւ որովհետեւ Կովկա- « սու երկիրը Մելիսով զօրավար չկայ, իսկ ի Պօլիս այն ատենները « ես կայի Լորիս-Մելիքովս, անոր համար տեղեկութիւնը իմ վրաս « կառնում:

« Աչքիս չէի ուղեր հաւատալ՝ երբ կարդացի այն թուահամարին « մէջ որ իբր թէ իմ Տաճկաստան երթալուս նպատակն է եղեր եր- « կու եկեղեցեաց մէջ միարանութիւն ընել... Յետոյ, առաջին լուրը « փոխելով, եւ իբրեւ անոր սխալը շտկելու մտքով, ձեր լրագրոյն « 52 թուահամարին մէջ տպուած է թէ ես կաշխատեմ եղեր էջմիա- « ծընի եւ վանայ Կաթողիկոսութիւնները միաւորել, այնպէս որ « առաջինին արուի բոլոր Հայոց ազգին վրայ հոգեւորական իշխա- « նութիւնը, իսկ երկրորդին բոլոր աշխարհական իշխանութիւնը: - « Շատ այլանդակ մտածութիւն. մի՞թէ կարելի բան է որ օտար տէ- « րութեան հպատակ մարդ մը ուրիշ թագաւորութեան տակ եղած « պատրիարքութեան մը աշխարհական գործերուն խառնուի »:

« Իմ սիրտս ամենեւին չցաւիր այսպիսի լուրերու վրայ, վասն
 « զի խելացի մարդը չհաւտար անոնց, եւ դիտէ թէ անոնք ամենեւին
 « չեն յարմարիր՝ ոչ իմ վիճակիս, եւ ոչ ունեցած ջերմեռանդութեա-
 « նըս այն դաւանութեան, յորում ծնած եմ, բայց այս անհիմն լուրերը
 « անտարակոյս իմ հաւատակից եղբարցս սրտին մէջ զանազան կաս-
 « կածներ պիտի ձգեն՝ թէ հոս Ռուսաստան եւ թէ Տաճկաստան:
 « Հրամանքդ լաւ պէտք է հասկնաս, պարոն խմբադիր, թէ ես ամե-
 « նեւին յօժարութիւն չունիմ որ իմ անունովս եւ ոչ ամենափոքր բա-
 « րոյական անհանգստութիւն մը պատճառէ իմ հաւատակիցներուն՝
 « ձեր թղթակցին անխոհեմութիւնը, եւ ահա անոր համար գրիչը
 « կառնեմ որ եղածը ճշմարտութեամբ պատմեմ ու անհիմն մեկնա-
 « բարանութիւնները հերքեմ:»

« Անցած տարի՝ ես իրբեւ լուսաւորչական հայ՝ յուղարկեցայ
 « Կոստանդնուպօլիս ընդ առաջ եւ յուղեկցութիւն ի Կովկաս նոր-
 « ընտիր կաթողիկոսին Ամենայն Հայոց Մատթէոսի, որով մեր տէ-
 « բութիւնը փափաքեցաւ պատիւ ընել Վեհափառ Հայրապետին աս-
 « տիճանին եւ Աղգիս Հայոց. իսկ այս տարի զնացի հոն՝ մեր երկրէն
 « փոխադրուող Չերքէզներուն գործերը կարգի դնելու համար, եւ ոչ
 « թէ եկեղեցական ո՛րեւիցէ խնդրոյ վրայ խօսելու մտքով:»

« Ահա այսչափ բան միայն կրնար եւ պարտական էր ըսել ձեր
 « թղթակիցը իմ Պօլիս երթալու վրայ: Չեմ ուզեր քննութեան ել-
 « նել թէ ինչ աղբիւրներէ կառնու նա ձեզի տւած տեղեկութիւնները,
 « արդեօք Տաճկաստանի այլալեզու շուկաներէն թէ հոն տպուող
 « օտարազգի լրագիրներէն, որ վաղուց ծանօթ են մեզի իրենց ան-
 « ճոռնի սուտերովը եւ մեր կողմերուն վրայ ունեցած կատարեալ
 « տգիտութեամբը: Ինչ եւ իցէ, կը խնդրեմ պարոն՝ որ այս լուրերուն
 « ստոյգ միտքը դուրս հանես եւ այս նամակս լրագրոյդ մէջ հրա-
 « տարակես: Մնամ... եւ այլն:

Միքայէլ Լուու - Մելիքեանց»

(1860, Յունիս 14, Մասեաց Աղաւնի, էրես 120)

Դարձեալ ի նորին հանդիսի, ընդ վերնագրովս Փարիզ լրագրին տեղեկութիւնները:

« Փարիզ անունով լրագիրը իւր անքաղաքագէտ եւ անդգոյձ
 « ոճոյն պատճառաւ չկարենալով կանոնաւոր կերպով մտնել Ռու-
 « սաստան, անոր քանի մը յօդուածներուն օրինակները ատեն ատեն
 « կհասնին մեր ձեռքը, եւ օրէ օր աւելի յայտնի կընեն մեզի անոր
 « խեղճ խմբագրութեանը պէս՝ թղթակիցներուն ու խմբագիրներուն
 « ալ խղճալի մարդիկ լինելը: Խղճալի կըսեմք՝ նոցա ցուցուցած

« միամտութեանն ու տգիտութեանը համար, իսկ եթէ չարամտու-
 « թեամբ է գրածնին, ինչպէս որ բաւական տեղի կայ կասկածելու,
 « պէտք է ըսեմք նաեւ ատեղի եւ զգուշալի...»

« Մենք ուզելով փոքր ինչ պատիւ ընել լրագրին, եւ հերքել ա-
 « նոր թղթակցութիւններուն անհիմն ու անպատկառ զրուցուածքը,
 « որով կպնդեն որ իբր թէ հայագգի գորավար մը եւ քանի մը ագ-
 « գադաւ (լրագրին տուած յիշոցքն է) ամիրաներ ու եկեղեցական-
 « ներ՝ միտք ու ջանք ունեցեր են մօտ տարիներս՝ Հայոց եւ Յու-
 « նաց եկեղեցիները միացնելու, կըսեմք թէ այն դիտաւորութիւնը
 « կամ ջանքը սոսկ եղջերուաքաղ կամ խրտուիլակ մըն է՝ մեր բա-
 « ըմխտ ժողովուրդները չփօթելու մտքով՝ քանի մը չարամիտներէ
 « հնարուած, ու Փարիզ անուանեալ լրագրին մէջ միամտութեամբ
 « կամ չարութեամբ հրատարակուած:»

« Բայց որովհետեւ այս խօսքն ալ կըսէ լրագիրը յանդգնաբար,
 « - այսինքն «Երկու տողին մեծարան սնոտեաց բարբառոջ» հեղի-
 « նակին ոճովը, թերեւս եւ բերնովը, թէ «Եթէ նորէն տարածեն
 « այդ սուտ խօսքերը թէ բնաւ Յունաց եկեղեցւոյն հետ միաւորու-
 « թեան խօսք չէ եղած, այն ժամանակ ինքը Վեհ. Ս. Կաթողիկո-
 « սը պիտի ստիպի չըջարերական հանել ու եղելութիւնը մի ըստ
 « միովէ պատմել», ահա մեք ստուգիւ գիտնալով որ Վեհափառ Կա-
 « թողիկոսին անունը այս բանին մէջ գուր տեղը եւ յանդգնաբար
 « մէջ բերուած է, - ահա մեք՝ կըսեմք եւ կը կրկնեմք թէ ԲՆԱԻ
 « ՅՈՒՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԵՏ ՄԻԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԽՕՍԳ ՉԷ ԵՂԱՅ:
 « Տեսնենք թէ երբ պիտի հրատարակէ անուանեալ Փարիզը այն
 « չըջարերականը գոր ինքը կըսէ թէ Վեհափառ Կաթողիկոսը հա-
 « նելու պիտի ստիպի (չգիտեմք յու՞մէ):»

« Արդեօք բարեսէր ընթերցողք աւելի իրաւունք չունի՞ն յուսա-
 « լու որ Սրբազան Կաթողիկոսը այդպիսի լիբր եւ խոսվարար լրա-
 « գրաց դէմ կամենայ հանել վաղ կամ անազան իրեն պատկառե-
 « լի չըջարերականը:»

« Այսպիսի լրագրաց մէկն է ահա նաև Պօլսոյ Մեղու անուանեալ
 « անոճ եւ չարաթոյն հանդէսը, որ - ինչպէս այդ օրերը ստուգե-
 « ցինք - երդում ըրեր է եղէր որ ազատութեամբ (այսինքն լրբու-
 « թեամբ) գիր անցընէ ու հրատարակէ, առանց բնաւ քննելու, ո՛ր-
 « եւիցէ չարախօսութիւն եւ զրպարտութիւն, մանաւանդ թէ ընդ
 « դէմ եկեղեցականաց Աղգիս առհասարակ՝ հեռաւորաց եւ մերձա-
 « ւորաց, կենդանեաց եւ ննջեցելոց:»

(Մասեաց Աղաւնի, Թէոդոսիա, 1861, Մայիս 10, էրես 120).

Այսպէս ուրեմն ոչ դադարէին հակառակորդք անբարեմիտք յար-

ծարձելոյ զըրպարութիւնս այսպիսիս համաձայն նպատակաց իւրեանց՝ քմահաճոյցից եւ շահուցն յորժամ գտանէին դառիթս կամ պէտըս ունէին, զոր ոչ մոռանային փորձել մանաւանդ եւ յաւէտ ընդ դէմ Գէորգայ, որպէս փորձեցին անբարեմիտք առթիւ կաթուղիկոսական ընտրութեան յամսն Տեառն 1844-1866:

Վասն որոյ առիթ պատեհ եղեւ եւ բարեք արար, զի Տ. Գէորգ Ս. Արքեպիսկոպոս երբեմն Պատրիարք բողոք կալաւ առ Տ. Պողոս Արքեպս. Պատրիարք եւ եթող գհատուած ինչ պատմական եւ կարեւորագոյն, որպէս տեսցի ի պատճենէ բողոքագրոյն զոր ամփոփեմք աստանօք ի տեղեկութիւն ապագայից եւ ի դուզնաքեայ բացատրութիւն երկուց յօղուածոցդ եւ տարածանութեանց:

« Առ Ամենապատիւ Ս. Պատրիարք, առ Աստուածասէր գերանդամս Խառն ժողովոյ եւ առ Ազգ. Երեսփոխան յարզելիս »:

« Ամենապատիւ Սրբազան Եղբայր ի Քրիստոս: Տ. Պողոս Արքեպիսկոպոս, Պատրիարք Հայոց Կոստանդնուպոլսոյ

« Որ ի հոգեւոր ծառայութիւն Ազգին ուխտէ զանձն առաջի Աստուծոյ, նուիրական պարտաւորութիւն է նմին ըստ անստերիւր ճշմարտութեան եւ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ ծառայել սիրով յօղուտ Ազգին ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ, եւ համբերել տանել մանաւանդ հալածանաց եւ նախատանաց՝ որպէս արժանն է ծառայի եւ աշակերտի Քրիստոսի: Ուստի եւ մեք ջան ի դործ արկեալ յամենայն ըստ այսմ կատարել զպարտաւորութիւնս մեր զայս զմեծ՝ յիրաւի համբերել համբերէաք առանց վրէժիւնդութեան եւ ոխակալութեան, որ ինչ նախատինք եւ անուանարկ քարածգութիւնք զմէնջ լինէին երբեմն յամանց, մինչեւ անգամ պատասխանուոյ արժանի առնել չարտրժելով՝ ներողամիտ իսկ լինէաք այնպիսեացն »:

« Եւ թէպէտ ի 104 թիւն Մանգուլէի ի դէպ եղեւ մեղ ի շարս եօթն ընտրելի եպիսկոպոսաց ընթեռնուլ անպատեհս եւ զմէնջ, զուցէ առաւելադոյն քան զայլոցն, սակայն ոչ փոյթ արարաք, զի զբաղեալ զուրով ի շինութեան զպրօցիս եւ սրբոյ եկեղեցւոյս եւ այլոց ազգային բարձրախումբ գործոց հրկիզեալ ժողովրդեանս (Պրուսայու)՝ չունէաք երբեք ժամանակ եւ միջոց ունին մատուցանել այնպիսի աղճատարանութեանց: Եւ թէ զինչ ինչ գրեալ է իցէ զմէնջ Ծիլն Աւարայրի՝ չկարացաք իմանալ զայնս առ ի չգոյժ յիշեալ օրագրին ի քաղաքս »:

« Բայց քանզի անստորագիր քննիչն այն հանգամանաց եպիսկոպոսաց յայտնագոյնս բացատրեալ է գնոյն բան «Աւարայրի Ծիլն» ի 129 թիւն «Մանգուլէի», վասն որոյ ի տեսանել մեր զայն

« եւ յընթեռնուլ՝ վիրաւորեցաք յոյժ, ոչ առ այլ միտս՝ որպէս թէ « վրիպեալ գտաք ի յուսոյ եւ այլն, այլ զի եպիսկոպոսական սուրբ « կարգն լեալ էր խաղալիկ ի ձեռս այնպիսեաց, որ ազգասիրական « գիմակաւ յանդգնէին զըպարտել յանիրաւի զպաշտօնեայս Տեառն « մերոյ Յիսուսի Քրիստոսի, որոյ իբրեւ անարժան սպասաւոր փու- « թացայ յայս նուազ բողոքել առ Սրբազնութիւն ձեր եւ առ արդա- « բաղատ անդամս Խառն ժողովոյ Ձերդ միջոցաւ, որպէս զի որով « եղանակաւ եթէ արժան իցէ՝ բարեհաճեալք քննելով զբանս զըր- « պարտութեանց ի վեր ածել զճշմարտութիւնս »:

« Ձնոյն բան բացատրութեան զըպարտչին այնորիկ անշուշտ ըն- « թերեցալ է եւ ձերդ Սրբազնութիւն, որով ընդհանուր աշխարհի « յայտ առնէր զմէնջ լինել անհաւատարիմ Սրբոյ Եկեղեցւոյ եւ Ազ- « գին, որպէս թէ առ պատրիարքութեամբ մերով միացեալ իցեմք « ընդ ժէնէրալ Մէլլիքովն առնել փոփոխութիւն ինչ ի ճշմարիտ դա- « ւանութիւնս մեր եւ այլն, եւ այլն, բայց այս բան՝ զոր անստ- « րագիր նամակն ի բերանոյ «Ծիլն Աւարայրի» խօսի՝ սուտ է բո- « լորովին եւ անիրաւ զըպարտութիւն: Այդպիսի առաջարկութեանս « ինդիր ոչ երբեք եղեալ է, այլ այն ի կողմանէ Ազգայնոց առ մեղ « առ պատրիարքական գիււանն մատուցաւ խորհրդով եւ զիտութեամբ « հանդուցեալ Ս. Կաթուղիկոսին, զոր եւ մեք առաջի եղաք յայն- « ժամ անդամոց Հոգեւոր եւ Գերագոյն ժողովոց ի քննութիւն, եւ « այն իսկ գծկամակութեամբ, մինչեւ առիթ լինելոյ ընդ աղամբ « հայելոյ ի մեղ Հանդուցելոյն: Խորհուրդ ի մէջ ասեալ կրկին ժո- « ղովոցն Յանձնաժողով իմն հաստատեցին, յորում յետ ի սրբազը- « րութեան ածելոյ գնոյն տետրն առաջարկութեան իբրեւ ներկայա- « ցուցին մեզ՝ բաղում ինչ եւ մեք՝ յապաւեցաք անտի: Ապա յընդու- « նել եւ ի ստորագրել յիշեալ կրկին ժողովոց՝ մեք իսկ ստորագը- « րեցաք ի հաստատութիւն: Ահա, այս է զորմէ ծածուկ դաշնագը- « րութիւն ասէ լինել: Ձի որ ինչ ազգային ժողովով քննեալ, սրբա- « զըրեալ եւ ստորագրեալ է, զիա՞րդ կարէ ծածուկ դաշնագրութիւն: « կոչել: Ուրեմն սուտ է այս բան, եւ բոլորովին զըպարտութիւն: « Նա զի ի տետրն յայն չերեւէին երբեք հետք կամ նշմարանք ան- « դամ կրօնափոխութեան: Բայց եթէ ի թիւր մեկնութիւնս զառա- « ծանիցի ոք՝ չունիմք ինչ ասել առ այն, զի եթէ ոչ թիւր մեկնէին « եւ բանք Սրբոյ Աւետարանին, չերեւէին երբեք զանազան ազանդա- « ւորք ի միջի »:

« Ապաքէն վկայեցեն ստութեան Աւարայրի Ծիլին եւ հետեւո- « զաց բանի նորա անդամք հոգեւորական եւ Գերագոյն ժողովոց « այնր ժամանակի, յորոց եթէ ոմանք կնքեցին զմահկանացու ըն-

« Թացս կենաց իւրեանց , այլ բարերազգարար բազումք վայելեն ի
 « կենդանութեան , զորոց անուանս չէ հարկ զրել մի առ մի , ըստ
 « որում ներկայացուցէ զայնս արձանազրութիւն պատրիարքական
 « զիւանին» :

« Եւ յիրաւի ասելով , զարձեալ անվայել համարէաք մեզ , նա-
 « մանաւանդ զայսու միջոցաւ զրել ձեզ զայսմ ամենայնէ , որպէս զի
 « մի՛ կարծիս զմէնջ տայցեմք , իբր առ վրիպելոյ յուսոյն մերոյ մը-
 « տարերեալ ի բողոքս յայս , ոչ ինչ փոյթ է մեզ եւ չկարէ դէթ եւ
 « դուզնաքեայցաւ իմն պատճառել , զի ոչ բնաւ թեկն ածեմք զա-
 « ւազութեանց եւ զիշխանութեանց , այլ վասն յանիրաւի անուա-
 « նարկութեանս պարտաւորիմք բողոքել : Առ իմէ՞ ալքքան զրպար-
 « տութիւն զմէնջ , ո՞չ ապաքէն առ նախանձու եւ չարամտութեան .
 « ա՞յս իցէ վարձ հաւատարիմ ծառայութեանս մերոյ զոր ծառայե-
 « ցաք Ս . Եկեղեցւոյ եւ Ազգին իմոյ սիրայնոյ , եւ ընդէ՞ր լիցի
 « զծառայութիւն մեր համարել մատնութիւն , զհարազատութիւն մեր
 « զրել անհարազատութիւն , եւ այսպէս նշաւակ առնել զանուն մեր
 « ընդ ամենայն աշխարհ : Քա՛ւ՛ ասել զանձնէս կատարեալ ըստ ա-
 « մենայն մասին , զի չէ ի մեզ ողի հրեշտակաց , այլ յամենայնի
 « գուն զործեցաք եւ զործեմ ըստ մերովսանն այնպէս գնալ , որպէս
 « արժանն է հաւատարիմ պաշտօնէի Ս . Եկեղեցւոյ Քրիստոսի , բայց
 « այս յանհարինս խոցեալ եւ կարելիեր վշտացուցեալ զսիրտ մեր
 « եւ հոգի՛ տրտմեցաք յոյժ յոյժ , զոր չէ զբշիւ նկարագրել ըստ ար-
 « ժանուոյն աստանոր» :

« Արդ ոչ կամելով անստորագիր նամակազրոյղին եւ «Աւարայ-
 « րի Ծիլ»-ին զրպարտութեանց ի ձեռն այլոց օրագրաց առնել պա-
 « տասխանի , ահա իբրեւ Եպիսկոպոս Ազգին բողոքեմ սրբազնութեան
 « ձերում , որ ունեքդ այսօր զպատիւ Պատրիարքական Իշխանութեան
 « Հայոց հպատակելոց Օսմանեան մեծագոր Տէրութեանս , եւ ընդ
 « ձեզ՝ Մեծ . անդամոց Երեսփ . Ժողովոյն , զի խառն Ժողովով եւ
 « կամ յատուկ Յանձնաժողովի ի քննութեան առեալ զբանս
 « յիշեալ զրպարտացն , շնորհ արասջիք ի վեր հանել զճշմարտու-
 « թիւն եւ զարդարութիւն : Զի եթէ իրաւացի իցեն բանք Ծիլին եւ
 « արբանեկաց դորա՛ ես ինքնին ամենայն դովութեամբ զտայց չը-
 « նորհազարդ ջանից նոցա , զի ջանան հրապարակաւ ծանուցանել
 « զվնասակարս Սրբոյ Եկեղեցւոյ եւ Ազգին : Ապա թէ ոչ՝ քերեսցի
 « այս աղտ ի մէնջ հրապարակաւ եւ պաշտօնական կերպիւ , եւ
 « յայտնի եղիցի զի նոքին ինքեանք զրպարտիչքն են մատնիչ Ազգին ,
 « խանգարիչք Սրբոյ Եկեղեցւոյ օրինացն , որ առ սէր անձնական
 « օգտի իւրեանց ոչ՛խոզձեն բնաւ խաղալիկ առնել ի ձեռս իւրեանց
 « զեկեղեցին եւ զեկեղեցականս , մինչեւ զսուրբ հաւատս անդամ» :

« Ի սէր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զարձեալ խնդրելով
 « ի Զերդ Սրբազնութենէ եւ ի մեծապատիւ անդամոց Խառն եւ Ե-
 « բեափ . Ժողովոց զատ առնել ընդ մեզ եւ ընդ զրպարտիչս մեր , մը-
 « նամք Սրբոյ Եկեղեցւոյ պայծառութեան յաւէտ ջանախնդիր , յա-
 « ուջաղիմութեան Ազգիս հոգեառնջ խանդակաթ , եւ երջանիկ բա-
 « բեմասնութեանց Սրբազնութեան Զերոյ ցանկացոյ եւ աղօթարար
 « նախկին Պ . Կ . Պօլսոյ

Գէորգ Արքեպիսկոպոս Պրուսայոյ» :

1866 Յուլիս 30 , ի Պրուսա .

Հակառակ այսմ խնդրոյ Տ . Գէորգայ Եպիսի ոչ կարգեաց Պատ-
 « րիարքարան զքննութիւն եւ ոչ հրատարակեաց զհերքումն պաշտօնա-
 « կան , դուցէ ոչ դատել ի պատրիարքական զիւանատան զարձանա-
 « զրութիւն եւ զծրագիր առաջարկութեան , որպէս եւ մեք հետազօ-
 « տեցաք բազմօք առ ի առնուլ զպատճէնն , եւ ոչ դտաք , մանաւանդ
 « ընկալաք զպաշտօնական պատասխանինս , զի անհետացեալ են համօ-
 « բէն ամենայն արձանազրութիւնք եւ զիւանական դործք Պատրիար-
 « քարանի եղեալքն նախքան զհաստատութիւն Ազգ . Սահմանադրու-
 « թեան , թէպէտ կասկածիմք մեք եւ ընդ պահպանութեանս կարեւոր
 « դործոց եւ արձանազրութեանց՝ թղթոց եւ որոշմանց եւ այլոց եւ
 « այլոց ձեռագիր մնացելոց յաւուրս Սահմանադրական վարչութեան ,
 « եւ ունեմք զապացոյցս :

Արդ գտեալ ի մէջ թղթոց Հոգելոյս Հայրապետի Տ . Գէորգայ
 Դ . զպատճէն առաջարկութեան ըստ կրճատեալ ծրագրի , բաւական
 համարեմք զոր զրեցաք , եւ յաւելումք աստ զոր գտաք .

Ահաւաստիկ :

« Սրբազան Մատթէոս Ա . Կաթողիկոսի Հրաւիրակ եկած Մա-
 « կար Եպս . եւ Մկրտիչ վարդապետ (Բարսեան) Միաբանի Ս . Էջ-
 « միածնի եւ ձենեալ մայիօր Միքայէլ Լօռու Մեյլիքեան Հայկա-
 « զուն զօրապետն Կովկասու բանակին ուսաց եւ իւր թիկնապահ
 « հաղարապետ Միքայէլ Միոնսարեան , եւ խորհրդական Ղորչազօֆ
 « ստեփանապոլին , որք 1859 Ապրիլ 20ին խրկրված էին ի կողմանէ
 « Աղեքսանդր Բ . Կայսեր , եւ ի կողմանէ Պարեանազլաքի (Պարեա-
 « թինսքի) ընդհանուր կուսակալին Կովկասու , յայնժամ Ազգայինքս
 « որ ի կոստանդնուպոլիս միաբանեալ Ազգային Ժողովով խորհեալ
 « պատշաճ համարեցաւ (ն) խնդիր եւ յայտարարութիւն մի առաքել
 « ի Ս . Սինօզն որ ի Մայր Աթոռն Ս . Էջմիածին : Եւ 1859 Մայիս
 « 11ին գրեցաւ ըստ ներքոյ զրեալ օրինակին , եւ Մայիս 15 յանձնե-
 « ցաւ Լօռու Մեյլիքեան զօրապետին , որպէս զի անկորուստ մատուս-
 « ցէ Սինօզին , եւ զպատշաճն ըստ իւրումն խոհականութեանն տնօ-

« րինեցեց յօղուս Սր. Եկեղեցւոյ եւ Աղլին համայն : Ահա օրինակն :
 « Խնդիր եւ առաջարկութիւն ի դիմաց Հոգեւորականաց եւ ժո-
 « ղովրդականաց բնակելոցս ի Տաճկաստան առ Սր. Սինօզն Արա-
 « բատեան Մայր Աթոռոյ Սր. Էջմիածնի, որպէս զի յարարեցութիւն
 « մեր ընդ Սրբոյ Աթոռոյն որ առ ժամանակ մի դադարեալ էր (ի
 « 1827է ց1842-6. Վ.Ն.Մ.) սկիզբն առցէ ի շարունակել անընդմէջ
 « եւ սիրտանու (°°), որպէս եւ էրն կանխաւ :

« Ա. - Ընտրութիւն Կաթողիկոս Հայրապետի Հայոց, յորժամ պա-
 « բապեցէ Աթոռն, լինիցի ըստ Սահմանադրութեանն որ հաստատե-
 « ցաւ առ Հայրապետութեամբ Տ. Տ. Յովհաննու Կարբեցւոյ (1834-
 « 6. Վ.Ն.Մ.) :

« Բ. - Սրբազան Սինօզն Սր. Էջմիածնի ունիցէ զերկոտասան Ան-
 « դամս, որոց վեցն իցէ ի Ռուսաստանէ՝ ներկայացուցանել զուխտ
 « Հայ Եկեղեցւոյ Ռուսաստանի : Չորս ի Տաճկաստանէ՝ ներկայա-
 « ցուցանել զուխտ Հայ Եկեղեցւոյ եղելոյ ի նմա : Մի՛ ի Պարսկաս-
 « տանէ : Եւ միւս եւս ի դաղթելոց Աղգայնոց յարեւմուտս ի Մօլտո-
 « վալաքիա, ի Սուչուլա եւ յայլուր, ուր դասնիցին ի լուսաւորչա-
 « կրօն Աղգայնոց :

« Գ. - Սրբազան Կաթողիկոսն Սրբոյ Էջմիածնի, առաքեցէ
 « զարժանաւոր եկեղեցական ոք ի Կոստանդնուպօլիս՝ փոխանորդ
 « Արարատեան Մայր Աթոռոյ՝ լինել օգնական հոգեւորական կա-
 « ռավարութեան Աղգայնոց ի Տաճկաստան, եւ Անդամ Հոգե-
 « ւոր ժողովոցն Կոստանդնուպօլիսոյ, եւ յօդակապ սիրոյ եւ
 « միջնորդ յարարեցութեանց ընդ Կաթողիկոսական Մայր Աթոռն
 « Սրբոյ Էջմիածնի, եւ ընդ Պատրիարքական Աթոռն Կ. Պօլսոյ : Խոր-
 « շեալ ի յուղմանց անհամաձայնութեանց ընդ քաղաքական եւ ընդ
 « եկեղեցական իշխանութիւնս եւ ցորչափ է ի փոխանորդութեան
 « Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ի Կոստանդնուպօլիս, անհնարին
 « լինիցի ի նմին պաշտամանէ իւրմէ բարձրանալ ի Պատրիարքութիւն
 « Պօլսոյ, բայց եթէ յետ ելիցն ի փոխանորդութենէ եւ երթալ դա-
 « դարելոյ իւրոյ ի Մայր Աթոռն դամս երիս, այնուհետեւ մարթ է
 « Աղգին ընտրել եւ կարգել զնա Պատրիարք Կ. Պօլսոյ :

« Դ. - Իշխան է Սրբազան Կաթողիկոսն գումարել Աղգային
 « Ընդհանուր ժողով՝ վասն վերանորոգութեանց օրինաց եւ կանոն-
 « նաց եւ աւանդութեանց սահմանելոց ի նախնի սրբոց հարց եւ
 « ժողովոց :

« Ե. - Գերագոյն իշխան է ի Հայաստանեայց Եկեղեցւոջ՝ ի դատել
 « զանհնազանդս եւ զմոլորեալսն եւ զայնոսիկ՝ որք զանցանեն զօ-
 « րինօք, եւ զյամատեալս ի մոլորութեան եւ զոր ոչ անսան օրինա-
 « ւոր Եպիսկոպոսի իւրեանց՝ եւ վճռոյ հոգեւորական ժողովոյն :


Բաժանորդ կարելի է գրել հետեւեալ տեղերը .-

- Ֆրանսա՝ Լ. Գեւորեան, 17, Rue Damesme, Paris.
- Ն. Կակոսեան, 49, Rue Nationale, Marseille.
- Յունաստան՝ «Նոր Օր», 20-A, Rue Vouli, Athènes.
- Կիպրոս՝ Յ. Մահտեսեան, Arasta St. No. 1, Nicosia.
- Բուլգարիա՝ Յ. Տէվէճեան, 82, Bld. Hristo Boteve, Sofia.
- Ռումանիա՝ Ե. Սարգսեան,
 Typ "Astoria", 14, Str. Pictor Lichian, Bucarest.
- Եգիպտոս՝ Գ. Միխիթարեան, խմբագր. «Յուսարեր»-ի,
 B. P. 868, Le Caire.
- Եթովպիա՝ Յ. Գ. Պուրսալեան, Hirna.
- Պաղեստին, վախան Կէտիկեան, Haret-el-Nasara. Jerusalem.
- Աիւրիա՝ Յ. Սիմոնի, B. P. 208, Alep.
- „ Ն. Ապահեան, B. P. 870, Beyrouth.
- „ Ս. Պոյաճեան, B. P. 321, Damas.
- Իրաք՝ Մ. Սոսեան, South Gate Badaveen, 27-1, Bagdad.
- Պարսկաստան՝ Խ. Մելքումեան, Թաւրիզ :
 „ Ա. Յակոբեան (Խուզիստանի ընդհ. գործակալ),
 Արաղան, P. O. Box 22.
- „ Վ. Յովհաննիսեան, Թեհրան,
 Teint. "Havar", Khiabane Nadery, Tehéran.
- Հիւս. Ամերիկայի ընդհ. գործակալ՝ Յ. Կորոյեան,
 H. Gopoian, 359 W. 28th St. New York, N. Y., (U. S. A.)
- Հարաւ. Ամերիկա՝ Եղ. Խաչերեան, Canning 1245, Buenos-Aires

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս, Իտալիա՝ տարեկան 70 ֆրանք
 Ֆրանսա եւ մնացեալ երկիրները, տարեկան՝ 60 ֆրանք
 Ռումանիա, Բուլգարիա, Յունաստան Սիւրիա, եւ
 Պարսկաստան՝ „ 50 ֆրանք
 Հասցէ՝ նամակների, դրամի, յօդածների եւ ուրիշ ամէն
 տեսակ առաքումների համար .-

S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)



Imp. ARTISTIQUE, — 42, Rue de la Jonquière, PARIS (17^e)